

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Ա Ա Ա Գ Ւ Բ

№ 10 1891

ՀԱԿՏԵՄԲԵՐ

1891 № 10

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

	Արեւ
1 ՄԱՐԻՍԵԱՆ, Մ.	1129
2 ՄԱՐԿ, ՏՈՒԼ. . . . .	1155
3 ԼԵՌԵՆՅ. . . . .	1164
4 ՎՐՈՅՔ, Ա. Մ.	1167
5 ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, Յ.	1180
6 Լ. Գ.	1181
7 ԿԻՒՊԵՆԿԵՐՆ, Գ.	1201
8 ՄԱՆՈՒԶԱՐԵԱՆ, Մ.	1212
9 Բ.	1225
10 Ն.. . . . .	1229
11 ԼՈՒՄԵՆԻ.	1233
12 ԵՍԵՄԵԱՆ. . . . .	1249
13 ՄԱԼԻՄԱՍԵԱՆ ԽՏ.	1258
14 Զ. . . . .	1261
15 ԽԵՐ.	1269


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

© 1995

Ա. Դ. ԹօՏՔՆԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

Типографія М. Д. Ротиніанца, на Гол. просп. соб. д. № 41.

1891



# ՄԱԿՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 10 1891

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1891 № 10

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ  
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՇԵԱՆՑԻ  
1891

Дозволено цензурою, Тифлісь, 10 Октября 1891 г.

Типографія М. Д. Ротніанца, на Голов. просп. со б. д. № 41.

# ՀԵՂԻՆԵ

Վ. Է. Պ

Տ. Բ. Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Նարունակութիւն 1)

### XX

ԶԵՆԱՅԵԼՈՎ որ Ամիրանովը ամեն կերպ աշխատում էր կնոջ տիրութիւնները փարատել, բայց էլի Հեղինէի սրտից անտանելի թախիծը չէր հեռանում։ Տեսնելով թէ ինչպէս մարդը օրէցօր աւելի ուշադրութեամբ և քաղցրութեամբ է վերաբերում դէպի երեխան, Հեղինէն հետզհետէ համոզւում էր, որ անհրաժեշտ է հաշտել ներկայ գրութեան հետ, բայց դեռ այդ նորա ուժիցը վեր էր։ Միակ միսիթարութիւնը, որ նա գտնում էր իւր մշտական հոգեկան կուրի մէջ անցնող կեանքում—այդ իւր երեխան էր։ Աշունքւայ երկար երեկոները անցկացնելով երեխայի օրօրոցի կողքին նստած, նա մոքով տեղափոխուում էր այն ապագայ ժամանակները, երբ իւր որդին կը կարողանար լնդունակ լինել վարձատրել նրան իւր մէրով այն զոհոզութիւնների փոխարէն, որ նա արել էր նորա (երեխայի) համար։

1) Տե՛ս «Մուրան» 1891 № 1, 2, 4, 5 7 և 9:

Այսպէս անցաւ մօտ ամիս ու կէս Սահառունու դնալու օրից։  
Հեղինէին երբեմն թւում էր թէ Ամիրանովը փոխել է դէպի  
լաւը։ Նա, կարծես, սկսել էր հաշտուել այն մոքի հետ, որ նրանք  
կարող են ապրել մի յարկի տակ։

Նոյեմբեր ամսւայ օրերից մի օր, երբ Հեղինէն երեխալի սե-  
նեակումն էր, կամաց ներս մտաւ սինեակը Թամարը և, ըստ երեսյ-  
թին, ինչ որ մի բանից սասափիկ ուրախացած, նստեց նորա դէմուդէմը։  
—Վճռել եմ, էլ չեմ կարող դիմանալ, —յանկարծ արտասանեց  
նա երկար լութիւնից յետոյ։

Ես ուզում եմ հանգստացնել սիրուս։ Թող սպանեն, մորթեն  
ինձ, էլ ոչ ոքից չեմ վախենում։

Թամարի աշքերը այնպիսի անսովոր կրակով փայլեցին, նորա  
ձայնը այնպէս անսպասելի վճռականութեամբ հնչեց, որ Հեղինէի  
մէջ կասկած ծագեց, թէ արդեօք հօ չէ ցնորւել իւր տալը։

Թամարը այդ հասկացաւ և տարօրինակ կերպով ծիծաղեց։  
—Թող, թող շուտով գնամ, քանի որ բարի հրեշտակ է այցե-  
լել ինձ։ Ովէ իմանում, կարելի է, չար ոգին նորից ինձ իշխա-  
նութեան տակ զցի։

Այդ ասելով Թամարը շուապով դուրս փախաւ սենեակից։  
Հեղինէն վախեցած նայեց նրան, երեխալին օրօրոցը դրեց ու  
գուրս վազեց նորա յետելից, բայց Թամարը արդէն անշայտացել էր։  
Հեղինէն բոլորովին համոզեց, որ նա ցնորւել է և շատ վախեցաւ։  
Հետևեալ օրերը նա ուշադրութեամբ դիտում էր տալին և տես-  
նում էր, որ նորա բոլոր շարժւածքների մէջ երեսում էր մինչև այն  
ժամանակ չը նկատւած համարձակութիւն։ Այդ Հեղինէին շատ էր  
ժամանակ զարմացնում, բայց որքան նա աշխատում էր իմանալ այդ անհաս-  
կանալի փոփոխութեան պատճառը, չէր կարողանում, Թամարը նրան  
ոչինչ չէր ասում։

Մի քանի օրից յետոյ Թամարին յանկարծ այնպիսի մի անտա-  
նելի տիրութիւն սկաշարեց, որ նա էլ չը կարողացաւ դիմանալ և,  
վճռելով ամեն բան յայտնել Հեղինէին, վեր կացաւ ու գնաց նորա մօտ։  
Հեղինէն ոչ ննջարանումն էր, ոչ էլ երեխալի սենեակում։ Նա  
նստած սեղանատանը թէյ էր ածում։ Ամիրանովը, Եփեմիան ու Աննա  
Դուրգէնեանը ըրջասպատել էին թէյ սեղանը։

Թամարը ասաց, որ իւր համար թէյ չ'ածի Հեղինէն, ընկաւ իւր ձեռագործի հետ և չը խառնեց ընդհանուր խօսակցութեանը:

—Ինչու ես գոյնդ ացդպէս զցել, հօ՞ հիւանդ չես, —մի քանի անգամ հարցրեց նրան Հեղինէն:

—Ոչինչ, առողջ եմ, —հազիւ շարժելով շրթունքները պատասխանում էր Թամարը:

Բայց նորա դէմքը հետզհետէ այնպիսի հիւանդոտ արտայացտութիւն էր ստանում, որ քիչ էր մնում որ Հեղինէն զօռով նրան ներս տանէր ու թեք զցէր անկողնի վրաց:

—Ասա, խնդրեմ, այդ ո՞ւմ համար ես գործում այդ շալը:

Թամարը բարձրացրեց հանգած աչքերը, մի բոսկի շափ նայեց հարսին, յետոյ նւազ ձախով պատասխանեց՝

—Քեզ համար:

—Որ ացդպէս է, կը նշանակի ես կատարեալ իրաւունք ունիմ այդ շալի վրայ և ինչ ուզեմ կ'անեմ, —ծիծաղեց Հեղինէն, աշխատելով տալի ձեռքից խլել ձեռագործը:

—Թող, խնդրեմ, ո՞ւմ է մնաս տալիս իմ ձեռագործը:

—Քեզ, Թամար: Գիտես որ հալ չը կայ վրադ: Դու պէտք է այժմ զբօննես կամ պառկես և ոչ թէ նստած ձեռագործ անես: Ես վաղուց է նկատում եմ, որ սրառումդ ինչ որ մի բան կայ, որ քեզ տանջում է և որ դու մեզնից ծածկում ես:

—Հանգիստ թողէք դրան, Հեղինէ, դրան ացդպէս մէկ-մէկ պատահում է, այնպէս տիրութիւն է գալիս վրան, որ կարծես աշխարհքը զլիսին մընել է, —ձեռքը թափ տալով ասաց Եփեմիան.

Ամիրանովը, որ կէս ժամի շափ երեխային իւր ծնկների վրաց նստացրած խաղացնում էր, հարեւանցի ամնարկ զցեց փոքր քրոջ վերաց:

—Օյ, շատ սատանայ մարդ պէտք է դուրս գաս: Տեսնում ես, Հեղինէ, ինչ սիրուն երեխայ է, բոլորովին քեզ է զցել, —ինքնաղո՛շ կերպով արտասանեց Ամիրանովը:

—Խոկ ինձ թւում է, Սիքայէլ, որ նա երկուսիդ էլ նման է, վրայ բերեց Եփեմիան: Աչքերն ու քիթը խկը քո աչքերն ու քիթն են, իսկ մնացած երեսարբն ու կաշւի քնքշութիւնը մօրն են:

Այդ ժամանակ զրսեից զանգահարեցին, իսկ մի քանի բոսկի բոսկից

յեաոյ ծառան եկաւ յայտնելու, որ Պետրոսսեանցը եկել է: Պետրոսսեանցը վաղուց է չեր նղել Ամիրանովսերի մօտ և այդ պատճառով Ամիրանովը մի քիշ զարմացաւ լսելով, որ այցելութեան եկողը նա է:

— Ե՞՞ ի՞նչ ասացիր նրան:

— Ոչինչ: Նրանկը ասացին, որ եկել են աղջիկպարոնի լեակեց և նրանց կը սպասեն դումնը:

— Ես գիտէի, որ արյակէս կը լինի, բացականչեց Աննան: Մեր աղախինը հիւանդացել է, իսկ խոհարարը, երեխի հարբած կը լինի: Մօրաքոյրս առհասարակ վախենում է ինձ նրա հետ տեղ ուղարկել:

— Բայց այս անձինով շատ էլ յարմար չի լինի կանգնել դըրսեւում, — մոտահոգութեամբ նկատեց Նեղինէն: Խնդրիր, ներս գայ, դարձաւ նա ծառացին, կամ չէ, աւելի լու է ես ինքս գնամ կանչեմ: Նեղինէն շտապով դուրս եկաւ սեղանատնից ու մի քիչ անցած յետ դարձաւ Պետրոսսեանցի հետ:

— Բարե, Տիգրան Աւետիչ, շատ ուրախ եմ, որ տեսնում եմ ձեզ, քաղցրութեամբ ողջունեց նրան Աննան: Երեք օր է, որ մեր տունը չէք եկել. ես ու մօրաքոյրս կարծում էինք թէ հիւանդացել էք:

— Փառք Աստծու, առողջ եմ: Այսօր համարեա ամբողջ օրը ձեր տանն եմ եղել:

— Միթէ: Ուրեմն դուք ընտրում էք այնպիսի օրեր, երբ ես տանը շեմ՝ լինում, ծիծաղելով մատը թափ տւեց Պետրոսսեանցի վրայ Գուրգէնեանը: Լաւ, կը տեսնէք, այդ ձեզ էժան չի նստիլ: Իսկ այդ ինչ է ձեր ձեռին, ուշադրութեամբ նայելով Պետրոսսեանցի ձեռի ծրարին ասաց նա: Հենց իմանաս ինձ պէտք է հասնի:

— Ես ձեզ մօտ էի, Աննա Արտեմիկնա, երբ որ բերեցին այս յայտարարութիւնը: Ձեր մօրաքոյրը շատ խնդրեց, որ ես հասցնեմ ձեզ այս թուղթը:

— Տւէք, տեսնենք այդ ինչ է:

Գուրգէնեանը վերցրեց ծրարը և անհամբերութեամբ բաց արեց: Ծրարի մէջ զբած էր մի յայտարարութիւն, որով յայտնւում էր թէ Ուբարովը կտակ է թողել:

Այդ կտակով Ուբարովի ամբողջ կարողութիւնը բացի եօթ հազարից, որ պէտք է հասնէր Թամարին, բաժանւում էր Աննա Գուր-

գէնեանի և հայոց թեմական դպրանոցի մէջ։ Կոտակակատար նշանակւած էր Պետրոսեանցը։ Գուրգէնեանին կանչում էին դատարան, որ նա այնուեղ պաշտօնապէս յայտնէր, թէ ինքն է ժառանգը, և պահանջէր իրան հասնելիքը։

Գուրգէնեանը չէր հաւատում իւր աչքերին և շւարած նայում էր ամենքին։ Այդ դրութեան մէջ մի քանի րոպէ մնալուց յետոց նա թուղթը յետ տւեց Պետրոսեանցին, ասելով—ոչինչ չեմ հասկանում։

Թամարը նառած տեղումը քիչ էր մնում ուշաթափւէր։

—Տէր Աստուած, այս ինչ արեցի, —հազիւ լսելի ձայնով շշնչաց նա։

—Ո՞ս՝ —համարեա սարսափած արտասանեց Պետրոսեանցը և հանդիսաւոր կերպով թուղթը դրեց սեղանի վրայ։

—Ախ, Աստուած իմ, ինչպէս վախացրեցիք ինձ, —բարկացած ասաց Եփեմիան ու երեսը խաչակնքեց,

Նա շարունակում էր հարցական կերպով նայել Պետրոսեանցի վրայ, իսկ Ամիրանովիլ ու Հեղինէն սկսեցին ուշաղրութեամբ կարդալ յայտարարութիւնը։

Ամիրանովը, մի քանի տող որ կարդաց, այնպէս եղաւ, որ քիչ էր մնում երեխային վայր զցէր ձեռիցը։ Հեղինէն բռնեց տղային և տալով դայեակին հրամայեց տանի իւր սենեակը։

Ամիրանովը կայծակահար եղածի նման քարացել, մնացել էր նստած տեղումը և դժոխային հայեացքով նայում էր քոյրերին։ Եփեմիան, որ գեռ զլսի չէր ընկել, թէ բանն ինչումն է, շւարած նայում էր եղբօրը։ Եղբայրը հասկացաւ, որ Եփեմիան բանից տեղեակ չէ, և մտքումը վճռեց, որ մեղաւորը Թամարն է, ու այնպէս կատաղի հայեացք զցեց նրա վրայ, որ ինդմը սպրանեց ու դողդողաց և, չը կարողանալով տանել եղբօր չարագուշակ հայեացքը, վեր կացաւ տեղից ու փախաւ սենեակիցը, թէև հազիւ էր կարողանում կոնդնել ոտքի վրայ։

Մի քանի րոպէ անցած Ամիրանովը ուշքի եկաւ և հասկացաւ, որ անհրաժեշտ էր վկաների ներկայութեամբ սաւնասիրտ պահել իրան, բայց տեսնելով, որ ինքն իրան չի կարողանում զսպել, վեր կացաւ գնաց իւր առանձնասեննակը։

Նվիեմիան մեքենայաբար հետևեց եղբօրը: Թամարը միւս գըռանովն էր դուրս գնացել:

—Թամար, ինչոր մի վաս բան կայ այս բանի մէջ, ոռւ բոլորը գիտես, ասա, խնդրեմ, շուտ արա, թէ չէ իս կը գժւեմ,—հասնելով տալի յետևից հարց ու փորձ էր անում Հեղինէն:

—Աս, սարսափում եմ: Յետոյ կ'իմանաս, ամեն բան կ'իմանաս, այժմ չեմ կարող...

—Թաքցնելող աւելորդ է, —ծեռըլ Թամարի ուսին զնելով՝ հազիւ լսելի ձայնով արտասանեց մեռելի պէս սպրոնած Հեղինէն:

Ես զլիի եմ ընկնում թէ ինչումն է բանը: Կոտակը գողացել են Նվիեմիան կամ Միքայէլը. իսկ դու, խեղճ զոհ, գործիք ես դարձել նրանց ձեռքում այդ դժոխացն գործը կատարելու համար:

Թամարը զլիսով արեց և օձից խայթւածի նման փախաւ գնաց ամենահեռաւոր սենեակը:

Այժմ հասկանում եմ, թէ ինչի մասին էին նրանց այն գաղտնի և անվերջ խորհրդակցութիւնները, մոտածեց Հեղինէն:

—Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, էլ ինչ անբախտութիւնն է մնացել, որ զլիովս անցած չը լինի: Տէր Աստուած, ինչո՞վ եմ արժանացել ես այսպիսի պատժի, —աղէկտուր ձայնով բացականչեց նա և համարեաւ ուշաթափ ընկաւ բազմոցի վրայ:

Գուրգէնեանը մնացել էր սեղանատանը: Ակամայ հանդիսատես դառնալով այն լուռ տեսարանին, որ մի քանի րուպէ առաջ կատարւել էր աշնառեղ, նա մութը կերպով զզում էր, որ այդ բանումը ինչ որ մի ընտանեկան գաղտնիք կայ: Նա իւր ներկայութիւնը այդ դէպքից յետոյ վերին աստիճանի անյարմար էր համարում և մի առ իթ էր վնտուում որ, որքան կարելի է, շուտով այնտեղից հեռանար:

—Գնանք տուն. ինչ պէտք է անենք այսուղ, Աննա Արտեմիեւնա, —առաջարկեց Պետրոսեանցը:

—Գնանք, բայց չը գիտեմ, թէ որտեղ է վերարկուս ու զլիարկս կարծեմ, զահլիճումը պէտք է լինի: Ինչ էք կարծում, կարելի՞ է մտնել, վերցնել, շւարած հարցնում էր Գուրգէնեանը, որի ապշութիւնը դեռ չէր անցել:

—Ի հարկէ: Մանենք միասին:

Մտնելով դահլիճը նրանք բացականչեցին և վախեցած յառե-

ցին աչքերը Հեղինէի վրայ. — Դէմքը մեռելի գոյն էր ստացել, աչքերը վեր էին քաշւել, շրթունքները կապտել էին և ամբողջ կերպարանքը այնպիսի մեռելացին արտայայտութիւն ունէր, որ Աննան կարծեց թէ նա մեռել էր:

— Մի վախենաք, Աննա Արտեմիւնա, ուշաթափւել է, հանգըստացրեց նրան Պետրոսեանցը: Դուք կոճակները բաց արէք, ես գնամ ջուր բերեմ:

Մի քանի րոպէից յետոյ Հեղինէն ուշքի եկաւ:

— Աննա ջան, հոգիս, ուրեմն քո դէմ էին ուղղած նրանց մեքենայութիւնները, դուրս թռաւ Հեղինէի բերնից:

Հեղինէն ջղաձգաբար բռնեց Գուրգէնեանի գլուխը և բաց չէր թռղնում ձեռիցը:

— Խաչը, չեմ հականում, թէ ես ինչու պէտք է Ուբարովի ժառանգը լինեմ, — շնչաց Աննան:

— Ազմ ձեզ պէտք է ասել, թէ ինչումն է բանը, Աննա Արտեմիւնա, որովհետև միևնոցնն է, եթէ ես չ'ասեմ, դուք ուրիշ տեղից կ'իմանաք, — շփոթւած արտասանեց Պետրոսեանցը:

— Ի՞նչ կայ, ասացէք, — վախեցած արտասանեց Աննան:

— Ես վերջին օրերս լսեցի, ասաց Հեղինէն, զանազան ակնարկութիւններ քո և Ուբարովի մէջ եղած ազգականութեան մասին. այժմ, ինչպէս տեսնում եմ, այդ զրոյները հաստատուում են:

— Այո, տիկին Հեղինէ, խեղճ Ուբարովը օրիորդի հայրն էր, — գժւարութեամբ արտասանեց Պետրոսեանցը ու, իսկոյն հանելով գրապանիցը մի նուրբ նկարած պատկեր, շարունակեց, — իսկ այս հիանալի կինը ձեր մայրն է, օրիորդ:

— Ասուուած իմ; ինչ եմ լսում, շւարած բացականչեց Գուրգենեանը և նորա աչքերը շաղւեցին:

Իսկ ով էին նրանք, որոնց ես իմ ծնողներս էի համարում:

— Ձեր բարերարները: Հանգստացէք, օրիորդ, ես ձեզ մի օր կը պառմում ձեր պատմութիւնը:

— Ա, այ ինձ, թշւասիս, — գլուխը բռնելով բացականչեց Գուրգէնեանը, կարծես սթափւելով խորը քնից յետոյ: Ինչ քարասիրում մարդ էք, պ. Պետրոսեանց: Ինչու ինձ ոչինչ չէիք ասում նորա կենդանութեան ժամանակ: Նա տանջւում էր հոգով ու մարմնով,

նա միայնակ էր, իսկ դուք ինձ ոչինչ չեկք յայտնում, որ գոնէ նորա  
մեռնելու բոպէին ես իմ ձեռքով աշքերը փակէի: Այժմ ես հաս-  
կանում եմ այն տարօրինակ խօսքերը, որ նա ասում էր ինձ հան-  
դիպելիս. իսկ ես, թշւառ ականս, նրան խելացնոր էի կարծում:

Պետրոսեանցը այնքան յուզւած էր, որ ոչինչ չը կարողացաւ  
ասել օրիորդին մխիթարելու համար:

Հեղինէն յենել էր պատին ու համարեա չէր լսում Գուրգէ-  
նեանի խօսքերը:

Երևում էր, որ ինչ որ մի նոր միտք էր ծագում նորա գլխումը.  
Նա այլ ևս չէր զգում առաջւայ թոցութիւնը:

— Աննա, Աննա, յանկարծ բացականչեց նա, շուտ արա, գնա  
տուն, հեռացիր ալսոեղից. քեզպէս մաքուր մարզիկ այս տանը  
չը պէտք է մնան:

Պետրոսեանցը խորին ցաւակցութեամբ նացեց նրանց վրայ: Մի  
քիչ յետոյ նա Գուրգէնեանին տարաւ տուն:

Աննան չը հանգստացաւ մինչև որ պատմել տւեց Պետրոսեանցին  
իւր անցեալը:

Պետրոսեանցը աշխատում էր ծածկել Աննացից նորա անցեալից  
այն ամենը, որ կարող էր շատ վշտացնել նրան:

Խանդաղատանըի, երախտազիտութեան և վշտի արտասունք-  
ներ երեւացին օրիորդի աշքերում:

Նա ամբողջ գիշերը չը կարողացաւ աշքերը փակել. շատ և  
իրարից տարբեր զգացմունքներ յուզում և ալեկոծում էին նորա  
հոգին:

Հեղինէն մենակ մնալով՝ մի ժամի չափ ման էր գալիս դահլի-  
ճում խորին մտախոհութեան մէջ:

Ինչ որ լուրջ մոքեր յուզում էին նրան և վճռական արտացայ-  
տութիւն էին տալիս նորա դէմքին:

Երեկոյնան ժամի ութին մօտ էր:

Ամիրանովլը դուրս եկաւ տանից:

Եփեմիան եղբոր հետ երկար խօսելուց յեռոց գնաց վինսուելու  
քրոջը:

—Ասո, անզգամ, այս քո՛ բաներն են: Ինչպէս համարձակւեցիր ձեռք տալ այն թղթերին. չէի՞ր իմանում թէ ինչ գժւարութիւններով էի կարողացել ես ձեռք դցել այդ թղթերը: Կաց, դեռ Միքայէլը ինչ կը բերի դլիսիդ, նզովւած արարած,—ասում էր նփեմիան փրփուրը բերնին, երբ որ Հեղինէն աննկատելի կերպով մտաւ նեքսեւ:

Թամարը, կանգնած տեղը, տենդով հիւանդի նման գողում էր:

—Մեղք եկէք խեղճին, առանց այն էլ դուք ու ձեր եղբայրը դրան շատ էք տանջել, խորովել, արհամարհաբար ասաց Հեղինէն կանգնելով երկու քոյրերի մէջ աելլք:

Նփեմիան սաստիկ կարմրեց ու հեռացաւ:

Հեղինէն Թամարին զոռով թեք դցեց իւր անկողնի վրայ ու ինքը դուրս եկաւ պատշգամբը:

Վճռական բոպէներ էին Հեղինէի համար: Նա գործ էր գնում իւր կամքի ամբողջ ոյժը հարցը հաստատ վճռելու համար: Վերջապէս, մօտ երկու ժամ անցնելուց յետոց, նա վերադարձաւ իւր սենեակը անդրդւելի գիտաւորութեամբ՝ իրագործելու իւր մտքումը որոշած ծրագիրը:

Թամարը գեռ չէր քնել:

—Հը՞, ինչպէս ես զգում քեզ:

—Առաջւանից լաւ եմ, բայց չեմ հանգստանալ մինչեւ որ համաձայնես ինձ լսել:

Այս ասելիս Թամարը այնպիսի թափանձալից հայեացք դցեց հարսի վրաց, որ նա չէր կարող ըը կատարել նորա խնդիրքը:

—Ես այժմ քեզ շատ զգւելի մարդ եմ երևում, չէ՞: Բայց յիշել, Հեղինէ, իմ անցեալը և տես թէ արդեօք մի որ և իցէ ինձ արդարացնող բան չես գտնիլ անցեալում:

Հեղինէն նստեց անկողնի վրայ և քաջալերելով ասաց՝

—Ես լաւ զիտեմ, Թամար, որ Աստուած քեզ բարի սիրո ու մաքուր զգացմունքներ է տւել և որ, դժբախտաբար, հէնց մանկութիւնից դու շրջապատւած ես եղել անսիրո ու ստոր մարդիկներով: Եղբայրու ու քոյրդ, օգուտ քաղելով քո անձար դրութիւնից, քեզ իրանց ազգեցութեան տակն են դցել, որ շատ հեշտ է եղել, —դու խեղճ ու միամիտ, նրանիք սատանացի պէս խորամաննի:

—Դու գուցէ կարծում ես, Հեղինէ, թէ ես այնքան փչացած

եմ, որ չէի նկատում ինձ շրջապատող կեղտը՝ ԶԵ, ես շատ լաւ տեսնում ու հասկանում էի, բայց մնում էի այդ կեղտի մէջ, որովհետև ելք չը կար, որովհետև անձար էի:

Մի բոսկ Թամարը լուռ կացաւ, ցետոց, ձեռները խաչելով, հոգոց քաշեց ու գլուխլ կռացնելով կրծքի վրաց, շարունակեց.

— Ինձ համոզեցին, ինձ հաւատացրին, թէ անհրաժեշտ է հաշտւել Աւբարովի հետ: Ես շատ ուրախ էի այդ բանին, որովհետև նրան մի քիչ սիրում էի: Սկզբում ես չէի իմանում եղբօրս ու քրոջս գաղտնի նպատակը: Յետոյ քիչ քիչ սկսեցի գլխի լնինել: Երբ որ նրանք այդ նկատեցին, ամեն բան յայտնեցին ինձ, տեսնելով որ էլ ծածկելն աւելորդ է: Նրանք ինձ էլ գրաւեցին իրանց կողմը: Խոստումներ էին անում ինձ, նկարագրում էին իմ ապագայ բախտաւորութիւնը այն դէպքում, եթէ մեղ յաջողէր ժառանգութիւնը մեր ձեռքը գցել: Էլ ինչ ասեմ, մի խօսքով նրանք մի քանի օրւաց մէջ ինձ ափսնեցին ու իրանց ձեռքին գործիք շինեցին:

Մեզ չը յաջողւեց հաշտւել քեռուս հետ: Եատ չ'անցած մի նոր վասնգ էլ Տագեց մեզ համար Աննա Գորգէնեանի կողմից: Միքայէլն ու Եփեմիան չը յուսահատեցին և սկսեցին ամեն միջոց գործ դնել որ քեռիս կտակ չը կազմէր: Այն ժամանակ ես սարսափ զգացի: Բայց գրաւելով նրանց խոստումներից ու փաղաքշանքներից և վախենալով նրանց բարկութիւնից, ես չը հակառակեցի նրանց ու շարունակեցի օգնել, թէև մի ներքին ձայն անդադար ինձ ասում էր, որ ես գգելի բան եմ անում: Ես շատ անգամ մտածմունքների մէջ էի լնինում ու ինքս ինձ հարցնում էի՝ ինչի՞ցն է, որ մարդուս մէջ այդպիսի երկութիւն կայ:

Այս, Հեղինէ ջան, եթէ ես այն ժամանակ քեզ այնպէս մօտ լինէի ինչպէս այժմ, ես այս աստիճան չէի լնինիլ բարյապէս: Լինում էին բոպէներ, երբ ես զգում էի, որ դու մեր ամենքիցս անհամեմատ բարձր ես կանգնած, բայց ես ամացում՝ եմ ասել, այդ միոքը իմ մէջ միայն նախանձ ու առելութիւն էր զարթեցնում դէպի քեզ: Քո բարութիւնն ու քաղցր վարժունքը կամաց — կամաց խեղդեցին իմ մէջ այդ զգացմունքները:

Ե՛հ, յուսահատ կերպով թափ տւեց ձեռքը Թամարը և երեսը դրեց բարձին:

Խնչի վրաց էի խօսում, երկար լոռութիւնից յետոյ նորից սկսեց նա և ձեռքը դրեց քունքին:

Հա՛, կոտակի մասին էր: Կոտակը, չը նայելով մեր ջանքերին, կազմեց: Ե, ամեն բան վերջացաւ, մտածեցի ես, թէե, ճիշտն ասած, չէի իմանում՝ ուրախանամ թէ տփրեմ որ մեր ուզածը չի յաջողել: Այնքանն եմ միայն ցիշում, որ այդ օրից սիրոս հանգստացաւ, կարծես վրացիցը մի ահագին քար վայր լնկաւ, բայց, ափսոս... երկար չը տեսց իմ անդորրութիւնս:

Կարծես մի տենդային գող սառուեցրեց Թամարի ամբողջ մարմինը: Վերջապէս նա իրան յաղթեց ու վերին աստիճանի յուզւած ձայնով շարունակեց:

Միքայէլն ու Եփեմիան դրա դէմ էլ ճար գտան: Նրանք վճռեցին գողանալ կոտակը: Ես զզւանք զզացի դէպի եղբացս ու քոյրս և հրաժարւեցի այդ գարշելի գործին մասնակցելուց: Թոյլ չը տալ, որ նրանք իրազործեն իրանց մտադրութիւնը, ես չէի կարող, այդ իմ ուժիցը վեր էր: Նրանք երդում առան ինձնից, որ ոչ ոքի բան չ'ասեմ և, չը գիտեմ ինչ հնարքով, բերնիցս խօսք քաշեցին, իմացան, թէ որտեղ էր սպահւած կոտակը: Ուբարովի մեռնելու օրը Եփեմիան իմ աչքի առաջին գողացաւ կոտակը: Եւ այդպիսով, ես այն օրից դարձայ ակամայ գործակից նրանց յանցանքի:

Դու այն ժամանակ ջրերն էիր գնացել, խորլ հողոց քաշելով շարունակեց Թամարը: Ես ինքս ինձնից սկսեցի զզւել. իսիզն ինձ հանդիսու չէր տալիս. ախ, թէ իմանացիր, ինչեր քաշեցի ես այն ժամանակ: Ինձ թւում է, որ ես կը զժւէի, եթէ կոտակի տեղ մի ուրիշ թւողթ չը դնէի, որ նոյն գիշերը Եփեմիան հանդիսաւոր կերպով այրեց: Խորամանկութիւնս չը բացւեց, որովհետև Եփեմիան, ուռւսերէն չիմանալով, այն թւողթը կոտակի տեղ լնդունեց: Այդպիսով կոտակը մնաց իմ ձեռքին, բայց այնքան համարձակութիւն չունէի որ յացնէի թէ կոտակ կայ և իմ ձեռքին է:

Այն օրւանից, որ Միքայէլը ժառանգութեան իրաւունքները ստացաւ, ես գիշեր-ցերեկ հանդիսու չունէի: Միակ մխիթարութիւնս այն էր, որ միտքս դրել էի շուտով բանալ այդ ինձ ճնշող գաղտնիքը: Ամեն անգամ, որ քեզ հետ տեսնւում—խօսում էի, այդ տրամադրութիւնս աւելի էր հաստատւում: Քանի քանի անգամ ես ու-

զեցել եմ քեզ ցոյց տալ կտակը, բայց վախենում էի: Այդ անվճռականութիւնս ինձ աւելի ատելի էր գարձնում իմ՝ աչքումս: Վերջապէս, ինչ երկարացնեմ, էլ չը կարողացայ դիմանալ այդ բարոյական տանջանքներին ու սրանից երեք օր առաջ ծածուկ տարաց կտակը դրեցի այն սենեակը, որտեղ մեռել էր Աւբարովիլ և որտեղ մինչեւ այժմ էլ ապրում է նորա այն կիսակոր պառաւ ազգական կինը, որ նրան պահում էր հիւանդ ժամանակը:

Պառաւին ասացի, որ այդ թուղթը տանի ներկայացնի դատաւորին. նա էլ արեց:

— Յիշում եմ, ես էլ նկատում էի, որ դու քեզ մի տեսակ էիր զգում, բայց չի հասկանում թէ ին: Կայ:

— Հա, Հեղինէ, քեզ այն ժամանակ թուում էր, թէ ես ցնորւել եմ. և, ճիշտ ասած, ես ինքս զարմանում եմ, թէ ինչպէս է եղել, որ խելքս չեմ կորցրել:

Ե, ինչ ասեմ. զգում եմ, որ դու այս բոլորը իմանալուց յետոց ինձ պէտք է ատես:

— Զուր ես այդպէս կարծում, Թամար: Ով որ տեսել է, թէ ինչպէս էիր դու տանջում այս քանի շաբաթը, չի կարող չը խղճալ քո վրայ և չը սիրել քեզ անկեղծ սիրով:

— Բայց ինչու ես այդպէս եղել, Հեղինէ. ինչու ես այդպէս գոյնդ գցել: Ներիր, որ ես քեզ վշաացրեցի իմ պատմածովիլ:

— Մի վախենար, ես այնքան կամքի ոյժ ունեմ, որ կարող եմ դառնութեան բաժակը մինչև վերջին կաթիլը խմել: Եգուցւանից ես իմ անցեալիս հետ ունեցած րոլոր կապերը կը կորեմ, կ'ոչնչացնեմ: Աւելի լաւ է իմ որդին հայր չունենայ քան թէ մի օր իմանաց, որ իւր հայրը գող ու աւազակ է, աւելի լաւ է ես ու նա մեռնենք քան միանք այսուեղ ու ծծենք այս վարակւած օդը:

Թամարը լաւ չէր հասկանում Հեղինէի ասածի միաքը, բայց նա այնպիսի ձախով արտասանեց այդ խօսքերը, որ տալլ ամբողջ մարմնով առւսուեց ու ցնցւեց:

Հեղինէն մի բոսէի չափ նայեց նորա վրայ, յետոց վեր կացաւ ու զարթեցրեց պառաւ դայեակին: Դայեակը լսեց նորա պատերը ու դուրս զնաց: Մի քիչ անցած ներս բերեցին երկու չեմոզան: Հեղինէն շտապով դարսեց իւր բաները, հրամացեց դայեակին, որ

հաւաքի երեխացի սպիտակեղէնն ու տեղաւորի, և ինքն նորից մի տոմսակ գրեց Ասունուն, որով խնդրում էր նրան կառք վարձել իւր համար:

Նամակն այսպէս էր վերջանում:

«Վազը առաւօտ ժամի տամնը մէկին կը սպասէք ինձ պոստի կայարանում; Գնում եմ Պետրիգորսկ քեռուս մօտ: Այս պէտք է առայժմ գաղտնի մնայ ամենքից: Պատճառը մի սարսափելի բան է: Գուցէ մի ժամանակ դուք իմանաք...»

Էլ ոչինչ չը հարցնեք ինձանից:

Հեղինէ Ամիրանեան:

Երբոր Հեղինէն ուղարկեց նամակը և հարցրեց իմացաւ, որ մարդը գեռ տուն չի եկել, շարունակեց ճանապարհի պատրաստութիւնները: Նա այնպէս շտապելով էր անում այդ, այնպէս ուշադրութեամբ էր մի բանից միւսն անցնում, կարծես վախենում էր չը լինի թէ յանկարծ մէկը իրան համոզի հրաժարւել այդ վճռական քայլն անելուց:

Թամարը շւարած ու վախեցած նայում էր հարսին:

—Հեղինէ, երկում է՝ պատրաստում՝ ես ճանապարհ լնկնել. չը գիտեմ ո՞ւր ես գնում, բայց միւնոյնն է, խնդրեմ, ինձ էլ տար հետդ: Դու որ չը լինէիր՝ ես բոլորովին կը թաղւէի բարոյական կեղտի մէջ. դու աչքերս բաց արեցիր, դու իմ մէջ զարթեցրիր ձգտումն ուսպի լաւը, մի խօսքով դու ինձ կեանք տւեցիր, քեզնով ես յարութիւն առայ իմ բարոյական մեռելութիւնից: Թէ Ասուած կը սիրես, այժմ ինձ բարոյական վերածնութեան կիսաւճանապարհին մենակ մի թողնիլ:

Հեղինէն գրկեց Թամարին և խոստացաւ նրան հեռը տանել:

## XXI

Ամիրանովը մնացել էր շւարած, թէ ինչպէս է գտնւել կտակը, քանի որ Եփեմիաս նրան հաւատացրել էր թէ ինքն իւր ձեռքով ոչնչացրել էր այդ թուղթը: Բայց այսպէս թէ այնպէս կտակը գտնւել էր: Այդ միաքը ամբողջ զիշերը առնջում էր նրան. մի կողմից նրան սարսափ էր ազգում այն, որ նա պէտք է զրկւէր Ուրա-

ըովի թողած ժառանգութիւնից, միւս կողմից նա վախենում էր, որ Թամարը գաղտնիքը յայտնի և Հեղինէն, իմանալով ամեն բան, աւելի ևս սառչի իրանից, մինչդեռ, ինչպէս իրան թւում էր, շատ քիչ էր մնում որ նա բոլորովին հաշտւէր իւր հետ:

Առաւոտեան Ամիրանովը գնաց դատարան առանց տեսնւելու Հեղինէի հետ: Նա անհամբերութիւնից տանջւում էր, թէ երբ պէտք է տեսնի կտակը, որի մէջ նա յոյս ունէր գտնել մի քանի ձեւական գանցառութիւններ, որոնք հնարաւորութիւն կը տալին իրան վէճ բարձրացնել ժառանգութեան մասին:

—Հը՛մ, ուրախ-ուրախ բացականչեց նա կարդալով կտակը. թէն վկաներով վաւերացրւած է, բաց չի ներկայացրւած ուր հարկն է և այդ պատճառով օրինական նշանակութիւն չունի:

Դատարանից դուրս գալով՝ Ամիրանովը սկսեց սառը մտածել և հասկացաւ, որ հարցը այնքան պարզ չէր, որքան իրան թւում էր: Որքան մտածում էր, չէր կարողանում մի հնարք գտնել, որ թէ հարստութիւնը մնար իրան և թէ անունը չ'արատաւորւէր: Նատ զու ուեց զլիսին այդ անտանելի դրութիւնից դուրս գալու համար, վերջապէս վճռեց գնալ Պետրոսեանցի մօտ ու աշխատել մի կերպ համաձայնութիւն կայացնել նորա հետ:

Այս, պէտքէ աշխատեմ հէնց այսօր վերջացնել այս գործը: Վերջացնելուց յետոյ կ'երթամ տուն կողջա հետ կը խօսեմ, մի կերպ կը բացատրեմ: Երէկ նրան ես թողեցի սաստիկ շւարած դրութեան մէջ, — ասաց նա ինքն իրան:

Մի քանի ժամ յետոյ Պետրոսեանցը կատաղութիւնից խեղդւելով մտաւ Գուրգէնեանի սենեակը: Օրիորդը դաս էր տալիս երեխաներին:

— Տիգրան Աւետիչ, ինչ է պատահել ձեզ, վախեցած հարցրեց օրիորդը:

— Երևակայեցէք, Աննա Արտեմիւնա, Ամիրանովը այսուեղ է հասցրել իւր անամօթութիւնը, որ համարձակւում է դատարանում վէճ բարձրացնել ժառանգութեան մասին: Թող մէկ էլ մի ծպտուն հանի՝ տեսնի ինչ կը բերեմ զլուխը. բոլոր խարդախութիւնները հրապարակ կը հանեմ: Մի ժամից յետոյ ինձ վերջնական պատասխան պէտք է տայ:

— Տիգրան Աւետիչ, խնդրում եմ, աղաջում եմ, թողէք այդ գործը Խղճացէք գոնէ Հեղինէին. առանց այդ էլ նա անբախտ է:

— Ապահով կացէք, նա ինձնից էլ լաւ է ճանաչում իւր մարդուն և վաղուց ասում է նրան:

Ինչ լաւ կը լինէր, որ կանացք չը խառնւէին այն գործերին, որ չեն հասկանում: Ձեր բանը ընտանիքն ու տնտեսութիւնն է, ինչ ուզում էք արէք այդ ասպարէզում, իսկ միւս բաներում մեզ, աղամարդիկներիս, թողէք. ինչ որ պէտք է ձեզ համար՝ մենք կ'անենք:

Աննան սկսեց տաք-տաք վիճել, պաշտպանել կանանց իրաւունքները, բայց Պետրոսեանցը անհամբերութեամբ կորեց նորա խօսքը:

Նորա համար չեմ եկել ձեզ մօտ, օրիորդ, որ դատողութիւններ տամ կանանց հարցի մասին...

— Բայց չո չէք կարող հերքել, որ ես իրաւունք ունիմ հրաժարւել այն բանից, որ ինձ տալիս են, ընդհատեց նորա խօսքը օրիորդը ստատիկ յուզւած:

Ես ձեզ ասում եմ, Տիգրան Աւետիչ, որ ես ամեն բանից ձեռք եմ քաշում, միայն թէ կարողանամ փրկել Հեղինէի պատիւը: Մուանալ թէ ինչ է եղել ինձ համար Հեղինէն — ստորութիւն կը լինէր իմ կողմից, շարունակեց նա յուզմունքից կարմրատակած երեսով:

— Այ, ացղափէս են միշտ դատում կանացք: Ես մէկէլ կրկնում եմ, որ գուք այս գործից ոչինչ չէք հասկանում և այդ պատճառով չը պէտք է խառնէք սրան. այս ձեր բանը չէ, մուայլ դէմքով պատասխանեց Պետրոսեանցը:

Յիշեցէք, որ հարցը միայն ձեր մասին չէ, այլ և մի հասարական հիմնարկութեան — ուսումնարանի մասին: Լաւ իմացէք, Աննա Արտեմիւնա, որ այն դէպքերում, երբ մասնաւոր անհատների շահերը դէմ են ընդհանուրի շահերին, մարդուս սրբազան պարտականութիւնն է զոհել անհասների շահերը, եթէ մինչև անգամ իւր ամենասիրելի բարեկամներն էլ լինեն այդ անհատները, և պաշտպանել հասարակութեան շահերը: Այդպիսի դէպքերում ազնիւ մարդք պէտք է մոռանեայ թէ իրան և թէ ուրիշներին և պէտք է միայն մի բան աչքի առաջ ունենայ — արդարութիւնը, մի քիչ աւելի մեղմութեամբ աւելցրեց նա, նայեց ժամացոցին ու գնաց:

Աննան տխուր-տխուր նայեց նորա յետելից:

Նա ուզեց շարունակել դասը, բայց չը կարողացաւ ու թողեց գնաց իւր սենեակը։ Այնտեղ նա երկար ժամանակ մնաց խորը մտահոգութեան մէջ։ Նա մտածում էր Հեղինէի մասին ու աշխատում մի հնարք գոտնել զործը այնպէս վերջացնելու, որ Հեղինէն չը վշտանար։ Նորա սիրտը կակծում էր, երբ որ նա մտածում էր, որ ինքը, թէև ակամայ, պատճառ պէտք է դառնայ Ամիրանովների ընտանիքի անբաղադրութեան։

Նա սկսեց յիշել իւր անցեալը բոլոր ամենաանշան մանրամասնութիւններով, յետոյ մտքով վերացաւ։ տեղափոխւեց Թոմաւի մօտ և նորա աչքերը արտասւակալեցին։

Խնչիցն է, որ իմ անւան հետ կապւած են անախորժութիւններ իմ մի քանի մոռերիմ մարդկանց համար, դառնութեամբ մտածեց նա։

Միթէ ինձ վիճակւած է միայն ցաւ պատճառել իմ բարեկամներին։ Ես, Ասուած, ինչ տարօրինակ կեանք և եղել իմ կեանքս։

Այդ մտածմունքները շատ տանջեցին բարեհոգի և քաղցրաբարոյ օրիորդին, որ ամեն կերպ աշխատում էր հաշտ ու սէրով ապրել ամենքի հեռ։

Պետրոսեանցը օրիորդ, Գուրգէնեանի մօտից զուրս գալուն պէս, պատահեց իւր մի քանի ընկերներին։

—Գիտէք, պարոններ, հանդիսաւոր կերպով յայտնեց նա նրանց Ուբարովը թեմական գլուխուցի օգտին ութսուն հազար բուբլի է կոտակել։ Մի այդպիսի նւիրատուութիւն էլ որ լինի՝ մեր դպրանոցը կը կարողանայ այնպէս գնալ, որ համալսարան մտնելու արժանի պատանիներ կը պատրաստի։ Ութսուն հազարը մեծ փող է։

Ավասոս Սահառունին այսուղ չէ, շատ կ'ուրախանար։ Հէսց այսօր կը գրեմ նրան, թող հօգին փառ աւորւի։

Այդ ասելիս Պետրոսեանցը կանգնած տեղումը թոշկոտում էր։ Նորա դէմքը, ձեռները, ոտները և ամբողջ իրանը այնպէս սաստիկ շարժւում էին, որ դժւար էր առանց ծիծաղի նացէլ նորա վերայ։

—Ես, Պետրոս, Պետրոս, շատ կտրիճն ես եղել, ասաց ընկերներից մէկը մտերմարար խփելով նորա ուսին, իսկ միւսները սկսեցին

զանազան հարցեր թափել նորա գլխին, որոնց նաև հաղիւ էր ժամանակ գտնում պատասխան տալու:

— Բայց, պարոններ, ես խօսքով ընկայ: Ժամադիր եմ եղել Ամիրանովի հետ մի շատ կարեոր դործի վերաբերմամբ, մտահոգ դէմքով արտասանեց Պետրոսեանցը և համարեա վաղէ վաղ անդաւ փողոցի միւս կողմը:

Մինչդեռ ընկերները շարունակում էին տաք-տաք խօսել նոր լսած լուրի մասին, Պետրոսեանցն ու Ամիրանովը շատ թունդ բացատրութիւն էին տալիս մի-մանց: Միխաջիւ Պետրովիւը սաստիկ վախեցաւ Պետրոսեանցի սպառնալիքներից:

Երեկոյեան ժամի հինգին մօտ կը լինէր, երբ որ Ամիրանովը յոդնած ու վրդովւած վերադարձաւ տուն: Նա համարեա ուրախացաւ, որ կնոջը տանը չը դուաւ:

— Երեխան ո՞ւր է, մի քիչ յետոյ հարցրեց նա աղախնից:

— Չը գիտեմ, աչքերի խորամանկ արտայայտութեամբ պատասխանեց աղախնիւ:

Նա ու ծառան իրար երեսի նայեցին:

Ամիրանովը մեքենայաբար քայլերն ու զղեց դէպի երեխայի սենեակը: Մտնելով նա զարմացաւ այնտեղ տիրող անկարգութեան վերայ: Պահարանն ու կոմոջը բաց էին. նայեց մէջները, — դատարկ էին. յետոյ վագեց դէպի օրօրոցը, — տեղաշոր չը կար մէջը:

Ամիրանովի սիրու վկայեց, որ մի սարսափելի բան է պատահել: Նա այլ ևս չը կարողացաւ դիմանալ ու նորից սկսեց հարց ու փորձ անել ծառաներին: Կատաղած նրանց ծաղրից ու կիսատ-պատասխաններից, նա սեղանի վրայից վերցրեց ճրագն ու վաղեց իւր առանձնասենեակը:

Առաջին բանը, որ նորա աչքովն ընկաւ, նորա հասցէով զրած մի նամակ էր: Նա իսկոյն ճանաշեց Հեղինէի ձեռքը և անհամբերութեամբ պատասխաններից, նա սեղանի վրայից վերցրեց ճրագն ու վաղեց իւր առանձնասենեակը:

Նամակը մի քանի տողից էր բաղկացած: Ահա բոլանդակութիւնը:

«Ես անջատւում եմ ձեզանից ընդ միշտ: Գնում եմ Պետրոսիկ: Դուք լաւ գիտէք, թէ ինչ է ինձ ատիսպում... իմացած եղէք, որ վճիռս անդրդւելի է: Թամարը դալիս է ինձ հետ. վախենում է, որ հալածէք իրան: Հ:»

Ամիրանովը ապշած մի քանի անգամ կարդաց այդ սարսափելի տողերը, կարծես : Հաւատուալով իւր աչքերին: Մի կողմից՝ կնոջ փախուատը, միւս կողմից՝ կտակի առիթով ծագած անախորժութիւնները.—Նա դլուխը կորցրել էր և չէր իմանում թէ ինչի վրայ մտածի: Մէկ վեր էր թռչում, դժի նման ինչ որ մի բան էր փնտում բոլոր անկիւններում, մէկ էլ վերարկում վերցնում զցում էր վրան, կարծես ուզում էր կնոջ յետեկիցն ընկնել ու բռնել, բաց մի քիչ մտածելուց յետոյ կարծես հասկանում էր, թէ ինչ անմիտ բան էր մտադրում անել, և քարացածի նման կանգնած մնում էր տեղումը, սաստիկ գունաւուած դեմքով, զարհուրելի կրակով փայլող աչքերով և կատաղութիւնի լի սրտով: Ամիրանովը աշխատում էր սառնասըրը սութեամբ քննել իւր դրութիւնը, բաց այդ նրան չէր յաջողում: Նրկար ժամանակ մնաց նա այդ դրութեան մէջ. վերջապէս, մի չարգուշակ հայեացք դցելով կնոջ նամակի վրայ, յուզմունքից խեղդող ձայնով արտասանեց՝

— Այդպէս էլի՛, թողեցիր ինձ գնացիր... Ոչ, տիկին, ներեցէք, ես կը ստիպեմ ձեզ վերադառնալ:

Կատաղութիւնից քիչ էր մնում սիրու պատուէր: Կէս զիշերից շատ անց էր, բայց Ամիրանովը էլի նստած էր և սկի մտքովն էլ չէր անցնում, թէ պէտք է քնել: Նա բոլորովին թռւացել էր հոգեկան կուից և սկսեց ակամայ անձնատուր լինել մեղմ զգացմունքների: Վերջապէս, երբ որ արեգակի առաջին ճամագլութերը թափանցեցին նորա սենեակը, նա անգիտակցաբար դուրս նայեց պատուհանից ու ասաց, — այժմ նրանք այսուղից բաւական հեռու կը լինին:

Յանկարծ Ամիրանովի մաքովն անցկացաւ, որ, գուցէ, կինը իսկապէս լնդ միշտ է հեռացել իրանից...

Նա չէր կարողանում առանց սարսափելու երեակայել այդ... նրան յանկարծ թւեց, թէ ինչ որ մի բան այրւեց նորա ներսը, և նա ջղաձգաբար բռնեց կուրծքը:

Ախ, կնիկ, կնիկ, այս ինչ բերեցիր իմ զլսին. կաց, ես քեզ ցոյց կը տամ, — նորից կտաղելով շնչաց նա կապուտած շրթունքներով: Այսպիսի ծանր մտածմունքների մէջ անցկացրեց Ամիրանովը ամբողջ զիշերը մինչև լոյս:

Հետեւեալ օրը նա տանից գուրս չ'եկաւ ու առաւօտանից մինչեւ երեկոյ նա նստած իւր սենեակում մասածում էր, թէ ինչ անի, ինչպէս դուրս գայ իւր դրութիւնից:

Հացը գցեցին, բայց նա չը կարողացաւ ոչինչ բերանը գնել: Հեղինէն ու Թամարը սկի մոքիցը չէին հեռանում և սաստիկ կատաղութեամբ լցնում էին նորա սիրալ: Նա երդեց, որ անպատճառ կը ստիպի նրանց վերադառնալ իւր մօտ:

Մի քանի օրից յետոյ, երբ որ առաջին օրւայ բուռն զգացմունքը մեղմացաւ և նա սկսեց աւելի սառնասրութեամբ դատել, նա ինքն իրան ասաց.

Ոչ, այժմ այդ անկարելի է. պէտք է սպասել, թող նա մի քիչ հանգստանաց, վերջը, ինքս ինձ նորա առաջ արդարացնելուց յետոյ, աւելի համարձակ կը սկսեմ գործել և այնպէս կ'անեմ, որ խելքը զլուխը հաւաքի: Այս, անիծեալ կտակ, ինչքան դարդուբալա բերեց զլիսիս:

Թամարը Հեղինէին ամեն բան յացանած կը լինի... Նաև վատ բան դուրս եկաւ... այսպէս թէ այնպէս շատ ժամանակ ու շատ աշխատանք է գործ դրւած այդ ժառանգութիւնը ձեռք գցելու համար, հեշտ ու հանգիստ ձեռքից բաց թողնել ցիմարութիւն կը լինի. պէտք է աշխատել մի կերպ որ դոնէ մի մասը մնալ ինձ: Այդ թարս Պետրոսեանցն էլ ո՞րտեղից գուրս եկաւ. ինձ համար էր հենց աշխարհ եկել՝ ինչ է. սկի խօսք :ի ուղում հասկանալ: Համա ով դիտէ, տեսնենք...

Ամիրանովը մաքի հետ ընկաւ ու սկսեց հնարքներ փնտուել գործը յաջող կերպով առնելու համար, բայց ոչինչ գուրս չ'եկաւ, — ուշ ու միաքը Հեղինէի հետ էր...

Ուրեմն առաջ կը վերջացնեմ այդ կտակի գործը ու յետոյ կը սկսեմ միջոցներ փնտուել կնոջս հետ հաշտուելու համար, վճռեց նա: Ինչ լինի՝ չը լինի՝ ես իմ որդուցս ձեռք չեմ քաշիլ, Հեղինէն էլ չի ուզիլ բաժանել նրանից. լա՛ւ, բայց մինչեւ այն ժամանակը պէտք է մի հնարք գտնել, որ այս բանը խալիսի բերանը չ'ընկնի, թէ չէ էլ չեմ կարող ծանօթներիս երեսին նայել: Լաւ է, որ այս երեք օրը հիւանդ ձեւանալով տանիցը գուրս չէի դալիս, հօ մինչեւ վերջը չեմ կարող այդպէս անել. այ, վաղը պէտք է գնամ ծառայութեան:

Ամենքին կ'ասեմ, թէ կինս գնացել է բժշկւելու։ Ը, յիմար, որ ես եմ հա՛. մէկը հարցնող լինի թէ ով է նոյեմբեր ամսին հանքային ջրերը գնում բժշկւելու։ Տէր Ասուուած, ինչ անեմ, ո՞ր քարոզն ընկնեմ։ Այս, ինչ անողորմ կերպով վարւեց նա ինձ հետ։ Կարող էի սկի մաքովս էլ է անցկացնել, թէ կինարմատի ձեռքից այսքան բան կը քաշեմ ես, -- սաստիկ վրդովւած խօսում էր ինքն իրան հետ Ամիրանովը։

Զէ, ես ինձ խալիսի ծիծաղատեղ չեմ դարձնիլ, -- աղաղակից նա բարկութիւնիցը կաս-կարմիր կտրած և բռունցքով կատաղաբար խփեց սեղանին։

Վճռեցի. ամենքին կ'ասեմ, թէ իշխանուհի Շակունին յանկարծ հիւանդացել է և հետագրով կանչել է կնոջս։ Բան է՝ եթէ մինչեւ ամսու չը կարողացայ յետ բերել նրան, դժւար չի հաւատացնել, որ մնացել է այնտեղ հանքային ջրերում լողանալու համար, իսկ մինչեւ աշունք դեռ շատ ժամանակ կայ, շատ բան կարող է փոխւել։

Դեռ երկար ժամանակ Ամիրանովը անշարժ կանգնած էր մի տեղում՝ խորասուգւած մոտածմունքների մէջ։

## XXII

Հեղինէն ամբողջ ճանապարհին լուս էր ու շարունակ վախւը-լսելով չորս կողմն էր նայում, կարծես վախնուում էր թէ յետեկիցն ընկած կը լինեն։ Ամեն անգամ զանգակի զնզոց կամ ձիու ոտնառայն լսելիս՝ նա ամբողջ մարմնով դողում էր ու երեխացին պինդ սեղմում էր կրծքին։

Նրա հետ տանջւում էին նոյնակս և Ասունին, Թամարն ու հաւատարիմ դայեակը։ Շատ էր ուղում Ասունին մի կերպ փարատել Հեղինէի տիրութիւնը, բայց զգում էր որ այդ անկարելի է։

Վերջապէս նրանք հասան Վլադիկաւկազ։ Ասունին ինդրեց իւր ծանօթներից մէկին, որ Պետուիգորսկ էր զնում, անգ հասցնել Ամիրանովներին։ Հեղինէն երախտագիտութեամբ սեղմեց նրա ձեռքը և ասաց՝

-- Բաւական չէ՞, որ դուք այսքան նեղութիւն կրեցիք իմ պատճառով։ ինչու էք ու բիշներին էլ նեղութիւն տալիս

— Ինչեր էք ասում, տիկին Հեղինէ, այս ինչ նեղութիւն է. վերջապէս ինչ կը լինի, որ մի քիչ էլ նեղութիւն. ևս պատրաստ եմ ձեռքիցս եկած ամեն բան անել ձեր հանգստութեան համար,— զգացւած ասաց Ասունին:

Հեղինէն երախտագիտութեամբ ուղղեց նրա վրայ իւր վշտահար հայեացքը:

— Հապա Թամարը ո՞րտեղ է:

— Նա այստեղ մի ազգական կին ունի, առաւ օտւանից գնացել է նրա մօտ:

— Հա, գիտեմ. ամառը Պետրիգորսկ գնալիս մ.նք նրա մօտ իջանք, մի քանի օր մնացինք, — մոքամոլոր կերպով ասաց Հեղինէն ու դուրս եկաւ սեղանասանից մենակ թողնելով Ասունուն:

Ասունին կէս ժամի չափ կանգնած մնաց՝ մէջքը տւած վասարանին:

— Ալէքսանդր Վասիլիչ, սթափեցրեց նրան Թամարի ձայնը:

— Աս, դուք էք. ի՞նչ կը հրամայէք:

— Ես ուզում եմ այստեղ մնալ: Կարծեմ այն բոլորը լսելուց յետոյ, որ ես ձեզ պատմեցի, գուք էլ ինձ խորհուրդ կը սաք մնալ: Ես այստեղ կը կենամ մօրաքրոջս մօտ, որ վաղուց ինձ հրաւիրում էր իւր մօտ: Որ ամբողջ աշխարհքը տային ինձ, ես չէի բաժանել Հեղինէից, եթէ հաւատացած չը լինէի, որ իմ ներկայութիւնը միշտ անախորժ չիշողութիւններ պէտք է զարթեցնի նրա մէջ:

Ասունին ասաց որ իւր կարծիքով էլ լաւ կը լինի, որ նա մնայ Ալաղիկասակում:

— Խնդրում եմ, Ալէքսանդր Վասիլիչ, մի կերպ յայտնեցնէք իմ մոտադրութիւնը հարսիս. այնպէս արէք, որ սրտին չը կպի:

— Ապահով եղէք, օրիորդ, ես նրան կ'ասեմ:

Հեղինէն շատ հանգիստ կերպով լսեց այդ լուրը: Այդ ժամանակ նրա վրայ այնպիսի տրամադրութիւն էր եկել, որի ժամանակ մարդս մի տեսակ յոգնած սրտով խաչում է ձեռները և անձնատուր է լինում հանգամանքների բերմունքին:

Երեկոյեան ժամի իննին մօտ կը լինէր երբ Հեղինէն հասաւ Պետրիգորսկ: Միայն այդ ժամանակ նս սթափւեց ինքնամոռացութիւնից ու հաւատաց, որ վերջին օրւան գէպքերը և իւր համարձակ վարմունքը երազ չէին, այլ իրականութիւն:

Նա իջաւ Ասունու ասած հիւրանոցում և երկար անքնութիւնից յետոց քննեց մինչեւ առաւօտւան ժամի տասը:

Քունը բաւական կազդուրեց նրան:

Ժամի վեցին ծառան յաշնեց Հեղինէին, որ մի ինչոր կին ուզում է նրան տեսնել: Ասունու ազգականն էր—տիկին Աստուածատրեան: Նախընթաց օրը Ասունուց նամակ էր ստացել, որով նա ինդրում էր ընդունել իւր տանը Հեղինէին և ամեն կերպ օգնել նրան:

Աղքատ, բայց հիւրասէր Աստուածատրեանը այնքան թախանձագին իննդրում էր Հեղինէին տեղափոխւել իւր տունը, որ նա չը կարողացաւ հակառակել և համաձանեց:

—Քրոջս տղակին իմ հարազատ որդու պէս եմ սիրում. մենք այնքան լաւութիւն ենք տեսել նրանից, որ ես ինձ սաստիկ անպատած կը համարեմ, եթէ որ դուք չը համաձայնէք մեր տանը կենալ,—խնդրում, համոզում էր նրան տիկին Աստուածատրեանը:

Իսկ երեխերքս որքան կ'ուրախանան, մանաւանդ մեծ աղջիկներս: Նրանք արդէն հասել են, Աստուծով շուտով կը պսակեմ:

Աստուածատրեանի տանը տիրոջ խաղաղ նահապետական կեանքը ու շրջապատողների քաղցր վերաբերութիւնը բարերար ներգործութիւն ունեցան Հեղինէի յուզւած հոգու վրայ:

Այժմ միայն, երբ մի քիչ հանգստացել էր հոգով, նա սկսեց մոտածել իւր վրայ և զգաց իւր նոր դրութեան անշարժարութիւնները: Տանից ամենեին չէր դուրս գալիս և ամեն կերպ աշխատում էր, որ չը բացի իւր գաղտնիքը: Նատ էր ու զում զնալ քեռոնց մօտ, բայց չէր զնում; որովհեաւ ինքը Նակունին Պետադրուսկումը չէր, զնացել էր Պետերբուրգ իւր հիւ անդացած որդիներին տեսութեան:

Հեղինէն անհամբեր սրտով Ամիրանովից նամակի էր սպասում, յուսալով, որ նրա նահակը կ'ազատի իրան անտանելի անորոշ դրութիւնից:

Մի շաբաթ անցած վերջապէս նամակ եկաւ Ամիրանովից: Մարդը պատւիրում էր Հեղինէին անպատճառ տեղափոխւել իշխանուհի Նակունու մօտ, պահանջում էր, որ նա գաղտնի պահի իրանց մէջ ծագած գժառութիւնը, սպառնալով, հակառակ դէպքում, խիստ միջոցների դիմել:

«Ինչ պատրւակով կ'ուզես ապրիր Պետարիգորսկում, միայն թէ, խնդրեմ, ինձ էլ հաղորդիր, որ ես ուրիշ բան չ'ասեմ ծանօթներիս Առանձին ապրելու համար վկայաթուղթ ինձնից ստանալու յոյն չ'ունենաս,—գրում էր Ամիրանովը նամակի վերջում:

Այդ տողերը կարգալուց յետոց Հեղինէն գորովալից հայեացք դցեց երեխացի վրայ և վճռեց առժամանակ համաձայնել մարդու առաջարկած պայմաններին ու սպասել, թէ ինչ կը լինի յետոյն նա շատ էր մտածում, թէ ինչպէս քեռակնոջ առաջ արդարացնէր իրան, որ այնքան ժամանակ Պետարիգորսկումն էր ու չէր գնացել նրան տեսութեան, և, որ գլխաւորն է, թէ ինչպէս բացատրէր իւր գալու նպատակը, որ նա հաւատար իւր տւած բացատրութեանը: Վերջապէս կարմրելով ու անվճռական կերպով նա յայտնեց քեռակնոջը, թէ մարդը պաշտօնով փոխւում է Ստաւրոպոլի նահանգը:

—Ինչպէս է եղել, որ մենք այդ չենք իմացել, —զարմանալով ասաց իշխանութին:

Միխայիլ Պետրովիչը միշտ այդպէս է, նախառես և զգոյշ: Երկեր տեսել է որ լաւ օրեր են անում, մտածել է, որ յետոց գուցէ էլ այդպէս լաւ եղանակ չը լինի, ձեզ առաջ է ուղարկել: Այ, ինչ եմ ասել. տղամարդը այդպէս պէտք է լինի:

Մի թեթև և տարօրինակ ժամաց Հեղինէի երեսին:

Տէր Ասոռած, երբ պէտք է վերջապէս ազառւեմ այս ատանելի դրութիւնից, —զայրացած մտածեց նա ու համարեա վազելով դուրս եկաւ պատշգամբը մաքուր օդ ծծելու:

Զէ, այսպէս շարունակել չի կարելի, պէտք է միանգամից վերջացնել, —համարեա բարձրաձայն արտասանեց նա ու մի քիչ յետոց վճռեց նամակ գրել մարդուն:

Չը նայելով, որ Ամիրանովը շատ աշխատեց ծածկել իւր և կնոջ մէջ պատահած գժառութիւնը, բայց այդ չը յաջողեց նրան: Հասարակութիւնը վաղուց նկատել էր նրանց ընտանիքում տիրող երկապառակութիւնը և այդ պատճառով Հեղինէի գնալու լուրը կայծակի արագութեամբ տարածւեց քաղաքի մէջ: Սկզբում, ինչպէս միշտ լինում է, խօսում էին գահլիճների անկիւններում, իսկ յետոյ Թ-սի ամեն մի ծակուծուկում: Մի խօսքով ամբողջ քաղաքը այդ սկանդալով էր զբաղւած: Աւելորդ է ասել, որ էլ բամբասանք չը մնաց,

որ չ'անէին Հեղինէի մասին, այդ, իրանց կտրծիքով, դուրս ընկած կնոջ մասին։ Հասկանալի է նոյնպէս, որ Ամիրանովը զայրոյթիցը կատաղում էր տեսնելով, որ էլ անկարելի է թաքցնել եղածը, և ամօթիցն ուղում էր գետինը մոռնել, երբ որ իւր թշնամիների գէմքերի վրայ կարդում էր ծաղրի և չարախնդացութեան արտայացութիւն։ Ամիրանովի բարեկամները ասում էին, թէ Հեղինէն գնացել է Պետականուհի իշխանուհի Նակունու հիւանդութեան պատճառով, բայց նրանց, ի հարկէ, շատ քչերն էին հաւատում։

Եփեմիան, որ մի շաբաթ կը լինէր ինչ աեղափոխել էր եղբօր մօտ, ամեն միջոց գործ էր դնում նրա սիրտը հանդստացնելու համար։

Եկան Ծննդի տօները։ Աւբարոսի կոտակի գործը շուտով պէտք է վերջանար։ Պետրոսեանցը վճռել էր չը խնայել Ամիրանովին, որի գէմ նա շատ կարեւոր և հաստառ փաստեր էր ձեռք բերել։ Ամիրանովը այդ գիտէր ու վախենում էր և այդ պատճառով չը համարձակեց վէճ բարձրացնել դատարանի առաջ ժառանգութեան մասին։ Նատ ծանր էր, ի հարկէ, նրա համար ձեռք քաշել ժառանգութիւնից, բայց այդ ժամանակ նա այնքան զբաղւած էր իւր լնտանեկան հարցով և այնքան սաստիկ ցանկանում էր հաշուել իւր կնոջ հետ, որ պատրաստ էր լնդունել ամեն տեսակ զոհաբերութիւն՝ կնոջ աչքումը իրան արդարացնելու համար։ Կնոջը երկար ու ձիգ նամակներ էր գրում լի զղջումով ու քնքշութեամբ։

Սի օր նա նստած լսա սովորութեան մտածում էր իւր գրութեան մասին։ Դէմքը արտազայտում էր խորին մտահոգութիւն։ Ծագան ներս եկաւ ձեռին մի նամակ։ Հեղինէիցն էր։ Նա ուշի ուշով կարգաց հետև եալ տողերը։

«Զեր պահանջի համաձայն ապրում եմ՝ քեռակնոջն մօտ նրանց խաբում եմ։ Այդ ակամայ խաբէութիւնը ինձ սաստիկ տանջում է։ Էլ գիմանալ չեմ՝ կարող։ Վերջապէս ինչ միտք ունի ծածկել եղածը, քանի որ ես լնդ միշտ կորել եմ ամեն կատ անցեալիս հետ։ Դուք, ի հարկէ, կը սպառնաք ինձ, որ կը դիմէք դատարանին, օրէնքին, կը իլէք ինձնից երեխային, բայց ձեզ հաւատացնում եմ, որ զուր կը լինի այդ։ Իմ վճիռս անդրդւելի է։ Նախ քան ձեզ լիշեցնելը, որ դուք ձեզ ազտո համարէք ամեն տեսակ պարտակութիւնից դէպի

ինձ, ես խնդրում, աղաջում եմ ձեզ միայն մի շնորհք, մի անփոխացինելի շնորհք անել ինձ—թողնել ինձ մօտ մեր երեխային։ Դուք պէտք է համաձայնէք այլպէս անել հէնց երեխայի օգտի համար։ ոչ ոք, մինչեւ անգամ հայրն էլ, չի կարող այնպէս պահել պահպանը մի երեխայի ինչպէս մացրը։ Եսկ եթէ դուք այնքան քարասիրտ կը լինէք, որ չէք լսիլ իմ աղաջանքին ու կ'աշխատէք զրկել ինձ իմ մենակ միսիթարութիւնիցս, ես կը կռւեմ ձեր դէմ մինչեւ արիւնիս վերջին կաթիլը և հաւատացած եղէք, որ դուք չէք հասնիլ ձեր նպաստակին։

Հ.

Յ. Պ.-վերելի կոմմոդի աչքումը դուք կը գտնէք այն բոլոր ոսկեղինն ու ակնեղինը, որ դուք ինձ ընծայել էք։ Ես հետո վերցրեցի հինգ հարիւր բուբլի, որ մնացել էր այն հազար բուբլուց, որ դուք ինձ տիել էիք ծախսելու իմ օժտիցս։ Ես գիտեմ, որ մնացած վեց հազարը մենք վազուց ծախսել ենք։

Նամակը որ կարդաց՝ Ամիրանովը յուսահատ քաշ գցեց գլուխը և մօտ կէս ժամ՝ մնաց ացդ դրութեան մէջ։ Այդ ժամանակ միայն նա զգաց, թէ որքան մեղաւոր էր ինքը կնոջ առաջ և թէ որքան արգար էր կինը, և խիզճը սկսեց սաստիկ տանջել նրան, բայց այնուամենայնիւ նա էլի մոքումը հայհոյում էր Հեղինէին, զարմանում էր Թամարի յանդինութեան վրայ, անիծում էր Սահաւունուն, թէև ներքին մի ձայն նրան ասում էր, որ մեղաւորը Սահաւունին չէր։ Սիրտը քիչ էր մնաւմ պատուէր սաստիկ յուզմունքից։ Նա խեղդւում էր, շունչը կտրւում էր։ զղջումն էր պատճառը թէ զայրոյթը—զժւար էր որոշել։ Նա տժգոհ էր թէ իրանից թէ ամբողջ աշխարհից։

Սաստիկ յոգնած ու տանջւած՝ նա բաց արեց պատուհանը և սկսեց ագահութեամբ ծծել ցուրու օդը։

Մի քանի օրից յետոյ Ամիրանովը նորից նամակ գրեց կնոջը։ Այդ նամակի պատասխանին նա սպասում էր անհամբեր սրտով։ Նա գեռ յոյս ունէր, թէև թոյլ յոյս, որ կինը գեռ կարող է հաշուել իւր հետ։ Պատասխանը սոտացւեց երկու—երեք շաբաթից յետոյ և վերջնականապէս համոզեց նրան, որ իւր յոյսը դուր է։

Ամիրանովի տիրութիւնը՝ աւելի սաստկացաւ։ Կնոջ ու երեխայի կարօտը սաստիկ տանջում էր նրան։ Եփեմիան աշխատում էր համոզել եղբօրը, որ Հեղինէն անպատճառ կը վերադառնայ, եթէ միայն նա (եղբայրը) լսի իւր խորհուրդին և խիստ միջոցների գիմի, բայց Ամիրանովը չէր լսում նրան և իւր սրտի զառնութիւնը նրա գլխին էր ժափում։

Ամիրանովը շատ լաւ գիտէր, որ բոնի միջոցները իրան հասարակութեան ծիծաղատեղ կը դարձնեն և ոչ մի այն նպատակին չեն հասցնիլ, այլ և կը գրգռեն Հեղինէին իւր դէմ։

(Կը շաբունակւի)

# ԽՐԱՏԱԿԱՆ ՄԻ ՏԵՍԱԿ ԱՐԱԿԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ՄԱՐԿ ՏՈՒԷՆ

Մանկութիւնիցս սկսած ես սիրում էի կարդալ մի տեսակ խրատական առակներ, որոնց մէջ գտնում էի սրտիս համար բաւականութիւն և որոնցից քաղում էի կեանքի համար օրինակներ:

Այդ առակները միշտ ձեռաց էի պահում և ամեն անգամ, երբ վատ մոռքեր էին իմ մէջ ցղանում իմ մի որ և է մերձաւորի նկատմամբ, ես նորանց էի դիմում և նոքա քշում՝ ցրւում էին յանցաւոր մտածողութիւնս: Երբ ես զգում էի ինձ եսասկը, ժլատ և անազնիւ, զիմում էի կրկին առակներին և նոքա նորից հաղորդում էին ինձ վեհ տրամադրութիւն:

Բայց շատ անգամ իմ մէջ ցանկութիւն է երևացել, որ այդ արիւնահեղ առակները չը կորւեն բարեցածող տեղում, այլ շարունակած լինեն մինչև վերջ բարերարութեան ամբողջ պատմութիւնը բոլոր հետեւանքներով: Այդ ցանկութիւնը ժամանակով այնքան մեծացաւ իմ սրտում, որ վերջապէս վճռեցի՝ ես ինքս գտնեմ նոցա համար շարունակութիւններ: Ես եռանդով սկսեցի գործը առաջ տանել և մեծ նեղութիւնից ու բազմաշխատ հետախուզութիւններից յետոյ իրագործեցի մոռագրութիւնս:

Այժմ կաշխատեմ ներկայացնել ձեզ իմ աշխատանքի հետեւանքները, զետեղելով առանձին-առանձին առակները և աւելացնելով նորանց այն շարունակութիւնները, որոնք՝ իմ հետազօտութիւններից յետոյ՝ ես գտել եմ պատշաճաւոր:

I

## ԵՐԱԽՏԱԳԻՏ ՇՈՒԽԸ

Մի անգամ, մի բարեսիրաւ բժիշկ (որ բարոյագիտական զրքերի սիրահար էր) տեսաւ փողոցում թափառող մի շուռ՝ տանջւելիս կոտրած ոտի ցաւից: Բժիշկը տարաւ խոզաւլի արարածին իւր տունը, դրստեց ու կապեց նորա ցաւած ոորը և կրկին արձակեց փողոց:

Բժիշկը համարեա մոռացել էր իւր արած բարերարութեան մասին, երբ մի քանի օրից յետոյ, առաւտական, գաւ թի դուռը բացելուց՝ տեսաւ չնորհակալ շանը՝ կանգնած մի ուրիշ թափառական շան հետ, որի ոտը նոյնպէս կտրած էր մի ինչ որ պատճառից բարեսիրա բժիշկը իսկոյն օգնեց խեղճ կենդանուն, ըստ որում հիացաւ նախախնամութեան անհաս ազդեցութեան վերայ, որով երախտագիտութեան չնորհքը արտափայլում է մինչև անգամ մի չնչին շան մեջ...

## መግኘጭና—በትኩረት

Միւս օր առաւտոեան բժիշկը տեսաւ իւր դռան առաջ երկու առողջ, չնորհակալ զէմքով, չներ և նոցա հետ դարձեալ երկու կազ չներ: Բժիշկը սորանց ևս օգնեց և չորս շները գնացին իրանց ճանապարհը՝ թողնելով բժշկին հիացած և հոգեզմայլ զրութեան մէջ: Հետևեալ առաւտոը բժշկի դրանը կանգնած էին չորս առողջացած շները և նոցա հետ կրկին մի չորս հիւանդներ, որոնց վերայ բժիշկը զրեց նոյն խնամքը: Միւս առաւտոը բժշկի դրանը հաւաքւել էին արդէն տասնեւթեց շուն, որոնցից կէսը նոր կաղացածներ էին: Բժիշկը մինչև կէսօր հազիւ կարողացաւ բոլորի ոտներն էլ ուղղել. բայց նորա հոգեզմայլ տրամադրութեանը սկսեց խառնել մի տեսակ ծանրութիւն: Հետևեալ առաւտոեան արեգակը ծագեց՝ լուսաւորելու բժշկի զրան: առաջ արդէն երեսներկու շան, որոնցից տասնեւթեցը նոր կաղացածներ էին: Սոքա բոնել էին բոլոր մայթը և փողոցի կէս լայնքը, իսկ հետաքրքիր ամբոխը նայում էր այդ տեսարանին:

Կազ շների սոնոցը, բժշկւածների ուրախ ճիչը, դատարկապորտների ասեկոսէները տալիս էին տեսարանին մեծութիւն և վեհութիւն։ Փողոցում անցուգարձր դադարել էր։

Բարեգործ բժիշկը հրաւիրեց իւր հաշւով մի քանի ոսկոր գձողներ օգնութեան և հազիւ կարողացաւ մինչև մութն ընկնելլ վերջացնել իւր բարի գործը:

Բայց ամեն բան ունի իւր չափը, իւր սահմանը: Երբ լուսացաւ հետեւեալ առաւտօռը և բարի բժիշկը՝ տեսաւ նորից հաւաքւած ցաւադար շների անվերջ շարքը, նա բացականչեց:

—Պէտք է վերջապէս խոսովանեմ, որ ինձ խարել և յիմարացրել են բարոյախօսական գրքերը, որոնց մէջ ցոյց է տրւած ամեն բանի միայն երեսը և թագցրած է աստառը: Տուէ՛ք ինձ իմ հրացանը, չե, շատ է վատացել դրութիւնու:

Ձեռքին բռնած հրացանը՝ նա զուրս վազեց շէմքը և յանկարծ պատահորար կոխեց ամենաառաջին անգամ բժշկած շան ազին: Նունը խիզին բռնեց բժշկի ոտքը և խածեց: Նունը, որ հիացել էր իրան արած բարութիւնից, այնպէս մի ոգեսրութիւն էր ստացել, որ սկսել էր ցնորքների մէջ ընկնել և վերջապէս կատագել էր:

Մի ամսից յետոց, երբ բարեգործ բժիշկը տանջւում՝ էր ջրավախի արհաւիրքներից, նա մողովեց իւր տրտում բարեկամներին և յայտնեց հետեւեալ կտակը:

—Զգոյշ կացէ՛ք բարոյախօսական գրքերից: Նոքա յայտնում են իրողութեան միայն կէսը: Երբ որ ձեզ զիմելու լինի փուչկենդանուն մէկը օգնութեան, իսկ դուք կասկածում լինէք ձեր արածի հետեւանքների մասին, զգուշացէ՛ք առաջւանից և ինքներդ սպանեցէք այդ տեսակ տաւարին:

Վերջացնելով այս խօսքերը, բարեգործը շուռ եկաւ դէպի պատը և աւանդեց հողին:

## II

### ԲԱՐԵԳՈՐԾ ՀԵՂԻՆԱԿԸ

Մի չքաւոր պատանի գրող շատ էր աշխատում տպել տալ իւր յօդւածները, բայց ի գուր օրագիրները չէին ընդունում խեղճի գրւածները: Վերջապէս տանջւած զրկանքներից և քաղցածութիւնից, նա վճռեց պատմել իւր դրութեան մասին մի յայտնի հեղինակի և խնդրեց նորա հովանաւորութիւնը: Այս բարեհոգի մարդը իսկոյն

Թողեց իւր սեփական գործը և սկսեց թերթել պատանու յետ ստացած ձեռագիրները:

Վերջացնելով ընթերցանութիւնը՝ նա սեղմեց պատանու ձեռքը բարեկամաբար և ասաց:

— Ձեր աշխատանքը առանց արժանաւորութիւնների չէ. եկէ՞ք ինձ մօտ երկուշարթի օրը՝ բան ոնեմ ասելու:

Երբ նշանակած օրը պատանին եկաւ, երևելի հեղինակը՝ ժպիտը բերանին, առանց մի խօսք ասելու, բացեց ամսագրի նոր հրատարակւած համարը և դրեց պատանու առաջ: Պատանին, երբ տեսաւ իւր յօդւածը տողւած, հիացմունքից չը գիտէր, ինչ անէր:

— Ի՞նչով, աղաղակեց նա, չոքելով և արտաւելով, ի՞նչով կարող եմ ես երբ և իցէ յայտնել ձեզ իմ անշափ շնորհակալութիւնը:

Այս դէպքը թող ուսուցանի մեզ ուշադիր լինելու նոր զրական ոչքերին, որոնք կարօտ են մեր օգնութեան:

### Նարուական թիւն

Մի շաբաթից յետոց պատանին նորից եկաւ յայտնի գրողի մօտ արդէն հինգ շընկունաւած ձեռագիրներով: Բարի մարդը այս աչցելութեան վերայ փոքր ինչ զարմացաւ, որտիշեաւ բարոյախօսական գրքերից նա յիշում էր, որ նոր գրողը կարօտ է միան առաջին օգնութեան: Սակայն նա նայեց և այս ձեռագիրները: Չնչելով անպէտք ճուռմաբանութիւնները և հանելով միջից աւելորդաբանութիւններով լքցրած ամբողջ թերթեր, նա այնքան ուղղեց, որ ձեռագիրներից երկուսը կարելի եղաւ տպագրութեան տալու:

Անցաւ մի երկու շաբաթ և շնորհակալ պատանին եկաւ՝ նոր բեռ հետը: Յայտնի հեղինակը երբ առաջին անգամ կարողացաւ օգնել նոր ասպարէզ մանողին, զգաց իւր կատարած լաւ գործի քաղցրութիւնը և մինչև անգամ համեմատեց իրան բարոյախօսական գրքերում պատահող բարեգործների հետ. բայց այժմ սկսում էր նկատել, որ սա բարեգործութեան մի նոր, օտարութի դէպք է: Նորա ոգևորութիւնը կորաւ: Այսու ամենայնիւ նա չը կարողացաւ մերժել պատանուն, որ այնպէս միամիտ սրտով և հաւատով դիմել էր նորա հովանաւորութեան: Հետեւանքը՝ վերջ ամենայնի՝ այն եղաւ,

որ երևելի հեղինակը տեսաւ իրան ծանրաբեռնաւած նորափթիթ գրողի զրքերով։ Նորա բոլոր ջանքերը շուտով աչքի անցնել երիտասարդ զրողի բոլոր արդիւնաբերութիւնը — ի գուր անցան։

Հովանաւորողը սովորւած էր պատանուն ամեն օր խրատներ տալ, ուղղել, քաջալերել, միեւնոյն ժամանակը հոգալ, որ նորա գրւածները տպւեն, ուստի և կոկել նորա ձեռագիրները։

Երբ վերջապէս երիտասարդ զրողը հարթեց իրան համար ճանապարհը, նա յանկարծ մեծ անուն ստացաւ, երբ տպեց մի գիրք, ուր նկարագրում էր երևելի հեղինակի անաջին կեանքը, որով սակայն նա խոր խոցեց իւր հովանաւորողի սիրալը, որովհետև պատանին իւր նկարագրութեան մէջ գործ էր ածում կծու ծաղր և հազորդում էր ճշգութեամբ չը պատմելիք մանրամասնութիւնները։ Գիրքը ունեցաւ մեծ յաջողութիւն։ սաստիկ տարածւեց։ Երևելի հեղինակը շատ տիրեց այս տմարդի վիրաւորանքից։

Ծամր հառաշելով նա ասաց.

— Աւաղ, զրքերը ինձ խաբեցին, նոքա չեն հաղորդում բարյագիտական գէպքերի մանրամասնութիւնները։ Զգուշացէ՛ք, բարեկամնե՛րս, նոր հեղինակներից։ Ով անյայտութիւնից չի կարողանում գուրս գալ, նորան օգնելով՝ գուք մի չարիք էր պատրաստում ձեզ համար։

### III

#### ԵՆՈՐՃԱԿԱՆ ԱՄՈՒՍԻՆԸ

Մի անգամ տիկին Մակսագէնը գնում էր կառքով իւր վոքքիկ որդու շետ միասին քաղաքի մեծ փողոցով։ Յանկարծ ձիերը խրանեցին, կառաղի վաղեցին և կառավարին վայր գցեցին։ Իսկ մայր ու որդին սարսափած մնացել էին կառքում։

Յանկարծ մի երիտասարդ սալլապան, տեսնելով այդ, թողեց իւր սալլը, ընկաւ համարձակութեամբ ձիերի առաջը և կանգնեցրեց նորանց։ Նորհակալ տիկինը նշանակեց սալլապանի թւահամարը և երբ տուն վերադարձաւ՝ պատմեց նորա քաջութեան մասին իւր ամուսնուն (որ ի գէպ ասել կարդում էր բարյախօսական զրքեր)։

Ամուսինը՝ լսելով պատմութիւնը՝ արտասւեց, փառք տւեց Ամ-

նակալին, առանց որի կամքի մի ճնճղուկ անգամ չի ընկնում բունից, ուղարկեց քաջ սայլապանի ետևից և տալով նորան հինգ հարիւր դոլլարի ստացական՝ ասաց.

Առե՛ք այս, պարոն Ֆերգիւսոն, իբրև վարձատրութիւն ձեր արած աղնիւ գործի համար և եթէ երբ և իցէ կարօտութիւն զգաք՝ քաջ իմացէք, որ ինձանում կը գտնէք երախտագէտ մի սիրու:

Այս դէպքը մեզ սովորեցնում է, որ բարի գործը միշտ վարձատրում է նորա կատարողին, որչափ և աննշան լինէր նորա հասարական դիրքը:

### Հ Յ Ի Ր Ա Շ Ա Հ Ա Վ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Մի շարաթից յետոյ եկաւ սայլապան Ֆերգիւսոնը և խնդրեց պարոն Մաքսապենին օգնելու նորան աւելի յարմար պաշտօն ստանալու, որովհետեւ նորան արժանի չէր, որ նա ապկեր տանել բերելով զբաղւէր: Մաքսապագենը տուեց նորան զբագրի պաշտօն լաւ ռոճիկով:

Նուտով Ֆերգիւսոնի մայրը հիւանդացաւ և Ֆերգիւսոնը... Որպէս զի չը ձանձրացնենք ընթերցողին, յայսնենք մի անգամից, որ պարոն Մաքսապենիր համաձայնեց ընդունելու նորան իւր տունը: Մայրը տեղափոխւեց. բաց սկսեց շատ տիրել իւր փոքրիկ երեխաների կարօտից: Ուստի հարկաւոր եղաւ, որ փոքրիկ Մերին, Զուլիան և չարաձճի Զիմմին էլ տուն բերւեն:

Այս Զիմմին ունէր մի զմելի, որը ձեռքին նա զնում է հիւրասենեակ և կտրատում է թանկագին պաստառները և փայնում կահ կարասիքը: Երկու օր էլ անցնելուց յետոյ յանկարծ ընկաւ սանդուխոքից, վիզը կոտրեց և մեռաւ: Թաղումին հաւաքւել էին մինչեւ տասնեօթ մարդ բարեկամներից: Սոքա բողորը ծանօթացան տանտէրերի հետ և խնդրեցին տանը պաշտօններ, որ և վերջապէս ստացան:

Ֆերգիւսոնները ձեռքն առին ամբողջ տունը: Պառաւը յաճախ հարփում էր և այս ու այն կողմ յիշոցներ թափում: Բայց շնորհակալ Մաքսապենները իրանց պարտքն էին համարում նորան ուղղել, յիշելով նորա որդու արած բարերարութիւնը: Ֆերգիւսոնը յաճախ տուն էր գալիս, աշխատանք քիչ էր բերում ընտանիքին և խնդրում էր, որ իւր համար գտնէին աւելի հանդիսաւէտ աեղ,

որ և յաջողեց ճարել Մակապաղենի շնորհիւ։ Յայց երբ եկաւ ամառայ արձակուրդի ժամանակը՝ Ֆերգիւսոնը սկսեց յամառ կերպով պահանջել, որ նորան ուղարկեն Եւրոպա առողջութիւնը կազդուրելու համար։ Մաքսապաղենը այդտեղ այլ ևս չը կարողացաւ համբերել, բողոքեց այդ անկոչ բռնաւորի դէմ և վճռական կերպով մերժեց։ Ֆերգիւսոնի մայրը այնպէս զարմացաւ, որ օղու շիշը վայր դցեց ձեռքիցը. և նորա յիշոցախօս բերանը մի քանի բուլէ պապանձւեց։ Փոքրինչ յետոյ՝ երբ ուշը վերան եկաւ՝ պառաւը կատաղի կերպով գոռաց։

— Այդպէս է ձեր շնորհակալութիւնը իսկ մտածել էք արդեօք թէ որտեղ կը լինէին ձեր կինը և որդին, եթէ իմ որդու օգնութիւնը չը լինէր։

Ֆերգիւսոնն էլ վերաց հասաւ միենոյն նախատինքով։

— Այդպէս է ձեր երախտագիտութիւնը Դուք մէկ ասացէ՞ք— ես ազատե՞լ եմ ձեր կնոջ կեանքը թէ ոչ։

Եօթն ազգականները վազեցին եկան խոհանոցից և մէկը միւսից առաջ ընկնելով՝ նախատեցին։

— Հը՛, այդպէս է եղել ուրեմն ձեր շնորհակալու թիւնը։

Ֆերգիւսոնի քոյրերը զարմացական հայեացքով սկսել էին նոյնպէս արտնջալ և բերանները բացեցին նախատինք թափելու, բայց նոյա մայրը ցանկարծ սկսեց լալ և բացականչեց։

— Մէկ մտածեցէ՞ք, որ մեր փոքրիկ Զիմմին այս տանը կորցրեց իւր կեանքը։

Մաքսապաղենի զայրոյթը աւելի ևս ստուկացաւ. և նա կատաղի կերպով գոռաց։

— Դուրս իմ տանիցը, մուրացկանների ազգ, դուրս ինձ խարել էին գրքերը, բայց այսուհետեւ այդպէս բան չի կրկնուիլ. առ ել բաւական է։

Յետոյ՝ դիմելով Ֆերգիւսոնին՝ շեշտեց։

— Թէե յիրաւի դու ազատել ես կնոջս կեանքը. բայց ես կը սպանեմ տեղն ու տեղը ամեն մի անպիտանի, թէգուզ նա քեզանից ել աւելին արած լինի։

Որովհետեւ ես քարոզի՛ քահանայ չեմ։ այդ պատճառով ներելի է, եթէ ես վերջումն եմ զնում վկացութիւնս՝ փոխանակ սկզբում բերելու։ Ես նորան քաղում եմ «Նախագահ Լինկոլնի մասին ցիշողութիւններ» դրքից։

«Հակետ դերասանը Ֆալստաֆի դերում հիացնում էր Լինկոլնին։ Երևելի նախագահը, ինչպէս յայտնի է, սիրում էր ուրիշներին հաղորդել իւր համակրութեան զգացմունքները։ ուստի և Հակետին նա զրել էր մի սիրալիր փոքր տոմս, որի մէջ արտայացտել էր նորան՝ խաղից ստացած բաւականութեան զգացմունքը։ Հակետը՝ ՚ի պատասխան այդ տոմսի՝ ուղարկում է մի զիրք՝ կարծեմ՝ իւր յօրինած։ Յետոյ գրում է նախագահին մի քանի նամակներ։ Մի անգամ, ես զնացել է նախագահի հրաւերով Ալփիտակ Տան պալատը։ Նախագահի սենետակը զնալուց ես պատահեցի Հակետին՝ նատած ընդունարանում՝ ապասող գրութեան մէջ։ Նախագահը հարցրեց։

—Ո՞ւ ոք չը կա՞յ ընդունարանում։

Երբ ես զրական պատասխան տրի և յացնեցի Հակետի մասին, Լինկոլնը վրդովւած ասաց։

—Այս, ես չեմ կարող, ես չեմ ցանկանում տեսնել այդ պարունին։ Ես կարծում էի, նա արդէն զնացել է։

Յետոյ աւելացրեց,

—Այս հանգամանքը բնաորոշ կերպով ապացուցանում է այդ շրջանի մարդկանց հետ բարեկամութիւն հաստատելու անցարմարտութիւնը։ Դուք զիտեք, թէ որչափ ես յարգում էի Հակետի դերասանական տաղանդը և զիտեք իմ նորան համակրական տոմս զրելը։ Նա ուղարկեց ինձ այս զիրքը և ես կարծում էի թէ դորանով ամեն բան վերջացաւ։ Նա լաւ գերասան է և լաւ անուն ունի։ Եւ կարելի էր ենթագրել, որ իւր և նորա մէջ սկսւած բարեկամական քայլը ոչ մի ուրիշ հետեւանք չէր ունենալ։ Բայց ի՞նչ էք կարծում, ի՞նչ է նա ինձնից ցանկանում։

Ես չը կարողացաւ գուշակել։ Լինկոլնը շարունակեց։

—Նա ցանկանում է, մի խօսքով, ստանալ դեսպանի պաշտօն Լոնդոնում։ Տեսնո՞ւմ էք քաջին։

Վերջումը պէտք է յալտնեմ, որ Ֆերգիւսոնի մասին պատմածս խսկական դէպք է, որին ես ականատես եմ եղել: Ես միայն փոքր ինչ փոխել եմ այսուեղ մանրամասնութիւնները, որտէս զի Ֆերգիւսոնը չը ճանաչւի:

Իմ ընթերցողներից իւրաքանչիւրը իւր կեանքի զգացւած և բարի տրամադրւած բովիներում՝ խաղացած կը լինի անշուշտ բարեգործ հերոսի դեր: Ես շատ կը ցանկայի դիտենալ, թէ նոցանից քանիսը հաճութիւն կզգացին պատմել իրանց հետ պատահած դէպքերը բոլոր նոցա մանրամասնութիւններով և հետևանքներով:

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Լ Ե Ա Խ Ե Ն Ց Ի

Ծիծաղեցէք, իմ ընկերներ, վշտիւ վրայ,  
Տարօրինակ անգամ թող նա ձեզ թըւայ,  
Համարեցէք նրան հիւանդի զառանցանք —  
Ինձ չեն խայթում ձեր ծիծաղն ու կըշտամբանք:

Ծիծաղեցէք, եթէ նրա մէջ չէք տեսնում  
Մի երկայն շարք մտածումների, ուշ, տրտում  
Մտածումների, որ չեն գտնում պատասխան,  
Որ օժիտ է ինձ մեր կեանքից չուառական:

Ծիծաղեցէք. բայց գիտցէք, որ իմ վիշտը  
Չէ ինձ յատուկ. նրան զգացել է ձեր սիրտը,  
Նա թագնւած է ձեր ծիծաղի տակ անձալն:  
Երանի՛ նրան երբէք չը զգաք ինձ նըման:

Թանձը մշուշի պէս շուրջ խաւարն է տիրում,  
Լոկ խորերում, ինչպէս արևն ամպերում,  
Մի պայծառ լոյս ճգնում է նրան պատառել,  
Յալտնւել, փայլել, չորս կողմ մըշուշը ցրւել:

Բայց սոսկում ենք մենք այդ լուսից բաղդաբեր՝  
Նզովւած կեանքի դարձած տըգեղ ըստրուկներ,

Մինչ մեր ետև թաղւած վիհի խաւարում՝  
Ըսդհանրութիւնն խոր տնքում է, մահանում...

Ծիծաղեցէք, իմ ընկերներ, վշտիս վրայ,  
Թէ նրա գաղտնի միտքըն անյայտ ձեզ մընալ:  
Երանի՛ ձեր ծիծաղից յետ բնաւ այնպէս  
Դուք չը թափէք արտասուքներ, որպէս ես:

9 յուլիսի, 1890 թ.

\* \* \*

Մէջ ջանար դընել սպեղանի վէրքիս.  
Թողի հոսէ արիւնս. դառըն տանջանքիս  
Նա կը տալ աւարտ—Հանգիստ ցանկալի.  
Բոպէն էլ բաւ է, որ մարդը մեռնի:

Միջ ջանար վէրքիս սպեղանի դընել  
Եւ դադարի՛ր զուր արտասուք թուփել.  
Դու գիտես, որ լոկ արիւնն կը լինի  
Մարդկութեան ցաւի միակ սպեղանի:

5 մայիսի, 1891 թ.

\* \*

Այս փառող աշխարհից արգանդից վիժւած՝  
Որդները քաղցի ու թըշւառութեան,  
Որդները կեանքի անարդարութեան  
Նոյն իրանց մօրը մարմնում ցոմաքած  
Դըբել են իրանց ախտաւոր բոյնը,  
Տարածել նրա մէջ մահաբեր թոյնը:

Եւ հազարաւոր կողմերից ճաքւած,  
Որպէս տիրողի հնացած ապարան,  
Այդ հին աշխարհը որոտանըման  
Կը կործանւէ՛ հիմքն արմատից փըլած,  
Արեան անձրեսով ողջ շաղախւելով,  
Դիերի լեռներ չարս կողմ կանգնելով:

Բայց լըղի է այդ աշխարհը հնացած.  
Որնալի ժամին ծննդաբերութեան  
Պիտ ծագեն օրերն սուրբ արդարութեան...  
Փըլի՛ր, կործանւի՛ր, աշխարհ զառամած.  
Թո՞ղ տանջւած մօրը ցաւից դժոխալին  
Ծագէ զաւակին մի կեանք դըախտալին...

## ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ

(Մի հոմառօտ հայեացք նորա կեանքի եւ գործունէութեան վերայ)

Ա. Մ. Վ. Բ. Ռ Ո Յ Բ Ի

(Նարունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

Գ.

Աղամեանի հայեացքը գերասոնական արեւեստի մասին.—Նորա գլխաւոր գերեզը.—Խոնչ արեց Աղամեան հայ բեմի համար—Աղամեան իցը բանաստեղծ և նկարիչ—Խոնչ էր օվըում Աղամեան—Մեր մասնաւոր կարծիքը նորա մասին ընդհանրապէս

Ադամեանի հայեացքը գերասոնական արեւեստի մասին—Աղամեան, գմբաղդաբար, ծնած էր մի աճնալիսի երկրում, ուր զեղարւեստը չունի ոչ մի քաջալեր և խրախուսող։ Բնութիւնը տալլիս էր իւր տուրքը, արտադրում էր, բայց չը կար մի հաստատութիւն կամ հիմնարկութիւն որ արտադրուածը պահպանէր և հոգ տանէր նորա զարդացմանը։

Սուլթան Ապդ-իւլ-Մէջիզի օրով, երբ չողենաւերը լողալով աւելի մօտեցրին հեռու Արևելքը Եւրոպակին, ոկան եւրոպական զանազան ազգերի հոսանքներ, հեղեղել սուլթանների մակրաքաղաքը, որոնց չարաբերութիւնները աւելի սերտացան, երբ Խրիմի պատերազմի առթիւ եւրոպական բանակներ կ. Պոլիս մտան չօգնութիւն Սուլթանին։ Աչք միջոցներն էր որ կ. Պոլսում եկան և սկսան իրանց ներկազացումները եւրոպական, մասնաւորապէս խտալական խմբեր։ Ահա սովոր էին որ առաջին անգամ իրանց խաղով ազգեցին կ. Պոլսոցի մի խուժը հաւ երիտասարդների վերաէ և նոցա մէջ միտք ըղացրին աղղափին թատրոն հիմնելու, որին կնքել են

1) Տե՛ս «Մուրա» № 9։

«Արեկելիան թատրոն» անունով 50-ական թւականներին. Մեր այս փոքրիկ լսուածաբանի նպատակն է, ցոց տալ ընթերցողին թէ աշնավիախ մի ինքնարուս հիմնարկութիւնից չէր կարելի շատ բան պահանջնել. Անդրանիկ հաջ դերասան և դերասանուհիներ երեցան բիմում, որոնցից շատերը, ականատեսների վկացութեամբ, իրանց բիմական տաղանդով զարմացրին նուն խոկ եւրոպացիներին, Խոկ թէ հասարակութեան առաջնորդը՝ մամուլը, ինչ հակեացք ունէր թատրոնական արւեստի մասին՝ այդ արդին վիշած նոք մեր գրւածքի նախորդ մասում, հետևաբար աւելորդ է կրկնելը. Հետևաբար առիթ ունենք մտածելու թէ որքան տաղանդաւոր դերասաններ լատաջ են եկել դեռ առաջին քալում՝ որ կարողացել են իրանց խաղով միանգամից հասարակութիւնը սերա կապել թատրոնի հետ. Այդ միջոցներում էր որ մի սիրունիկ տղակ, թողած ամեն ինչ, թափառում էր թատերաբեմիրի վերակ, դերասանների խմբերում և նոցա տներում. Դա Աղամեանն էր. Նա իւր բոլոր ուշադրութեամբ հետեւում էր մեծ դերասանների խաղերին, թէ նոքա ինչպէս էին խօսում, բարկանում, տանջւում և մեռնում. Նա էլ սկսու. հետեւել կենդանի օրինակներին, թէ առանձին և թէ խաղալով, գնելով իւր դերերում աւելի կորով, զգացմունք և միացնելով դրանց՝ ներդաշնակ ձանը. Սորանցով արդէն նա բաւական զանազանում էր իւր ընկերակիցներից. Աւագէս նա մարզում էր դրամաներում, գլխաւորաբար սիրահարի գերեր կատարելավ. Ինչպէս այն ժամանակակ բոլոր բեմերում, նոյնպէս և հայկականի վերակ, աիրապետում էր և դան ակով խօսելը, որ մեր մէջ մտած էր մասնաւորապէս իտալացիներից. անբողջ խումբը վարակւած էր այդ հիւանդութիւնով, ով աւելի լաւ եղանակէր, (մանաւանդ աղագանին անւանւած պատմական պիէսներում), նա էր ամենալաջող դերասանը. Աղամեան քիչ ունէր այս թերութիւնից՝ իրի աւելի ուշ բեմ դուրս եկող դերասան.

Այցելով Տփխիս և ապա Ռուսաստան, շիւելով ոռւսական լաւ դերասանների հետ, նա մօտիկ ծանօթացաւ բիմի այժմեան րէ ալ ական ուղղութեան. դորան պակաս չէին օգնում և թատրոնական ընտիր քննազատութիւններ. Բայց ինչպէս էին ուղղութիւնը անտանելի էր իւր եղանակով, պակաս անտանելի չէր և բէալականութեան երկրպագուների ուղղութիւնը, որին զոհաբերում էին թատրոնական արւեստի բոլոր զիղագիտական մասը. Անաւասիկ այս կէտի վերակ ամենայն իրաւամբ Աղամեանը զարդանում էր. Նատ անգամ խաղի բնականութիւնը պահանջում է որ մի ամբողջ խօսակցութիւնը կամ մենախօսութիւնը կատարւի այնպէս՝ որ դերասանի կոնակը միայն տեսնէ հասարակութիւնը. Դերասանի խաղից ինչ հաճողք կարող է ստանալ հանդիսականը՝ երբ նորա դէմքի արտաչափութիւնը իրան անտեսանելի մնակ. Այսպիսի դէպքերում բնականութիւնը միշտ պէտք է զբնի զեղարւեստին, և ամենաթունդ բէալիստ զերասանն անդամ չը պէտք է վրդովի այս զոհաբերութիւնից. Այս մասին կարելի

Եր դեռ շատ օրինակներ բերել, բայց կարծում ենք որ աւագանով մեր միտքը հասկացրինք. Աղամենան, (ինչպէս նաև Ֆրանսիայի, Էալանի կատա. կերգակ կօքըլէն, և ուրիշներ) պաշտպանում էր այն միտքը թէ բնականութեան պատճառով երբէք պէտք չէ ոտնակոյն անել գեղարւեստական մասը. Բնականութիւնը պէտք ներդաշնակ կերպով թեմի վերակ միանակ գեղարւեստական նրբութեան հնտ, ազլապէս թատրոնը չի հասնիլ իւր զլխաւոր նպատակին, այն է՝ ուղղել, մեղմացնել բարքերը՝ գեղարւեստօրէն ներկացացնելով ձիւտ տիպերը ճիշտ ներկալացնելիս, առանձին ուշագրութիւն դարձնելով գեղարւեստական մասին, երբէք բնականութեան դէմ դործած չինք լինիլ, ընդհակառակը, բնական տիպը իթէ ունի իւր մէջ թերութիւններ, շատ լաճախ կը պատոսպարուի գեղարւեստի վերարկուի տակ. Մենք բոլոր կենզանի վկաներ ենք թէ Աղամենան որքան բնական էր խաղում իւր գերերը, միենոն ժամանակ մտյան էր իւր գերերում և գեղարւեստը, էսաէտիկան. Շատ ճշութեամբ նկատած էր „Օդես. Տելեգրաֆ“-ի օղւածագիրը թէ Աղամենան երեք քառորդովմ բէալիստ և մի քառորդովմ միան կլասիկ էր Ամփոփինք արւեստի մասին Աղամենանի քարոզածը.

Ա. Առանձին խնամքով և բնականութեամբ պատրաստել դերերը, միենոն խնամքով միացնելով նորան գեղագիտական մասը:

Ճաշակի նրբանալու և զարգանալու պատճառով հասարակութեան մէջ աւելի և աւելի պահանջ է զգացւում դէպի կատարելագործեալ գեղարւեստը Խոհարարը որ միան կերակոր եփելու պաշտոն ունի, որ շատ զրական գործ է, խոհարարը, ասում ենք, ոչ միան ջանք է գործ զնում իւր կերակրի ներքին արժանաւորութեան, քմաց պատճառելիք հաճուքին, այլ և աշխատում է կարելի եղած գեղարւեստական ձեր տալ նորա արտաքինին, ուզում է կշտացնել՝ միենոն ժամանակ հաճուք պատճառելով. մեր աշքերին, Ուրիմն մի խոհարար, որի կոչումը լոկ փոր կշտացնել է, նա որ աշխատում է զոհացում տալ մեր գեղագիտական ճաշակին, որքան առաւել մեծ է զերասանի պաշտոնը, որի կատարելիք գործը լոկ գեղարւեստական է:

Բ. Հայ լեզւի առողանութեան խնդիրը. Սա ևս զերասանական արւեստի գեղագիտական մասի հնտ իրը ուղղակի առնչութիւն ունեցող խնդիր, միծ կարևորութիւն ունի, և հանգուցեալ արւեստագէտը լաճախ ցաւում էր իշխում այս մասին իւր ընկերների ունեցած անտարբերութիւնը. ոմանք անփոյթ էին, ոմանք անկար, ոմանք էլ թէ մէկն էին և թէ միւսը.

Հայ լեզւի բառերի կազմութիւնից և շեշտեր չ'ունենալուց շատ դժւար է նորան բեմի վերակ արտասանել՝ տալով նորան այն կատարելութիւնը՝ որ պահանջում է թէ ներկալացնելի գերը և թէ ճաշակը. Արտասանութեան մէջ զլխաւոր տեղ է բռնոււմ նաև բառերի դասաւորութիւնը. Շատ անգամ, իրանց մէջ կոկորդակին բաղմաթիւ տառեր պարունակող բառեր շարւելով միմիանց մօտ, զերասանին եթէ անկարելի չեն դարձնում,

գոնէ դժւարացնում են արտասանութիւնը և կրքերի արտազագաւութիւնը։ Այդ պարագալում հեղինակը, կամ թարգմանիչը ևթէ անփոլթ է եղել, զերասանը ինքը պիտի լրացնէ այդ պակասը՝ լանուն գեղարւեստի։ Աղջակա էլ անում էր Աղամեան։ Բայցի դորանից, նա բառերը այնպիսի գեղեցիկ կերպով շեշտում էր, որ հայ լեզուն կրկնակի գեղեցկանում էր ոչ միայն հայերի, այլ նուն իսկ օտարների լուրիքին։ Աղամեանի քննադատները այս տեսակէտից անչափ լառաջ զնացին, որ մինչև անգամ ասեցին. «Այն լեզուն որով նա խաղում է, թէ հանրէն է, բայց ոչ երբէք կոլորդավին, այլ բաւական քաղցրահնչին, հեշտալուր և ալլափոխած լեզու է, կարծես անգլիական և խոալական լեզուների մի խառնուրդ լինի։ Մեզ ծանօթ հայերէնը՝ Աղամեանի բերնում այն է՝ ինչ որ է հրէական լեզան գերմաներէնի մօտ. իսկ առողանութիւնը աւելի ընտիր է։ Անպէս որ մի մարդ եթէ խոալերէն և հայերէն չը դիտնալ, մինենոն է թէ Օթէլլօն լոէ հացերէն կամ խոալերէն։ իսկ գերազատումը՝ ճաշակի խնդիր է»։ Ահա թէ ինչ և նշանակում գեղեցիկ և մշակւած առողանութիւն։ Բայցարձակ կարող ենք ասել, որ հայ լեզուի անտեղեակ ոչ մի քննադատը, որքան էլ լաւ գերասանի խաղ տեսնէր, չէր համարձակւիլ ալսպէս խօսել հայ լեզուի մասին, եթէ չը լսէր անքան գեղեցիկ և ազդու առողանութիւն՝ որպիսին ունէր Աղամեան, Բայց մենք հաւատացած ենք որ Աղամեան շատ չէր մտածում իւր արտասանելիքի մատին։ Նորա տաղանդը և զարդացած ճաշակը խկոն թելադրում էին նրան թէ ինչպիս պէտք է արտասանել։

Նոյն գեղագիտական տեսակէտից հետեւմ էր նա իւր բեմական հանդերձանքին և գլխաւորաբար զրիմին։ Ոչ մի գերասան զեռ չէ, ունեցել նորա գեղարւեստական, ճիշդ, և ալլափոխուող զրիմը։

Իոկ եթէ նա առհասարակ հետեւմ էր էֆֆէկտի, ճիշդ է. բայց նորա գործադրած էֆֆէկտները ոչ թէ աչքի էին ընկնում իրեւ անբնականութիւններ, այլ ընդհակառակը, խաղի բնականութեան սահմանից դուրս չը գալով, գեղեցկութիւն էլ էին պատճառում։ Վերջերա նրանում երբէք մի անտեղի էֆֆէկտ չէ երեացել։

\* \* \*

Նորա գլխաւոր գերերը—Աղամեանի գլխաւոր գերերի վերաբ մենք մի ընդհանուր հալեացք միան կը ձգենք, տւելի՛ հետաքրքրութներին թողնելով որ կարդան նորա մասին գրւած բազմաթիւ քննադատութիւնները։

Խօսելով թէ Աղամեան ինչ աչքով էր նաևում գերասանական արւեստի վերաբ, մենք մասամբ ասած եղանք թէ ինչ ազտով՝ պատրաստում էր իւր գերերը. Դերերը պատրաստելիս անչափ օգնում էր իրան իւր արտական էր որ մի անգամ կարդար կամ լսէր, արդէն ըմբռնած էր և մի վարժ լուչարարով պատրաստ խաղալու. իւր

գերը տովորելուց յատոյ միացեալ ժամանակը նա նւիրում էր ուսումնասիրութեան, Վերջերս պատրաստած իւր գեղեցիկ թէպէրտուարի մասին ինչ նոր գրւածք որ լուս էր տհոնում (զինաւրաբար Շեքսպիրի մասին), նա խոկոն ձեռք էր բերում կարդում և ասլո իւր կարծիքը լայտնում: Նա հաւասար լաջողութեամբ խաղում էր Համլէտ, Օթէլլօ, Կորրադօ, Քին, Ռեբիէլ Ակամա և Արքինին: 1887 թ. Աղամեան երբ պատրաստում էր խաղալ «իր Արքան», լուղները տարակուառում էին, որովհետեւ ալս դերը բոլորպին տարրեւում էր վերուիշեալներից, բայց Աղամեանի հանձարը զողթող էր նա նոնքան զեղեցիկ և կատարեալ Ալիր էր որքան կօրրադօ:

Աղամեանի դերերի պսակը Համլէտն էր: Աւ ոչ մի դերասանի լաջողած էր այնքան ճշմարիտ և գեղարւեստական Համլէտ ներկայացնել՝ որպէս Աղամեան, Թէսլէտ մեղանում զովում էր Աղամեան, բայց հայ մամուլը երբէք չ'առաց նորա մասին ալն՝ ինչ որ ասեցին Ռուսաստանի թերթերը Ալսպէս, Մոսկովսկի Ենդօօտի“-ի քննադատը խոստվանում է որ առ առ Ռոսսի, և ոչ էլ հռչակաւոր Սալւինին հաւասարուում նու Աղամեանին՝ Համլէտի դերումու խոկ Պէկյուտու հանդէսը զրում էր. «Ճակ դերասան ով. Աղամեան, առաջին անգամ՝ բերմ զուրս զալով Համլէտի դերում, լիովին արգարացրեց ալն զովայի մասական լայտարարութիւններն, որ հրատարակուում էին Մոսկւակի լրագիրներում... Առանց ընդօրինակիլու, առանց նմանելու Համլէտի հռչակաւորը կատարողներին, նա սանդեել է լիովին արևստագիտական մի տիպ՝ ամենամնիւրամասն կերպով ուսումնասիրւած և կոկւած հրաշալի նրբութեամբ: Ներկայացման ալգ ինքնազիւտ սեպհականութիւնը նրանումն է կալանում, որ Աղամեան Համլէտի խօսքերում, և զործողութիւններում մտցրած է շատ աւելի կիրք և կորովյ քան Ռոսսի և աշխարհահռչակ Սալեինի...»:

«Աստղին անդամնն է որ ռուսաց բնիսում մի ազալիսի բան ենք անուածմ. վաստ չեր լինի, եթէ մեր «արքունի» գերասանները հետեւին և բան սովորեին իրանց հայ արևստակցից, որ ինչպէս կարծում ենք, թէկ վկաչական չունէ, բայց ունէ արևստագիտութեան նուրբ ճաշակ և դերասանական բարձր տաղանդ...»

Աղամեանի Համլէտի մասին երկար և քննադատական լոգւածներ նւիրած է Պէկյուտու լայտնի ոռւս զրագէտ Զուզկօ, որոնց մէջ մեծ գովիստով է խօսուում Աղամեանի դերակատարութեան մասին:

Ոգեստան, որ տիսած է բոլոր թատրոնական հակաները, և թատերական զարգացած ճաշակի տեսակէտից մնե համբաւ է վայելում, Աղամեանին զովարաններու համար մայրաբազաքի թերթերից մի քալը էլ լառաջ դնաց: «Օճառք, Ենդօօտի» զրում է.

«Զափազանց չափշատակւած ենք Աղամեանի նշանաւոր խաղով և դեռ սիմտիւած չենք նորա ձայնի դիմիական հնչւաններից: Կատարեալ համար-

ձակութեամբ կարելի է ասել թէ Համելէտի զերում Աղամեանի յառաջադիմութիւնը գերազանցեց ամեն ակնկալութիւն։ Ո՞չ Սալւինի, ո՞չ Բոսարտ, ո՞չ Պառնաչ, և վերջապէս ո՞չ մի աշխարհանը ըռչակ դերասան տւել է մեզ աչնպիսի անխարդախ և կատարելատիս շամլէտ՝ որը տւեց մեզ պ. Աղամեան։

Օթէլօն՝ Աղամեանի վերջին տարիներում տառմենասիրած զերերից մինն էր, Երբ Տփխիսում Օթէլօի չալտարարութիւնները կպցւած էին, բարեմիտ մարդիկ նորից շնչում էին հասարակութեան ականջին թէ՝ «Օթէլլօ Խաղալը նորա բանը չ»։ Ներկալազումը լաջողութեամբ վերջացաւ. և ճշմարիտ տաղանդը ամեն քսութիւն լսեցրեց Խչպէս Համելէտի, նունալէս և Օթէլլօ-Աղամեանի մասին Տփխիսի թերթերը ան չը գրեցին, ինչ որ գրեցին Ռուսաստանի մեծ քաղաքների աւելի դարգացած հասարակութեան մասուլը։ Սակայն հանձնարն էր որ լաղթեց բնութեան թերութիւններին և ներկալազաւ մեր աչքին իբրև կատարեալ, անվեհեր, քաջ և որոտացող զիւցաղն։ Զը նավելով իւր նուրի և դաշն ձանին, որ անհամապատասխան էր պատերազմող մաւրիտանացու ճշգրիտ տիսին, նա աչնպիսի ալւալիտաւծ, հուժկու և առողդ էր, որ մարդ զժւարանում էր հաւատալ թէ Օթէլլօ ներկալազնողը նոյն Համելէտ—Աղամեանն էր, Բայց Աղամեանը հրաշք էր գործում զլխաւորաբար Օթէլլօի այն տեսարաններում ուր խօսքից աւելի սիրոն է խօսում, և որտի խօսածը արտալազուում է դէմքի և մարմնու զանազան նուրբ, հոգեբանական շարժումներով. օր. գ. արարւածը, երբ Եազօ սկսում է նախանձու թոյնը թափել քաջ մաւրիտանացու հոգում։

Զը նավելով իւր մի զլխաւոր, բնական, հասակի և կազմւածքի թերութեան (Աղամեան կարճ.միջահասակ էր և ոնէր շատ նուրբ կազմւածք), այնու ամենալինի նա իւր մարմինը այնպէս լարդարում էր, որ հանդիսականի աչքին երեւում էր կատարելապէս Շեքսափիրի նկարագրած հերոս-պատերազմողը։ Նա մեծ ճաշակով և խնամքով բարձրացնում էր իւր հասակը, և կատառութիւն էր տալիս իւր կազմւածքին։ Երեւում էր Օթէլլօն առողջ, ցցւած կրծքով, զլոտ բաղուկներով և ամուր սրունքներով։ Աղամեան իբրև Օթէլլօ իւր արարաբինավ ոչ մի թերութիւն չունէր։

Ահա թէ ինչ է զրում «Օճեռք. Ենտեռեւ.» ի օղւածագիրը Աղամեանի Օթէլլօի մասին։

«Թէսք է խոստավանւել թէ, նունմբերի Յին թատրոն զնալիս, բաւական վարանում էինք։ Մաւրի զերում օգեսացիք աչնչափ բեմական կորիֆէնների են անսած, որ տարակուսում էին թէ արգեօք Աղամեան պիտի կարողանալ անթիծ աղասւել ալդ զլխաւոր խօսքից։ Մի ժամանակ ալդ գերը 0դեսալում կատարել է նշանաւոր 0լլիջը, և ևս շատ լաւ պահպանած եմ վշողութեանու մէջ մեր հասարակութեան այն ժամանակւակ ցնծութիւնը։ Յետու ողդ գերը կատարեց Երնէստօ Ռոսսի, և ապա Սալւինի,

թատերական բեմի լաւոնի թագաւորը, Բայց Աղամեան իւր խաղով ոչ  
միայն չը զարթեցրեց ալդ մեծ հեղինակութիւնների լիշտակը, ալլ ցոյց  
տւեց թէ ինքն էլ նրանց համահաւասար մի հանձար է»:

Օգեսալում արգելւած էր թատրոններում գերասանին երեք անգա-  
մից աւելի բեմ կանչել, և փողոցներում ցոյցիր անելի Նահանգապետի  
մասնաւոր թուլտութեամբ բացառապէս Աղամեանի համար ալդ արգելքը  
վերացաւ, Օթէլլօի ներկալացումից լետոյ Աղամեան տասնեից անգամ  
ի տես կանչւեց, Խոկ ամեն ներկալացումներից լետոյ ոգերուած ժողովուրդը  
խանդավառ ցոյցերով առաջնորդում էր նրան զէպի իւր բնակարանը:

Արտաքոյ կարգի գրաւչութիւն ունէր Աղամեանի ստեղծած Ուրիէլ  
Ակոստան, որ իւր հոգերանական խորին ուսումնասիրութեամբ բարձրաց-  
րած էր նրան իւր արժանաւոր աստիճանի վերալ, Անկարելի էր տեսնել  
Աղամեանի Ուրիէլ Ակոստան և չը լափշտակւել: Նա ալդ գերումն էլ գե-  
րազանցեց իւր նախորդներին: Այս մասին աւելորդ չէ մէջ բերել „Խօօ-  
ռոսսիական Տելեգրաֆ“ թերթի քննադատութիւնից մի հատւած, «Առաջ,  
զրում է «Տելեգրաֆ»-ի լոգամագիրը, Բաւնադին տեսել էի: Նա տպաւորել  
էր լիշտութեանո մէջ Ուրիէլի համակրելի պատկերը, որից լետոյ չէի ու-  
զում նոյն գերում մի ուրիշ զերասանի տեսնել, որպէս զի այն քազցր պատ-  
կերը չը ջնջւի մոռքիցս. Բայց չը դիտեմ, նեղանամ թէ սքանչանամ Աղա-  
մեանի վերաէ, որ հոգուս միջից հանելով այն պատկերը՝ նորա տեղում  
քանդակեց մի ուրիշ Ուրիէլ. Տեսաւ ոչ թէ այն Ուրիէլը, ալլ նաև ճարտա-  
րագէտը բացեց իմ առաջս ալդ կարող մարդու հզօր հոգւոն խորքը և  
լուսաւորեց նորա հոգոն ամենագաղտնի խորչերը:

«Աղամեան մի հանձար է Ուրիէլ Ակօստափի գերում...: Այս, Աղա-  
մեան ոչ միայն դերասան է, ալլ՝ մի արտաքոյ կարգի տաղանդ, լաւագոն  
ճարտարագէտ, և ժամանակակից թատրոնական հեղինակութիւնների  
մեկնիչ»:

Անման էր մեծ արևեստագէտը Դիւմա սրբու «Բին»-ի գերում: Սկզբից  
մինչեւ վերջ հանալի էին նուար բոլոր կերպարանափոխութիւնները: Մեծ ճա-  
շակով կատարում էր նա Աննա Տէմբիի հետ լորդ Մէնւիւի լանդիմանու-  
թեան և ներկալացման պատրաստութեան տեսարանները: Մանաւանդ վեր-  
ջնում, ալլ ևս Քինը չէր ներկալացւում բեմի վերակ, ալլ նոյն խոկ Աղա-  
մեանը ինքն էր իւր կապրիզներավ, վայրկենական բարկութիւնով և բո-  
պէական հաշութեալք: Բաւական մեծ նմանութիւն ունէ Դիւմափի նկա-  
րագրած Քինը Աղամեանի հետ: Կարծես հեղինակը դրանով կամեցել է  
ներկալացման նոյն խոկ Աղամեանին:

Գերադանց էր Աղամեան «Կորրագօ»-ի զերում: Բացի ալդ՝ նա սիրում  
էր խաղալ նոյն զերը: Զէր կարելի Աղամեանի ներկալացրած Կորրագօից  
ուրիշ մի կորրագօի աւելի կատարելագործեալ տիտար երեականիւ: Բայց  
սկզբից մինչեւ վերջ մշակւած հոգերանական նուրբ խաղից, Աղամեան

մասնաւոր խնամքով պատրաստած կատարում էր զերջին թունաւորման տեսարանը: Թէ ո՞ր աստիճան բնական էր խաղում նա ադր տեսարանը, արդէն գորան ապացուց մէջ բերած հնք Կ. Պոլսում ներկալացնելիս բեմի վերակ պատահած մի անցք: Նորա ցնցումների, կարկամնաթիւնների և ջղաձգութիւնների կատարեալ բնականութիւնը վկանում էին բոլոր բժիշկները, որոնք ստուար բազմութեամբ լաճախում էին Ազամնանի ազգափ կատարելագործեալ ճշմարտանման կեղծումին ականատես վիճելու:

Աղամինանի կատարած բոլոր նշանաւոր զերերի մասին մանրամասն խօսելը մեղ շատ հեռու կը տանէր, Միայն մենք կը լիշատակինք որ նա միծ լաջողութեամբ խաղում էր «Դիմակահանողէս»-ի Արքենինի դժւար և ապերախտ զերը: Ուուր բոլոր նշանաւոր քննադատները վկաչեցին թէ Ազամիան—Արքենին շատ զերաղանց և Պիսորէւից, որ մինչև նորա հրեալն համարւում էր միակ ընտակ Արքենինը: Գերազանց էր «Աւազակներ» ողբերգութեան ֆրանց Մօօրի զերում, որի մասնաւորապէս և, արարածը խաղում էր միծ ճարտարութեամբ: Կատարեալ խնամքով արտասանում էր նաև Ֆրանտուու կօպպէի «Դարբինների գործադուլը գեղեցիկ բանասահղծութիւնը: Վերջերս ստուգեց նաև «Զոհի տեղ գոհ» պիէսում Քոչարալի զերը՝ կատարեալ լաջողութեամբ: Խնչակս նաև «Գյանուրք»-ի զերը՝ որը նա խաղում էր ամենաշն սիրով:

Բացի սղբերգականից, Աղամինան մեծ տաղանդ ունէր ընտիր և նուրբ կատակերգութեան, որ շատ առնելի ցուց տւած էր, բայց չէր գործածում, երկրորդական առարկակ համարելով:

Նա առնասարակ իւր բոլոր խաղացած զերերին մի տեսակ անբացարելի ոգի և չունչ էր փշում: Որպէս կաշկանդում էր հանդիսականներին: Ազդ ոգին մենք չենք տեսնել ոչ մի աշխարհանոչակ տաղանդի վերակ Ակաչ մեր ասածին ռուսական մամուլը, որ իւր բոլոր տեսած համբաւատրներից բարձր գասեց Աղամինանին, չը նափելով որ նորա խաղացած լեղի, բացի տնծանօթ լինելուց, շատերի համար զուտաթիւնն անզամ տարակուսելի էր: Ահա անսպիսի անհաջող հանդամանքներում երեցաւ Աղամինան ռուսական բեմի վերատ, և լազմութեան դափնին արժանապէս ստացաւ չնորհիւ իւր առտուածատուր հանձարին:

\* \* \*

Ի՞նչ արեց Աղամինան համի համար:—Աղամինան բոլոր ովկին զուրկ էր վարչական ընդունակութիւններից, մինուն ժամանակ ոչ անքան տրամադիր ռուսացանելու (թէի, անկեղծ լինելու համար, պէտք է ասենք որ նորան լսելու և նորա ասածներին հետելու էլ տրամադիրներ չկալին): պէտք է նորից կրկնենք որ նա լաճախ դանդատում էր իւր ընկեր զերասանների արհեստի մասին ունեցած ա նաարբերութիւնց

Փաստերը ցուց տևեցին որ մինչ օրս ոչ մի դերասան դեռ չէ ըմբռնել, կամ անկարող է եղել ըմբռնել արևեստի մասին նորա քարոզածը և կամ հասկացածը չէ իրագործել։ Մենք սորահով չենք ստիպում, Աղամեանին հետեւած լինելու համար, անպատճառ Համլէտ կամ Օթելլօ իսազալով ծաղրի առարկայ լինել։ Աղամեանի քարոզածը ասելով մնեք մատնացոյց ենք անում այն ուղղութիւնը, որով նա պատրաստում էր իւր դերերը և բեմ դուրս գալիս՝ իւր ամեն մի բառին և ամեն մի շարժմանը ջանալով գեղարւեստի դրոշմը տալ։ Մեզ հանդուցեալ արևեստագէտը ինքն է պատմած որ համարեա ոչինչ նշանակութիւն չէր ունենալ իւր տաղանդը եթէ երկարաւե և անընդհատ մարդութիւններ չ'անէր թէ միմիկալի և թէ իւր մարմնի ձկնութեան զարգացման համար։ Շատ զուր էին բարի հոգիների բերնով տարածւած լուրերը թէ՝ «Աղամեան ծովը էր» Աղամեան ոչ միայն ծովը չէր, այլ գուշակ թէ մի դերասան նորա չափով սիրէր իւր արւեստը և անխոնջ կերպով աշխատէր։

Նա ցուց աւաւ թէ աադանդը մշակելով մինչև որ աստիճան կատարելութեան կարելի է հասցնել, ցուց աւաւ թէ ինչպէս պէտք է վերաբերեալ դէպի արւեստը և զարգացրեց ժողովրդի գեղսպիտական ճաշակը։

Նա չեղափոխիեց մինչև իւր ժամանակ դրութիւն ունեցող արևեստի աւանդսկան կարգերը, ցուց աւաւ անբնական դրամաների և պատմական ռարդանունների գեղարւեստի նկատմամբ ունեցած վ්‍යասները, նորանով հայկական թատրոնը հասաւ մի անձպիսի բարձրութեան, որ ասրագակ օրերը դժւար պիտի տեսնեն։ Թէի պէտք է խոստովանել որ նա իւր ըէպէրտուարը ներկալացնելիս երբէք չէր մտածում իրան շրջապատող դերասանների կատարելութեան և չարմարութեան, նա միմիկան նրանց ցուց էր տալիս զլիաւորաբար այն կետերը, որ ուղղակի առընչութիւն ունէին իւր խաղի հետ։ Խակ խաղի ընդհանուր ամբողջութիւնը նա թողնում էր անոշաղիր, աշնուիս որ իրաւացի դժունութիւններ լուսում էին թէ «Աղամեան իրան թղուկներով է շրջապատում»։ Նա չափազանց նախանձու էր։

\*  
\* \*

Ա. գոմեան իր բանաստեղծ և նկարիչ—Աղամեանի գրած ուսանաւորներից 1880 թ. հրատարակւեց մի հատոր, որ չ'արժանացաւ մի սուանձին համակրութեան։ այդ ուսանաւորները որքան էլ մի զղակուն սրաի և վառ երեսկացութեան արդիւնք էին, ալնուամենալինիւ գրական մեծ արժանաւորութիւն չունէին։ Աւելի ընտիր, լուրջ և կատարելազործեալ են իւր վերջին տարիներում գրածները՝ որոնք դժբախտ գրաբար անտիպ մնացին։ նոցա մէջ կալ աւելի բանաստեղծութիւն, ճաշակ և միտք, իսկ իբր նկարագրական—գեղարւեստական դրւածներ՝ հրանալի են։ Աղամեան ոչ նկարչի և ոչ էլ բանաստեղծի կոչումով աշխարհ էր

եկած. նորա ճակատին պետմական հանձարո գրւած էր, բայց միևնույն ժամանակ դարմանալի են նորա ալդ ճիւղերում ցոլց տւած ընդունակութիւնները. իբր բանաստեղծ նորա գրւածները կարելի է առանց տաղտկութեան մինչեւ անդամ սիրով կարդալ. նա մեծ խնամք էր տանում բառերի գեղեցիկ դասաւորութեան և լանգերի հարատութեան վերաէ, որ մի բանատեղծական գրւածքի գեղարւեստական գլխաւոր արժանաւորութիւններն էացի հարատարակւած աշխատութիւններից նորա վերջին դրւածքները աշխարհիկ հաչ գրականութեան համար կարելի է մէկ մէկ գեղեցիկ մարզարիտներ համարել, և ցանկալի էր որ հոգ տարւէր ժամ լառաջ նոցաի լուս ածելուն:

Աղամեան իբր նկարիչ, որքան մեծ ճաշակ և սէր ունէր զէպի գեղարւեստի ալդ ճիւղը, անուամենանիւ կարելի է համարձակ ասել որ նաոչ թէ ստեղծագործող՝ ալլ օրինակող էր միան. Բայց նա մեծ չնորհքունէր ալդ մասում: Զը նաէկը որ նա գեղարւեստի ալդ ճիւղը լոկ ինքնակրթութեամբ էր ձեռք բերել, բայց դէմքերը նկարում էր մեծ ճարտարութեամբ, նորագուն կատարելագործւած արհեստի պահանջների համաձայն: Նա ապրուստի համար լաճախ ձեռք էր առնում իւր վրձինը: Մեծ հասկացողութիւն ունէր զոների բաղադրութեան (coloris) մասին: Խսկ անթերի և կատարեալ էին իւր ունարութեամբ նկարները, որոնց անչափ սիրում էր.

Թէոդոսիա եղած ժամանակ Աղամեան նկարեց հռչաւոր ծովանկարիչ Յ. Աղամեան պատկերը, որին ընդունելով մեծ վարպետը՝ զովից Աղամեանի նկարչական ընդունակութիւնը: Առհասարակ իբր ինքնուս նկարիչ, Աղամեան գերազանց էր:

\* \* \*

Ի՞նչ էր սիրում Աղամեան:—Տաղանդաւոր արւեստագէտը վերջերս հոգւով մարմնավ անձնաստուր էր եղած հոգեխոսութեան, (spiritism), որի մսսին ամեն գրւածք հաւաքում էր ինամբով և ուսումնասիրում: Այն մարդիկն էին իւր մերձաւորները՝ որոնք հետաքրքրուում էին ալդ գիտութեամբ: որին վերաբերում էր մեծ հաւաքով և նրկիւլածութեամբ: իւր վառ երևակալութիւնը և հետախուզող բնաւորութիւնը առաս ճարակ էր գտել նրանում, բայց ոչ մի կերպով չէր լազենում: Բնութիւնը իւր գաղտնիքները շատ թանձր վարագործով էր ծածկել: Բայց Աղամեանի աչքերը չէին սիրում արգելքի պատահել: իւր չը տեսածի պակասը նա երևակալութեամբ էր լրացնում.

Գանի գիշերներ Աղամեան իւր համախոհներով լուսացրել է կանաչ սեղանի շուրջ մեծ ոգիների բերնից գոնէ մի դաղսնիք խլելու համար: Հետզետէ կանչում էր իւր հօր, մօր, ներսէս Մեծի, ներսէս պատրիարքի, Նեքոպիրի ոգիները, հարցնում էր, խօսում էր նոցա հետ, իւր և ուրիշների

ապագաի մասին: Գոհացնում էին նորան ողիները, նրանց համելի էր որ հողեղէն մարդը խոռվէր իրանց անդրդերեզմանական հանգիստը: Զենք կարող սորան մի որոշ պատասխան տար: Միայն փշում եմ այն օրը, երբ չոգենաւ՝ նստած մեկնելու էինք դէպի Զմիւնիա, Աղամեան իւր մի քանի լուղարկաւոր բարեկամների հետ առանձնացած հողիխօսութեան մասին էր ճառում: Նա ձեռքում բռնած թղթերու մի մեծ ծրար, ցոց էր տալիս այն ապագաի գուշակութիւնները որ թելադրել էին ողիները: «Բացի Շէքսպիրից, ո՞լ կարող է ալսպիսի մոքեր լաւոնել» զուզում էր Աղամեան լի հաւաքով: Ապա պատմում էր թէ որքան արագ թելադրում էր ողին, անպէս որ ամենաարագ ձեռքը հաղիս հասնում էր այդ բոլորը ուրւագրելու:

Զարմանալի չէր, երբ Աղամեան, կէս զիշերին վեր թռած իւր անկողնից և թէ իւր սենեակում ննջած էր՝ մի բարեկամ նրան, և եթէ ոչ, մօտի սենեակի ննջողներին զարթեցնէր և ողիների մասին մի բան հարցնէր կամ պատմէր: Տեսնելով նորա ալդ աստիճան ողիների հետ զբաղմունքը, հարցնում էի ինքո ինձ՝ «Աղամեան աչս աստիճան և թարկւելով իւր վառ երեակալութեան ազդեցութեան, արդեօք չը պիտի վաստէ իւր մտաւորական կարողութեան»:

Բացի նկարչութիւնից և զբականական դրակմունքներից, Աղամեան չափազաց սիրում էր ձկնորսութիւնը և իւր որսած ձկների և առհասարակ Պետրոս առաքեալի արհեստին ունեցած լաջողութիւնը և ճարպիկութիւնը պարծենալով էր պատմում: Նա որ իրեն զերատան երբէք ինքնագով և պարծենակուտ չէր, առանձին ոնափառութիւն էր զզում դէպի ձըկնորսութիւնը և սիրում էր երբ զովում էին ալս մասում իւր լաջողակութիւնը:

Պէօվիկ-Կէրէի առաջ կարելի էր նորան տեսնել միշտ վաղ առաօտեան կարթը ձեռքին, մի ընկեր էլ իւր զիմաց նաւակում նստած, ձուկ որսալիս: Նա երեխակի նման հրճւում էր երբ ծովի բնակիչներից մէկը բոնւում էր իւր կարթից:

\* \* \*

Մեր մասն աւոր կարծիքը նորա մասին ընդհանրապէս—Ներկալացնելով ընթերցող հայ հասարակութեան թատրոնական մեծ վերանորոգչի բնաւորութեան, կեանքի և արևետի մասին մեր գիտեցածը, կատարելապէս զզում ենք սորա համառօտութիւնը և թերութիւնները: Քանի որ նորա մօտիկ ծանօթներից և բարեկամներից ոչ որ չէր լանձն առնում մեծ արևետագէտի նշանակութեան մասին մի քանի խօսք ասելու, մենք պարտք համարեցինք զոնէ ալս համառօտութիւնը հաղորդել, ընդարձակադանը աւելի կարողներին թողնելով:

Մենք որքան զարմանքով և հիացմամբ նաև ենք նորա արտակարգ տաղանգի վերաբ, որքան զմազլելով հետեւել ենք նորա կատարած դերերին և մեր զմազմանը միշտ հետեւել է սրանչացումը, բայց լածախ ևս առիթ ենք ու-

նեցել անչափ տիսրելու նորա բնաւորութեան թերութիւնների վերակ, որ շատ անգամ պատճառ էին դառնում նորա բարուական և նիւթական վնասին. Թէ և ամեն թերութիւն ծածկում էր իւր տաղանդի քղանցքին տակ, բայց մի ծագը միշտ զուրսն էր մնում. Կրիս մարդու մենք նորան ներկալացրինք մեր կարողացած ասհմանի մէջ, կատարելապէս երաշխաւորելով մեր ասած ների ճշմարտութեանը:

Այս շրջանում, այն հասարակութեան մէջ և հանգամանքներում, որտեղ մեծացել և զարգացել էր նա, որտեղ հասունացել էր Աղամեանի տաղանդը, եթէ աչքի սուաջ ունենանք բոլոր ալս պարագաները, (որոնց մասին բաւականի խօսած ենք բ. մասում), այն ժամանակ կրկին առիթ է ներկացնում մեր աչքին աւելի զարմանալու նորա բաղմակողմանի ընդունակութիւնների վերակ նրեակալէք մի մարդ որ մինչև անգամ զուրկ է եղել մի ջնակարգ կրթութիւնից՝ ինքնօգնութեամբ և աշխատութեամբ կարողացել է այն աստիճանի լառաջ զնալ, որ բացատրել է Շեքսպիրի խորախորհուրդ ստեղծագործութիւնները մարտաքաղաքների զարգացած հասարակութիւնների սուաջ՝ մինչև այն ժամանակ անձանօթ նրբութեամբ, ճարաւարութեամբ և չաջողակութեամբ. ամբողջ մի զարգացած հասարակութեան մամուլից միաձանց հռչակել է բհմական բարձր տաղանդներից բարձրագուն և անզուզական. Նա գրել է համարեա առանց սովորելու՝ իւր բնական ճաշակով, նա մտածել է առանց զարդացուցիչ զպրոցների՝ իւր բնական հանճարով. Նա նկարել է առանց ուսուցչի՝ իւր բնական ճարաւարութեամբ. Նա խօսել է լեզուներ առանց վարժապետի՝ իւր բնական տաղանդով. Թէ և մեր մէջ շատ չը զարմանալը նորութիւնների կարգին է, բայց մենք չենք կարող զսպել մեր զարմանքը բնութեան ալս տարօրինակ զաւակի վերակ:

Մենք չենք կարող երեակալէլ կամ բացատրել թէ ինչ պիտի լինէր Աղամեան, եթէ ունենար մի որոշ աստիճանի կրթութիւն:

Նա շատ ծրագիրներ իւր հետ գերեզման իշեցրուց, որոնց զլիսաւորն էր Նւրսպալում իւր կատարելիք ճանապարհորդութիւնը՝ որ հալ հանճարի և հայ լեզւի լաղթանակը պիտի լինէր. Նա մեզ գետ շատ պէտք էր:

Նա մտադիր էր հալ թատրոնի վերակազմութեան նկատմամբ աշխատութիւններ պատրաստել, որ անշուշտ չէր թողարուս իւր բաղմակը միաձակը, և որը ի հարկէ թողած էր աւելի իւր ալմոր օրերին:

Վերջացնելով մեր խօսքը նորա մասին, կ'ասենք որ Աղամեան, թատրոնի այդ ամենափաղուն աստղը, մեր աչքին շատերի երեացածից աւելի մեծ է թւել և համարելով նորան ժամանակիս ամենամեծ տաղանդաւոր զերասան, (սա մեր մասնաւոր կարծիքն է) աշխատել ենք մեր սոյն զրւածքում ցուց տալ մեծ արևեստագէտի բաղմակողմանի բոլոր արժանաւորութիւնը: Մենք որքան կատարելապէս ըմբռնել և հասկացել ենք նորան, աշխատել ենք մեր ըմբռնածը նորութեամբ հաղորդել հասարակութեան:

Մեր չաճախակի տեսակցութեան մէջ իւր շարունակ կրկնած խօսքերից մէկն էր՝ «եղբայր Վրոյր, մեծ, շատ մեծ արւեստ է զերասանութիւնը», և ես առանց իւր ասածին բացատրութիւնը պահանջնելու, մտածում էի ինքս ինձ, աշխատում էի չափել այդ տնկատակ և կնճռուտ արւեստի բոլոր խորութիւնը, որ բարձր էր ուժերիցս, միմիրայն տքնում էի գոնէ մօտաւրապէս մի սահման որոշել այդ «մէծ, շատ մեծ արւեստ»-ին: Ի՞նչ էր պահանջնում կատարեալ զերասան վիճելու համար.—բացի աստւածատուր տաղանդից և ընդունակութիւններից՝ առողջ և չափաւոր կազմւածք, ուժեղ, մաքուր և ճկուն ձան, շարժուն, միմիրկայի ընդունակ դէմք, վառերևակալութիւն, զարգացած և թափանցող միտք, ընդհանուր և զրականութեան պատմութեան ուսումնասիրութիւն, գեղադիտական և նկարչական վերին աստիճանի զարգացած ճաշակ, և այլն և ազն: Այս բոլորը ներկալանում էին աչքիս, և մեծ արւեստագէտի խօսքերը շարունակ հընչում ականջիս: ողերասանութիւնը մնեց, շատ մեծ արւեստ է» և այնքան դժւար՝ որքան դժւար է գտնել մի մարդ՝ օժտւած բարողական և ֆիզիքական աչնչափ արժանաւորութիւններով: Եւ բնութիւնը շուազած էր Աղամեանին վերոիշեալ բոլոր չորհքները:

Նկարագրել ծցորէն Աղամեանին իւր մարդու և թէ իւր զերասանի, դա մի աճնպիսի նիւթ է, որի մասին շատ երկար կարող է զրեել և դարձեալ թերի համարւել: Մինք մեր կարողացածը արեցինք և պիտի աշխատենք մեծ արւեստագէտի կենսագրութեան լրացուցիչ մասերը հետզհետէ հրատարակութեան տալ: Մեր ցանկութիւնն է որ այդ մեծ մարդու մեծ հոգին երեաց բոլորին: իւր առաւելութիւններով ու թերութիւններով:

Թանգ է մեզ համար Աղամեանի ամեն մի տող ձեռադիրը և կարևոր նոցա հրատարակութիւնը, գլխաւորաբար նրանք՝ որոնք որ և է զրական արժէք ունին, և կամ պարզում են նորա ներքին կեանքի և հոգու մութանկիւնները: Իւր զրական աշխատութիւնները ամբողջապէս կ: Պոլիս իւր ազգականների մօս են, հետեաբար նոցա հրատարակութեան պէտք է որ նոքա հողատար լինեն: Խոկ Աղամեանին իւր մարդու և արւեստագէտի շատ մօտից կարելի է ճանաչել իւր առ պ: Աղքառանդր Ստեփանեանց ուղղած հնդամեալ թղթակցութիւններից, որ պահւած են: Պ: Ստեփանեանց որ բարեսիրաբար թող տևեց մեզ ալս գրւածքի համար օգտւել այդ նամակներից, լուսամք չը պիտի մերժէ և, մեր սկսած դործը ամբողջացնելու համար, պիտի համի թողատրելու, որ այդ նումակները հրատարակենք, քանի որ նոցա մլ.ջ երեսում են Աղամեանի վիշտը, ուրախութիւնը, լուգմունքը, զանգատները և բարկութիւնը: Աղամեան ոչ մի տեղ չէ երեսում աճնպէս՝ ինչպէս իւր նամակներում, մանաւանդ, եթէ ի նկատի ունենանք որ մեծ արւեստագէտի ամբողջ ներքին աշխարհը բաց էր իւր միակ ուրագից բարեկամի առաջ:

## ԵՐԳՉԻ ՎՐԵԺԸ

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

Ծանր հեծութեան ժամանակների  
Եւ ճշումների անզգայ որդիք,  
Կամեցայ սիրել սակայն գուք բարի  
Սիրտս ու հոգիս զայրոյթով լցըիք:

Բայց դորա համար ես այնպէս կ'երգեմ,  
Որ այդ ձեր սիրտը ցաւից պատառի,  
Տխուր ձայներով կը թունառիրեմ  
Հանգստութիւնը գալոց օրերի:

Յուսահատութեան թախծալի երգով  
Լեզի կը դարձնեմ ձեր կեանքը բոլոր,  
Եւ գուք կ'արտասւէք լիացած աչքով,  
Խնջոյքների մէջ նստած գլխակոր:

Եւ խիստ վրէժը զայրացած երգչի,  
Զեզ կը հետևի մինչև գերեզման,  
Զեր սիրտը կ'այրի, հոգին կը տանջի,  
Եւ կը տոտապէք այսպէս յաւիտեան:

## ՃՈՂՈՎՐԴԱՑԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԴԱՅԱԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՑՈՒՄ

1889թ. Պարիզի ցուցահանդեսում միջազգային կոնգրեսների թւում կայացաւ նաև «Ֆողովրդային կրթութեան գործի մասնաւոր նախաձեռնողների կոնգրէսը» (Congrès des représentants de l'initiative privée pour l'instruction populaire): Այդ ժողովի գաղափարը և կազմակերպութիւնը պատկանում են ֆրանսիացոց «Ժողովրդային կրթութեան գաշնակցութեանը», որի գործունէութիւնը ամենափայլուն կերպով ասլացուցանում է, թէ ինչ կարող է անել այդ ասլարէզում մասնաւոր նախաձեռնութիւնը: Ֆրանսիական գաշնակցութեան հիմնադիր Ժան Մասէն սկսեց այդ գործը, երբ ինքը մի հասարակ ուսուցիչ էր Էլզասի փոքրիկ գիւղաքաղաքում՝ Բէրլինհեյմում: Այդ մարդը, որ այժմ սենատի անդամ է և ահազին ժողովրդականութիւն է վայելում ամբողջ ֆրանսիայում, բանւորի որդի է: Նրիտասարդ ժամանակ նա դրաւում էր սոցիալական գաղափարներով, մասնակցում էր 1849 թւի յուլիսի ապստամբութեանը, մինչև անգամ ստիպւած էր փախչել Պարիզից և բնակւել առժամանակ նորմանդիայում կեղծ անունով: Բայց երբ նա վերադարձաւ Պարիզ, իրերի գրութիւնը այնքան փոխւել էր, որ այլ ես անօգուտ էր մոտածել որ և է քաղաքական գործունէութեան մասին: Նա տեղ բանեց „La République“ օրագրի խմբագրատան մէջ, որի յանձնարարութեամբ գնաց գաւառներում թղթակիցներ որոնելու: Այդ ճանապարհորդութիւնը, Մասէի իրան ասելով, մեծ ազդեցութիւն ունեցաւ նորա յետազայ գործունէութեան վերայ: Նա ճանապարհորդում էր մեծ մասամբ ոտող, քաղաքից քաղաք, շատ գիւղերում կանգ էր առնում: Այսպէս տեղն ու տեղը շփւելով հասարակ ժողովրդի

կեանքի հետ, Մասէն միջոց ունեցաւ ճանաչելու նորա շահերն ու ձգուամները և համոզւեց այդ շրջանում տիրող ազիտութեան մասին: Նա պարզ հասկացաւ, որ ժողովրդի տգիտութիւնը և այն, որ նա չի կարողանում բարեկամին թշնամուց չունել, զլիսաւոր խոչնդուներից մէկն էր ֆրանսիացոց պետութեան կանոնաւոր զարգացման համար: Այդ միջոցին նորա զիսում առաջին անգամ միտք ծագեց ժողովրդի կրթութեան գործին նուիրւելու: Բայց շատ տարի անցաւ մինչև որ նա իրադորձեց այդ միտքը: Ճանապարհորդութիւնից փերազաւնալուց քիչ յնտոյ նա ամուսնացաւ և թողեց առաջւայ թափառական կեանքը: Նա ուսուցչութեան պաշտօն յանձն առաւ Ելզասի մի փոքրիկ գիւղի օրիորդաց դպրոցում և գաղարեց քաղաքականութիւնով պարապել, համոզւելով որ այդ պարապմունքները ներկայ միջոցին բոլորովին անօգուտ են: Տասը տարի շարունակ նա ապրում էր հեռու հասարակական կեանքից, բոլորովին անձնատուր եղած իւր ուսուցական գործին և, բացի դորանից, շարադրում էր մանկական ընթերցանութեան զրքեր: Այդ շարադրութիւններից ամենամեծ յաջողութիւնն ունեցաւ «Մի կտոր հացի պատմութիւնը», որը թարգմանւած է ուռւսերէն, նոյնպէս և հայերէն լեզուներով:

Բայց Մասէն այնքան ոյժ և եռանդ ունէր, որ նա չէր կարող բաւականանալ տարրական դպրոցում ուսուցչութիւն անելով, և նա 60-ական թւերի սկզբում սկսեց կազմակերպել «Աւերին-Հռենոսի գիւղական գրադարանների ընկերութիւնը» (Société des bibliothèques populaires du Haut-Rhin), որին հիմք դրւեցան նայն գաղափարները, որնց պարտական է իւր գոյութեամբ Մասէի ուրիշ, աւելի մեծ գործը՝ «Ժողովրդացին կրթութեան դաշնակցութիւնը»: Գիւղական գրադարանների հիմնելուն ֆրանսիացում առաջին անգամ զարկ տւեց տէրութիւնը: 1850 թւին, հասարակապետութեան նախագահի՝ պրինց Լուի Բոնապարտի հովանաւորութեան տակ սկիզբն առաւ մէկ ընկերութիւն, որը ինքն իրան նպատակ դրեց՝ բոլոր գիւղական համայնքներում գրադարաններ հիմնել: Այդ ընկերութեան անդամները մեծ մասամբ բարձր գառակարգի ազնւականներ էին՝ եկեղեցականներ և աշխարհականներ: Բայց այդ կառավարչական փորձը չը յաջւեց և ընկերութիւնը քայլացյւեց, հէնց այն պատճառով որ գործի

զլուխն էին անցել։ Մասէն բոլորվին տարբեր սկզբունքով էր առաջ-նորդում իւր լնկերութիւնը հիմնելիս։ Նորա նպատակն էր մաս-ն աւոր նախաձեռնութիւն յարուցանել գիւղական հա-սարակութեան մէջ և ստիպել նրանց, որ իրանք հիմնէին գրա-դարաններ։ «Վերին-Հուենոսի գիւղական գրադարանների լնկերու-թեան անդամները պարտաւոր էին՝ ամեն մէկն իւր գիւղում աշ-խատելու գրադարանի հիմնարկութեան համար։ Նոքա պիտի թող-տւութիւն ստանացին մէրից համայնքերէց գործին համակրող մարդիկ ճարէին, փող հաւաքէին և գրքեր բերել տացին։ Տարեկան անդամավճարը 5 ֆրանկ էր։ Գլխաւոր գործունէութիւնը տեղական անդամների ձե-ռին էր։ Ընկերութեան ղերը, ինչպէս Մասէն է ասում, կայանում էր նորանում միայն, որ զպարկ արւիր գարկը վերևից արւեց և չը յաջողւեց, ասում է նա իւր յուրածում, գիւղական գրադարանների մասին։ — Ուրեմն ինքներս սկսենք գործը և ամեն մէկս առանձին աշխատենք գլուխ բերել այն, ինչ որ չը կարողացաւ անել տէրու-թիւնը։ Ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածելու համար պէտք է գիւղի մէջ գործել, մէկ մարդից դէպի միւսը անցնելով և կեն-դանի խօսքով հարեւանների վերայ ազգելով... Խսկապէս Վերին-Հուենոսի գիւղական գրադարանների լնկերութեան նպատակը չէ՝ հիմնել գիւղերում գրադարաններ, այլ ստիպել գիւղի բնակիչներին, որ նոքա իրանք հիմնէն։ Ի հարկէ այդ հիմնարկութեամ նախա-ձեւնութիւնը չի կարող պատկանել անգրագէտ կամ կիսագրագէտ գիւղացիներին, որոնք գիւղական դասի բնակիչների մէծամասնու-թիւնն են կազմում։ այդ պատճառով խօսքերս վերաբերում են գիւղի աւելի լուսաւորւած բնակիչներին—նոտարներին, կալւածառէրերին և արդինաբերական շրջաններում—գործարաննատէրերին։ Ամեն մէկ գիւղում կարելի է գանել այդ տեսակի ինստիլիգենսներից մէկին, որը իւր սրբազն պարտականութիւնը կը համարէր՝ գրատուն հիմ-նելլ և առհասարակ գիտութիւններ տարածելը ժողովրդի մէջ։ Գրքերի լնորութիւնը ամբողջովին յանձնած էր գրադարանների տե-ղական հիմնադիրներին։ Ընկերութիւնը միայն ուղարկում էր պատ-րաստի եղած գրացուցակները և ամենայն կերպ նպաստում էր որ լնտիր գրքեր գիւղը հասցնեն, գրավաճառների հետ պայմաններ կապւեն և ճանապարհածառները վճառւեն։

«Վերին-Հաենոսի դիւղական գրադարանների ընկերութիւնը միանգամից սկսեց եռանդով գործել. մի տարուց յետոյ նա ունէր արդէն 930 անդամ և 30 գրադարան, դիւղական համայնքներում հիմնած: Ընկերութեան տարիկան հաշւի մէջ Մասէն ասում է՝ թէ դաշնակցութիւնը պէտք է ձգտէ նոր տարր մտցնել գիւղական կեանքի մէջ՝ մուաւոր կեանք ստեղծելու: «Մենք պէտք է աշխատենք, ասում է նա—որ ամեն մի գիւղ ունենայ իւր գրադարանը, ինչպէս ունի իւր եկեղեցին, իւր գպրոցը, իւր մէրիէն (mairie), որ գրադարանը մի անքակտելի ամբողջութիւն կազմի գիւղի մնացած հիմնարկութիւնների հետ:

Ժողովրդական գրադարանի հիմնարկութեան օդուին սկսւած շարժումը շատ արագ էր տարածւում, և Մասէն, այդ յաջողութիւնից զրդւած, մուածեց ընդլայնել ընկերութեան նպաստաիները և տարածել նորան ամբողջ Ֆրանսիայում: Նոր ընկերութեան ծրագրի մէջ պիտի մոնէր ոչ միայն ժողովրդական գրադարաններ հիմնելը, այլ նա պիտի կազմէր նաև հրապարակական դասախոսութիւններ ժողովրդի համար, ժողովրդական ակումբներ, հասակաւորների երեկոյեան դասեր և դպրոցներ փոքրերի համար. նա առհասարակ ամեն կերպ պիտի նպաստէր ժողովրդի կրթութեանը և մուաւոր զարգացմանը: Եւ ահաւասիկ 1866 թ. հոկտեմբերի 25-ին Մասէն աեղական լրագրում մի հրաւէր տպեց, առաջարկելով ամենին, որոնց համար թանգ են ժողովրդի լուսաւորութեան շահերը, միանալ և ժողովրդային կրթութեան դաշնակցութիւնը կազմել: Մասէի հիմնական սկզբանքին համաձայն, դաշնակցութիւնը պիտի հիմնէր միայն ընկերութեանը համակրող անդամների մասնաւոր նախաձեռնութեան վերաց: Մասէի կարծիքով հասարակ ժողովրդի կրթութիւնը և զարգացումը խիստ կարեւոր նշանակութիւն ունի մանաւանդ Ֆրանսիայում, որովհետեւ, ընդհանուր ձայնաւութեան պատճառով, ժողովրդին է գլխաւորապէս երկրի բախտը վճռողը:

Բայց ընդունելով հանդերձ գուշնակցութեան մեծ նշանակութիւնը ժողովրդի քաղաքական կեանքի նկատմամբ, Մասէն առաջին իսկ հրաւէրում վճռողաբար յայտնում է, թէ իւր առաջարկած ընկերութիւնը չը պէտք է ծառացի ոչ մի յացոնի՝ քաղաքական կամ կրօնական կուսակցութեան, այնպէս որ բոլորովին տարբեր համազ-

մունքի տէր մարդիկ կարող են հաւասարապէս դաշնակցութեան մշակները լինել:

Մասէի նախազծի առանձնութիւնը նորանում էր կայանում, որ նորա դաշնակցութիւնը ոչ մի պարտաւորիչ ծրագիր չէր առաջարկում, այլ գործելու կատարեալ ազատութիւն էր տալիս «տեղական խմբերին», որոնց կազմակերպութեան վերայ պիտի աշխատէին դաշնակցութեան անդամները։ Ամբողջ շարժման ծանրակէաը այդ տեղական խմբերի մէջն էր։

Երբ Մասէն տեղական լրազիրներում հրատարակեց իւր հրաւերները և սկսեց ստորագրութիւններ հաւաքել, զանազան կողմերից նամակով գիմում էին նրան խնդրելով, որ նա պարզի դաշնակցութեան նպատակները և նորա արարինակ կազմակերպութիւնը։ Նատերը զարմանում էին, որ ծրագիր չկար, նիւթական միջոցները ամեննեին կենորոնացրած չէին և տեղական խմբերին ինքիշանութիւն էր շնորհւած։ «Ձլ ի՞նչ նշանակութիւն ունի դաշնակցութիւնը, եթէ ամեն մի խումբ ուզածին պէս պիտի մշակէ իւր ծրագիրը և կանոնաւորէ իւր ելեմուտը, ասւած է այդ նամակներից մէկում։ Այս բոլոր արակուանքները Մասէն աշխատում է փարատել իւր յօդւածով նոր ընկերութեան նպատակների մասին, որը զետեղւած է դաշնակցութեան երկրորդ տեղեկագրի մէջ։ Ամենից առաջ նա շեշտում է որ իւր առաջարկած դաշնակցութեան մէջ ամեննեին չը պէտք է լինի կենորոնական վարչութիւն, որ իւր ձեռ քում ամփոփէր դրամագլուխը Ընկերութեան կենորոնը ներլէն-հէմումն է. այդտեղ ստացւում են բոլոր տեղեկութիւնները պամբերի գործունեութեան մասին, այսուեղից էլ փոխադարձաբար ուզարկում են ժողովներին զանազան կարևոր տեղեկութիւններ։ Այդտեղ են տպւում նաև ընկերութեան աեղեկագրերը։ Այդ բոլորը մեծ ծախսեր չեն պահանջում, այն պատճուռով էլ դաշնակցութեան փողերի մեծ մասը նոցնպէս պիտի գտնւի տեղական խմբերի տրամադրութեան տակ։ Երբ որ և իցէ ընկերութեան նպատակն է մաքառել մի որ և է հասարակական հիմնարկութեան գէմ, ինչպէս օրինակ Կորդէնի դաշնակցութիւնը հացի օրէնքների դէմ—ասում է Մասէն—այն ժամանակ հասկանալի է, որ նա պիտի կենորոնացնի իւր (նիւթական) միջոցները՝ գործին աւելի ոյժ և միութիւն տալու համար։ Բայց

այն չարիքը, որի գեմ մենք ենք կուռում, տարածւած է ամեն տեղ և նորա դէմ շատ ու շատ ապրիներ պիտի մաքառել: Այս տեսակ հանգամանքներում, իմ կարծիքով, կենարոնական գանձարանի պէտք չը կաց բոլորովին... «Թող, ով ցանկանում է մեր դաշնակցութեան անդամ դառնալ, չը սպասէ ոչ ծրագրի հրատարակելուն, ոչ վարչութեան նշանակւելուն - շարունակում է նա: Թող նոքա լնկերութեան մէջ մտնեն վճռելրվ, որ առանց վարչութեան կառավարւեն, որ իրանք իրանց գործը կարգի գնեն, իրանք ծրագիր կազմեն իրանց գործունէութեան համար, իրանց պահանջներին համեմատու:

«Խմբերի» ծրագրի առիթով Մասէն աւելացնում է, թէ այժմ արդէն հազար տեսակ այլ և այլ անուններով պատրաստւած հն ապագաչ դաշնակցութեան համար՝ Էլբեֆի «Արդիւնաբերող Ընկերութիւնը», որը պարապում է ժողովրդական գրադարաններ և կո րսեր հիմնելով, «Ժողովրդական կրթութիւն քարոզական միութիւնը» նախում, «Օգտաւէտ զիտութիւններ տարածելու լնկերութիւնը» Մոլինում և ուրիշ շատերը: Նոր խմբերը երկար չեն ման գալ ծրագրի չետելից, նոքա կարող են փոխ առնել ցիշեալ նախորդներից: Մասէի կարծիքով, դաշնակցութեան դերը պիտի կաշանայ նորանում, որ բոլոր գոյութիւն ունեցող լնկերութիւնների մէջ կապեր հաստատի և նորերը հիմնի նրանց նման:

Զը նախած որ Մասէի մոքերի նորութիւնը ու համարձակութիւնը մի քիչ տարակուսանք յարուցին, նորա դաշնակցութիւնը միանգամից մեծ համակրութիւն գտաւ: Հասարակութեան կողմից: 1866 թւի նոյեմբերի 15-ին Մասէն տպեց իւր երկրորդ հրաւերը և այդ օրը դաշնակցութեան սկզբնաւորութեան օրն է համարւում: Առաջին երեք անդամներն և ստորագրութիւն տւողներն էին՝ մէկ որմնադիր, երկաթուղու մի կոնդուկտոր և մի քաղաքական սերժանտ: (Տարեկան անդամավճարը մէկ ֆրանկից պակաս չը պիտի լինէր): Ենքը Մասէն չորրորդ ստորագրողն էր: Այսպէս չորս ստորագրութիւն ունենալով, նա լրազրում հրատարակեց թէ դաշնակցութիւնը գրականապէս գոյութիւն ունի արդէն: Մի ամիս անցած 510 անդամ կար, իսկ մի տարուց յետոյ նոյա թիւը համեմում էր 4792: Միևնույն տարում նոցա հետ միացան մի քանի լնկերութիւններ, որոնք նոյնապէս իրանց նպատակ էին դրել՝ ժողովրդի մէջ

կրթութիւն տարածել, ինչպէս օրինակ, վերև միշտած էլքեֆի «Արդիւնաբերող Ընկերութիւնը» և ուրիշները:

Նիւիլի գիւղի խումբը առաջինն էր, որ կազմեց դաշնակութեան գաղափարների քարոզութեան շնորհիւ: Այս այն նամակը, որ գրում է այդ խմբի հիմնադիրը Մասէին (տպւած է դաշնակցութեան Յ-դ տեղեկագրում 1867 թ. մայիսի 15-ին). «Փողովրդական կրթութեան դաշնակցութեան, նախագծի շնորհիւ, որ դուք կազմել էիք, նիւիլի համայնքը ունի այժմ 140 հասորից բազկացած ժողովրդական գրադարան, ուր ացցելում են մեծ եռանդով: Անցեալ կիւրակի գրադարանի շինութեան մէջ սկսեցին մի շարք հրապարակական դասախոսութիւններ: Այդ տեսակ դասախոսութիւններ սիրտի լինեն ամեն կիւրակի, իսկ դաշտային գործերը վերջացնելուց յետոյ – շաբաթը մի քանի անդամ: Այդ տեսակ հրապարակական ընթերցանութիւնները զօրեղ միջոցներից մէկն են ժողովրդի մէջ օդաւակա գիտութիւններ տարածելու համար, որովհետև նոքա ուսումնասիրութիւն են յարուցանում անգրագէտ ունկնդիրների մէջ և դորանով ստիպում են նոցա ացցելի հասակաւորների դասերը, որ մասղիր ենք շուտով բաց անել: Դաշնակցութեան անդամները միտք ունեն միւս տարի աւելի ընդլայնել իրանց գործունէութեան շրջանը: 1867 թւի անդամագնարները գրադարանի հիմնարկութեան վերայ ծախուեցան, իսկ հետեւեալ 1868 թւին խումբը կամենում է այսպէս կարգադրել իւր եկամուտը՝ մի երրորդ մասը գրադարանի պահպանութեան համար կը ծախուի, իսկ երկու երրորդականը կը տան համայնքի ուսումնարանին, որպէսզի երեխաները ձրիապէս սկզբնական ուսում ստանան:

Նիւիլի խմբի հիմնելլ մի նշանաւոր գէպք էր դաշնակցութեան պատմութեան մէջ. առաջին անգամ գործնականապէս իրագործւեցան նորա գաղափարները: Դա ցոյց տեղ որ առանց հետեւանքի չը մնացին Մասէի յաղածները, որոնց նպատակն էր մասնաւոր նախաձեռնութեան ողին յարուցանել հասարակութեան մէջ: Հետեւեալ խումբը, որ կազմեց դաշնակցութեան գաղափարների ազդեցութեամբ –Մէց քաղաքումն էր: Այդ խմբին զօրաւոր դիմագրութիւն ցոյց տւին կղերականները, որոնք հէնց սկզբից բացարձակ իրանց թշնամի յայտնեցին նոր շարժմանը: Մեցի արքեպիսկոպոսը նզովից այդ խմբի կազմնադներին,

որովհեաւ անոքա սիստեմաբար աշխատում էին կրօնի վարկը ձգելու բաց կղերականների թշնամութիւնը չէր կարող խանգարել դաշնակցութեան գործը, որ շարունակ աճում և ամրանում էր: Խմբեր էին կազմում նաև սիում, Տուլուզում, Հաւրում, Թուանում, Մարսելում: Վերջապէս Պարիզում բացւեց դաշնակցութեան մի ճիւղը Ֆլամմարիօնի նախագահութեամբ: Այդ խումբը վերջերումս մեծ դեր էր խաղում դաշնակցութեան գործում, միջնորդ դառնալով Պարիզի զրավաճառների և գաւառներում զրադարձներ հիմնողների միջև: Էացի քաղաքներից բազմաթիւ խմբեր էին հիմնում նաև զիւղերում: Առհասարակ, Մասէի կարծիքով, դաշնակցութեան անդամները պէտք է աշխատէին առաւելապէս զիւղացիների մէջ զիտութիւն տարածել, որովհեաւ նոցա մէջ կրթութիւնը աւելի ուշ և աւելի դժւար է մանում, քան թէ քաղաքի ստորին դասի բնակիչների մէջ:

Աւելի մանրամասն զննենք սեղական խմբերի գործունէութիւնը: Ամենից առաջ խումբը զրադարձն էր հիմնում: Դաշնակցութեան անդամները հաւաքում էին նշանակւած օրը, իրանց միջից ջոկում էին վարչութիւն, ստորագրութեամբ փող էին հաւաքում և մ.րից թողարկութիւն էին խնդրում զրադարձն բանալու համար: Երբ բաւական փող էին հաւաքում, զրքեր էին առնում, տուն էին վարձում և յայտնում էին, թէ զրադարձնը բացւած է: Դրքերից օգտականութիւն էին ինդրում զրադարձն՝ ամիսը մօտաւորապէս 5 սու (Կամ 25 սանտիմ, ոսկով մօս 6 կոպ.): Առհասարակ զրադարձնը բացւելիս զրքերի թիւը շատ չնշին էր լինում, բայց յետոց շատ մեծանում էր, և երբեմն նշանաւոր գումարի էր համար: Օրինակ, Վերսայի զրադարձնը բացւելիս 100 զրքեր աւել չունէր, իսկ 1889 թւին նորա մէջ կար 16,500 հատոր: Տուլուզի զրադարձնում կար 4,900 զրքեր: Եամբոն- ֆոֆիրովի զրադարձնում—2860 զրքեր և այլն...

Դաշնակցութեան գոյութեան սկզբում ժողովրդի համար առանձին զրականութիւն չը կար նրանսիալում և ժողովրդական զրադարձների մէջ մանում էին այնպիսի զրքեր, որոնք նշանակւած են հասարակութեան միջին դասի համար: Այստեղ բերենք ժողովրդական զրադարձնի զրացուցակը, որը կազմել է Ֆրանկլինի ընկերութիւնը: (Այդ ընկերութիւնը հիմնւած է Պարիզում Ֆիւլ Սիմոնի նախագահութեամբ, նորա նպատակն է էժան զնով զրքեր ուղարկել

գիւղերի և ուսումնարանների գրադարաններին): Այդ գրացուցակը օրինակելի էր համարւում և շատ գրադարաններ, իրանց հիմնարկութեան ժամանակ, նորանից օգտւել են: Մեզ համար նա հետաքրքիր է մանաւանդ ինչպէս ապացոյց, որ ֆրանսիացում՝ ժողովրդի ստորին դասերը համեմատաբար բարձր են զարգացմամբ: Գրացուցակը ունի մինչև 500 գիրք և բաժանւած է մի քանի մասերի: Առաջնում՝ այն է կրօնի և բարոյագիտութեան բաժնում գետեղւած են ի միջի այլոց Բոսսիւէի, Ֆենելոնի, Շատորբիանի երկասիրութիւնները, Պասկալի «Մաքեր»-ը, Ժիւլ Սիմոնի «Պարախքը»: Պատմական մասը նւիրւած է առաւելապէս Ֆրանսիայի պատմութեանը և այնտեղ զետեղւած են, օրինակ, այնպիսի լուրջ և ընդարձակ շարադրութիւններ, ինչպէս են Հանրի Մարտէնի՝ Ֆրանսիայի պատմութիւնը 17 հատորով, նոյնպէս նորա՝ Ֆրանսիայի համառօտ պատմութիւնը 4 հատորով, յետոյ գալիս են Օգիւստեն Թիերիի պատմական շարադրութիւնները, Վոյտերի՝ «Լուգովիկոս ՏՎ-ի գարը», Միջնէի և Թիերի շարադրութիւնները յեղափոխութեան պատմութեան մասին, Ներովոսի և Տացիասոսի գրւածքները, Մակոլէյի՝ «Անգլիայի պատմութիւնը»: Ֆրանսերէն վիպերից կամ ժամաներեցութիւններից քիչերն են առաջարկւած (չը պէտք է մոռանալ, որ գրացուցակը շինուած է վաթսունական թւերում): Աորնէլլ, Իտալին, Մոլիեր, «Պօլ և Վիրգինէ», Բալզակի՝ «Էժենի Գրանդէ»-ն, Ժորժ Սան-ի վիպերը ժողովրդական կեանքից, Ժիւլ Վերնի և Երկմաննատրիանի ու մի քանի մանր հեղինակների գրւածքները—ահա այն բոլորը, ինչ որ հայրենի գրականութիւնից առաջարկւում էր ժողովրդին կարգալու: Թարգմանած վիպերի թիւը աւելի մեծ է, մանաւանդ անգլիացի և ամերիկացի հեղինակներից, օրինակ, գրացուցակում մտցրած են Վալտեր Սկոտտի բոլոր վիպերը, Դիկենսի մի քանի վիպերը, Սւիֆտի՝ «Գիւլիւերի ճանապարհորդութիւնը», «Մորինզոն Կրուզէն», «Եղբայր Թոմի սննակը», Կուպերի, Մայն-Ռիդի և Մարիետի վիպերը: Առևսաց գրականութիւնից երկու գիրք են առաջարկւած: Պուշկինի՝ «Կապիտանի դուստրը» և Տուրգենևի, «Որտորդի օրագիրը»: Բնագիտական գրքերից՝ ցուցակում նշանակւած են ընդամենը 24 հատ: Նրանց մէջ են Bibliothèque սիլե-ի մի քանի հրատարակութիւնները, 50 սանտիմ ամեն մէկը, որոնք, պարզ

բան է, նշանակւած են աշակերտների համար։ Այդպէս են—նրոտիէի՝ «Histoire de la terre», Մարգոլէի «Les phénomènes de la mer» և այն։ Յետոյ գալիս են մտանազիտական գրքեր հողագործութեան և գիւղատնուեառ թեան այլ և այլ ճիւղերին վերաբերեալ, առ ողապահական գրքեր և վերջապէս քաղաքական տնտեսութեան վերաբերեալ գրքեր։ Վերջին տեսակից ընդամենը 14 շատ են և նոցաթւում գտնւում են հաստիացի և Սէց-ի գրւածքները։

Բացի գիւղական գրադարաններից գաշնակցութիւնը յանձնառաւ գրադարաններ հիմնել բանակրում, հիւանդանոցներում և զօրասներում։

Դժբաղվաբար Մասէի տեղեկագրերում շատ քիչ ծանօթութիւններ կան, թէ ժողովուրդը ինչպիսի գրքեր է կարդում առ աւելապէս, բայց այդ քիչ տեղեկութիւններից էլ երեւում է որ ընթերցողների գրական ճաշակը ամեն տեղ միասնակ չէ։ Մեծ մասամբ ամենից սիրւած գրքերը՝ վէպերն են, մանաւանդ յաջողութիւն են վայելում ծիւլ վերնի, Մայն-Ծիդի և Երկման-Շատրիանի վէպերը։ Համարեաբոլոր նամակներում, որ գրել են Մասէին գրադարանների հիմնողները, ցիշում է թէ ինչ յափշտակութեամբ են կարդում վերջինիս վէպերը։ Բայց ցիշում են նոյնպէս, որ ժողովուրդը հետաքրքրւում է նաև գիտնական գրւածքներով։ Օրինակ բերենք մեկ գրադարաննպեաի նամակը։ այդ գրադարանը հիմնել է Թեյմսի խումբը Վիլեմինօի արհեստանոցներում, ուր բանում են մի քանի հարիւր մարդ։ «Ընթերցողների մեծամասնութիւնը, կարելի է ասել, կլանում է գրքերը—դրում է նաև Մասէին։—Կանաչը էլ տղամարդոց ովէս եռանգով են կարգում։ Հետեւեալ նիստում ես պիտի ինսդրեմ խմբի անդամներին գրքերի թիւը կրկնապատկելու։ Մի շատ հետաքրքիր երեսոյթ՝ վէպերի պահանջը ամենից քիչ է։ Ամենից շատ ցանկանում են պատմական և բնագիտական գրքեր և ուղեգրութիւններ։»

Վերջերը գաշնակցութիւնը հիմնեց մի շատ օգտական բան, որ յարմար է մանաւանդ գիւղական համայնքներում, ուր այնպէս դժւար է գրքեր ձեռք բերելլը։ Դա այսպէս կոչւած «Ժոռուցիկ գրադարաններն են (Bibliotèques roulantes), որոնց նպատակն է գրքեր մատակարարել գիւղական ուսումնարանների աշակերտներին։ Դոքա հետեւեալ կերպով են շինուում։ կազմւում է կենուրոնական վարչութիւն,

որը արկղներով՝ գրքեր է ու զարկում ուսումնարաններին։ Գրքերը, մէկ ուսումնարանում կարդալուց յետոյ, ուղարկում են միւսը, այնուղից երրորդը և այլն, այսպիսով միւնոյն զրքերը շրջում են բոլոր, իրարից մօտ գտնուող ուսումնարանները։ Այդ կարգը մացրւեց առաջին անդամ Նախիթի տասը քաղաքացին ուսումնարաններում և շրջակացքի 16 գիւղական ուսումնարաններու մ։

Ծողովրդական գրադարաններ հիմնելուց զատ դաշնակցութեան անդամները կազմում էին հրապարակական դասախոսութիւններ ժողովի համար։ Դաշնակցութեան հիմնելուց 3 տարի յետոյ 16 ժողովներում արդէն այդպիսի ընթերցանութիւններ էին կազմւած։ Գիւղերում ընթերցանութիւններ կազմելու գլխաւոր գժւարութիւնը դասախոսների պակասութիւնն էր, բայց այդ խոչնդոտը ևս հնարաւոր եղաւ վերացնել։ Եատ գիւղերում այդ գործը յանձն առան միւնոյն գիւղական ինստիլիթենսները, որոնց զիմել էր Մասէն իւր առաջին յօդաւճներով։ Այսպէս Տիբրիլի գիւղում (Էլզասում) գեղավաճառը կարդում էր քիմիացից, մէրը աստղաբաշխութիւնից, քահանուան-բուսականութիւնից։ Գիւղի բնակիչներից մէկը, որը մի քանի տարի ապրել էր Ամերիկայում, ծանօթացրեց այդ երկրի վարք ու բարքի հետ։ Դաշնակցութեան քաղաքաբնակ անդամները նոյնպէս սկսեցին ժողովրդական ընթերցանութիւններ կազմել շրջակայ գիւղերում։ Այսպէս, Մեղի լսարանի սրօվեսասր Վակիկան զնաց դասախոսութիւն անելու Սոլն գիւղում, ուր որ տեղական խումբը որոշել էր մի շարք հրապարակական դասախոսութիւններ կարգալու։ Հողագործութեան մասին։ Դաշնակցութեան ազգեցութեան տակ մէկ անասնաբոց Տեղբեմնից սկսեց մանդալ շրջակայ գիւղերում և դասախոսութիւններ կարդալ՝ անհասունների վերայ կանոնաւոր կերպով։ Հոդ տանելու մասին Վիրնոն գիւղաքաղաքում կազմեց ամբողջ ընկերութիւն, որի նպատակն էր հարեւան գիւղերում ժողովրդի համար ընթերցանութիւններ կազմել։ Հողագործութեան և գիւղատնտեսութեան ուրիշ ժիւղերին վերաբերեալ։ Որքան սիրով էր այցելում այդ դասախոսութիւնները ժողովուրդը, կարելի է եղակացնել հետեւեալ պատմութիւնից, որ Մասէն բերում է իւր տեղեկագրերից մէկում։ բժիշկ Տենտինդը, որը 5 տարւաց ընթացքում կարգացել էր 200-ից աւել ժողովրդական դասախոսութիւններ Խօննացի նահանգի գիւղերում,

պատմում էր դաշնակցութեան տեղական անդամների տարեկան նիստում, թէ մի անդամ գասախօսութիւնից յետ դառնալիս պատահում է մէկ ժանդարմ աստիճանաւորի, որը ասում է. «Դուք ստիպեցիք ինձ զուր տեղը ճանապարհ գնալու։ Ես ուղարկւած էի այստեղ կարգ սահմանելու գինետներում, բայց նոքա ձեր շնորհիւ համարեա գտառարկ էին»։

Գիւղերում գասախօսութիւնները առհասարակ մասնագիտական բնաւորութիւն էին կրում, որովհեաւ նոքա գործնական հարցեր էին շօշափում հողագործութիւնից և գիւղատնտեսութեան այլ ճիւղերից։ Իսկ քաղաքներում լնթերցանութիւնները աւելի բազմատեսակ և հետաքրքիր էին լինում։ Օրինակ, Նանսիի խումբը կարդում էր հրապարակական գասախօսութիւններ Ֆրանսիացի բանւորների լրութեան մասին մինչև 1889 թիւը, Ժաննա դ'Արկի մասին, առողջապահութեան մասին և այլն։

Ֆողովրդական գասախօսութիւնները ծառայում էին իբրև ներածութիւն շափահասների կուրսերի համար, որոնք մի քանի ժամանակից յետոց բացւեցան դաշնակցութեան համարեա բոլոր շրջաններում։ Այդ կուրսերին օրինակ եղան Գերւիլերի և Միւլհաուգէնի բանւորների երեկոյեան կուրսերը, որոնք բացւեցան 50-ական թւականներում։ Այդ գործը սկսեց Ժան Բուրկարը՝ Գերւիլերի գործարանների տէրը։ Սկզբում նա բանւորների համար գրադարան հիմնեց, յետոց նրանց առաջարկեց իրար մէջ համաձայնել և միասին ընտրել այն առարկան, որը ամենից շատ հետաքրքրում է նրանց։ Ինքը խոստացաւ տալ նոցա համապատասխան ուսուցիչ և ուրիշ յարմարութիւններ։ Սկզբում գժւար էր այդ գաղափարը բանւորների շրջանում պատռաստել։ Ամենից առաջ խմբական երգեցողութեան համար խումբ կազմեց։ Յետոց գործակառարները խումբ կազմեցին անդիմերէն սովորելու համար, դրանից յետոց բանւորները արդէն սկսեցին միանալ՝ ֆրանսներէն լեզու, թւաբանութիւն, գծագրութիւն և ուրիշ բաններ սովորելու համար։ Երբ արդէն արւած էր առաջին քայլը, գործը արագ կերպով առաջ գնաց ու շուտով աշակերտները այնքան շատացան, որ գրադարանի շինութիւնը չափազանց նեղութիւն էր անում, և Ժ. Բուրկարը ստիպւեց նոր տուն շինել «բանւորների մեմարանի» համար, ինչպէս անւանում է Մասէն այդ կուր-

սերլ։ Այդ տան մէջ, բացի Յ գասառուն-դահլիճներից, կային գրադարան և լաբորատորիա՝ ֆիզիկայով և քիմիայով զբաղելու համար։ Նինութիւնը և կուրսերի պատրաստութիւնը միասին գործարանատիրոջը նաևեցին մաս 60.000 ֆրանկ։ Բացի հուրկարի բանւորներից, այդ երեկոյեան կուրսերը այցելում էին հարեւն գիւղերի բնակիչներից շատերլ։ Ուսումը ամբողջովին ձրի էր։ 1863 թւի ցուցակից, որ բերում է Մասէն, երեւում է որ աշակերտները ամենից շատ պարապելիս են եղել գծագրութեամբ (68 հոդի), յետոց ֆրանսերէն լեզով (53) և քիմիայով ու ֆիզիկայով (52)։ Ինչպէս երեւում է, ընդհանուր զարգացողական առարկաները, ինչպէս գրականութիւնը, պատմութիւնը և աշխարհագրութիւնը, առանձին հարցակրութիւն չէին պատճառում և այդ դասերը ամենից քիչ ունկընդիրներ ունեին (10—11 հոդի)։ Գերւիլերի օրինակով 1866 թ. նոյն տեսակ կուրսեր բացեցան Միւլհաուզէնում և այդուղ 500 հոդի աշակերտ գրւեցան։ Այդ թիւլ, որ ցոյց է տալիս թէ որքան մեծ է բանւորների մէջ գիտութեան ծարսւը, աւելի նշանաւոր կը լինի, եթէ աչքի առաջ ունենանք, որ Միւլհաուզէնում, ինչպէս և ուրիշ տեղեր, բանւորները պարապում էին օրեկան 12 ժամ և որ երեկոյեան կուրսերին ստորագրողներից շատերը բնակւում էին մօտակայ գիւղերում։ Պոքա, գործը վերջացնելուց յետոց, մի քանի վերաս էլ ճանապարհ պիտի կտրէին տուն համանելու համար։ Զը նայելով որ պարտաւոր էին ամեն օր երկար բանելու, նոքա սակաւաթիւ ազատ ժամերը նւիրում էին իրանց գիտութեան փոքրիկ պաշարը մեծացնելուն Այս դէպքում բանւորները ցոյց տւին, որ լաւ են հասկանում իրանց խօսքական շահերը։ Ուրիշ երկիրների պատմութիւնից նոյնպէս կարելի է բազմաթիւ օրինակներ բերել, երբ բանւորները նոյնպէս սիրով վերաբերել են դէպի ուսումը։ Ցոյց տանք հենց անդլիացի բանւորների դաշնակցութիւնները, որոնք առանց գործարանատիրոջ մասնակցութեան և օգնութեան, իրանք կազմում են գրադարաններ, հրապարակական դասախոսութիւններ, մինչեւ անգամ մասնագիտական ուսումնարաններ, հմուտ բանւորներ պատրաստելու համար։ Թէև ֆրանսիացի բանւորները ցոյց չեն տալիս այնպիսի ձեռներէցութիւն և ինքնավստահութիւն, որ Անգլիացի բանւոր դասակարգի յառկանիշն է, բայց նոցա մէջ էլ նկատում է զօրաւոր

ձգտում դեսի լուսաւ որութիւնը և ացպալիսով նոքա բերրի հող են ներկայացնում գաշնակցութեան լուսաւոր գործունէութեան համար:

Գերւիլերի և Միւլհառուզինի կուրսերի կազմակերպութիւնը ուսումնասիրւելուց և ուրիշ երկիրների նոյնանման հիմնարկութիւնների հետ ծանօթանալուց յետոյ, Մասէն եռանդով սկսեց քարոզել, որ նոյնպիսի կուրսեր բացւեն Ֆրանսիայում և գաշնակցութեան խմբերը, իրանց գոյութեան սկզբից, ձեւնարկեցին այդ գործին: Կօղմարում; Մեցում, Դիէպում, Մարսէլում—ամեն տեղ էլ բացւում էին այդ տեսակ կուրսեր, ուր այցելում էին մեծ սիրով: Դոցա ծրագիրը մօտաւորապէս ամեն տեղ միւնոյն էր. ամեն տեղ աւանդուում էին սկզբնական ուսումնարանի առարկաներ, ինչպէս քերականութիւն, թւաբանութիւն, ու գծադրութիւն, յետոյ բնական գիտութիւններ—ֆիզիկա, քիմիա և առողջապահութիւն: Մի քանի շրջաններում այդ ծրագիրը բաւական ընդարձակել էին. Մեցում բացի այդ բոլորից՝ դաս էին տալիս պատմութիւնից և ներկայ իրաւունքից (Ճիշտվուած պատմութիւն): Նատ ընդարձակ ծրագիր մշակեց Association phocéene-ը Մարսէլում: Դասընթացի մէջ ման ում էին բարոյագիտութիւն, սոցիոլոգիա, տիեզերագրութիւն, կրօնական պատերազմների պատմութիւն, անզիներէն և մինչև անդամ՝ իտալերէն լեզուներ: Գերւիլերի օրինակով, աշակերտները միշտ իրանք էին ընտրում սբարապման առարկան և պարտաւոր չէին բոլոր դասերը լսել: Այդ կուրսերը ամեն տեղ էլ ձրի էին Դաշնակցութեան Պարիզի խումբերից մէկը՝ cercle de la rue Villehordonin, այդ տեսակ կուրսեր հիմնեց պրոֆեսորների աներում: Այդ տնային կուրսերը այն առաւելութիւնը ունին, որ աւելի սերտ կապեր են հաստատում ուսանողների և ուսուցիչների մէջ: Նաբաթը մէկ անդամ՝ զրական երեկոյթ էին կազմում, ուր հաւաքւում էին կուրսերի (ներկայ) և հին ուսանողները և ուր խօսում էին կարգացած գրքերի մասին:

Որովհետեւ կուրսերը և ընթերցանութիւնները միայն ձմեռն էին աւելում, մի քանի խմբեր, իրանց աշակերտների և ունկնդիրների հետ յարաբերութիւնը չը կարելու. Համար, նրանց հետ միասին կիւրակինօրեայ զրոսանքներ և արշաւանքներ էին կատարում ամառւայ ամիսներում: Զրոսանքներին նոպատակ էին տրւում՝ գործարաններ և

արւեստանոցներ այցելել, որոնք կարող էին հետաքրքիր և օգտառէտ լինել բանորների համար:

Դաշնակցութեան նպատակներից մէկն էր՝ երեխայոց համար ուսումնարաններ շնորհը. բայց առաջին տարիներում այդ գործը բաւական ծանր էր գնում, մասամբ նորա համար, որ ուսումնարանների հիմնարկութիւնը համեմատաբար մեծ ծախսեր էր պահանջում, մասամբ էլ նորա համար որ այդ պահանջը այնքան ստիպողական չէր, որովհետև շատ երեխաներ ուսումնարան չէին գնում ոչ թէ դպրոցների պահատութեան պատճառով, այլ ծնողների աղքատութեան պատճառով։ Աւսի դաշնակցութեան անդամները աշխատում էին զիսաւ որապէս չքաւոր երեխաներին դպրոց ուղարկել, նրանց ուսման վարձը վճարելով (ինչպէս օր., Միւլհաուզէնում) կամ նիւթական օգնութիւն անելով այն ընտանիքներին, որոնք չքաւորութեան պատճառով չեն կարողանում սկզբնական ուսում տալ իրանց զաւակներին։ Հաւրի խումբը հետեւեալ նպատակներն է գնում իրան։ Խումբը մտադիր է փնտրել 7 մինչև 12 տարեկան երեխաներ որոնք դպրոց չեն յաճախում, ամեն կերպ աշխատել նոցա ծնողներին համոզելու որ իրանց զաւակներին ուսումնարան ողարկեն, երեխաներին յարմար շորեր և գրքեր տալ, ուսման վարձը վճարել և նոցա յառաջաղիմութեանը վերահասու լինել։ Այդ բոլորին հասնելու համար ամեն մի թաղում (Հաւրում 28 թաղեր կան) նշանակւում են երկու անդամ, որոնց պարտականութիւնն է փնտրել չը սովորող երեխաներին և առեն միջոց գործ դնել նոցա ուսումնարան տանելու համար։ Ուրիշ շատ խմբեր էլ անում էին միեւնոցներ. օրինակ Պոնո—Օտոմերի խմբի ծրագրում ուղղակի հետեւեալ յօդւածն ենք կարգում։ «chasse aux enfants, qui ne vont pas à l'école»։ Այդ խմբի հիմնադիրը—գրում է Մասէն—ինքը անձամբ որսում է փոքրիկ շրջմոլիկներին։ զասի ժամանակ փողոցում հանդիպող ամեն մի երեխայի, կոնից ուղղակի բւնում է ու տանում ուսումնարան վճարելով նորա թոշակը։ Խմբի անդամների պարտականութիւնն էր նոյնապէս վերահասու լինել, որ իրանց հոգառարութեան յանձնւած երեխաները ճշոութեամբ յաճախէին դպրոցը։ Միւլհաուզէնի խումբը բացառիկ դէպքերում մինչև անդամ հետեւեալ միջոցն էր գործ գնում ծնողներին հարկադրելու որ իրանց զաւակներին ուսումնարան

ուղարկեն, որովհետեւ շատ ընտանիքներում 10—12 տարեկան երեխաները արգելն աշխատանք են անում, որից նոքազրկում են երեխանները ուսումնարան են գնում ուստի խումբը վճարում էր այդ ընտանիքներին նոյն դումարը, որը նոքապիտի առանացին իրանց որդիների աշխատանքից. այսպիսով նրանք սկզբնական ուսում էին ստանում առանց նիւթական վիճակառ ելու իրանց ծնողներին։ Եաւ խմբեր շինում էին նաև այսպէս ասած, «garderies de roupon» կամ «մասուրներ» ամենափոքրիկ երեխանների համար, որպէս զի նոցա մեծ քոյրերին և եղբայրներին աղատեն նոցա վերայ հսկելուց, որը-ուստի մասուրներ շինելը ամեն տեղ կանանց դործն էր։ Առհասարակ կանայք նշանաւոր դեր էին խաղում՝ գաշնակցութեան դործում։ բաւական է յիշել Վերսայի խմբի նախագահին՝ ու-մե Hippolite Meunien-ին, որը քանից աւելի գիւղերում գրադարաններ է հիմնել և այդ բոլոր գիւղերում ամբողջ շարք ընթերցանութիւններ է կազմել ժողովրդի համար։

Վերջապէս գաշնակցութեան անդամները սկսեցին հիմնել այսպէս կոչւած Ժողովրդական ակումբներ՝ գերմանական Arbeiterbildungsvvereine-ի օրինակով։ Առաջին ժողովրդական ակումբը Ֆրանսիայում՝ բացւեց 60-ական թւերին Միւհաուզէնում, ուր դորահամար կառուցւեց մի առանձին շինութիւն, որի մէջ պարունակում էին գրադարան, թանգարան և մի քանի գահիներ նւագահանդէնների համար։ Բանորները արձակ ժամերին գալիս են այստեղ իրար հետ խօսելու, լրագիրներ կարդալու, զոմինո և ճառակ (շախմատ) խաղալու (թղթախաղը բոլորովին դուրս է ձգւած այդ տեսակ ակումբներից)։ Նորա օրինակով ուրիշ խմբեր ևս շինում էին ժողովրդական ակումբներ։ Առաջին խկատարում բազմաթիւ ակումբներ շինւեցան (երկու ակումբ 1750 անդամներով՝ Տաննում), Գերւիլերում և այլ տեղեր)։ Մի քանի խմբեր, միջոցների սղութեան պատճառով, գրադարանի շինութեան մէջ էին ակումբ հիմնում։ Երբեմն ակումբին կից շինուում էին բնագիտական և արհեստագիտական թանգարաններ, որոնք զօրաւոր նպաստ էին հրապարակական դասախոսութիւններին և երեկոյեան կուրսերին։

Այս համառօտ նկարագրութիւնից երեւում է, թէ որքան ընդար-

ձակ և բազմակերպ գործունէութիւն ունէր դաշնակցութիւնը։ Երեք տարի չանցած (1867-ից մինչև 1870-ի սկիզբը), նա 17,856 անդամ ճարեց և 59 տեղական խմբեր հիմնեց։ Վյզպիսի լնդարձակ ձեռնարկութիւնը պահանջում էր արդէն աւելի կանոնաւոր և կենտրոնացած գործադարսութիւն։ այդ պատճառով Մասէն Պարիզի խմբին յանձնեց կենտրոնական բիւրօն և տեղեկադրերի տպադրութիւնը՝ իսկ ինքը գնաց՝ գաւառներում դաշնակցութեան գաղափարները անձամբ քարոզելու։

Ֆրանսիական-գերմանական կուի ժամանակ դաշնակցութիւնը հարկաւ դագարեցրեց իւր գործունէութիւնը։ բայց հինգ որ կայացաւ հաշութիւնը, ամենքը ահազին եռանդով սկսեցին գործել։ «Դպրոցի ուսուցիչը մեզ յաղթեց, նա ինքն էլ մեր վրէժը կառնի»— ասում է Մասէն։ Եւ ահա ուսուցի գործունէութեանը կատարեալ լնդարձակութիւն տալու համար, դաշնակցութիւնը վճռեց սկզբնական ուսումը ֆրանսիայում պարտադիր և ձրի գարձնել ակրութեան միջոցով։ 1871 թւի հոկտեմբերին բոլոր գաւառական խմբերին խնդիրներ և ստորագրութեան թերթեր ուղարկեցին։ Այդ ձեռնարկութեան փոստի ծախսերը ծածկելու համար, դաշնակցութեան, յանձնաժողովը ուղարկելով այդ թերթերը, ինդրում էր ամենին իրանց ստորագրութեան հետ մէկ-մէկ սու տալ (մօտ մէկ կոպէկ)։ Այդ պատճառով ամբողջ, «ինդրամատոյց շարժումը» (mouvement rétitionnaire) վերջերում կոչեց «կոպէկի շարժում տղիսութեան գէմ»։ Խնդիրները այսպիսի հետեանք ունեցան։ կէս տարի անցած 847.761 ստորագրութիւն էր հաւաքել, իսկ մի տարի յետոց աւելացան էլի 69.506 ստորագրութիւն։ Բոլոր ստորագրութիւնների թիւը 1.267.267-ի էր հասնում, հաշւելով նաև կուից առաջ Ստորագրութիւն հաւաքած ստորագրութիւնները։ Այդ ամենախոշոր ինդրամատոյց շարժումն էր, որ երբ և իցէ եղել էր ֆրանսիայում։ Մասէն կարող էր հպարտութեամբ ասել որ իւր աշխատանքը իզուր չը կորաւ և դաշնակցութիւնը իւր նպատակին հասաւ։ Մի համեստ լնկերութիւն, որի նպատակն էր կրթութիւն տարածել ժողովրդի մէջ և որը հիմնել էր ելքասի բոլորովին յետընկած զիւղի անյայտ և աղքատ ուսուցչի անխոնչ եռանդի շնորհով—այդ լնկերութիւնը ածեց և դարձաւ ազգային մեծ գործ և ֆրանսիայի ազգային կրթութեան նշանաւոր

գործն։ Խհարկէ գրեթէ անհնար կը լինէր մէկուկէս միլլիսն ստորագրութիւն հաւաքել, եթէ ամբողջ ֆրանսիացում սփռւած չը լինէր դաշնակցութեան տեղական խմբերի ցանցը, որի շնորհիւ մի տեսակ կատ հաստատեց այդ ասպարիզում գործող մարդկանց մէջ։ Ֆրանսիացի բոլոր քաղաքներում և գիւղերում սփռւած, դաշնակցութեան անդամները ջերմ համակրութիւն ցոց տւին պարտադիր և ձրի ուսման գաղափարին և ամենքն էլ եւանդով սկսեցին ստորագրութիւն հաւաքել։ Հողը արդէն պատրաստ էր դորա համար և ահա թէ ինչու այնպիսի փայլուն արդիւնք ստացւեց։

Բայց այդ շարժումը սաստիկ տրատւնջ յարուցեց կղերտկանների կողմից, որոնք նորա ծագման միջոցին արդէն չափազանց չարամտութեամբ վերաբերւեցան, այդ շարժման մէջ իրանց համար վտանգաւոր թշնամի տեսնելով։ Ազգացին ժողովը չուզեց հերթական հարցերի շարքում զնել ձրի և պարտադիր ուսման խնդիրը և խնդիրները ուղարկեցան Դիւլպանլուին, որը նախագահում էր պարլամենտից նշանակւած ժողովրդացին կրթութեան յանձնաժողովին։ Նախագահը ցանկանում էր խնդիրները անուշադիր թողնել, բայց դաշնակցութեան անդամները վճռողական մարդիկ էին. նոքա շարունակ եռանդով ձգտում էին դէպի իրանց նպատակը։ Պարիզի խմբի նախագահ էմ. Վոշէն, հետևեալ հնարը գտաւ, խնդիրների ազգեցութիւնը զօրացնելու համար. նա զիմեց բոլոր ժողովրդի ընտրեալ երեսփոխաններին — պարլամենտի անդամներին, գաւառական խորհրդականներին, մէրերին և այլն — և խնդրեց նոցա ձեռք քաշել խնդիրների տակ։ Հինգ շաբթւայ մէջ ստորագրւեցին 35 հազար ընտրեալ պատգամաւորներ, որոնք ֆրանսիացի 14—15 միլլիօն բնակիչներից ցանկութիւնները արագայտողն էին հանդիսանում։ Բայց գժբազզաբար այդ շարժման ամենասաք ժամանակը Թիրի նախագահութիւնը ընկաւ և իշխանութիւնը անցաւ դաշնակցութեան վաղեմի թշնամի կղերականութեան ձեռքը։ Դժբազդ օրեր վերաց հասան դաշնակցութեան համար. պրեվէկտոնները արգելում էին հրատարակական դասախոսութիւնները, փակում էին գրադարանները և ժողովրդական ակումբները։ Աւու մնարաններին հրաման էր արւած դաշնակցութիւնից ոչինչ նպաստ չընդունել, ուսուցիչներին պատւիրւած էր դուրս դաշնակցութեան անդամակցութիւնից։ Մինչև անդամ հաւամայ Պապը

խառնեց այդ գործում և իւր կանոնական կոնդակում առ 1872 թւի նոյեմբերի 22, որոտաձայն նզովքներ թափեց այդ «վեասակար» հիմնարկութեան գլխին: Կարելի էր կարծել թէ դաշնակցութիւնը ու անուլ տաւ արդէն իւր գործը և այդքան ջանքն ու աշխատութիւնը իղուր կորան: Բայց դաշնակցութեան գաղափարները այնքան խոր արմատ էին զցել ֆրանսիացի հասարակութեան մէջ, որ չը նայած նորա գէմ յարուցւած հալածանքին՝ 1876 թւին նա ունէր 30.000 անդամ և հիմնած ունէր 210 խմբեր, 400-ից աւել գրադարաններ համայնքներում և 175 գրադարան գօրատներում: Խոկ երբ կղերական նախարարութիւնը լնկաւ և կառավարութեան գլուխ անցաւ ծիւլ ֆերին, դաշնակցութիւնը քաղաքացիական իրաւունք ստացաւ և նորա օրինագիծը՝ պարտադիր և ձրի ուսում մոցնել, լնդունեց և հաստատեց պատգամաւորների պալատում: 1889 թւին, դաշնակցութեան մէջ մտնող բոլոր լնկերութիւնների ներկայացուցիչները առաջին անգամ կոնդրէս կազմեցին: Այդ ժողովում մշակւեց դաշնակցութեան կանոնադրութիւնը և գծւեց այն ճանապարհը, որով նա պիտի ընթանաց ապագայում: Այդ ժողովում Մասէն ճառ. խօսեց, որով յայտնում էր թէ դաշնակցութիւնը այսուհետեւ էլ պիտի ազատ լինի կուսակցական ոգուց. «մեր գործն է լնարողներ սուեղծել, ոչ թէ ընտրութիւններ անել», — ասում է նա: «Նատ չարչարւեցանք մինչեւ որ ազատ ժողովուրդ դարձանք: Ուրիմն աշխատենք պահէլ այդ ազատութիւնը, խոկ դա միայն այն ժամանակը կարելի է, երբ մեզանից ամեն մէկը այդ ազատութեան պահապան կը լինի: Երբ այդպիտով դաշնակցութիւնը պետական հաստատութիւն ստացաւ, այնուհետեւ ամեն տարի կոնդրէսներ էին կազմում, իսկ 1889 թւին դաշնակցութիւնը առաջին անգամ միջազգային կոնդրէս կազմեց ժողովրդացին կրթութեան մասնաւոր նախաձեռնողներից: Այդ կոնդրէսին մասնակցում էին բոլոր եւրոպական տէրութիւնները, մինչև անգամ Զինաստանը, Ճապոնը, Արգենտինեան հասարակապետութիւնը և ուրիշները: Այդուեղ ժողովրդացին կրթութեան միջազգային դաշնակցութիւն կազմել: Ֆրանսիական դաշնակցութիւնը, որ իւր գոյութեան 25 տարւաց լնթացքում 200-ից աւել խմբեր էր կազմել, այժմ աւելի լնդարձակում է իւր նպատակները, և, ինչպէս Մասէն

ասում է, «անցնում է միջազգային խաչակրութեան գլուխը տգիտութեան գէմ արշաւելու»:

Տեսանք, թէ Ֆրանսիայի ժողովրդի կրթութեան գործում ինչ մեծ նշանակութիւն ունեցան մասնաւոր մարդկանց ջանքերը, որոնք իրանց սիրտն ու հոգին ամբողջապէս նւիրել էին ընտրած գործին:

Ֆրանսիական դաշնակցութեան պատմութիւնը ցոյց է տալիս, թէ ինչեր կարելի է անել եռանդով և միարտն գործելով։ Մեզ մնում է միայն ցանկանալ, որ այդ դաշնակցութեան օրինակը գէթ մասամբ նպաստէ մեզ մօս ևս նոյնպիսի հաստատութիւններ կազմելուն։

# ԱՊԵՐՈՆԵԱՆ ԹԵՐԱԿՂՁԻՆ

ԵՒ

## ԹՈՒՍԱՑ ՆԱԽԹԸ

ԳԱԼՈՒՍՑ ԿԻՒԱՓԵՆԿԵԱՆԻ

(Շարունակութիւն<sup>1)</sup>)

Հիւսիսակին Ամերիկական Միացեալ Նահանգների տարեկան արտադրութիւնը նաևթով, որը 1883 թ. ին 460 հեքտոլիտր էր, վայր իջաւ 1884-ին 445 միլիոնի և 1885-ին՝ 400 միլիոն հեկտոլիտրի. Բաքւի նաւթի արտադրութիւնը, ընդհակառակը, 1883-ին միայն 110 միլիոն հեքտոլիտր էր, իսկ չետող արագ բարձրացաւ՝ գործիքների և հաղորդակցութեան ճանապարհների կատարելագործւելով. Միւս կողմից Բաքւի ապարան ահազին է, մինչդեռ Միացեալ Նահանգներինը անհանգստացնող է դառնում, և Կոմիսարի նաւթի վերջնական ւաղթութիւնը չի կարող չափ հեռուն լինել, եթէ հաւատանք պար. Մարվինին (Marvin), Ստովելին (Stowell) և Պաւէլ Չիհաչևին (Paul de Tchihatchef<sup>2)</sup>).

Աւելացնենք որ նաւթավին հողերը, որոնք առաջ երկրում իշխող թուրք և պարսիկ բէգերի սեպհականութիւն էին, աչժմ մեծ մասամբ գործարանատէրերի սեպհականութիւն են. Դլաւորներն են՝ Նորէլ եղբար. Ները և Ռոթչիլդի տունը. Ամենալորդ ազբիւրների հարեւանութեամբ՝ գետինը արժէ 50 ից մինչ 80 ֆրանկ քառակուսի սաժէնը, կամ 11 մինչ 17 ֆրանկ քառակուսի մէտրը. Նահագործւող հողերի կենտրոններից դուրս կարելի է գնել քառակուսի սաժէնը 15 ֆրանկով և աւելի պակաս.

<sup>1)</sup>Տե՛ս «Մուրճ» № 7—8 և 9.

<sup>2)</sup> Սովորական չափսի միութիւնն է բարիլ (baril), որ ունի 42 գալլոն. մի գալոնի սարունակութիւնն է մոտ 4½ լիտր:

<sup>3)</sup> See Revue des deux Mondes 1888 թ. հոկտեմբերի 1-ին:

## III

Տեսնելուց լեռ թէ ինչպէս Ապշերոնիան թերակղզին ու անապատավին դաշտերում նաւթը խփում է զէպի օղը աղմկալի շատրւաններով, մեզ մնում է նրան հետեւել արհեստանոցների մէջ ուր չահագործութիւնը նորան իւր ձեռքն է տոնում, նորան մշակում է և պատրաստում արտահանութեան համար: Մէնք պէտք է թափանցենք Սև քաղաքը, այսինքն Քաքչի ան զգւելի քաղաքամասը, որը վերապահեած է գործարանների արհեստաւորների համար: Ալնտեղ ամեն ինչ սև է՝ պատերը, հողը, մթնոլորտը, երկինքը. մարդ զգում է նավթը, որի գոլորշիները չնչում ենք. հեղուկի սուր հոտը մարդուս կոկորդն է բանում: Ուր են Մինզրէլիալի բուսականութիւնը, Ղարաբաղի կանաչը, Թիֆլիսի ուրախ հորիզոնը? Համբորգը երազել անդամ չի ուզում ալդպիսի բաներ պահանջելու: Կա նաւթի թագաւորութեան մէջ է. Ապշերոնի թանկագին բերքը կլանում է ամեն հոգսեր. մարդ զնում է ծիսի մշուշի մէջ որ մթնացնում է մթնոլորտը և իւղալին ցեխի ջրաշեղչի մէջ, որ պատել են գետինը. Սև քաղաքում ամեն ինչ սև է: Բայց հէնց ալդուեղ պէտք է որոնել Անդրկովկասի հարստութիւնը. Սև քաղաքն է որ ապրեցնում է բաքուն իւր 200 գործարաններով, որ աճստեղ հիմնել են երեսուն տարուց պակաս միջոցում. և, չը լիներ նաւթը՝ երբէք չէին չինիլ Բաթումի երկաթուղին: Ուսումնասիրներ ուրեմն այդ հետաքրքրական քաղաքամասը, մենք կ'աշխատենք ծանօթացնել դիստիլացիալի զանազան արդիւնքների հետ, նոցա զլիսաւոր գործադրութիւնների հետ, և, եթէ մենք լեռ չենք կանգնիլ ստատիստիքական տեղեկութիւնների կամ օրգանական քիմիալի չորութիւնից, այդ նրանից է, որ մենք համոզւած ենք թէ սրբան այդ ուսումնասիրութիւնը հետաքրքրական է: Կարելի է արդեօք աճնշան համարել մի ինդուստրիալ մանրամասները, որի արողիւնքը քսան տարում հարի բապատկել է? 1870 թվին մաքրած նաւթի տարեկան արդիւնքը հազիւ 15,000 թոն էր. այժմ նամցնում է 1 միլիոն թոն:

Հում նաւթը իջնում է Բալախանէ. Սարունչից մետաղեալ խողովակներով. եթէ կարիք վճի՛ կարելի է հեղուկը ջրհանել ինչպէս այդ վճնում է ամերիկական րիպ lines-ներում. բայց գետինը անքան թեք է, որ այդ գործողութիւնը աւելորդ է դարձնում: Բալովի՛ հարթութիւնն համար սանդծել են գործարանների մի այլ կինտրոն որքան կարելի է նաւթի հողերին մօտ. Երբ զալիս է Սև քաղաքը, նաւթը հոսեցնում էն վիթխարի աւազանների մէջ, որոնց տարածութիւնը տարբեր է. Նորէլ եղբայրները ունին մի քանիսը 50,000 հեքտար տարողութեամբ: Նոցա նման մեծ գործարանատէրերը իրանց սեպհական խողովակներն ունեն՝ Բալախանի հորերը միացնելու համար իրանց թորագործարանների (distilleries) հետ: Փոքր գտողները (raffineur) ընդհանուր խողովակ ունեն: Հեղուկի ահաքը իւղա-

լից է, կանաչաւուն գոյնով, ղեղնաւուն փրփուրով և ցոլքով. գոյնը աւելի մուգանում է, ցոլքը մուգ կապուտ զառնում, երբ քննում էք նաւթի միջ քանակութիւն. հում նաւթի սպէցիֆիքական քաշը տարբերում է 790 և 891-ի մէջ. Բարախտանում նա 871 է 17 աստիճան չերմութեամբ ցել-սիուսով<sup>1)</sup>:

Զտելու գործողութիւնները ամեն տեղ գրեթէ նունն են. փոխանակ հում նաւթը ուղղակի աւազաններից կամ նաւթամբարներից փունդերը կամ «րետրոտները» անցկացներու, նախ անց են կացնում առաջնի նման ջրամբարների մէջ, բայց որոնք շրջապատած են մաղուտի շրջանակ. Ներով կամ խողովակներով (մաղուտը՝ նաւթի մնացորդներն են). Ուրեմն հեղուկը հասցնում են մի չափունի ջերմութեան, երբ նորան մացնում են փունդերի մէջ. փունդերը ցիլինդրական ձեի թորանոցներ<sup>2)</sup> են բաւա-կանի մեծ տարրութեամբ և ընդունակ տանել ամենամեծ չերմութիւն. Տաքացնելը կատարում է տակից, միշտ մաղուտի միջոցով, որը ոչ թէ միան տաքացնում են, այլ բոցավառում պուլսերիզատոր խողովակի բերանին. Ձերմաշափը ցոց է տալիս փունդի ներսի տաքութիւնը, իսկ մի կրիստալական խողովակի ցոց է տալիս հեղուկի ներսի մակերեսութը. Թո-րանոցի խողովակները պարուրածն են և իր շինւածք՝ նշանաւոր ոչինչ չեն ներկայացնում. Սարւածը (L'Appareil) շատ պարզ է. ջերմութիւնը կամաց-կամաց բարձրացնում են աճնպէս որ իրարից բաժանւեն զանազան հեղուկները, որոնց խաւնուրդը կաղմում է հում նաւթը. Եւ այդ զանազան հեղուկները տարբեր ցնդականութիւն ունեն, ապինքն նոցանից մէկը ցնդում է (թռչում, գոլորշիանում) երբ նաւթի ջերմութիւնը այս ինչ աստիճանին է հասնում, միւսը՝ աւելի բարձր ջերմութեան աստիճանին և այլն. Ալուպէս՝ թէնդինը զաւում է 100 աստիճանի հասած ժամանակ, գա-ղոլինը 120—130 աստիճանին (ըստ Ցելսիուսի), իստոչ կերոսինը՝ 150 աս-տիճանին, և երբ ջերմութիւնը հասնում է 250 աստիճանի, այն ժամանակ միան գործողութիւնը զադարեցնում են՝ փունդից զուրս բերելու հսկար ան մնացորդը, որ կոչում է մաղուտ. Ազդ մնացորդը հոսում է խողո-վակների մէջ, որոնք շրջապատում են երկրորդ նաւթամբարները և անց նում ընդարձակ ամբարները ուր նորան հաւաքում են. Զտւած զանազան արդիւնքները իրարից բաժանելու համար պատրաստել են երեք իրարից անկախ աւազաններ. մէկի մէջ, ուր վերջանում է խողովակը, զաւում է

<sup>1)</sup> Սպէցիֆիքական քաշը այն յարաբերութիւնն է որ կայ մի մարմնի մեծութեան և նորա ծանրութեան մէջ՝ համեմատած ջրի կետ Ակը բերւած թւերը այս-պէս պէտք է հասկանալ, որ եթէ մի կուբական մետր ջուր 1000 քաշէ, նոյնքան հում նաւթը 17 տասիճանով ըստ Ցելսիուսի ջերմաշափի քաշում է 790—890 կամ 871 քաշ. ասելի թէ կում նաւթը ջրից այլքանով աւելի թեթև է. Խոր.

<sup>2)</sup> Թորանոցը այն է, ուր թորում են. թորել նշանակում է ծորեցնել կաթիլ կաթիլ զտել, մաքրել:

թէնդինը. մի վերակացու արէօմէտրով որոշում է այն վալրկեանը եղբ երեսոմ է գաղողինը և պարուրածն խողովակը ուղղում է երկրորդ աւազանի վերալ. նոյն ձեռք չետու ուղղում են նորան երրորդի վերալ. Ազդուոր աւազանները հաղորդուում են նոյնափ մեծ երկաթաթիթեղեալ ամբարների հետ:

Թորման (ղիստիլացիա) չորս արդիւնքները սոքա են՝

Լոկցիֆետան առջ.

Բնեղին,	որից ստացւում է	100-ին	1	0,725
Դաղոլին	"	"	3	0,775
Կերոսին	"	"	27	0,830—0,840
Մաղուա	"	"	65—69	0,878—0,900

Ազդ է թորման առաջն ֆազիսը. երկրորդ ֆազիսը, որի համար ոչ բոլոր թորանոցները ունին չարմարութիւններ, աճն է, որ մաղուաը մշակեն և նորանից ստանան ուրիշ, աւելի ծանր լարծուա իւզեր, որոնց զեռը վերադառնանք:

Լուսաւորելու իւզը՝ կէրսսինն է. կովկասում հում նաւթից ստացւում է կէրոսին միան 27°/ο, մինչդեռ Միացեալ-Նահանդներում ստացւած կէրոսինը կազմում է հում նաւթի 70 տոկոսը<sup>1)</sup>. Ամերիկական նաւթի գերազանցութիւնը ուրիշն չատ մեծ կը լինէր, եթէ Ապշերոնի հորերը աւելի բերլի չը լինէին և մանաւանդ եթէ Բաքւի կէրոսինի լուսաւորելու ոչը 10—15 տոկոսով աւելի մեծ չը լինէր քան ամէնալաւ ամերիկականինը (Redwood H. Sainte-Claire Deville). Բաքւի նաւթի լուսը նաև աւելի հաւասար է: Ազդ տարբերութիւնները մեկնում են նրանով, որ Բաքւի նաւթում կան բատնի քանակութեամբ ջրածուխներ, էթիլէնի սէրիալից (hydrocarbures de la série éthylénique), որոնք աւելի հարուստ են քնածխով, քան ամերիկական նաւթի ջրածուխները. Մանրակրկիտ հետազոտութիւններով կազմել է հետեւալ ցուցակը

Սոկցիֆետ.

	Համաժառակ.	Զբաժին.	Թ լուսածնն.
Բաքւի թեթև նաւթը . . . .	0,884	86,3	13,6
Բաքւի ծանր նաւթը . . . .	0,938	86,6	12,3
Բաքւի նաւթի մնացորդը . . .	0,928	87,1	11,7
Պէնսիլվանիալի ծանր նաւթը .	0,886	84,8	13,7
			1,4

1) Ուրեմն Միացեալ նահանգները ոչ միայն այժմ արտադրում են 2 անգամից աւելի նաւթ, քան Բաքուն, այլ գետ այնաեղի մի պուդ հում նաւթից 2½ անգամից աւելի կերպն է ստացւում, քան Բաքուն: Այդպիսով ուրեմն Միացեալ նահանգները այժմ սալիս են մօն 6 անգամ աւելի կերպն, քան Բաքուն: Ել մենք չենք հասկանում, թէ ինչպէս կարելի է մօսագայ սպազայի համար Բաքւի նաւթի վերջնական յաղթութեան մասին այդքան համարձակ խօսել, նոյն իսկ ընդունելով Բաքւի նաւթի առաւելութիւնները, որոնց մասին ներքեւ խօսւում է:

Չը նաևած որ Բաքւի նաւթը աւելի թանձր է, քան Պէնսիլվանիակինը (Միացեալ-Նահանգներում), բայց նա նունքան լաւ է վառւում. իսկ դոքար Բիլ (Biel, Պետմբուրգում) փորձերը ապացուցել են որ Բաքւի նաւթի վեր բարձրանալու ոժը աւելի բարձր է. աշխայէս որ նորա մէջ կարելք է, առանց անլարմարութեան, խառնել աւելի մեծ քանակութեամբ ծանր իւղեր Ամերիկական նավթը ընդհակառակը տալիս է սկզբում շատ փալուն լուս, չետուչ, երբ թեմեւ իւղերը սպառում են՝ հեղուկը աւելի գծւարութեամբ է անցնում պատրազի մէջ, ջերմութիւնը քաշանում է, օդը աւելի դժւար է խաղում, ածուխը ալլ ևս շողուն չէ և լամպի պատրոզը շուասով ածխանում է: Եւ ալլ ևս ալլ իւղերի իրար հետ խառնելու ամենաանշան վտանգներիցն է աղդ. զոնէ Բաքւում կեղծելու փորձերը խիստ կերպով հալածւել են:

Բաքւի նաւթի մի ալլ առաւելութիւնը ալն է որ նորա *flashing-point*, ալսինքն նորա բռնկւելու կետը շատ աւելի բարձր է քան ամերիկական նաւթինը: Եւ իրօք, ապահովութեան համար պէտք է որ մեծ քանակութեամբ նաւթը ոչ միան իսկոն չը բռնկվի լուցկիի հետ դիպչելով, ալլ և հանդցնի լուցկին: Եւ պէտք է որ նաւթը ինքն իրան չը բռնկվի սովորական տաքութեան ժամանակ: Նաւթի ալս լատկութիւնների վերայ հսկելու համար հնարաւած են տարբեր գործիքներ, որնցից Եւրոպակում ամենաաջնին է Աբէլի (Abel) գործիքը: Արդ, ամերիկական նաւթը բռնկւում է, երբ Աբէլի գործիքը ցոյց է տալիս 24 մինչ 27 աստիճան տաքութիւն, իսկ Բաքւինը՝ երբ նոյն գործիքը ցոյց է տալիս 32 մինչ 35 աստիճան: Եւրոպակում առհասարակ պահանջում են որ բռնկումը կատարելի գոնէ ոչ աւելի շուտ քան 21 աստիճանից սկսած (Աբէլի գործիքով): Աբէլի գործիքի 21 աստիճանը համապատասխանում է 8ելսիտուի 30 կամ 31 աստիճանին: Ֆրանսիակում պահանջում են ոչ թէ 21, ալլ 27 աստիճան (ըստ Աբէլի), որ նոյնն է թէ 35 աստիճան ըստ Գարնիէլի գործիքի, որը ֆրանսիակում ամենալազոնին է: Եւ աղդ պահանջը աւելի Բաքւի նաւթի համար է նպաստաւոր:

Ընդհանուր առմամբ, եթէ Բաքւի նաւթը բաւականին աղքատ է կէրոսինով, զորա փոխարէն ստացւած կէրոսինը աւելի հաւասար է, աւելի լուսատու է, աւելի լարմար է և աւելի անվտանգ է քան Պէնսիլվանիակի նաւթը. Ե Բաքւում կէրոսինը կաղմում է իսկապէս հում նաւթի 30 տոկոսը և ոչ թէ 27 տոկոսը. միան թէ 3 տոկոսը կորչում է երկրորդ թորման ժամանակ, որի մասին զեռ պէտք է խօսենք: Մի անգամ որ կէրոսինը զուած է, սորան ուղղում են զէպի ալսպէս կոչւած աժիտատոր (agitateur), որը մի ցիլինդրական ալսպան է 1000—1500 հէքտոլիտր պարունակութեամբ՝ երկաթէ հասա թիթեզից շինւած և որը հաղորդուում է մի ուժեղ շողեջրհանի հետ: Որպէս զի հեղուկի գոնը բաւականաչափ պարզ լինի, որպէս նաև ալլ պատճառներով՝ պէտք է որ տէմպէրատուրան

(Չերմութիւնը) բաւականին ցած լինի, այն է 17—18 առաջին ըստ Յեղսիուսի և ալսակէս սկսում են օդ խաղացնելով ցրտացնել թորանոցից ստացւածը ու միենոն ժամանակ՝ թանձրոցրած օդի ներգործութեամբ՝ առելացնում են անձրնի ձեռվ 1<sup>1/2</sup>—2 տոկոս ծծմբաթթու. 1<sup>1/2</sup>, տոկոս բաւական է որ հեղուկը ստանակ վաճառականութեան մէջ չալսնի ու եօս ելաց՝ պարզ գոյնը. Քառորդ ժամից չետ, աժիտատրի կոնածի չատակում տեսանելի է լինում սպիտակաւուն խաւ թթու կեղտերի, խակ մի ժամից չետոց՝ բոլոր կեղտերը զատւած են լինում, որոնց հեռացնում են աժիտատրի տակը գոնեող կրանտի միջցողվ. Ծծմբաթթու մի անգամից չեն ներմուծում, այլ փոքր քանակութիւններով. ամեն անգամ որ ներս են մոցնում նորան՝ տեմսերսառուրան զգալի կերպով բարձրանում է, և շարունակում են շարժել մինչև որ նա չը բարձրանալ. այդ ժամանակ բէակցիան արդէն վերջացած է, ինչպէս ասացինք՝ թողնում են որ մի ժամ հանգստանաչ, կեղտերը դուրս են բերում, նորից ծծմբաթթու են աւելացնում և ալսակէս շարունակ. Այդ ամբողջ գործողութիւնների միջոցին ահսնուում է որ ծծմբաթթուն մեծ քանակութեամբ զատւում է. Ծծմբաթթուի հետքերը հեռացնում են «լւանալով» կերտումնը և վետով աւելացնելով 1 տոկոս կիվիչ օշնան 12 աստիճանի ըստ Բօմէի (Բասմէ) ու շարունակ նորան շարժելով. Բայց գործողութեան այդ վերջին մասը կատարում են մի այլ աժիտատրի մէջ. Մի քանի անգամ հեղուկը ջրի մէջ «լւանում են», և ինտու միան նա ուղարկուում է այն բէղէրուուրաները, որ տեղից նորան դուրս են բերում միան վաճառելու կամ արտահանելու համար:

Բաքրի բոլոր թորանոցներից, որոնց պարագաները թուլ են տալիս կերսովնի ադր մաքրումը, նորէլ եղալիքներինը ամենաընդարձակին է և ամենալաւ կազմակերպւածը. Դա մի արհեստանոց չէ, այլ մի քաղաք 4000 հոգով «villa pietiolia», բնակարաններով ծառալողների համար, հիւանդանոցով բանորների համար, մի ձրի դպրոցով նոյտա երիխանների համար, մի գիւղով նոյտա բնակւելու համար. Նորէլ եղբայրները ներմուծել են ամերիկական բոլոր կատարելագործութիւնները, և, չը նայած զորած, տունը այնպիսի տնտեսութեամբ է կառավարուում, որ նոքա ունին մի լատուկ բաժին՝ ուր կերոսինի մաքրելուց վետ մնացած ծծմբաթթուն նորից պիտանի են դարձնում. Նոքա շահեցնում են նաև իրանց դարբնոցների վառարանների համար ստացած զաղովնը, որ ընդհանրապէս ուրիշ թորանոցներում կորչում է. Այդ արդիւնքը, նման բէնզինին, զլսաւորապէս ծառալում է վառելու գաղը ածխացնելու համար, որով լուսը զարմանալի մեծանում է.

Պարզ է որ այդ օրինակելի տաճ մէջ բէնզինը հաւաքւում է ամեն հոգացողութեամբ. երբեմն նորան երկրորդ գոտման են նեթարկում, այն նպատակով, որ զտեն իրարից տարբեր թանձրութիւն և տարբեր զործածութիւն

ունեցող բէնդիները։ Եւրոպակում, որպէս նաև Ամերիկակայում, բէնդինը գործ են ածում զլխտուապէս բռրդը, մահուզեղէնը, ոսկորները մաքրելու համար, իւղափին սերմերից իւղ դուրս բերելու, ջրդեղեր (vernis) շինելու համար։ Հաճախ նկարչութեան մէջ և ալճ, ուր նա բանում է բնեկնի խէժի տեղը (térebenthine), վերջապէս քիմիական լաբորատորի անելում բէնդինը լուծում են եօդը, ծծումքը, ֆոսֆորը, կամ կատչում ալս բուրը դեռ զործածականչէ։ միայն մէկը աճնաեղ շատ լավոնի է, այն է՝ բէնդին առելցնելով կեղծել կերոսինը։ Ազգ կեղծիքը նորիքան վտանգաւոր է, որքան և անաղնիւ է, այսպէս կեղծւած կերոսինի flashing-point-ը (բռնկւելու կտը) արագ իջնում է, ինչպէս ալդ ցուց է առիտ զորտար Վիափի ((White) կազմած հետեւալ ցուցակը,

## flashing-point (բռնկւում է)

Վառելու նաւթը մաքուր.							49°	Ցհլու.
»	»	խառը	բէնդինի	1°/0-ի	հետ	65°	Բուժէ	45— »
»	»	»	»	3	»	—	»	39 1/2 »
»	»	»	»	5	»	—	»	35— »
»	»	»	»	1	»	72°	Բուժ	42— »
»	»	»	»	5	»	—	»	22— »

Յականի է որ բէնդինը դառւմ է սկսած 85 աստիճանից մինչ 130 աստիճանը (հարիւրաչափով որ նուն է թէ Ցելուսուի ջերմաչափով), որ նորա խառնթիւնը աւարութելում է 0,720 և 0,740-ի մէջ և որ նա չի բանկւում գէրօից ներքի։

Ամենաթեթև իւղերը որ թորւում են թորանոցներում, երբեմն գրիծ են ածում վիրարութութեան մէջ իրր անզգայացնող միջնորդ, չնորհիւ ալի բանի որ նորա արագ գողորչիանում են, որով չառաջանում է անզու անզգայութիւն։

---

Դասնանք ալժմ մազուտին և բարձր տեսակի լորձուն իւղերին, որ նորանից ստանում են, Թորելու դործողութիւնը նման է կերոսինի թորելուն, ալս զանազանութեամբ որ աճնաեղ տաքութիւնը հասցնում են 400—420 աստիճանի հարիւրաչափով (Ցելսիուս) և մաքրող թթուն գործ է ածում աւելի մեջ քանակութեամբ, Բայց ալդ ինդուստրիան շատ քիչ է տարածւած բաքւում, և մազուազ մանաւանդ գործ է ածում մեքենաները տաքացնելու համար։ Աղաս օդում մնացալ խղերը հետեւալներն են, ըստ մի ցուցակի, որ կաղմել է պ. Լուղպիդ Նորէլ

		Աղեցի ջերմական ջուր:	flashing-point (բռնկություն):	Արէլի
Սոլարիան	իւղ <sup>1)</sup> )	12 տուկոս	870	100° Արէլի
Վերեպեհների		10 "	890	150 "
Լազրծուն		16 "	905	175 "
Յլլինդրի	"	5 "	915	200 "
Վաղէլին	"	10 "	925	— "
Տարացնելու	"	14 "	—	— "

Կորուսալ թորելու ժամանակ  $10^{\circ}/\text{o}$ .

Առաջին չորս արդիւնքները կարող են ըստ ամենալինի վոխարինել բուսական խւերին և սոցա վերաց աչն առաւելութիւնն ունին, որ նոքա աւելի քիչ են մաշում մեքենաները և քիչ են վնասում մետաղներին, քանի որ նաւթի խւերը կամ բոլորովին կամ քիչ են ածխածնւած։ Ահա ինչու այդ խւերի գործածութիւնը աւելի ու աւելի տարածւում է մանաւանդ ֆրանսիական, ուր նոքա բերում են նաւերով Բաթումից Մարսէլ, որոնք միանգամից բերում են մինչև 100 փոքր տակառներ։ Նոքա նոշնպէս այս առաւելութիւնն ունին, որ բռնկում են միայն շատ բարձր տևմովերատուրակին։ և շատ դժւար սաւչում են։ Վաղէլինը, որը խական ինդափոխութիւն գցեց հիւանդատածութեան մէջ (thérapeutique), տարածւում է ամեն օր և միծ օգուտ դործարանասէլերի։

Ինչ էլ որ լինի նաւթի՝ որպէս լուսաւորելու աղենտի՝ կարեորութիւնը, կարելի է հարց տալ թէ նորա դերը վառելիքի մէջ աւելի միծ չի լինելու արդեօք մօտ ապագալում։ Ուուսիալում ալց գործածութիւնը արդէն ընդհանրացել է։ Անդրկասպիաչում և Անդրկողկասում, որպէս նաև երկաթուղու մի քանի ալլ գծերի վերաց, կասպից ծովի և վոլգա գետի նաւերում և Բաքւի գործարաններում մազոււտը կամ օստատկի ին միակ վառելիքն է։ Եւ չէ թէ նա քարէածուխի նախառանաւած լաջորդն է, քանի որ սորա բոլոր լաւկութիւններն ունի և զեռ մի քանի առաւելութիւններով։ Նա անկասկած աւելի աժան է քան ելեփտրականութիւնը. վերջապէս նաւթով տաքացնելը հրէկւանից չէ, և վառաւոր անցեալ էլ ունի, քանի որ Մարկո. Պոլո<sup>2)</sup> և միջնադարեան ալլ ճանապարհումներ ալլ մասին վիշտակութիւն են անում։

Ինչպէս երեսում է, առաջին ուսումնասիրական փորձերը կատարել են Միացեալ-Նահանգներում մօտ 1860 թւին. 1862-ին տէրութիւնը մի

1) Արով Բաքւում սկսել են վառել նաև հնոցները։

2) Մարկո. Պոլո՝ վեհեակեցի հոչակառ ճանապարհորդ։ առաջինն էր որ Արե ելեան Խոխայի մասին անշղեկութիւններ տևեց (Ճնւեց 1252-ին, մեռաւ 1323 թ.)։

բանձնաժողով նշանակեց մի քանի մեքանիկոսների առաջարկերը քննելու համար, ի միջի ալոց Շանի (Shan) և Լենտոնի (Lenton) պրօեկտը նայթահնոցի մասին։ Յանձնաժողովի գեկուցումը նպաստաւոր էր, բայց քարեածուխը այնքան շատ էր և այնքան աժան, որ զեկուցման նպաստաւոր եղրակացութիւնները բանի տեղ չանցան։ Այդ մտքերը սական արձագանք գտան Եւրոպակում։ հաստատած էր որ մի թոն (60 պուդ) վառելիքի նաւթ նոյնքան տաքութիւն է տալիս, որքան երեք թոն քարեածուխը։ Այդ պերսպեկտիվան բաւականին գրաւչչ թւաց Անգլիակի, Ֆրանսիակի և Ռուսիակի կառավարութիւններին, որոնք վճռեցին այդ խնդրով զբաղել։ Ուսումնասիրութիւններ արւեցին Վուլւիչի (Անգլիակում) պետական զինարանում։ միւս կողմից, կազմը Նապոլէօն III լանձնարարեց պ. Սէնտ. Քլէր-Դը-լիլին (Sainte-Claire Deville), որ սա հետազօտի վառելիքի իւղերի կազմութիւնը և բատկութիւնները, եղրակացութիւնները միանգամացն նպաստաւոր եղան։ Ճիշդ է որ Ռուելա նաւը, որ այդ պլանով էր չին-ւած, վատ բանեց։ 1870-ին մի ռուս ինժեներ Կամենոկի Բաքում իւր ձեռքն առաւ Փրանսիական քիմիկոսի պրօեկտները, մի փոքր փոփոխութիւններ մացնելով, բայց լաջողութիւն չունեցաւ։ Ֆրանսիայում և Անգլիական, որոնք հարուստ են քարեածուխով և զուրկ են նաւթից, բոլոր այդ տեսակ պրօեկտներից ձեռք վերցրին։ Ռուսիակում, ընդհակառակը, որը հարուստ է նաւթով և աղքատ քարեածուխով, չը լուսահատեցին։ ազնուեղ բազմաթիւ փորձեր արին, առանց խնայելու ժամանակ և փող և աշխատանք զոհեցին, և այսօր այդ հաստատամտութիւնը վարձատրւած է արդէն։

Գիւտի համար սպատիւը և արժանիքը մեծ մասամբ վերաբերում են ինժեներ պ. Շալակովսկուն, որի սարւածը (գործիք) օրինակ ծառակեց նրանից էտոտ հնարյած բոլոր մեքենաներին։ Նա լաջող միտք ունեցաւ նաւթը փոշիացնել կրակով արկղի մէջ՝ (boîte à feu) և նոյտ ջերմութիւնը բարձրացնել՝ տաք գոլորշիների հոսանք խաղացնելով մէջը, որով բռնկւում էր նաւթը՝ հաղորդելով մթնոլորդի թթւածնի հետ։ 1870 թւից, պ. Լենցը (Lenz), «կաւկազ և Մերկուրի» նաւագնացական ընկերութեան գլխաւոր ինժեները, պաշտօնապէս ուղարկւեց Ֆրանսիա, որ ուսումնասիրի Սէնտ. Քլէր Դը-լիլի և Էջոնի<sup>1)</sup> աշխատամտութիւնները, բայց չը կարողացաւ նոյա գործադրել «Դիրժաւին» նաւի վերաբ բայց պ. Շուակովսկու գաղափարները թողլ աւեցին նրան կատարելագործել իւր սարւածը, և այդ այնքան լաւ լաջողւեց նրան, որ նա բռնեց գիւտ անողի տեղը, աշնագէս որ ալժմ Լենցի սարւածն է ընդունւած կառպից ծովի պատերազմական նո-

<sup>1)</sup> Էջոնի (Ajdón), անգլիացի, ուղեց բաժանել պ. Նապակովսկու հետ պուլելը դատոր սիստեմի զիւտի պատիւը։

ւաստրմղում։ Նա կատարելազորւեց բենկստոնի, Բրանդտի, Կարապետանցի, Նորեկի և ուրիշների ձեռքով։ Հնարևած եղանակով նստթիվառը այն առաւելութիւնն ունի քարէածուսի վերաչ, որ բոցը կարող է ըստ կամաց կանոնաւորւել և կամ հանգցնել կրանտների միջոցավ։ Կարաստանցի մոցցրած փոփոխութիւնով՝ նա կարողացաւ։ Ընդունւել չողեկառքերի (լոկոմոտիվ) համար, ակժմ նա փայտուն հետեւանքներ է տալիս։

Ամերիկացում, որ նաւթի գինը քանի գնում՝ ընկնում է, նորերս ուսումնասիրութիւններ են արել փոքր նաւերի համար։ 70 տակառ պարունակութիւն ունեցող մի նաւ, շինուած Բրուկլինում (Brooklyn) բանեցնում է միան 60—65 լիտր նաւթի և մի փոքրիկ բատտերէա՝ ամբողջ օրը դնալու համար ժամը 16 հանդոց արագութեամբ։ Նոյն այդ հետեւանքը ունինալու համար սոլորական մեքենաներով պահանջնում է երկու թոռ քարէածուլի և մի մեքենայ 305 միլիմէտր տրամագծով։ և աճտեղ մենք այլ ևս չենք խօսում աաքացնողների, իւղ քսողների մասին և այն, որոնց օդնութիւնը անհրաժեշտ է։

Այդ նաւի և Բարեւի նաւերի մէջ, որոնք նաւթ են բանեցնում, այս զանազանութիւնը կաչ, որ Բրուկլինում բանեցնում են զտած (րաֆինոր-բանիան) նաւթ, մինչդեռ կասոլից ծովում բաւական է միան մազուտը և մինչեւ անգամ գերազանչելի է, նորա flashing-point-ի (ալիքնքն բռնկւելու կետի) աւելի բարձր լինելու պատճառութիւն բաւթում մի թոն (60 պուդ) մազուտը արժէ 3 կամ 4 ֆրանկ, տասն անգամ աւելի քիչ քան քարէածութիւնը, երկու անգամ աւելի ուժեղ է տաքացնում, քանի որ աւելի արագ է աաքացնում և մոխիր չի թողնում։ Նախած մեքենաներին՝ 5—10 պուդ է գնում մի ժամում և մի ձիու ուժի համար։ Ի զուր էին պնդում թէ հում նաւթը բռնկւում է ցածր ջերմութեան մէջ։ և հարկէ, նորա flanshing-point (բռնկւելու կետը) մազուտից ստոր է, բայց այդ կետը չի դաշնանում 45 աստիճանից և նա կարող է դեռ շատ աւելի բարձրանալ, եթէ մի քանի օր թողնուի բաց օդում բաղախանի նաւթալմերի մէջ։ այնպէս որ նորա գործածութիւնը միանգամայն անվտանգ է։

Համաշխարհապէն Արդիւնահանդէսում 1889 թ.-ին, Պարիզում, ես տեսալ նաւթի երկու հնոտարքքարական գործադրութիւններ նաւագնացութեան համար, ոչ միան նաւթը գործ էր ածում կաթսան տաքացնելու, այլ և նորա գոլորշիները մեքենան շարժելու համար էին ծառացում։ Դազափարը՝ նոյն նիւթով թէ տաքացնել և թէ շարժել՝ նոր չէր։ Ֆրանսիացում դեռ ևս 1856-ին ճանաչում էին Tremblay սիստեմը նաւերի համար, որը սակաչն իւր թերութիւնների պատճառով թողնեց։ բայց համաշխարհապէն հանդիսում ցոյց տաւած պ. Jarrow սիստեմը այդ անցարմարութիւնները չունի։

Մի ուրիշ սիստեմ՝ էջեր Վիս և ընկ. (Escher Wyss et Cie) շատ գործածական է Միացիալ Նահանգներում։

Մենք դեռ ամեն ինչ չ'ասացինք նաւթի ներկազի և աղաղազի մասին. բայց մենք կարծում ենք թէ բաւականին գաղափար տվնք նորա մասին, և եթէ մենք կարողացանք մեր ընթերցողներին համոզել, որպէս ինքներս ենք համոզւած, թէ որքան մած կարևորութիւն է սահցել մի ինդուստրիա, որը դեռ երէկ ծնւած լինելով՝ աւագան ծագկած դրու թեան է հասել, աւելի քան լուսալ կարելի էր, այն ժամանակ մենք չենք ափսոսիլ, որ ծանրացրինք ընթերցողներին թէ թւերով և թէ նկարագրութիւններով, որոնց թիւը մենք կարող էինք բազմապատկել:

(Լեռջը միւս համարում)

## ԶԻՒՑԵՐԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

(Զւիցերիամի 600-ամեայ տօնի առիթով)

ՄԿՐՏ. ՄԱՆՈՒՋԱՐԵԱՆԻ

(Նախագահական ժիշտնեան 1)

### Բ. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ (pouvoir exécutif)

Դործադիր իշխանութիւնը, ինչպէս վիշեցի, պատկանում է դաշնակից խորհրդին (conseil fédéral). Մինչ 1848-ը իսկապէս ասած գոլութիւն չունէր կենարոնական մի մարմին, որը կարելի լինէր զործադիր իշխանութիւն անւանել և ոչ իսկ նա ունէր մշտական բնակատեղի (résidence). 1848-ից որոշում է դաշնակցութեան վլխաւոր և մշտական կենտրոն Բէրն քաղաքը, որը և այդ պատճառով կոչւում է դաշնակցական քաղաք (Bundesstadt).

Դաշնակից խորհուրդը բաղկանում է 7 անդամներից, որոնց ընտրում է Դաշնակից ժողովը Յ տարի ժամանակով. Ընտրւել կարող են բոլոր քաղաքացիները, որոնք ներկայացուցիչ լինելու իրաւունք ունին. Ընտրողութիւնը պէտք է կատարւի այնպէս, որ միենան կանտոնից երկու հոգի խորհրդի անդամ չը լինեն. Դաշնակցական խորհրդի անդամը ոչ մի այլ պաշտօնով պարապել կարող չէ: Ընտրւելուց չետու նրանք այլ ևս պարլամէնտին չեն պատկանում. իսկ իրաւունք ունեն ազատ մնալով զործելու պալատաները և առաջարկութիւններ անելու — Դաշնակից խորհուրդը ունի իւր նախագահ և փոխ նախագահ և, որոնց ընտրում է պարլամէնտը մի տարի ժամանակով: Ոչ նախագահը և ոչ փոխ նախագահը կրկին ընտրւել չեն կարող (sont élus pour l'année et non rééligibles). Նախագահը

Հրում է զաշնակցութեան նախագահի փքուն տլաղուը (président de la confédération). իսկ իրականապէս նա լոկ զաշնակից խորհրդի նախագահ է և վարում է նիստերը և ոչ մի ուրիշ արտօնութիւն կամ իրաւունք չէ վայելում։ Ստանում է միւս անդամներին համահաւասար ռոժիկ։ Դաշնակից խորհուրդը իսկապէս ասած վարչական մի օրգան է և ոչ իշխանութիւն։ Նա կատարեալ ենթարկւած է պարլամէնտին, եթէ կարելի է ասել, իրագործում է պարլամէնտի կամքը, վարելով նորա զործերը։ Հսկում է օրէնքների իրազործման, երկրի ներքին և թէ արտաքին ապահովութեան, կատարում է փինանսական, զինուրական և այլ մի քանի նման զործեր, համաձան պարլամէնտի տւած հրահանգներին և ամեն անգամ, երբ պարլամէնտը հաւաքւած է, նա հաշիւ է ներկալացնում իւր զործավա.

բութեան մասին։

Եթէ պարլամէնտը յրւած է և վտանգ է սպառնում երկրի խաղաղութեան արտաքուստ թէ ներքուստ, ապա զործադիր իշխանութիւնը, իրաւունք ունի անմիջապէս մինչ 2000 զինուոր կոչել. բայց եթէ կարիք եղաւ հաւաքւած զօրքերը երեք շաբաթից աւելի պահելու և կամ թիւը աւելացնելու 2000-ից, ապա նա անլապաղ պարտաւոր է պարլամէնտը կանչելու, առանց որին մի քայլ անել կարող չէ։

Դաշնակից խորհուրդը բաժանւած է 7 գեղարտամէնտների, որոնցից իւրաքանչիւրը լանձնւած է մի անդամին Օրինակ, քաղաքական, ներքին, արդարադատութեան և սոտիկանական, զինուրական, Փինանսների, վաճառականական ու երկրագործական, պռատ ու երկաթուղիների։ Այդ բաժանմունքը լոկ վարչութեան դիւրութիւն տալու համար է։ իսկ ինչ վերաբերում է խորհրդի պատասխանաւութեան, խորհուրդը պատասխանաւու է համերաշխաբար (solidairement) (Յօդ. 103 Պ. Ս.)։

Խնչպէս նկատում է ընթերցողը, զործադիր իշխանութիւնը ոչ մի անկախութիւն չ'ունի. բայց չը ճակած դորան, նա կրում է լոկ պատի կոչումը՝ «Դաշնակցութեան նախագահ» տիտղոսը (président de la confédération)։ նուն իսկ նրան, ինչպէս իշխում էք, հաւատ չէ ընծալում զիցերիացին ու մէկ տարով է ընտրում, այն ևս երկրորդ անգամ ընտրւում իրաւունքից զրկելով։

Նորա այդ տեսակ վարմունքը ինչ կերպ կ'ընդունեք, այդ ևս չը գիտեմ. միայն չը մոռանանք, որ Բոնապարտը նախ քան կատը լինելը, Փրանսիական հանրապետութեան նախագահն էր «իմպէրատոր»-ի (?) տիտղոսով. իսկ լուի Բոնապարտը, զրեթէ իրազործեց իւր ազգականի ծրագիրը, և երբ 1851-ին պետական հարւածով երդմիազանց եղաւ, ամբողջ մի ազգի իրաւունքները ոտի տակը գնելով, Փրանսիական հանրապետութեան պետական անձնաւորութիւններից միմիալն չափունի իրաւագէս Պորտալիսը բացարձակօրէն բողոքեց և պահանջեց, որ պահապան-ներով զատարանին ներկազացնեն ապստամբւած նախագահին, ինչպէս պե-

տական դաւաճանիւ Բայց միայն մի ձայն բաւական չէր ապստամբ նախագահի և մի քանի հարիւր հաղար կանոնաւոր զօրքի դէմ:

Անա ինչու զւիցերիացին մշտակ ան բանակի դէմ է և ինչու նա հաւատք ընծայել չէ սիրում ում և լինի նա սիրում է իւր գործերը ինքը տեսնել և իրաւանք կարծեմ որ ունի չչ...

### C. ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Դատաստանական իշխանութիւնը, որի կազմը գտանւում է Լողանում, 1874-ի սահմանադրութիւնով՝ պատկանում է դաշնակից առեւանին (tribunal fédéral). Հին կանտոններում միութիւնը միջնորդ դատարան էր միայն ճանաչում, չելեւական հասարակեատութեան ներքոյ ալդ սիստեմը ընկնում է. խակ 1815-ին նորից երեսն է գալիս: 1848 ից կաէ դաշնակից ասեան լոկ հասարակական իրաւունքի համար, ան ևս շատ սահմանափակ իրաւունքներով. խակ ինչպէս իշխանութիւն, խոկապէս նա գուութիւն ունի 1874 թւականի չունիսի 27-ի մի օրէնքով:

Մի ալ անդամի թողնելով գատաստանական իշխանութեան փախուկ սկզբունքների հետ ծանօթացնելը, որը խոստանում եմ կատարել մօտիկ ապագալում, մտադիր լինելով խօսել Ամերիկակի գատաստանական կազմակերպութեան մասին, ևս աչժմ կ'անցնեմ ուղղակի Զւիցերիակ դաշնակից ատեանին:

Դաշնակից ատեանը բաղկանում է 9 անդամներից և 9 փոխանդամներից, որոնց նշանակում է պարլամէնտը և տարի ժամանակով: Անդամներից երկուսը Փրանսիական, մէկը խոալական, խակ մնացածները գերմանական կանոններից են նշանակում:

Ատեանը ունի իւր նախագահը ու փոխ-նախագահը, որոնց նշանակում է նոյնական պարլամէնտը 2 տարի ժամանակով: Նախագահը կազմում է ատեանը ու հոկում քննիչներին (juges d'instruction) և ալ գատարանական պաշտօնեաներին: Անդամներից խրագանչիւրը ստանում է 10,000 ֆրանկ, խակ նախագահը 11,000 ֆ. տարեկան:

Ատեանը ունի նոյնական 2 քարտուղարներ, որոնք պետք է գիտենանքէ զերմաններն և թէ գրանցաներէն. խակ գոցանից մէկը կամ միւսը անպատճառ նաև խոալերէն: Գոքա ստանում են 6—8000 ֆրանկ տարեկան: Քրէական լանցանքների ատեանը նշանակում է 2 քննիչներ և տարի ժամանակով: Քրէական ատեաններում ամեն անգամ դաշնակից ժողովը նշանակում է մի ընդհանուր պրոկուրոր (procureur général), որը ներկաւ է լինում լոկ քրէական դարձերի նիստերում:

Որ և իցէ մի վճիռ կալացնելու համար, անհրաժեշտ է ատեանի 7 անդամների ներկապութիւնը: Գործերը կատարում են հրապարակաւ և ոչ դռնփակ (huis clos): Ատեանի վճիռները զործադրելի են բոլոր

կանոնների համար (Դ. Ս. չող.): Առեանի իրաւասութիւնը երեք կարգի է բաժանվում:

I. Քաղաքացիական վէճերում, ինչպէս բարձրագոյն ատեան, վճռում ևն դաշնակցութեան և կանոնի կամ կանոնների մէջ ծագած վէճերը: Դաշնակցութեան և մասնաւոր անհատի կամ անհատների, կանոնների իրար մէջ և վերջիններիս ու մասնաւոր անհատի կամ անհատների մէջ տեղի ունեցող վէճերը:

Նորա իրաւասութեանն են ենթարկում նոլնպէս հայմաթլողների մէջ տեղի ունեցող հարցերը և բացի աղջ՝ ապահարզանի և կրկնամուսնութեան ազգական մի տարի ժամանակով:

II. Քրէական լանցանքների համար ատեանը բաժանւած է մեղադրական ատեանի (chambre d'accusation), քրէական ատեանի և վճռաջինջ ատեանի (chambre de cassation), որոնք նշանակվում են մի տարի ժամանակով: Քրէական ատեանը կազմում է 12 երդուալներից <sup>1)</sup>:

Դաշնակցութիւնը բաժանվում է 5 շրջանի, որոնցից իւրաքանչյուրը ունի իւր դաշնակցական քրէական ատեանը, իսկ նիստերի տեղի մասին ամեն անդամ երբ կարիք կալ, որոշում է, թէ ուր պէտք է լինի: Քրէական ատեանը բաղկանում է 3 անդամներից և երեք փոխ անդամներից: Իւրաքանչյուր մի կարգ նիստերի համար դաշնակցից ատեանը նախազահ է նշանակում:

Քրէական ատեանում զատուում են դաշնակցութեան պաշտօնեաները, դաւաճանութեան համար կամ դաշնակցից իշխանութեան վրայ գործ դրած բռնութիւնների համար: Ճողովրդի իրաւոնքների գէմ կատարած լանցանքները: Նա է դատում նոլնպէս քաղաքական այն լանցանքները, որոնք պատճառ են եղել խոռվութիւնների և դաշնակցից ուժի միջամտութեան: Հասարակաց իրաւոնքի վերաբերեալ հարցերը նորա իրաւասութեանն են ենթարկում, ինչպէս դատաստանական բարձր ատեանի: Նա է վճռում դաշնակցութեան ու կանոնների և այս վերջիններիս իրար մէջ ունեցած վէճերը: Պաշտպանում է քաղաքացիներին, ապահովելով նրանց իրաւոնքները, թուլ չը տալով, որ խախտեն սահմանադրութեան չօղածները: իսկ դաշնակից խորհրդի ու դաշնակցից ատեանի մէջ ծագած վէճերը են: Թարկուում են պարլամէնտի իրաւասութեան:

Ազմ պատրաստուում է նոր պրօէկտ դատաստանական կազմակերպութեան: Լրազիրները իրանց էջերը լայն բացել են, հիւրընկալելով

<sup>1)</sup> Նրգւեալ դատաւոր կարող է ընտրւել իւրաքանչյուր մի զւեցերեացից, որը ընտրելու իրաւոնք ունէ Դ. Ստհմ. զօրութեամբ: Բացաւութիւնն են կազմում եկեղեցականները, դատաստանական բոլոր ծառայողները և ոստիկանական պաշտոնաները, որոնք կարող չեն ոչ ընտրել և ոչ ընտրւել: Նրգւեալ դատաւորները ընտրուում են անմիջապէս ժողովրդեց:

հարցին վերաբերեալ յալտնւած կարծիքները և թեր և դէմերը՝ Կ'ԸՆԳՈՒՆԵՔ  
արդեօք նոր կազմւած պրօէկտը, թէ ոչ, հաստատ ոչինչ չի կարելի  
ասել ի հարկէ, քանի որ դեռ նա կազմւում է, միան այսքանո կարելի է  
ասել, որ, կազմելուց վետով, պատրաստի պրօէկտը դեռ երկար մամուլի  
քաւարանում կը քաւէ իւր մեղքերը. իսկ աշխատելից էլ կամ այնքան  
դիմացկութիւն կ'ունենալ, որ զաւած լուս աշխահ գալով կը մկրատի  
ապրելու և կամ մահւան կը դատապարտի ալ պրօէկտի տեղ տալով:  
Ինչ իցէ անցնենք կանտոնական սահմանադրութեան.

### D. ԿԱՆՏՈՆՆԵՐԻ ՍԱՐՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Արդի կանտոնները բոլորն էլ անխտիր ռամկապետական կազմութիւն  
ունեն. այն ինչ հին կանտոններում տեղի ունէր երկու ձեփ վարչա.  
կան կազմութիւն՝ ռամկական հասարակապետութիւն և ազնւական հասա.  
րակապետութիւն.

Ռամկական գրուպապալին պատկանում էին ֆոքրիկ կանտոններից մի  
քանիսը—Շւից, Ունտերվալդէն, Գլարիս, Ապաէնցէլ,  
որոնց քաղաքական գլխաւոր օրդանը մականած յողովն էր (Landsgemeinde).  
Այդ կանտոններում օրէնսդրական իշխանութիւնը գտանւում էր ուղղակի  
ժողովրդի ձեռքում, ասել է ամենքը անխտիր մասնակցում էին վարչու.  
թեանը հաւասար իրաւունքներով.

Ազնւական հասարակապետութիւններ էին դլխաւորապէս Բէրն և  
Ցիւրիխ քաղաքները, ուր քաղաքական գլխաւոր օրդանը կազմում էր  
ազնւականաբար կազմւած փակ ժողովը, նամանաւանդ Բէրնում. իսկ Ցիւրի.  
խում դէր էին խաղում նոխալէս, բացի բարձր գասակարգից, նաև աբա.  
չութիւնը և բուրժուազիան կամ երրորդ դասակարգը (le tiers état).

Այս կանտոններին մօտ էին նոխալէս մի քանի ալ կանտոններ, ինչ.  
պէս՝ Սոլէոր (Soleure) և Ֆրիբուրդ աւելի մօտ Բէրնին, և Բաղէլ ու Շաֆ.  
հաուպէն—Ցիւրիխին: Վերոջիշեալ բոլոր կանտոններում, գիւղական աշխա.  
տաւոր և հասարակ գաւոք գրկւած էր իրաւունքներից և չէր մասնակցում  
վարչութեան, Բոլոր իշխանութիւնը կենարոնացրել էր բարձր և բուրժուա.  
զական դասակարգը, ինչպէս և հոգևորականութիւնը իւր ձեռքում: Բացի  
վերոջիշեալ բուրժուազաներից կային և նւաճւած երկիրներ և դաշնակից  
քաղաքներ: Ֆրանսիական մեծ լեղափիխութիւնը վերջ է տալիս լրերի  
ալդ գրութեան, խոր վիճ բացանելով անցեալի և ներկալի մէջ «մարդու բնա.  
կան իրաւունքների բացարձակօրէն յալտարարելով», որի հետեանքը  
եղաւ, ինչպէս վիշեցի առաջին մասում, Հէլէտական «հասարակասկատու.  
թիւնը» իւր սահմանադրութիւնով, որով վերացնում է դասական անհա.  
ւասարութիւնը, ճանաչելով բոլոր քաղաքացիներին համահաւասար իրա.  
ւունքներով:

Ազդ ժամանակից սկսած կազմում են և գրուպպաներու կանոններից ոմանք ստանում են անմիջական ռամկական, մնացածները ներկայացուցչական ռամկական-հասարակապետական սահմանադրութիւն։ Յօդ, 6. դ. ս. սրոշում է ալժմ երկու կարգի կանոնական սահմանադրութիւններ, անմիջական ռամկական, ինչպէս և Ռուսի, Ռևոլյուլյուններ (ստորին և վերին) և Ապահնցել (արտաքին և ներքին չող. (Rhodes extérieurs et Rhodes intérieurs) և Գլարիս, Արդ կանոնները մինչ այսօր ունեն մայլիսան ժողովը, ուր կանոնի բոլոր քաղաքացիները համախմբւած մասնակցում են օրէնսդրական իշխանութիւննեան։ Ազդ ընդհանուր ժողովում ընտրում են կանոնական իշխանութիւնները, գործադիր և օրէնքների սլրուէկտոններ կազմերու համար, իսկ կազմւած պրոէկտոնները քննուում և ընդունուում են միմիացն ան ժողովում, բացի մի քանի բացառութիւններից որ կը տեսնենք իտու։ Ազդ ժողովին է ուրիմն պատկանում ինից ի ատիւը և սանկցիսան, (sanction)։

Ներկա աչացուցչական ռամկապետութիւններին պատկանում են մնացած միւս կանոնները շատ չնչին դանաղանութիւնով։ Բաղէլ (քաղաքը) ունի քէ քէրէնդում բոլոր օրէնքների վերաբերեալ Փընէւը ունի քէֆերէնդում, ինչպէս և Լիւցէրն, Նիւշատէլ Վ.օ (canton de Vaud) և Շաֆհաուզէն։ Ֆրիբուրդի, Վալէի և Թէուսինի կանոններում քէֆերէնդումը ներկալացուցիչների ժողովին է պատկանում։ Բաղէլ (քաղաքը) Սոլէօր (Soleure), Ցիւրիխ, Գրիգոն, Յէրն կանոններում ժողովրդի անմիջական հաճութիւնը անհրաժեշտ է ներկալացուցիչների ժողովի բոլոր օրինադինների համար։

Նրկար կը լիներ պատեղ մի առ մի կանգ առնել իւրաքանչիւր կանոնի սահմանադրութեան վրայ, ինկատի ունենալով, որ իւրաքանչիւր մի գրուպպակի կանոնների սահմանադրութիւնները գրեթէ մինունն են շատ չնչին տարերութեամբ, ուստի և ես կը բաւականանամ ալստեղ կանգնելու իւրաքանչիւր գրուպպակից մի կանոնի վերակ, որով գաղափար կարող էք կազմել և միւսների վրայ։ Աս կ'առնեմ մի գրուպպակից Փընէւը։

Փընէւի կանոնը ներկալացուցչական ռամկապետութիւն է, Արդի գործադրող սահմանադրութիւնը զուտութիւն ունի 1879 թւականից։ Բոլոր քաղաքացիները վաւելում են հաւատար իրաւունքներ և քսան տարեկանից շափահասնեն, ուրեմն և կարող են ընտրել, իսկ ընտրելու համար պէտք է ունենալ 25 տարեկան հասակ։

Օրէնսդրական իշխանութիւնը պատկանում է բարձր խորհրդին (grand conseil), որի անդամները ընտրում են կանոնի քաղաքացիների (citoyen) անմիջական ընդհանուր քւէով։ Օրէնսդրական իշխանութիւնը պատկանում է նորիպէս բոլոր քաղաքացիներին, սրոնք կերարկում են (l'exercerent) ալդ իշխանութիւնը՝ թէ սահմանադրական օրէնքները քւէալր

կելով պլէքսիցիտի միջոցով և թէ այլ՝ ոչ սահմանադրական օրէնքները քւարկելով բէֆէրէնդումի միջոցով, որոնք անհրաժեշտեն որեիցէ մի օրէնքի հաստատութեան համար<sup>1)</sup>:

II. Գործադիր խշանութիւնը պետական խորհրդին (conseil d'état) է պատկանում, որի անդամները նույնպէս ընտրուում են ընդհանուր քւէարկութեամբ (Sufrage universel). Պետական խորհուրդը մասնակցում է օրէնսդրական խշանութեանը և բաժանում նրա հետ ինեցիատիւի իրաւունքը: Նա իրաւունք ունի նոյնպէս պահանջնելու, որ բարձր խորհուրդում կազմւած և քւէարկւած որ և է մի պրօէկտ կա երկրորդ անդամքնեռութեան և քւէարկութեան ենթարկւի:

III. Գատաստանական գործերը կատարում են կանտոնական ատենանները (tribunaux).

Կանտոնը բաժանուում է համալիքների, որոնցից իւրաքանչիւրը ունի իւր մունիցիպալական խորհուրդը (conseil municipal), համալիք երէց (maire) և օգնականներ (adjoints), որոնք ընտրուում են անմիջական քւէարկութեամբ:

I. Բարձր խորհուրդը Անդամները ընտրուում են 2 տարով: Ամբողջ կանտոնի ընտրողական երեք շրջաններում ընտրել կարող են 20 խակ ընտրել 25 տարեկանից բացառութիւն կազմում են եկեղեցականները, որոնք զրկւած են թէ ընտրելու և թէ ընտրւելու իրաւունքից:

Խորհրդի նիստերը ակտում են 2 անդամ տարեկան մավարին և դեկտոմբերին: Նա ունի իւր նախագահը և 2 փոխ նախագահ, որոնց ընտրուում է խորհուրդը իւր անդամներից մի տարի ժամանակով: Նիստերը վիճում են բաց, հրապարակօրէն,

Բարձր խորհրդի խշանութիւնը ունի ինիցիատիւի իրաւունք պետական խորհրդի հետ միաբան:

Նա հրաւիրում է պետական խորհրդին ներկալացնելու օրինագծերով կարգինս պատասխանում է բարձրագուն խորհրդի կանոնաւոր նիստում:

1) Քէրնի կանոնում օրէնսդրական որ և է մի պրօէկտի հաստատութեան կամալ անհրաժեշտ է և պարագաներ ժողովրդի սանկցիան. Խորհրդի նիստերը մնացեալ կանոնուները (ներկայուցչութեան) կամ միւսին:

2) Եթէ որ և իցէ մի օրինագիծ ընդունեց և ձեւակերպեց ըարձը խորհրդում, առա այդ օրինագիծը ուղարկւում է պետական խորհրդին՝ հրատարակելու համար: Վերջինս մինչ 6 ամիս ժամանակ կարող է կըկին յետ ուղարկել այդ օրինագիծը եւը նկատողութիւններով: Եթէ կըկին անդամ ը. խորհրդուրդը ուղարկում է՝ հրատարակութիւններով: Եթէ մինչ 30 օր կարելի է ը է ֆէ ը է ներմ ի ենկում է: Հրատարակւած օրինագիծը մինչ 30 օր կարելի է ը է ֆէ ը է ներմ ի ենկում է: Հրատարակւած օրինագիծը մինչ 30 օր կարելի է ը է ֆէ ը է ներմ ի ենկում է: Եթէ մինչ այդ ժամանակամիջոցը լրանալը ու վիճակներումը ուղղի չ'անեցաւ թարկել: Եթէ մինչ այդ ժամանակամիջոցը լրանալը ու վիճակներումը ուղղի չ'անեցաւ թարկել:

թէ ինչու ընդունում կամ ժխտում է պետական խորհրդի ներկայացրած պրօեկտունը՝ Նա ունի իւր արտաքոլ կարգի նիստերը, ուր իրաւունք ունի միմիակն զբաղւելու ան հարցերով, որոնց համար ժողովւած է; Նա է քրէարկում հարկերը, որոշած ծախսերը, փոխառութեան քանակութիւնը որոշուած է սատանում և հաստատում է տէրութեան հաշիւը; Նա է որոշուած հասարակական պաշտօնեաների ոռոճիկները և որոշում նոցաթիւը; Ամեն ապրի պիտական խորհրդից հաշիւ է սատանում վարչութեան բոլոր ճիւղերի մասին, այդ հաշիւը ներկայացնուած է առանձին մի մասնաժողովի վերասառուցութեան և քննութեան, որի տւած զեկուցումից վետ ապա թէ հաստատում է:

Նրան է պատկանում նոյնովէս քրէական լանցանքների համար ներումն չնորհելը:

Նրան է պատկանում զատարանների պաշտօնեաներին հաստատելը (մի քանի բացառութիւններով):

Սակայն նորա գերիշխանութիւնը սահմանափակում է դաշնակյան սահմանադրութիւնով: Նորա կարողութիւնից վեր է վերաքննելը կամ փոփոխելը կանոննի սահմանադրութեան, որը ծանրակշիռ հարց է: Որէնողրական կանոնական իշխանութիւնը (բարձր խորհուրդը) մասնակցում է դաշնակյական օրէնողրական իշխանութեան և այդ իրաւունքունեան մասնակցում է պետութեան որոր հրդի անդամներ նշանակելուն կանոննի համար:

Պետական խորհրդից (զործ, իշխանութիւն), բազկացած է 7 անգամ ամեն երից, որոնք ընտրուում են 2 տարի ժամանակով ժողովրդի բնդիանուր քրէարկութեան ձանեների առաջելութիւնով (խորաքանչիւր կանողիւստատի համար):

Ծնարժել կարող են միմիակն աշխարհականները 20 տարեկանից: Միանգամից ընտրել չեն կարող երկու եզրաչքներ, հաչք և որդի, պապ և թոռք, և ոչ փետուչ և կնոջ հայրը: Ոչ մի պետական խորհրդական իրաւունք չ'ունի կրել օտար համազգեստ, ոչ շքանշան, սոտիճան կրել կամ թոշակ ստանալ օտար պետութիւնից: Եթէ նա ստանում է թոշակ կամ որ և է մի աստիճան կամ շքանշան ունէ, ապա ընտրելուց հետո զրկուում է այդ բոլորից:

Պետական խորհուրդը ընտրուում է իւր անդամներից մի նախագահ և մի փոխնախագահ մի տարի ժամանակով: Նախագահը երկրորդ անգամ ընտրել կարող է, երբ լաջորդ տարին նախագահի պաշտօն չէ վարել:

Նա հրատարակում է օրէնքը և հարկաւոր է հաստատութիւն տալիս զործադրութեան համար: Նորա հակողութեանն մն ենթարկւած կանոննի ցածր իշխանութիւնները: Նա հսկում է նոյնովէս զատարանների ճշգութեան: Ուստիկանական կարևոր կանոններ հաստատում և հսկում սատիկանութեան: Նորա իրաւասութեան է ենթարկւած կրթական զործերին

հակելը, Երկրի ներքին խաղաղութիւնը պահպանելու համար նա իրաւունք ունի մինչ ութ օր 300 հոգի զօրք պահել, իսկ աւել ևթէ կարիք եղաւ պահելու՝ նա պարտաւոր է դիմելու բարձր խորհրդին:

Ամեն տարի գեկուցումն է անում բարձր խորհրդին՝ վարչութեան, բիոդշէի, Փինանսի վերաբերեալ: Նա է արտաքին չարարերութիւնների մէջ մտնում, որքան այդ թող է տալիս դաշնակից սահմանադրութիւնը:

Պետական խորհուրծուրդը պատասխան տառ է համերաշխակի, երբ խախտել է սահմանադրութեան որ և է լոգւածը, գործ է ածել ապօրինի կերպով պատերազմական ոժը և եթէ հարստան արևելու բունութիւն է գործ դրել, ի չար գործ ածելով իշխանութիւնը մասնաւոր անհատների դէմ:

Գատի ենթարկել կարող են թէ պետական խորհրդին և թէ իւրաքանչյուր անդամին առանձին, իւրաքանչյուր քաղաքացի, որի իրաւունքները բանաբարւած կամ խախտւած են և կամ ընդհանուր պրօկուրորը, Երբ դատարանի են ենթարկւած բոլոր անդամները, ապա ատեանը կազմում է 36 երտեւալներից, իսկ երբ իւրաքանչյուր անդամը առանձին, այդ դէմքում 12 երտեւալներից է կազմում ատեանը: Պարզ է, որ նման մի սիստեմով, ուր իւրաքանչյուր քաղաքացի իրաւունք ունի դատարանի առաջ և ինչպէս մեկանում ասում են քարչ տալու վարչական այն պաշտօնեաններին և նոյն իսկ եթե լաւ, ինկատի ունենաք որ ամբողջ վարչութիւնը պատասխանաւութիւնն է ենթարկում, կրկնում եմ այդ տեսակ սկզբունքներով վարւող վարչութիւնը ոչ մի անօրինութիւն չի կարող կատարել. իսկ մի այլ կողմից, եթե լաւ նաև ենք, պաշտօնեան իւր պաշտօնից զրկւել չի կարող նոյն իսկ բարձր իշխանութիւններից, մինչ դատարանով չը հաստատեն նորա կատարած չարագործութիւնները և կատարած կեղծումները<sup>1)</sup>: Այդ տեսակ մի հանգամանքում պաշտօնեանները, ակներեն է, որ կախում չ'ունին այս կամ այն բարձր իշխանութեան կապրիզներից, որոնց ետեից ոչխարների ջոկերի նման ընթանում են շատ տեղերում. ինչ և իցէ:

Ընտրազութիւնները: Դաշնակցական խնդիրներում իւրաքանչյուր քաղաքացի ինչպէս տեսանք վերը՝ առաջին զլիում, 20 տարեկանից չափահաս է, իսկ կանտոնական հարցերում, իւրաքանչյուր ժընէւացի 20 տարեկանից իրաւունք ունի. այդ իրաւունքը ունին և միւս կանտոնների քաղաքացիները, որոնք ապահովում պաշտօնեաններից, ակներեն է, որ կախում չ'ունին այս կամ այն բարձր իշխանութեան կապրիզներից, որոնց ետեից ոչխարների ջոկերի նման ընթանում են շատ տեղերում. ինչ և իցէ:

1) Քէշնում որ և իցէ մի պաշտօնեայ իւր պաշտօնից զըկել կարող է լոկ ժամանակաւորապէս մինչ գտարաբնի վճիւը (յօդւած 18):

դատւած են, զրկւում են ընտրողական իրաւունքից. որոնք քաղաքական լանցանքների համար են դատապարտւած, կարող չեն ընտրել, մինչ ժամանակամիջոցը լրանալուց չետու երեք տարի անց, իսկ մնացեալ լանցաւորները մինչ դատարանի որոշած ժամանակը լրանալը.

Պէտք է նկատած, որ իւրաքանչիւր մի զւիցերթացի պէտք է անպատճառ պատկանէ որ և իցէ մի համանքի, առանց որին նաքաղաքացի ական իրաւունքներ չէ վակելում: Եթէ լաւնաչելու լինենք, խկապէս դաշնակցութեան կամ կանտոնի քաղաքացիներ չը կան, ազլկան ալսպէս ասած և ամաչնքների քաղաքացի գաղաքացին է, նաև կանտոնի և թէ դաշնակցութեան քաղաքացին է, անպէս որ համայնքների ներկալացուցիչներն են դատանում կանտոնի վարչութեանց մէջ. ուրեմն առել է, ով համանքի չէ պատկանում, ուրեմն և ընտրողական իրաւունք չ'ունէ: Օրինակ՝ համաթշողները: Իւրաքանչիւր քաղաքացի արձանադրւած է ան համայնքներում, ուր գտանում է նորա իրական բնակութիւնը (domicile réel): Ներքին գործերի զէպարտամէնտը ունի երկու մատեան, որոնցից մէկում գրւում են իւրաքանչիւր մի համայնքում ապրող զւիցերթացիները մէկում արձանագրւում են ան քաղաքացիների անունները, որոնք իրաւունք ունին լոկ դաշնակցական քէարկութեան. իսկ միւսում նոյս անունները, որոնք իրաւունք ունին կանտոնական քէարկութեան: Ազդ մատեանները ի նկատի առած՝ պետական խորհուրդը իւրաքանչիւր տարւաչ սկզբին կանտոնի ընտրողների ցուցակն է կազմում, իւրաքանչիւր համանքի համար առանձին, որոնք տպագրւելով ուղարկւում են բոլոր համայնքներին: Առանձին մի մասնածով ուղարկում են բոլոր համայնքներին: Առանձին մի մասնածով ուղարկում են մունիցիցի պալ իւորդ րդ ից ընտրւած ներկալացուցիչներից (իւրաքանչիւր համայնք ընտրում է համեմատ ազգաբնակութեան) ընտրութիւնից 6 օր առաջ ստուգւում են ցուցակը ակները և հաստատելուց վետով՝ կախում են մի օր առաջ միւս ցուցակը ակների մօտ և ազդ ցուցակների վրայ արձանադրւածները լոկ իրաւունք ունին ընտրելու:

Ամրող կանտոնը բաժանւած է 24 ընտրողական շրջանների: Ազդ շրջանները հաւաքւում են իւրաքանչիւր 3 տարիին մի անգամ հոկտեմբերի վերջին կիւրակի օրը ընտրելու ազգային ժողովի 5 անդամներին:

Բարձր խորհրդի անդամներ ընտրելու համար հաւաքւում են երկու տարին մի անգամ, իւրաքանչիւրը իւր շրջանում (24 շրջաններից մէկում): իսկ քէահամար անուում է երեք շրջաններում: օրինակ, Ժընէւ քաղաքը կազմում է մի շրջան, Ռոնակի աջ ափը երկրորդ, իսկ ձախը երրորդ:

Պետական խորհրդի ընտրութեան համար բոլոր եքեան, որոնք իրաւունք ունեն ընտրելու, հաւաքւում են Ժընէւ, իւրաքանչիւր 2 տարիին մի անգամ նույեմբերի առաջին կիսում: Ամրող կանտոնը ինչպէս ասացի, բաժանւած է համայնքների, Ժընէւ քաղաքը կազմում է համայնքներից մէկը:

Խւրաքանչիւր համալիք ունի իւր մունիցիպալական խորհուրդը (conseil municipal), որի անդամները ընտրում են համալիքի բոլոր ընտրողներից, ունի իւր համալիքներէցը (maire) և օգնականներ (adjoints), որոնց նողակէս ընտրում են համալիքի ընտրողները. Համաչնական իսորհուրդը, համալիքներէցը և օգնականները կազմում են համալիքի վարչական մարմինը. Փընէւ քաղաքում համալիքներէցի և իւր օգնականների փոխարէն կաէ վարչական իսորհուրդ (conseil administratif) հինգ անդամներից բաղկացած:

Համալիքական ընտրողութեան իրաւունք ունեն այն ժընէւացիք որոնք ծնւել և ապրում են համաչնքում, կամ ապրում են միտարուց ի վեր. իսկ միւս զւեցերիացիներից նոքա, որոնք հաստատել են Յ ամսից ի վեր:

Համալիքական խորհուրդը բաղկացած է 7—18 անդամներից. Նաչած համալիքի բնակիչների թւին: Ժընեւ քաղաքի խորհուրդը բաղկանում է 41 անդամներից: Ով ընարելու իրաւունք ունի, կարող է և ընտրուել. ոչ ոք միանդամից կարող չէ պատկանել համաչնական երկու խորհրդի: Ուտական իսորհուրդական ի վեր, համաչնքի եկամուռների հաշւակալը, համալիքից վարձք ստացող ծառապաղները ընտրուել կարող չեն:

Հայր և որդի կարող չեն միւնուն ժամանակ համալիքների օգնական կամ խորհրդական լինել: Համալիքի խորհուրդում երկու եղբարիներից աւել չեն կարող լինել:

Համալիքի վարչական մարմնի անդամները ընտրում են 4 տարով և փոխառում կամ նորից ընտրում են միւն դամից:

Խորհուրդը ունի իւր կանոնաւոր նիստերը, որոնք սկսում են տարեկան 2 անգամ: Նիստերը չոնեն: Խորհուրդը նշանակում է մի նախագահ, մի փոխ նախագահ և մի քարտուղար: Վործերը վճռուում են ծագների առաւելութիւնով: Ժընէւի և Կորուժի համալիքական խորհուրդը հաստատում է իւր ներքին կանոնադրութիւնները. իսկ միւս համալիքների խորհուրդի հաստատելը կարօտ է պետական խորհրդի հաւանութեան:

Խորհուրդը հաստատում է համալիքների պատրաստուծ տարեկան բիւջէն (Ժընէւում վարչական խորհուրդն է կազմում). Նախ հաստատում բիւջէից դուրս ծախսերը, համալիքների կամ վարչական խորհրդի տարեկան հաշիւը: Համալիքական ստացւածքների կառավարելու ձեզ և այդ ստացւածքներից օգտակալը, նրանց պահպանելը և բարելաւելու միջնորդը որոշում: Անշարժ կակըների փոխանցումն (aliénation), փոխելը, բաժանելը և ստացւածքի ձեռք բերելը հաստատում: Համալիքին արած պարգևները և կտակները հաստատում: Համալիքի շինութիւնների պրօէկտը կամ շինածքների քանդելը խորհուրդն է հաստատում, ինչպէս և նոր ուղի, փողոց, ճանապարհներ անցկացնելը և կամ լօգուտ ընդհանուրի սեփականում մաս-

Դաւոր ստացւածքներու Գիւղական համալիճքներում, խորհուրդը, բացի այդ, հաստատում է ճանապարհների պահպանութեան համար կարեոր աշխատութիւնները։ Նա հաստատում է նունպէս տեղական հարկերը։ Եթէ մշտական ծախսերը եկամուռները չեն ծածկում (մշտական), ապա խորհուրդը կարող է արտաքրու կարգի հարկեր նշանակել։

Համալիճական խորհուրդի բալոր վճիռները իրադորձելի են. միայն նրա հաստատած տարեկան բիւջէն և այն արտաքրու կարգի ծախսերը, որոնց նա որոշում է բիւջէի  $\frac{1}{10}$ -ից աւելի են, կարօտ է պետական խորհրդի վերահաստատութեանը, ինչպէս և համար քի ստացւածքներին վերաբերեալ դատաստանական բոլոր զործողութիւնները. իսկ կապալի համար, եթէ 9 տարից աւելի ժամանակամիջոցով է արւում, նողնպէս անհրաժեշտ է պիտական խորհրդի հաստատութիւնը։ Պետական խորհուրդն է նունպէս վերահաստատում լոգուս ընդհանուրի և փականումն, տարեկան այն հարկերը, որոնք ստվրական եկամուռներից արտաքրու են և եթէ այդ եկամուռները որոշած են զիւղական համալիճքների վերակայունների, տարրական ուսումնաբանների պաշտօնեանների ոռմիկների համար, ճանապարհների, ուղիների պահպանութեան, հրշէջ գործիքների նորոգման համար և այլն։ Պետական խորհուրդը ոչնչացնում է այն վճիռները, որոնք կոչացել են ապօրինի խորհուրդում (եթէ մեծ բաղմութիւնը ներկաչ չէ և կամ խորհրդի անդամներից նորա, որոնք որևիցէ շահ ունեն այդ վճուց ներկալ են եղել)։ Համապնդները, եթէ գտնում են, որ իրանց իրաւունքը խորհրդի ստախուած են պիտական խորհրդի որեիցէ մի կարգադրութիւնով, ապա այդ կարգադրութիւնների համար ամսուա ընթացքում կարող են զիմել բարձր խորհրդին, հարցը քննելու. և եթէ բարձր խորհրդի զանձնում է մի առանձին մասնամուգամի քննութեան, ապա համար նքը կարող է ունենալ իւր երկու ներկաչացացուցիչները մասնագողովի սնդամների թւում։ Դործադիր իշխանութիւնը պատկանում է համաչնքի երէցին և օգնականներին, որոնց նշանակում են համալիճքի բնակիչները ընդհանուր քւէով, 4 տարի ժամանակամիջոցով։ Ընտրւել կարող են 25 տարեկանից հստակների բոլոր բնակիչները, իսկ ընտրել՝ 20 տարեկանից։ Ընտրւել կարող չեն տարրական ուսումնաբանների այն պաշտօնեանները, որոնց ոռմիկը մասամբ կամ ամբողջովին համալիճքն է վճարում։ Համալիճքներէցը և օղնականները մասնակցում են համաշնական խորհրդին։ Նրանք, ինչպէս և միւս խորհրդականները իրաւունք չունեն մասնակցելու, երբ վճուելու հարցը վերաբերում է զոյապականներին<sup>1)</sup>։

Համալիճքներէցը հսկում է համալիճքի վերակայուններին (gardes ruraux),

1) Խնամութեան առաջն ուսնելու համար։

ստանում համարնքին արած բոլոր պարզեները և կտակները (անշարժ կաղքերին վերաբերեալ)։ Հսկում է համաշնքի ներքին խաղաղութեան, նա կարող է կալանաւորել համալիքի անդամներին, որոնք բռնութիւն են գործ դնում ժաղավարդի պաշտօնեաների և նրա իրաւունքի ներկայացուցիչների վերակ միան թէ նախօրէն ընդհանուր պրօքրութիւնը ստանալով, իսկ առանց ացդ նա կարող չէ։ Համաշնքերէցը և թէ օգնականները պատասխանական են:

Ժընէւ քաղաքի գործադիր իշխանութիւնը վարչական խորհուրդն է։ սական նա, վարչական խորհուրդը (5 անդամներից բաղկացած և ժողովրդի անմիջական քւէով ընտրւած), ինչպէս համաշնքի համալիքերէցը, սստիկանական գործերով չի զբաղւում։ Մի կողմ ժողնելով առակֆմ համաշնքի վրաէ աւելի խօսելը, որի վրաէ կանգ կ'առնեմ փոքր ինչ լետաց, ես կ'անցնեմ կանտոնական դատաստանական գործերի մասին մի քանի խօսք ասելու։

(Կը շարունակուի)

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԳՐԳՈԼ. — «Տարաս Բուլ'բա» (Համառօտ փոխադրութիւն): Եռշի, տպարան Միքայաջան Մահտեսի-Յակոբեանցի, 1891 թ., փոքրադիր երես, գինն է 5 կոպէկ:

Տարաս Բուլ'բան Գովալի նշանաւոր դրամածքներից մէկն է, Ալո հրաշալի պոէմայի մէջ հեղինակը գեղարւեատորէն դուրս է բերում Մալորոսսիակի կեանքը մի որոշ պատմական շրջանում, այն է XVL դարում: Այդ այն ժամանակն է, երբ Մալորոսսիան դատնւում էր լեհական իշխանութեան տակ, երբ այս վերջինը սարսափելի ճնշումներով ու հաւածանքներով աշխատում էր վերացնել լունադաւանութիւնը: Եկեղեցիները պղծւում ու կապալով էին տրում հրէաներին, ժողովուրդը արքում էր ծանր հարկերի տակ: Այս ծանր ժամանակներում մալորոսսների իրաւունքների համար միակ պաշտպանը, նրանց կրած հալածանքների համար միակ վրէժինդիրը՝ կաղակն էր, զիմանակը կաղակների աշն համանքը, որը գտնւում էր սահմանը՝ լրաց աղատում ու անկախ մի որ և իցէ իշխանութիւնից: Պոէմայի մէջ կաղակների ներկայացուցիչն է դուրս բերւած Տարաս Բուլ'բան, տժեղ և համառ բնաւորութեան տէր մի մարդ, «Նա իրան լունադաւանութեան օրինաւոր պաշտպանն էր համարում: ինքնազլուխ մտնում էր գիւղերը, որ գանգատում էին կապալառուների ճնշումներից, հարկերի աւելցնելուց: ինքը իւր կաղակների հետ զատ էր կատարում արդպիսիների վրայ և իւր համար կանոն էր զրել, որ երեք դէպքում անպատճառ պէտք է զէնքի դիմել՝ այն է: երբ կառավարութեան գործակալները չէին լարգում տանուաէրերին և կանգնում էին նրանց առաջ գդակները զլիխն: երբ ծալլում և անարդում էին ուզդափառութիւնը և չէին լարգում պապենական սովորութիւնները և վերջապէս, երբ թշնամին մահմական էր, տաձիկ էր, որի դէմ ամենազ դէպքում նա թուլատրելի էր համարում զէնք բարձրացնելու: Եւ սա մի անողիսի դաւանոնք էր նորա մէջ կաղակների ներկայացուցիչն է համար, որ չը խնացեց իւր հարազատ

սիրելի որդում, Անդրէվին, երբ առ  
լեհուհու սիրուց դաւաձանեց կուղակ-  
ներին և լուսաղաւանութեանը, անց-  
նելով լեհացիների կողմքու Տարասը  
խր ձեռքով սպանեց նրան, Ալավիսի  
մէկն էր Տարասը: Կան կաղակների  
և ուրիշ երկրորդական տիտիր, որոնք  
լրացնում են ընդհանուր պատկերը:  
Ալավիսի ուժեղ բնաւորութիւնների  
հանդէպ կանդնած է մի թշւու,  
ճնշւած էակ, զա Անդրէսի կինն է:  
«Եւ իսկուպէս նա ողորմելի էր, ինչ-  
պէս և այդ կուրիծ դարսու ամեն մի  
կին: Նա մի ակնթարթ միան ապ-  
րեց սիրով, միան կրթի, երիտասար-  
դութեան առաջն վառ բոպէին, և  
ահա նորա խստասիրտ դալմակղե-  
ցուցիչը, թողնում է նրան սրի, ըն-  
կերների ու քէֆերի համար: Կինը  
խր ամուսնում տեսնում էր տարւաչ  
մէջ երկու, երեք օր և լեսակ տարին-  
ների ընթացքում նրանից այլ ևս  
լուր չէր ստանում և հէնց երբ նորա  
տեսնում էլ էր, հետ նորա հետ ապ-  
րում էլ էր, ինչ կեանք էր նորա  
կեանքը: Նա վիրաւոր էր կրում,  
նոյն իսկ և ծեծ... նորա ամ-  
բողջ սէրը, նորա բոլոր զգաց-  
մունքները, աչն ամենը, ինչ քնքուշ  
ու բորբոքալից է կնոջ մէջ, բոլորը  
մալսական զգացմունքի վերափոխ-  
ւեց: Եւ ահա խստասիրտ ամուսինը  
նրան զրկում է և այդ միակ սփո-  
փանքից: Նորա որդիքը նոր ևն վե-  
րադարձել ճեմարանից և հետեւալ  
օրը հաւըս նրանց արդէն տանում է  
Սէչ, տանում է անվերագառնալին  
մէկին սպանում են լեհացիները,  
միւսին ինքը հաւըս:

Գողովի աչս զրւածքի համաւում

փոխադրութիւնն է զլիսազրում վի-  
ւածը. բացի համառօտ լինելուց այդ  
փոխադրութիւնը և շատ անշնորք  
է: Գողովը «Տարաս Բուլ'րափի մէջ  
նկարագրել է մի ամբողջ ժողովրդի,  
մի ամբողջ համայնքի կեանքը, իսկ  
ու. փոխադրովը գուրու է ձգել աչն  
ամենը, ինչ անմիջական զարաքերու-  
թիւն չունի Տարասի և սրդկերանց  
հետ, հեղինակը, օրինակ, կանգ է  
առել ճեմարանի ներքին կեանքի  
վրան, որովհետեւ ճեմարանական  
կեանքը նշանաւոր ագդեցութիւն ու-  
նէր կաղակների, գոնեա, հարռւստ  
զասակարգի վրան, առւաջ բերելով  
նրանց մէջ մի սուուր, անընկծելի  
բնաւորութիւն, ընկերասիրական ու  
ճեմարկու ոգի, որը արտագալուում  
է ապագակ կեանքում, իսկ ու. փո-  
խադրովը անպէտք է համարել ացի  
բոլորը և պատմում է միան մի եր-  
կու էպիզոդ Աստապի ու Անդրէի  
կեանքից: Հեղինակը կանգ է առել  
Սէչի ներքին կեանքի վրան, որը  
արտագալուում է այդ ժողովրդի ոգին,  
բնաւորութիւնը, իսկ փոխադրովը  
ացի բոլորը անպէտք է համարել և  
հարկ չէ համարել նոյն իսկ իւր ճե-  
րասուներին Սէչ հասցնելու: Նա այդ  
ամբողջ նկարագրութեան տեղ միան  
ասել է «Երեք օրից լեսակ նոքա հա-  
սան նշանակւած տեղը, որը գտնում  
է Սէչից մէկ ու կէս վերստ տարա-  
ծութեան վրան»: Ու. փոխադրովը չէ  
զուրս բերել զապալամցուն և պա-  
տերազմի զաշտում, սրտեղ աւելի  
արտագալուում է ացի պատու ու ան-  
զուսպ ժողովուրդը և բաւականացել  
է զլիսաւորապէս աչն աեղերով, առն  
էլ կցկառւը, ու տեղ ևանակցում են

Տարասը, Աստաղի կամ Անդրէլը և ազն և ալճն, Պր. փոխաղբողը ամենաաշան տեղ է տալիս և բնութեան հրաշալի նկարագրութիւններին, ուր բացակալում է սակագի կլասիկական նկարագրութիւնը, որի պատկերը աճնքան հրաշալի է, որ հեղինակի բերանից ակամակ դուրս է թռչում „চորտ աստ զօյմի, ստեպ, չակ աս խօրոշի!“: Բայց որին ասկմ, Գոգոլի «Տարաս Բուլ'բակի» ամբողջ Յացակացում է, և ազգիս վարժել են մի հեղինակի հետ, որ լազանի է իւր ամիտի գրելովը:

Յետու տեսէք ինչ կուրեօգներ են պատահում փոխաղբութեան մէջ: Յալտնի է որ Սէջը գանձում էր Դնեպր գետի մէջ զանուղ փոքրիկ կղզիների վրակ: բայց տեսէք որ ըստ փոխաղբողի Ռեկրանալից գալիս էին Սէջ ծովով (Երես 17), (Գոգոլը ասում է Դնեպրով): յետու ընթերցողները զարմացմամբ տեսնում են, որ կատաղած զաղարուժցիները, հրէաներին կոտորելու համար, Սէջից տղում են նրանց տանել մի ահազին տարածութիւն ու լետու խեղտել Դանութ գետում (Երես 22), հեղինակի մօտ զաղարուժցիները աւելի խեղօք են, որովհետեւ գիտեն, որ իրանց Դնեպրն էլ կարող է հրէալ խեղել: Եւ առհատարակ փոխաղբողի Փանտազիան շատ ուժեղ է, նորա համար

գողութիւն չունի տարածութիւնը. իանկարծ տեսնում էք որ կազակները գերի են ընկնում քրդերի ձեռքը (Երես 23), ազգիս է թարգմանել փոխաղբողը հեղինակի Տյրուք խօսքը: Թարգմանական լեզուն վաստ չէ բայց և աճնակս աղատ էլ չէ օրինակ ալսպիսի խոչոր սիալներից:

Не слушай ечигу матери: она ба ба, онаничего не знаетъ. Уже лябитъ, ортгис мордъ, она яшь алеէ, она охинч չը զիտէ»: Фоխագրողն էլ չը զիտէ, ор баба անսկատճառ պառաւ չէ նշանակում: Տարասը աճսեղ ուզում է ասել՝ մի լսիր մօրդ, ինձ լսիր, և զորա համար չեր կարող առաջ բերել կնոջ ծերութիւնը, որով հետեւ ինքը նրանից երիտասարդ չէ: ալ ուզում է ասել՝ մի լսիր մօրդ, որովհետեւ նա կին է, Այս սիսալը պատահում է մի քանի անգամ օր երես 4 և 28:

И этакъ веъ ходятъ въ агадеміи? հարցնում է Տարասը, կամենալով ասել՝ ազգիս են հազնուում ձեմարանականները, պ. փոխաղբողը թարգմանում է: «զուցէ բոլորն չէ ազգիս են զնում ձեմարանն: Այս փոխաղբութիւնը երբէք չէ կարող փոխարինել խեղական «Տարաս Բուլ'բան»: ցանկալի է ալս վերջինի լիու կատար թարգմանութիւնը:

B.

## ՊՈՒԿՈՎԻՆՍՑԻ ՀԱՅԵՐԸ

ՏԱՆ, ԴԵՄԵՏՐԻԱՆ. — «Արևելիան Հայք ի Պուկովինաս» Թարգմ. Հ. Գրիգորիս Վ. Գալիմքեարեան, Մխիթ. Աւետիս. Վիեննա, Մխիթարեան տպարան, 1891 թ. փոքրադիր 79 երես, գինն է 85 սանտիմ:

Հայ գաղթականութեան պատմութիւնը մինչև աչժմ լիակատար չէ ուսումնասիրւած, մինչդեռ նա չառարժանի է մեր մեծ ուշադրութեան այն պատճառով, որ առաջինը՝ գաղթականութիւնը մեր մէջ աճնպէս ծաւալ է ստացել, որ սակաւ ազգերին է եղել վիճակւած, երկրորդ՝ որովհեան ինքը գաղթականութիւնը հետաքրքրական մի էջ է կուլտուրական պատմութեան համար:

Դժբաղսաբար՝ մինչև աչժմ եղած գրւածքները, քիչ նիւթ են մատակարարում գաղթականութեան ամլող պատկերը ներկայացնելու համար։ Գաղթականների բռնած կէտերը, նոցա տեղից տեղ փոխաւելը, նոցա կառուցած եկեղեցիները, նոցա ստացած մի քանի քաղաքական արտօնութիւնները արձանագրւած են պապակին աւանդւելու համար։ Բայց գաղթականների ներքին կեանքը, նոցա զիրքը բնիկների շրջանում, նոցա մուծած կուլտուրական բարեփոխումները նոր երկրի մէջ, նոցա լարաբերութիւնները միմեանց մէջ և ուրիշների հետ չեն, եղած լուրջ հետազոտութեան առարկաւ։

Պ. Դանի Յօդւածը, թէև կատարեալ չէ մեր պահանջի նկատմամբ, սակայն բաւականաչափ ծանոթացնում է մեզ Բուկովինակի հա-

գաղթականութեան հետ, տալիս է հայերի այդ մնացորդների պատմական կեանքի և ներկաց կենցաղավարութեան մասին հետաքրքրական տեղեկութիւններ։

Հայերի գաղթականութիւնը դէպ հիւսիս սկսւել է շատ վաղուց։ Դ. Տանը, հիմնելով պատմական վկանութիւնների վիրաւ, հազորգում է, որ հայերի մի մեծ թիւ եղել է Ռուսիայում սորանից աւելի քան ութ հարիւր տարի առաջ։ Ռուսաց իզնաւալու իշխանի հրաւէրով՝ 1062 թւականին՝ Անի քաղաքից 20,000 հայ եկել են Ռուսիա՝ պոլոցիների (այժմեան ռուսացիների) գէմ կուելու և ալլ ևս չեն վերադարձել Հայաստան, այլ հասաւատել են նախ Կիեւում, չետու կամեննեց-Պողոլսկամ, որտեղից սփառել են բոլոր շրջակայ երկիրները։

Տասնեերեք երրորդ դարուց դէսը՝ հայերի մասին տեղեկութիւնները սկսում են լաճախ երևալ օրադրութիւնների և վիշատակարանների մէջ։ Այդ տեղեկութիւնները կազմում են պ. Տանի Յօդւածի մի մեծ մասը։

Մենք կանգ առնենք այն նկարգրութեան վեբաց, որ առլիս է Պ. Տանը լուսաւորչական հայերի և նոցա արդի կեանքի մասին Բուկովինակում։ Նա ասում է. «Հայք

ունին մեծանիստ կերպարանք, սաստիկ սե, մեծ ու կրակոտ աչք, ու մազ, աւելի գունատ՝ քան թուխ գոյն. սական կը գտնեին, թէն սակաւ, ղեղնահեր հաչեր. ունին միջին կազմածք և զօրաւոր և լաւ աճած մարմին. Զեշադէմ շատ սակաւէ հացոց քով, կը կարծի՛ որ ծաղկի պատաստը հաւոց ձեռօք Եւրոպա անցած է.

Հաւք ունին բոլորովին համեստ կեանք, բնակութիւն, հանդերձ և կերակուր. մեծապէս ժուժկալ ին—վասն զի արբեալ հաչ մը տեսնել շատ սակաւ բան է—չափաւոր և ողջախոն, շատ հիւրասէր, առևտորի մասնաւոր ձիրք ունին, շատ գւարճախօս են և ճարտասան.

Ցորեկն, մանաւանդ ճամբորդութեան ժամանակ՝ քիչ կ'ուտեն, իրիկւան՝ արենելեան սովորութեան համեմատ՝ բազմախորտիկ ընթրիք մը կ'ընեն:

Հաւք Եւրոպա գաղթելէն ետև՝ բաց ի խաղախորդութենէ և մորթ կարմրելու արեւստէն, կը զրազին միան արեելքի ազ և ազ ապրանք. Ներու շահաբեր վաճառականութեան, որ են՝ գորդ, սաֆիանի և քորտո. վանի մորթ, համեմանք, մուշկ, խավիար, թառափ, գինի, ձի, զէնք և ազն, նաև շատ անգամ իբրև թարգման արենելեան լիզւաց կը գործածւին. Լեհաստանի, Հունդարիու և Սոլտախու վաճառաց միջնավաճառութիւն կ'ընեն, Հունդարիաէն կը բերեն սպիտակ և կարմիր փոկիղէն, ձիու ծածկ և նկարէն կաշեալ արկդ. Նիւթական մինչև ցալսօր կը գրադին, թէն ոչ մինչև ցալսօր կը զրադին, թէն ոչ մեծ ձեռնարկութեամբք:

Ապրանքներն՝ արեելեալ ոճով կարաւաններով կը փոխադրւին, առաջնորդւելով կարաւանապետէ մը.

Հաւք կը զրազին նաև մսավաճառ ութեամբ, եղան և ոչխարի մսի չոր, կարծր և միսիալ երշիկներ կը չինեն, զորոնք իրենց ձնին համեմատ «սալամի, սումուգ. մողքովէ» կ'անւանեն. նաև ոչխարի և նղան միս կ'ապխտեն, զոր «պուժէնիցա» կամ «փաստրմա» կը կոչեն. Աչս տեսակ չոր մսեղէններ պատրաստելու ստիպւած էին իրենց լաճախակի հալածաման ժամանակ. զաղթականութեան ճամբուն վրակ մսիէն ուտել կարենալու համար՝ ստիպւած էին միաը չորցնել, աղել և միսել՝ որ չափականի, Գիտեն նաև «սալխէ» (սպանդանոց) մորթւած անասնոց ճարակն ծրագ և օճառ շինել, որ գործոց կ'օդնեն նաև կանաչք:

Վերջին ժամանակները կը դրային միան գիւղատնտեսութեան, արջառաբուծութեան և ի Վիեննա եղ փոխադրելու, արջառի տեսակներ մորթելու, պանիր շինելու և բամբակի առեւտոց. սական հետզետէ վաճառականութեան ամեն ճիւղերը կը կորսնցնեն, վասն զի իրենց արեւստակից և աւելի բազմաթիւ ու հարուստ հրեաչք զիրինք կը գերազանցին, որուն քիչ նպաստ չ'ըներ նաև կրթութեան հետ ստացւած քնքով կեանքը, մեծամեծ շռավութիւնք և վաճառականութեան հետ կապւած նիւթական վշտակեցութենէ սոսկալն. Եւ սական մինչև ցալսօր Պուրպովինափի առանձնական մեծ կալւածատեարց երրորդ մասը կը կալվին հակերն:

Սուշալալի հայք ունին սեպհական ազգակին տողնո մը՝ «Անի» անւամբ, որ կը գտնւի ժողովրդապետական եկեղեցւոյ շուրջը նոցն եկեղեցւոյն վերաբերեալ վարձու տան մէջ, ուր հայերէն, գերմանիրէն, ուռմաներէն և զաղղիերէն լրագիրներ կան. ունին նաև ոեպհական սրճանոց մը. Շատ ուակաւ կը տեսնւի՝ որ հայ մը ուրիշ սրճանոց մ'երթաւ:

Հայոց խոհանոցը թէ նորագոյն և թէ արևելեան ազգակին կերակուրներ կը մատակարարէ: Հայուն տուն ացելող օտարականը կը գտնէ հոն ընդունելութիւն մը՝ արեւելեան սուրական քաղցրաւենեօք:

Սուշալալի հայոց զգեստը մինչև վերջին տարիներս առհասարակ արեւելեան էր, երկու ուեռինն ալ հաւասարապէս: Այրը կը հագնէր շապիկ և «ռազգութէ» կամ «շալ լար» կոչւած սրնոց մը վրան չաճախ մետաքսիսաէ ծաղկենկար վերարկու մը, ուռմաներէն անթէրէս» (տճ. Ենթաբ) կոչւած, որուն աջէն ձախ զոցուղ կողերը թանկագին ծաղկենկար տաճ. կական վարչամակ (շալ) մը մէջքը պստառելով զոց կը պահէ, Կուրծքին վրակ ալս վերարկւին ծալքերուն մէջ դունառը՝ չաճախ մետաքսիսաէ թաշկինակ մը կ'ըլլաւ:

Արանց ոտնամանն է զեղին սափիսմէ հողաթափ, և տաճկական վարչամակ մը՝ «չուլմա» կոչւած, կը պատառէր. իսկ նոր ժամանակներ կը զնեն խորունկ՝ վերին մասը մետաքսալատ կղբենւու խոր. իսկ աղքատներն՝ գառնենւու բարձր խոր:

Կահանց զգեստն էր առանց թիզանեաց երփինազոյն՝ նաև մետաք-

սեալ պճղնաւոր հանգերծ մը, որ վերէն ի վայր կը ծածկէր, որուն վրայ կուգակ ըստ աստիճանի և հարստութեան իւրաքանչիւրոց՝ թաւշեալ, մետաքսեալ և կամ լոկ կառւէ «քացավէքա», որուն աստառը թանկագին մուշտակէ, աղուփու և կամ գառի մորթէ կ'ըլլար, զոր և ցալսօր հայ կանաքը հաճութեամբ կը հագնին:

Այս օրերս հակոցմէ շատերը նորագոյն եւրոպական ձեսվ կը հազնւին. սակայն կը գտնւին նաև այնպիսիք, մանաւանդ ի Սուշավա, որ բազմածալ՝ երկան արեւելեան հագուստը կը պահնին:

Ցիշենք նաև, որ մինչդեռ Պատրիվինաէի միացնալ հայք լեհերէն կը խօսին և լինաց բորեկամ են, արևելեան հայք ուռմաններու բարե. կամ են, և իրմենց մալրենի լեղւին հետ աւելի սիրով, մինչի խոկ լն. տաճեկան անծուկ շրջանին մէջ ուռմաններէն կը խօսին, զոր շատ կատարեալ զիտեն:

Հայկական եկեղեցիք ճարտարապետութեան կողմանէ ձիչը օրթոգոքս եկեղեցեաց պէս շինւած են, և երգեհոն չունին. խորանն արևելք ուղղւած է: Եկեղեցեաց լատակը տախտակամած է և փորպով կում նմանեօք ծածկաւած է որ մետաքսիսաէ քանի մ'աղօթից ժամանակ մուճակ կով պէտք է որ մնան:

Պատարագիչ քահանակն իւր պատարագչութեան ամբողջ շարաթը և կեղեցւոյ գաւթին մէջ, և կամ եթէ այս չը կակ, եկեղեցւոյ քալ սենեկի մը մէջ պիտի ննջէ:

Արևելեան հայք մեռունը Եջմիածնի կաթողիկոսէն կ'ընդունին:

Պուքսինաւէլ և Կալիցիուզ բովանդակութեան հաջողութապետութեան կը վերաբերին:

Սուչավալի արևելքան հակ ժողովրդապետութեան կը վերաբերի  
նաև Կուրած Հսմորուլուի զտնւող  
10—15 տնէ բաղկացեալ հակ զաղ-  
թականութիւնը, որ և այնտեղ հաս-  
տատուն նիւթ է շինւած գեղեցիկ  
և կեղացի մուճի Ս. Գէորգ անւամբ,  
որուն զրամը գումարեած է հալոց  
մէջ, և 1867-ին շինւած և օրհնւած է:

Հայք ունին 12 անգամէ բաղ-  
կացեալ եկեղեցական հոգաբարձու-  
թիւն մը, որ արդէն կ'ընտրի 3  
տարւոց համար, որոնցմէ 5 անգամ  
գլխաւոր յանձնաժողովը կը կազմեն,  
իսկ միւս 7 անդամն երկրորդպական  
յանձնաժողովը, որոնց կանոնադրու-  
թիւնը 1872 էն ի վեր բարձրագուն  
իշմանութենէ հաստատւած է:

Սկզբանական Հոգաբարձութեան  
գործն է, ընչից մատակարարութեան  
մէջ կարգաւորութիւն պահել և ամեն  
տեղ եկեղեցւոյ շահուն պաշտպան  
ըլլալ, նակել ուսուցչաց վրաէ՝ որոնք  
նաև եկեղեցւոյ երդեցիկքն են, ունի  
իրաւունք քանամնախ պաշտօնէն կա-  
խելու, քանանալացու առաջարկելու  
ժողովունան, ընտարութիւն, և ընտ-  
րեալ առաջարկելու եպիսկոպոսին  
ի ձեռնադրութիւն. Հոգաբարձու-  
թիւնը պարտական է եռամեւակ պաշ-  
տոնավարութենէն ետե ազգակին ժո-  
ղովին համար տալ:

Սուչավասի մէջ արևելիան հակը  
և դասարանով ծխական դպրոց մ'ու-  
նին, Ա. Գր. Լուսաւորչի անւամբ,  
որ 1824 էն ի վեր ժողովրդագլուխա-  
կան եկեղեցւոց գաւթին մէջ գեղե-

յիկ շինութիւն մըն է, և հ հետեւել  
արձանագրութիւնը կը կրէ. «Այս  
դաշրոցն հանգերծ ամենայն կաղմա-  
ծով շինւեցաւ, ի փառս Աստուծոյ հաց  
ազգին օգնութեամբ, ի հաւասար Լու-  
սաւորչին, չօգուտ հայ մանկաւոյ քա-  
ղաքին Սուչավայ. Յամի Փրկչին  
1824 թ., ի թվ. հայոց ԽՄՀԳ:

Այս դպրոցի մէջ՝ բացի ծխա-  
կան դպրոցներու առարկաներէն՝ որ  
հայերէն կ'աւանդվին, նաև լատուկ  
ուսուցիչ մը գերմաներէն և ռումա-  
ներէն լեզւաց զատ կուտաք, և նաև  
հայկական եկեղեցական երգեցողու-  
թիւն կ'ուսուցելու

Պուքովինասի զրաւման ժամանակ, սրբինեան Սուչավակի արևելեան հայք սեպհական եպիսկոպոս չունէին և ոչ ալ աւատրիական կալվրութեան մէկ երկրին մէջ կար, Յովսէփի Բ կալվրն Աստրախանի Յովսէփի Արգութեանց արքեպիսկոպոսին խնդրանաց համեմատ՝ 1786 թ. մարտ 15 ին հրաման տւեց, որ Պուքովինասի հայք իրենց քահանաքը հայրենիքին բներել տան, և Պոլսոց հայոց պատրիարքին իրաւասութեան տակ ըլլան, և ասոր հետ հպատակին կշմիածնի կաթողիկոսին՝ որ ի հար ռաւսաց:

Ե վերջոյ կ'ուղենք հոսմէական  
եկեղեցւոյ հետ միացեալ Պութօվի-  
նափի հայոց ալ քանի մը խօսք ըսել։  
Միացեալ հայք Կալիցիալիչն եկան  
Պութօվինա արդէն աղգաճնութիւնին  
կորսւած և բոլորովին լեհացած, ըստ  
մասին Զեռնովից և ըստ մասին Աշ-  
բէթ հաստատեցան, ուսմանցի Պօ-  
լարներու կալւածները վարձեցին—  
որոնք աւելի սիրով Մոլտափա  
կը բնակին—ինչպէս նաև արեւելան

լունական և կեղեցւոյ կալւածներն, և  
խնայութեամբ ու աչալը ջութեամբ  
ազարակներ մշակելով՝ ժամանակաւ  
նոյն տեղերու կալւածատէրն եղան:

Յազոր Պուքովինա բնակող կա  
թողիկեակ կալւածատէր հազերն ու-  
նին ի Չեռնովից Շլանկէնկասսէ փո-  
ղոցի վրայ գեղեցիկ և որմանաս հ-  
կեղեցի մը, որ 1870—1875-ին չին-  
ած է գրամաժողովով, և Ներիւած է  
Պետրոս և Պաւլոս առաքելոց: Դրանց  
հոլիւն է ծերոննի կանոնիկոսն Ֆլո-  
րիան Միկուլաքի, որուն մի մի օդ-  
նական տրւած է ի Չեռնովից և  
ի Սուչավա:

Այս միացեալ հայք ահսօրս իրեն  
լին կ'ապրին, և միայն հայ նկեղե-  
ցին և հայերէն պատարագը կը փ-  
շեցնեն իրենց նախնաբար հայ ազգէ  
ըլլալ:

Վերջին ժամանակներս Հռոմ հա-  
մոզեց Լէմպէրկի հայ կտթողիկեակ  
արքեպիսկոպոսն, որ վերջնականա-  
պէս և ամբողջապէս միանալ նաև  
կարարողականու լատին հեկեղեցւոյ  
հետ և լատիներէն պատարագ մա-  
տուցանեն, որ և պիտի ըլլար, եթէ  
այս վերջին րոպէին այս լեհախօս  
հայոց մէջ աղյանութեան կացը  
չը բորբոքէր, և իրենց առ աջնորդին  
ուղղած թղթով չը պահանջէին՝ որ  
իրենց թող արարի հայ աղյանութեան

վերջին վշատակն՝ հայրէն պատա-  
րագն, ապա թէ ոչ արնելեան հայ  
եկեղեցւոյ կ'անցնին»:

Մենք մեզ թող տոինք աչաքան  
մեծ քաղաքածքներ անելու, որպէս զի  
ներկայացնենք ընթերցողին գաղթա-  
կանութեան մնացորդներից մէկի  
ախտուալ պատկերը:

Ցաւալի է, որ պ. Տանը չէ հա-  
զարդում իւր գրքում վիճակագրական  
տեղեկութիւններ հայերի մանրամասն  
թւահամարի, նոցա բազմանալու և  
երկրի զանազան խորշերում տարած-  
ւած լինելու մասին:

Գրքովէկը ընդունելութիւն կը գտնի  
աւստրիական հայերի շրջանում և  
նորանոր հետախուզութիւնների ա-  
ռիթ կը դառնայ: «Հանդէս Ամո-  
րիայո վերջին համարը (հոկտեմբերի)  
արդէն բերել է մի լողւած՝ գաղթա-  
կան հայերի տոմարի փոփոխութեան  
մասին:

Կրօնական խնդիրներին վերաբե-  
րեալ կան սիսալ հասկացւած տո-  
ղեր, որոնք ներս են մտել հեղինակի  
անգիտութիւնից և ոչ չար դիտառ-  
ութիւնից:

Հեղինակը ծանօթութիւնների մէջ  
մասնացուց է լինում այն աղբիւր-  
ների վերայ, որոնցից օգուտ է քա-  
ղել իւր լողւածը կաղմելու համար:

Ն.

## ՆՈՐ ԱՏԱՅԻԱԾ ԳՐՔԵՐ

- 
- 1) EFFERTZ OTTO.—„Arbeit und Boden. Grundlinien einer ponophysiokratie“. Band III—Analyse der socialistischen Gesellschaft. Zweite vermehrte Auflage, Berlin, 1891, Verlag von Puttkammer und Mühlbrecht. գիշե՞լ?
  - 2) ТРУДЫ Импер. Кавказск. Общ. Сельского Хозяйства годъ 36-й. 1891, мартъ-апрель № 3—4 и май-июнь № 5—6.
  - 3) TECHNIKUM MITTWEIDA.—Bericht über das 23-ste Schuljahr 1880—1890. PROGRAMM zum 23-sten Schuljahre des Techikum Mittwaida. Maschinen-technische Fachschule für Ausbildung im gesamten Maschinenbau und den ihm verwandten technischen Zweigen der Elektrotechnik, Mühlenbau, verbunden mit elektrotechnischem Practicum.
  - 4) Ա.ՌԱ.ԲԵԼԵԱՆ, Հ.—«Աղա-Մուհամմէդ Շահը Շուշտմ (1797թ.)». Պատմական անցք: Հրան. «Աղբիւր» «Տարազ» № 28, Թիֆլիս, Խաչարան Տ. Նաղարեանցի, գինն է 2 կողմէկ.

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

Անդրկովկասուան երիաթուղու գործունէութիւնը; — Թիվլիսի դումայի կուսակցութիւնները; — Հայկակոն թատրոն; — Սովոր Ուսուասանում; — Փովոխտաթիւններ էջմիածնի Սինոդում; — Երդումը հայ լուսաւորչականների համար;

«Մուրճ»-ի ընթերցողներից նոքա, որոնք հետևում են այս տմսագրին սորա գոյութեան սկզբնական տարուց, թերես վիշտում են թէ որքան ջերմ խօսքերով ես ողջունեցի այն ակտը, որով Անդրկովկասուան երկաթուղին՝ մասնաւոր կապիտալիստների ընկերութեան ձեռքից անցաւ տէրութեան ձեռքը, որով նա մասնաւորից զառաւ տէրունական, պետական և կամ ինչպէս ուսները սիրում են սուել՝ զանձարանական (կազենիոն). Ալդ մասին ես լզում եմ ընթերցողներին «Մուրճ» 1889 թ. № 9, ուր ընդհանուր գծերով պատմեած է երկաթուղիները պետական զարձնելու զաղափարի զարգացումը Արևմտեան Եւրոպական և Ռուսաստանում, որի արտադպութիւններից մէկն էր նաև մեր երկրի երկաթուղու անցնելը տէրութեան ձեռքը 1889 թ. օգոստոսի 1-ին:

և միջի այլ պատճառների, որոնց համար հասարակական տեսակէտից աւելի լաւ է որ երկաթուղիները մասնաւորների ընկերութեան ձեռքում չը մինեն, պէտք է լինել և այն, որ լաւ տէրութեան ուշադրութիւնը երբէք չի կարող այնքան կլանւած լինել երկաթուղուց սուանալիք զուս օդուտների դիտումներով, որքան մասնաւոր ընկերութիւնները, որոնք միմիւտն շահագիտական տեսակէտից կարող են նայել իրանց ձեռնարկութիւնների վերաբ Բալց երկաթուղին, որպէս հաղորդակցութեան միջոց, այն աստիճանի հասարակաց շահ է ներկաւացնում, այն աստիճանի նա շոշափում է երկրի տնտեսական բարօրաւթիւնը, նա անքան ընդհանուր նշանակութիւն ունի, որ մեծապէս ցանկալի է նաև որ նա լինի այնպիսի օրգանների ձեռքում, որոնք ալսպէս ասած՝ առի պաշտօնէ պարտաւորւած են իրանց ձեռքում եղած զործերի վերակ ընդհանուր շահների և ոչ միան զուտ արդիւնքների աւեսակէտից նայել: Ալդպիսի: օրգաններից մէկը և զլիսաւորն է:

տէրութիւնը, որպէս հասարակաց գործերի օրդան։ Եւ այդ տեսակ գործերում, տնտեսական-հասարակական խնդիրներում, մամուլի ձաշնը շատ աւելի հեշտ հասնում էն տէրութեան քան մասնաւոր ընկերութիւնների ականջին, որոնք իրանց էզօֆիստական շահերից զէն դժւար թէ ուրիշ բանի ականջ դնելու տրամադրութիւնն ունենան։

Ազագէս կամ անպէս, բայց անա մեր առաջը դրամ «Հաշիւ Անդրկոմիսական երկաթուղու շահագործութեան 1890 թւականին» (Օտчетъ по эксплоатации Закавказской железной дороги за 1890 г.). Պարզ է թէ Անդրկոմիսական երկաթուղին ինչ մեծ Փակտոր է մեր երկրի գործարանական և գիւղատնտեսական գործունէութեան համար, քանի որ նա զրեթէ միակ կենդանի երակն է հանդիսանաւմ երկրի բերքերի փոխանակութեան համար թէ տեղական, թէ ուռասկան և թէ արտասահմանեան շուկաներում։ Ազդ իսկ պատճառով Անդրկոմիսական երկաթուղու գործունէութիւնից կարելի է մինչ մի չափնի աստիճան դատել երկրի արդիւնաբերութեան չափսի և նորա ցրւելու, բաշխման կամ բաժանման մասին։ Իսկ մեր արդիւնաբերական կանոնաւոր ստատիստիքակի պակասութեան պատճառով՝ երկաթուղարքին հաշիւները աւելի ևս մեծ նշանակութիւն են ստանում։ Դժբարդաբար նորերս հրատարակւած և մերը իշշած հաշիւը այդ ամինի մասին լիակատար և որ զվասաւորն է՝ ամփոփ տեղեկութիւններ չի տալիս։ Դա մի ահազին հասոր է 218 թերթից բազկացած, որը ներկայացնում է մեծ կուտ հում, անմշակ տեղեկութիւնների ապրանքների առաքման մասին, առանց ցոյց տալու նոյց սահմանները, թէ որտեղից են նոքա բարձաւած, և ուր են վեր բերւած։ Ազնագէս որ զուր կը լինէր ալսուղ որոնել տեղեկութիւններ խրաբանջիւր նահանջի համար առանձին։ Ճիշդ է որ հաշւի մէջ կաչ ցոյցակ «ուչաստովից ուչաստով» ուղարկւած և վայր բերւած ապրանքների, բայց այդ ուչաստովները շատ են մեծ, որպէս զի կարելի լինի ամին կէտի համար առանձին թեր դուրս բերել։ Ազդպիսի ուչաստովներից է Թիֆլիս-Բաքու, նոցանից է Կովրիլ-Բաթում։ Որպէս տեսնում էք՝ շատ մեծ տարածութիւններ, մանաւանդ որ մեր երկրում ազգային տարածութիւնների վերակ շատ զանազան արդիւնաբերութիւններ կան։

Բայց հաշիւը մեզ գոնէ ընդհանուր թւեր է տալիս, որոնք շատ ուսանելի են։ Ես կ'աշխատեմ ալսուեղ զուրս բերել այն թւերը, որոնք աւելի ընդհանուր նշանակութիւն ունին։

1890 թւականին Անդրկոմիսական երկաթուղին տարել է ամին տեսակ բերաներ, ընդհանուր . . . . . 118, 617, 417 պուդ<sup>1)</sup>

<sup>1)</sup> Վեր արտասահմանեան ընթերցողն երեւ համար թէ երես ու հարկաւոր լինի տակը, որ մի պուդը = 10 ֆունտ կամ 40 զըւան, զըւանը = 16<sup>2/3</sup> կիլոգրամ։

Ակդ թիւը կազմող բեռներն են՝		
Զինւորական բեռներ . . . . .	519,503	"
Նրկաթուղու վարչութեան բեռներ . . . . .	22,516,548	"
Կենդանիներ . . . . .	79,154	"
Հասովք առարկաներ . . . . .	7,400	"
Մասնաւորների բեռներ . . . . .	95,494,812	"

Դոցանից դուրս է գալլա, որ մասնաւորների բևոները կազմում են ընդհանուրի 80%։ Աւ պէտք է ասած, որ հէնց այդ բեռների քանակութիւնը տարեցտարի աճել է, և այն՝ զգալի չափսերով, քանի որ 1887 թ. նոյն բեռների քանակութիւնն էր միայն 60 մլլիոն, 1888-ին՝ 70 մլլիոն, 1889-ին՝ 88 մլլիոն, իսկ 1890-ին մօտ 95 $\frac{1}{2}$  մլլիոն պուղ։

Ակամ տեսնենք թէ ինչ տեսակ բնույներ են եղել և ամեն տեսակից որը ան:

Առաջին տեղը բռնել են կերպարինը (45,306,027 պ.) և առհասարակ նաև թաղին արդիւնքները, այն է ընդամենը . . . 52,762,488 պուդ երկրարդ տեղը բռնել է մարզանեց սև քարը. . . 12,093,659 "

Վրբորդ տեղը՝ կրկրակործական թերքերը . . . . 9,165,172 պուգ,  
որի մէջ հացահատիկներ եղել են 5,147,085 պ., սորա  
մէջ եզիսլուցացորինը (Կուկուրուզ, սիմինդրի) 2,486,354 պ.,  
ցորեն 1,061,102 պ., գարի 936,796 պ., հածար (րօյե)  
625,679 պ., ալի սերմեր՝ 37,153 պ., բրինձ 1,022,098 պ.  
(որից երեսի  $\frac{4}{5}$  Պարսկաստանից և Անդրկասպեան  
երկրից), ալիւր 1,469,432 պ., մրգեր՝ 631,788 պ.

Զորբորդ տեղը բանում են քարերը.	2,180,560	»
Հինգերորդը՝ շաքարը . . . . .	1,655,659	»
Վեցերորդը՝ վառելափայտը . . . . .	1,624,708	»
Ետքներորդը՝ երկաթը . . . . .	1,218,245	»
Ութերորդը՝ չինութիւների փայտեալ նիւթերը.	1,046,285	»
Իններորդը՝ հողը . . . . .	1,042,501	»
10-րդ՝ բամբակը, (որից երեխ կէսը Անդրկ. երկր.).	935,902	»
որի մէջ նաև Անդրկասապեան երկրից եկած անցկացածը		
11-երրորդ՝ աղը . . . . .	874,568	»
12-երրորդ՝ մատուտակ (солодковый корень, рѣшина)	872,561	»
13-երրորդ՝ քարէածուխ (Տկիրուլի և Ուռսաստանի)	696,174	»
14-երրորդ՝ զինի.	689,815	»
15-երրորդ՝ խոտ . . . . .	482,367	»
16-երրորդ՝ բուրդ.	381,429	»

Ես այս թւերը առաջ բերեցի նախ հէնց իրանց հետաքրքրութեան պատճառով, նոյս մանրամասն ուսումնասլիրութիւնը սական ինձ չէ պատկանում: Բայց ես արտօնեղ կր շոշափեմ միանք մի քանի կէտեր, որոնց հա-

սարակաց նշանակութիւնը անկասկածելի է. համեմատութիւնների համար օգտական նոյն նիւթերի մասին տպւած չողւածներից ուրիշ թիվներում:

Բանը սա է որ Անդրկովկասեան երկաթուղին Ռուսաստանում գոյութիւն ունեցող բոլոր 54 թէ տէրունական և թէ մասնաչոր երկաթուղիներից շարքում կարելի է ամէնաբարդիւնաւորներից մէկը համարելի Ազդ երկաթուղին աղքատներից և անարդիւնաւէտներից չէ ոչ իւր շարժական կազմի և ոչ նորա շահագործութեան Փինանսական հետեանքների կողմից: Շոգեկառքերի և վագոնների թւով (որ և կազմում են շարժական կազմը) Անդրկովկասեան երկաթուղուց միան երկուսն են աւելի հարուստ ամբողջ Ռուսաստանում՝ Նիկողակոսեանը (Պիտերուրգ. Մոսկա) և հարաւարեամեանը (Մոսկա. Խարկով. Օդեսա). Անդրկովկասեանը 1890 ին ունէր 312 շոգեկառք (լոկոմատիւ) և 8,872 վագոն. Ճիշդ է, որ այդ վագոններից կէսի չափ պատկանում էր մասնաւոր անձերին, բայց շատ շուտով աչդ մասնաւորների վագոնները անցնելու են տէրունական գանձարանը: Միմիան ճամբորդական վագոնների թիւը միւս երկաթուղիներից շատ պակաս էր՝ 246 հատ, որոնցից միան 200-ի չափ վագոն պիտանի են եղել բանելու համար:

Նոյնպէս Փինանսական հետեանքների կողմից Անդրկովկասեան երկաթուղին առաջններից մէկն է, քանի որ միմիան Նիկողակոսեան և հարաւարեամեան երկաթուղիները ստանում են նորանից աւելի ընդհանուր եկամուտ, իսկ զուտ եկամուտի կողմից 12 երկաթուղիներ միան նորանից գերազանց են:

1890 թւականին Անդրկովկասեան երկաթուղու շահագործութիւնից ստացւել է ընդհանուր եկամուտ 14,885,643 րուբլի, որից զուտ արդիւնը կամ զուտ օգուտ մնացել է 8,307,316 ր., քանի որ ծախք եղել է միան 6,578,329 րուբլի և զեռ այդ ծախքերի մէջ մտնում են հաշիւները նախկին ընկերութեան վարչութեան անդամներին և ալին Նախկին ընկերութեան ժամանակ ծախքերը աւելի մեծ էին, անպէս որ տէրութեան ծեռքն անցնելու առաջին հետեանքներից զլսաւորն եղաւ՝ ծախքերի նւազումը՝ համեմատած ընդհանուր արդիւնքի հետ: Բայց հէնց այստեղ և եթ պէտք է ասել, որ ան 8 միլիոն ու երեք հարիւր հազար րուբլուց տէրութեան զանձարանը վճարում է երկաթուղու արժողութեան դումարի տոկոսները և պարտքաշէջը տարեկան կազմում են 5,757,339 ր. 50 կոսէկ, անպէս որ ան 8 միլիոն ու 300 հազար րուբլուց մնում է ազատ 2,549,976 ր. 57 կոսէկ:

Այդ արդէն մեծ բան է, երբ ամեն տեսակ ծախքեր և արժողութեան տոկոսը և պարտքաշէջի վճարները զուրա զալուց լետ, տարւակ վերջը դեռ տակը մնում է  $2\frac{1}{2}$  միլիոն րուբլի միանդաման աղատ դումար:

Խնչ կարելի է անել ազգպիսի նպաստաւոր հանգամանքների մէջ։ Ահա խնդիրը՝ Դրան պատառվաննելու համար պէտք է աշքներս դարձնենք երկաթուղու աարիֆի վերաց։ Եւ ապահղ ահա կը գտնենք, որ փոփոխելու շատ բան կաց։ Անդրկոմիկասեան, երկաթուղու աարիֆովլ արանսպորտի գները զարմանալի թանկ են թէ ճամբորդների և թէ բեռների համար և ալն՝ բոլոր ապրանքների նկատմամբ։ Որքան կը զարմանան ընթերցողներից շատերը, եթէ իմանան որ մի պուդ կերոսինը Բաքւից Բաթում տանելու համար՝ վճարում է ոչ պակաս քան 19 կոպէկ։ Դա նամանաւանդ մեծ ծախք է, որ ամերիկացիք իրանց կերոսինը հասցնում են նաւահանգիստները նաւթանցքույ, որ զարմանալի աման է նստում. ազգպիսովլ ամերիկական կերոսինը գուրա է զալիս Ամերիկակի մի նաւահանգստից գրեթէ ալն գեովլ, ինչ նա նստել է իւր տղբիւրների տեղերում, մինչդեռ մեր կերոսինը գուրս է զալիս նաւահանգստից՝ արդէն ծանրաբեռնւած 19 կոպէկի ահագին ճանապարհածախքով։

Բայց անցնենք տարիֆի միւս լօգւածներին։ Ի հարկէ ալսպիսի խընդիրներում միան համեմատուլով կարելի է վճիռ տալ, և մեր տարիփը պէտք է համեմատել ուրիշ տարիփների հետ։ Իբրև քենակէտ վերցնենք Խարկով՝ Նիկողայոսեան երկաթուղու գները. ազտեղից ցորենի մի պուդից վերցնում են  $\frac{1}{29}$ , զարուց  $\frac{1}{32}$  կոպէկ մի վերստ տեղափոխելու համար, որ ասել է թէ մի կոպէկ տրւում է մի վերստին 29 և 32 պուդ տեղափոխելու համար, մինչդեռ մեր տարիփով մի վերստին մի կոպէկ վճարում է 25 պուդ ցորենի և 20 պուդ եղիպտացրենի (կուկուրուզ) համար։ Ալիւրի աշնահղ 26 պուդն է տեղափոխուում և կոպէկով մի վերստ, իսկ մեզանում 20 պուդը. Պարմ միրզը աշնաել 28 պուդն է տեղափոխուում մի կոպէկով մի վերստ, իսկ մեր երկաթուղով՝ 16 պուդը։ Զանազանութիւնը, որպէս տեսնում էք, շատ մեծ է։

Օրինակները բազմապատկել աւելորդ է. ազդքանովն էլ պարզ է որ տրանսպորտը մեր երկաթուղիով շատ թանկ է նստում։ Բայց մի վերջին օրինակ էլ, եթէ կամմանաք և աւելի շոշափելի օրինակ, և այս անդամ ճամբորդութեան տարիփից. Թիֆլիսից մինչև Բաքու 500 վերստ է, կամ մի տասնեակ աւելի։ Արդ, շոսէ ճանապարհներին մեզանում մի ձիռ և մի վերստի համար վերցնում են 3 կոպէկ, ուրեմն 500 վերստի համար՝ 15 բուրլի։ Եւ երեք հոգի ճանապարհորդելիս՝ վճարում են երեք ձիռ և համար, որ մի հոգու վերաց նոյնն է զալիս։ Արդ, Թիֆլիսից Բաքու գնալը երրորդ կարգով արժէ 11 ր. 11 կոպ., իսկ երկրորդով կրկնապատիկ աւելի՝ 22 բուրլի առաջնով խօմ։ Էլ աւելի թանկ է որ կառքով ճամբորդելիս պահանջւում են նաև այլ ծախքեր՝ շոսէի փող, մաղուտի փող, կաւապաներին նաչաց, բայց զորանով 15 ր. զառնում է 20 բուրլի և ոչ աւելի, ուրեմն մօտ ալնքան, որքան երկաթուղու երկրորդ կարգի համար են պահանջում։ Բայց էլի փաստը մնում է փաստ, որ նոյն իսկ

երբորո կարգի համար աշխատեղի երկաթուղին պահանջում է՝ ամեն մի վերստին զրեթէ նոյնքան, որքան պահանջում են չուելի տրակաների վերաց մի վերստին և մի ձիու համար: Գոնէ զանազանութիւնը ալս է՝ 11, 15, որ առել է երեք քառորդ:—Եւ ոչ միայն շատ թանկ տարիք է նշանակած ճամբարդների—պասաժիրների համար, այլ նոյն իսկ շատ քիչ ճամբորդական վագոններ ունի երկաթուղին: Եւ իրօք, ինչ է նշանակում, որ 980 վերստ երկար գծի համար մեր երկաթուղին ունի, որպէս վերն էլ ասացի, ընդամենը 246 վագոն, որոնցից դեռ 17<sup>0</sup>/<sub>0</sub> ուրեմն մինչ 40 վագոն 1890 հաշվի մէջ անպէտք են ցուց արւած: Ազմէ հասկանալի է այն զարհուրելի իրարանցումը, որին միշտ կարելի է ականատեսն լինել երրորդ կարգի վագոններում՝ ուր մարդիկ չը գիտեն ինչպէս անդաւորեն: Աւելացրէք այդ ամենին և այն, որ մեղանում մշակ—րանոր դասակարգի մարդիկ զեռ ևս ոսվոր չեն մաքրասէր հասարակութեան ընկերութեան: Մի խօսքով չափանոր միջոցներով մարդիկ իրաւացի կերպով ամեն ահսակ արրանցներ կարող են լատոնել Անդրկոմիկանեան երկաթուղու վարչութեան՝ թէ չափազանց գների և թէ նեղածքութեան նկատմամբ: Թէ ինչ գներ են զոքա օրավարձ բանորների համար—ասելն անգամ աւելորդ է: Դորաւարսակնելի թանկ գներ են: Ռասաստանի ոչ մի երկաթուղիի ճամբարդական տարիքը այնքան թանկ չէ, ինչպէս մեղանում: և աւելին կ'առոմ՝ ոռւսաց մի ու երկաթուղիների տարիքը, առանց պիտական հարկի (րօց դարտեանեան շօրս) 50 տոկոսի, որ առել է թէ կիսով չափ աւելի ցածր է մեր երկաթուղու տարիքից: Զարմանալի չէ ուրեմն որ ճամբորդական շարժումը մեղանում շատ ստոր է, քան Ռուսաստանի գծերից 27-ի վերաւ, չը նակած որ, ինչպէս անսամբ, մեր երկաթուղին առաջիներիցն է ուրիշ շտուկովմերից: Զարմանալի չէ ուրեմն, երբ 1890 թ. հաշվի մէջ կարդում ենք, որ աղդ տարում ճամբարդների ընդհանուր թիւը կամ աւելի լաւ է ասել՝ ծախուած տուսակների թիւը եղել է ընդամենը 1,133,486 հաստ Բաղ հասկանալու համար թէ որքան ողորմելի թիւ է ներկաստացնում ալզ, պէտք է խմանալ որ ահադին մեծամասնութիւնը ճամբորդների միայն կարծ ճանապարհ զնալու համար են առմասկ վեցրել, առնուես որ միջին թիւը 1890 թւականին արւած ճամբարդութիւնների Անդրկոմիկասեան երկաթուղու վերաւ կազմում է միայն 79 վերստ: Իսկ քանի որ ամբողջ գիւղը Փոթիւ ճիւղով ունի 980 վերստ, նշանակում է թէ սուատիստիքական հաշտով 901 վերստ ոչ մի ճանապարհորդին չի ծառաւել: Աղորմելի չէ այդ դրութիւնը, և ինչիցն աբդ, —ճամբորդական տարիքի չափազանց թանկ լինելուց: Որ երկաթուղու կառավարութիւնը ինքն ևս վնասուում է այդ հանգամանքից, այդ պարզ երևում է նրանից, որ բոլոր այն միլիոնաւոր ճանապարհորդներից տարեկան ստացած փողն է ամեն մէկից միջին հաշտով միայն 1 բուրդի 17 կտորէկ:

Ալոց, քանի՛ որ երկաթուղին գինանսապէս լաւ դրաւթեան մէջ է,

ամենավե տեսակ ծախքերը և պարաւաւրիչ վճարումները զուրս գալուց էին զեռ 2 $\frac{1}{2}$  միլիոն աղաս զումար է մնում, չի վարելի արդեօք որ մտածեն թէ ապրանքների և թէ ճամբորգական տարիվները իջնեն, և դրանով երկրի տնտեսական լառաջդիմութեանը աւելի զօրիղ կերպով նպաստել?

Անկասկած է, որ հարկաւոր է:

Մի զարհուրելի աղէտ է հանդիպել Ռուսաստանի մի մեծ մասին. 18 նահանգներում այս տարւակ հացահատիկների հունձը տեղական խպառոչնչել է, իսկ տեղական միջին հունձից անգամ կիսից ստոր է: Մինչդեռ հացահատիկի հունձը Ռուսաստանի տնտեսական կեանքում ամենատարածված է բռնոււմ, Յորենի հունձի աղդ նշանակութիւնը տեղիք է տւել մինչև անդամ այս խօսքին թէ՝ Ռուսաստանում խկական ֆինանսական մինիստրը՝ հացի հունձն է: Երբ հունձը լաւ է՝ նաև պետական ֆինանսները լաւ են, երբ նա վատ է՝ նաև ֆինանսները վատ վիճակի մէջ են: Ներկաչ տարւակ նման վատ հունձ Ռուսաստանում սակաւ չէ պատահում, բայց այս անգամնանը շատ աւելի ծանրակշիռ է իւր ծաւալի պատճառով: Մենք լիշում ենք Սամարի նահանգի «առվլո», տասնուշինդ տարի առաջ, բայց ալժմեանը, որպէս ասացի՝ մի նահանգի վրա չէ տարածւում, այլ, որպէս հազորդում են, 18 նահանգների վերական որոնց բնակչների թիւը հաշւում են 16—20 միլիոն հոգի: Աչքմ, և արդէն մի ամսից աւելի՝ ուստաց կառավարութիւնը կլանւած է կարուեալներին օդնութեան հասնելու հոգեստով: Արտակարգ միջոցների են դիմել թէ տէրութիւնը և թէ հասարակութիւնները ամբողջ Ռուսաստանում՝ կարուեալներին օդնութեան հասնելու համար: Կառավարութիւնը ձեռնարկել է վլաստած տեղերում հասարակաց շինութիւններ կառուցանելու, որպէս զի կարուեալները կարուզան օրավարձ սատանալ և գորանով ապրուստ հալթհալթիւն: Նաև օժանդակութիւն է արել աշնանալին ցանքուերը սալահովելու համար: Արդեկել է հացահատիկի, մանաւանդ հաճարի (րօյք) արտահանումը: Ամենուրեք Ռուսաստանում ժողովարութիւններ են անշուռմ նոյն նպաստակով, մի խօսքավ մեծ աղէտի հոգսով բանւած է դրականապէս ամբողջ Ռուսաստանը կառավարչական ամեն տեսակ հասաւառութիւններով և ժողովրդով: մօտ թէ նուաւոր Տայ Աստւած, որ Ռուսաստանը կարողանաւ աղդ փորձանքից աղատ զուրս գալ, որովհետ ալժմեակ փորձանքին զիմանալու համար պահանջւում է որ պետութիւնը իւր բոլոր ովքերը լարէ: Ռուսաստանի ներկաչ ցաւին կարեկցում են ոչ միայն Ռուսաստանը իւր բաղմացեղ աղզութիւններով, այլ և արտասահմանեան երկիրները, ուր, ինչպէս Պարիլում, Բերլինում, Լոնդոնում, ստորագրութիւններ են հաւաքըւում լոգուս Ռուսաստանի կարուեալների: Բայց ար-

դէն ժողովուրդը այն նահանգներից սկսել է ցրւել, և արդէն հեռաւոր Անդրկապասն խոկ զաղթում հն մնծ ու վաքր խմբերով, մանաւանդ Բաքու, Թիֆլիս, Բաթում, ուր սական միշտ գործ ձարելը դժւար է, աշնազէս որ գլխաւորապէս հասարակաց ինսամատարութեան և կամ պատճարութեան միան կարող են ապաւինել.

Այս տարւակ հանձի պակասութիւնը և զորա հետեանք՝ ժողովրդի մնծ բազմութեան հացից և սերմացանքից զուրկ լինելը պէտք է նոր ոչ ժող հերթական խնդիր դարձնի՝ հասարակաց շտեմարանների կազմակիր պութիւնը։ Ատովգ անդեկաթիւններ կան, որ Ռուսաստանում նոյն խոկ այս տարի շատ տեղ հասարակաց շտեմարաններից ցորենը ծախել էն։ Որպէս միշտ լինում է, ամեն անդամ երբ վաս հանձներ են լինում, զորս են զալիս մարդիկ, որոնք աման զնով անուն են ուզում ստեղծել՝ առաջարկելով որ ցորենի արտահանութիւնը նաև առաջ տարիներում արգելմն կամ սահմանափակեն վարչական կարգադրութիւններով։ Վաս հանձի տարիներում՝ անդամ արգելելը անհրաժեշտ է, բայց առաջ տարիներում ուղենալ «կանոնաւորելը» արտահանութիւնը—մի ցնորդ է։ Ցորենը Ռուսաստանի ամենամեծ հարատութիւնն է և, եթէ չը լիներ ցորենի մեծ քանակութեամբ արտահանութիւնը—Ռուսաստանը ամենաողբալի վիճակի մէջ կը լինէր, որովհետեւ աղե երկիրը, շնորհիւ իւր մեծատարած հողերի՝ մշակում է հողը լատկապէս արտահանութեան համար։ Խմ ձեռքին է 1888 թւականի սաստիտիկան, որից երեսում է, որ Ռուսաստանը ուշ տարին արտահանել է 223,300,000 բուբլու սպիտակ ցորեն, մօս 68 միլիոն բուբլու հաճար (քոյն), ուրիմն միասին 291,300,000 բուբլու հաց։ Միմիան տասը տարում արտահանութիւնը հատնում է Յ միլիոնդի։ Ամեն զժբազդ պատահարների դէմն առնելու համար բաւական կը լինէր Ռուսաստանի համար աղդ զումարից, ուրեմն առաջ տարում, միան մի երկու հարիւր միլիոն բուբլու ցորեն պահել հասարակաց շտեմարաններում։ Խոկ այդ չի կատարում ճշգութեամբ։ Այդ թւերից ամեն հասկացով մարդ աղս եղբակացութիւնը պէտք է զուրս բերի, որ ոչ թէ ցորենի արտահանութիւնն է սովոր պատճառում Ռուսաստանում, աղը որ նէնց աղդ արտահանութիւնն է, որ Ռուսաստանին կհանք է տալիս և գիւղացիներին ապրեցնում։ Չը լինէր աղդ քանակութեամբ արտահանութիւնը, որի վերալ պէտք է զեռաւելցնել մօս 50 միլիոն բուբլու արտահանուող զարին և 55 միլիոնի վարսակը, սպիտակ ցորենի և հաճարի հետ միասին ուրեմն մօս 400 միլիոն, չը լինէր աղդքան զումարի արտահանութիւններ կը միավին անմշակ, միլիոնաւոր գիւղացիք կը միավին անդործ և ստիպւած կը լինէին կամ սովից մեռնել, կամ մուրացկան զառնալ, կամ գաղթել.

Դեռ ևս նույնմբեր զեկանմբերի 1890 թւականի քաղաքավիճ վարչութեան կազմի համար սկսւած աղմկալի ազիտայիան շարունակւում է մինչ այսօր Նոր գումարի անդամների ընտրութիւնները, քաղաքաղլուխ ընտրելը, վարչական մարմնի անդամներ ընարելը և այժմ վերջապէս քաղաքավի պաշտօնակատարի նոր ընտրութիւնը մի մի առիթներ էին, ուր ամեն տեսակ կրքեր՝ աղնւի հետ խառը նաև անազնիւ կրքերը իրանց դերը իւազացին. «Մուրճ» ի 1890 թ. գեկտեմբեր և 1891 թ. ապրիլ ամսւակ համարներում աղջ ինդիրներին նւրբւած քրոնիկները մասսամբ ծանօթացըլին ընթերցողներին կուսակցական ուղղութիւնների հետ. և ահա աղմմ ևս կրկին պէտք է վերադառնամ նոյն խնդրին՝ քաղաքավի պաշտօնակատարի ընտրութեան առիթով; Բայց նաևս իրադութիւնը Մինչ այժմնեալ պաշտօնակատարը քաղաքավիլի, սկսած ութ տարուց ի վեր, վերստին ընարելով պ. Պողոս Խոմավեանն է: Այժմ նորա ծառապութեան ժամանակամիջոցը լացած լինելով՝ քաղաքավիճ դաւման պէտք է նոր ընտրութիւն կատարէր: Սոյն հոկտեմբերի 12-ին կատարեց առաջին անդամ ընտրութիւն, Քաղաքավիճ ինքնափարութեան սահմանադրութեան պահանջմանը պահանջմանը միան առիթու անդամներից, Բայց այն օրը վարչութեան երկու անդամները՝ նոր ընտրւած պ. Ապոլոն Խւանենկօ և պ. Խոսրովիան հրաժարացին քւէարկւելուց, անպէս որ քւէարկւեց միան մինչ այժմնեալ պաշտօնակատարը՝ պ. Պ. Խոմավեան: Սա ստացաւ աւելի սև քան սպիտակ, ուրին չընտրւեց: Հետեւեալ նիստում՝ պէտք է նորից կատարէին ընտրութիւններու Քաղաքավիլի լատոնից, որ պողոժնենինելով սկարտաւորիչ լինելով՝ վարչութեան բոլոր անդամների քւէարկութիւնը քաղաքավիլի պաշտօնակատարի պաշտօնի համար՝ բայց անցեալ նիստում աղջ կանոնը պահպանւած չը լինելով՝ անցեալ նիստում կատարւած քւէարկութիւնը ապօրինի պէտք է համարել: Ալսպիտով քւէարկութեան ենթարկւեցին վարչութեան բոլոր անդամները, դոցա մէջ և պ. Խոմավեան: Եւ ահա ակտուղ է որ սկսում է աղմուկը:

Պարոն Զուբալով և նորա հետ նաև բոլոր վրացի ձանաւորները, առանց բացառութեան, ոլնդում են թէ մի անդամ արդէն սկացած «իրաւունք» չունի նորից քւէարկւելու: Դորա հետ չեն համաձայնուում քաղաքավիլը, ապա ինքը քւէարկւող պ. Խոմավեան և ձանաւորներից բոլոր միացածները, Եւ ահա քւէարկում է պ. Խոմավեանը միւս երկուսի հետ միասին: Ներկաց էին նիստին 48 ձանաւոր, որոնցից մասնակցեցին քւէարկութեան պակ. Խւանենկօվի և Խոսրովիանի համար բալորը, խակ պ. Խոմավեանի համար միան 27 հոգի, որոնցից 23 հոգի սպիտակ քւէ տւին, 4 հոգի սև քւէ, Պ. Խոմավեանը ստացաւ աւելի սպիտակ քան միւս երկու քւէարկւողները. և, բացի զորանից՝ միան պ. Խոմավեանը ստացաւ աւելի սպիտակ քան սև քւէ:

Խնդիր բարձրացաւ՝ պէտք է արդեօք պ. Խղմալեանին ընտրւած համարել, թէ ոչ. Այս խնդիրը աճմել խնդիր չէր, այլ զուա կուսակցական: Ներկայ գումարի ընդդիմադիր կուսակցութիւնը, օպողովիցիան, ահա արդէն տասն ամիս է, ինչ քաղը առ քաղը և անողորմ կերպով հալածում է նախ- կին վարչութեան անդամներին: Կուսակցութիւնը, հետեւելով կառարելա- գործւած տաքափկալի, աճն է՝ միաբանութեան, կարգաշու ոչ սաանալ և արդպիսով լրացնել իւր թւի պակասը. Այդ միաբան և արթունէն գործունէու- թեան առաջին մեծ հետեանքը եղաւ ան, որ նորից ընտրւած քաղաքա- գլուխ պ. Մատինով իրան ստիպւած տեսաւ հրաժարել իւր պաշտօնից: Ընտրւեց նոր քաղաքագլուխ՝ իշխ. Երկանարազուկ Արզութեան: Այդ մա- սին տես «Մուլճ» 1891 № 4 քրոնիկ: Բաց կուսակցութիւնը իւր վերջ- նական գործը տարած չէր լինիլ, եթէ ակմետակ վարչութեան անդամ և քաղաքագլուխ պաշտօնակառար մնար պ. Խղմալեան, քանի որ նախկին վարչութեան ողին էր նա: Թէ ինչ անձնաւորութիւն է նա, ևս նոր լրան չունեմ աւելցնելու աճն բոլորի վերաս, ինչ արդէն ևս ասել եմ նորա մասին «Մուլճ»-ի վերը լիշած համարի քրոնիկում: Աւքեմն, ինչ էլ որ լինէր պ. Խղմալեան, ընդդիմադիր կուսակցութեան համար հարկաւոր էր նորան հե- ռացնել: Ահա ինչով պէտք է մեկնել աճն սովետութիւնները որոնց պատրաստ է դիմել ընդդիմադիր կուսակցութիւնը պ. Խղմալեանի քւեարկ- ւելը ապօրինի համարել տալու համար:

Ես պէտք է հէնց ալատեղ և եթ իմ կարծիքը չակնեմ, որ պ. Խղ- մալեանի քւարկւելը ապօրինի չէր Մխմիան խնդիր կարող է լինել ազ- տեղ աճն թէ՝ ընտրւած է նա թէ ոչ, եթէ նորա ընտրութիւններին մատ- նակցել են միաւն 27 հոդի, այսինքն դումայի բոլոր ձախաւորների թւի կէսից պակաս:

Բաց ընդդիմադիր կուսակցութիւնը անվաեւը էր համարում ոչ աղ- օրինական պատճառուով, այլ չալտարութելով, որ իրը պ. Խղմալեանը իր ա- ռուն ք չունէր նախորդ նիստում սեացած լինելուց վետ՝ նորից քւեարկ- ւել: Դա սիսալ է: Եւ երանի թէ զա միաւն սիսալ լինէր, որովհետեւ զա սիսալ չէր, այլ սովորական թիւն, պարզանենատական փորտել, ինչոյն աղդ շատ լաւ ըմբռնել էր ձախաւոր պ. Արզար Յալիննիսեան, որը կուսակ- ցութիւնը զինաթափ էր արել մի ուրիշ, նոնքան տնպատւթեր մի պար- լամենտական փորտելով:

Քաղաքաւին սովորունին պահանջում է որ քաղաքագլուխ պաշտօնա- կառար ընտրւի միաւն վարչութեան անդամներից: Արդ, երեակակիցէք որ վարչութեան բոլոր երեք անդամները մի նիստում աւելի ուս սաանան, քան սպիտակի, ուրիմին բոլոր երեքն էլ չընտրւեն մի նիստում: Զէ որ քա- ղաքաւին սովորունինի պահանջի համեմատ անուամնանալին: այդ երեքից մեկին պէտք է ընտրեն, ուրիմն չէ որ հետեւել նիստամ բոլոր երեք սեալցածն երը նորից պէտք է քւեարկւեն: Աւքեմն եթէ պ. Խղմալեանը

մի անգամ սեանալ, չէ որ նա իրաւունք ունի երկրորդ և մինչեւ անգամ երրորդ անգամ քւէարկւել, քանի որ նորա ընկերակիցներից ոչ ոք ընտրւած չէ:

Ավել իրողութիւնը, որ ընդդիմագիր կուռակցութեան պարագլուխ ալ. Զուբալովին էր պահանջում որ Խզմալեանը հեռացնելը քւէարկութիւնից, ալդ իրողաթիւնը, սատում եմ, շատ վատ զոյն է տալիս նորա կուռակցութեանը առհասարակի, և ոչ միայն ալ. Զուբալովին է հնահել անվարի միջների՝ հակառակորդին առպարփակ հեռացնելու համար, ալլ և ալդ կուռակցութեան զլսաւոր օրգան՝ Նովոն Օրողրենին. Եւ իրօք, ալդ թիրթի № 2695 տոպւած Սահետե Յաղւածում, Յօղւածագիրը ուզում է քաղաքավին պոլումենիքի բոլոր Յօղւածների իմաստը շուռ ու մոռ տալ որ միայն ապացուցեի Խզմալեանի ընտրւած չը լինելու Յիշեալ թերթի Յօղւածագիրը հարկէ համարում ծուռ կերպով հասկացնել ընտրող (ԱՅՑԻՐԱՏԵԼ) խօսքի, նշանակութիւնը՝ Նա լայտնում է, թէ ընտրւած լինելու համար, իրը ըստ օրէնքի, ոչ միայն պլաք է սատանալ երկու երրորդը քւէարկութեան մասնակցած ձարների, թէկուղ ալդ մասնակցողների թիւը լինէր զումալի անդամների թւի կէսից տևելին, ալլ իրը թէ պէտք է ստանալ զումալի դահլիճում ներկալ եղող ձախնաւորների թւի երկու երրորդը, թէկուղ ներկալ եղող ներից ումանք մասնակցած էլ չը լինեն քւէարկութեան. Ես կ'ապացացանեմ, որ Նովոն Օրողրենին զորանով փորձ է անում անկարելի դարձնել քաղաքավին ինքնալիարութեան զործունէութիւնը և սահպել, որ մեծամասնութիւնը հպատակի մի փոքրամասնութեան կամքին. Ալդ պարզ հասկանալու հստար ես իը վերցնեմ մի զէպք Ներկալ են նիստին 72 հոգի ձախնաւորներ, որոնց թւում դիցուք հնչյ 25 հոգի վարչութեան հակառակութիւներ. Ալժմ երեսականիցեք որ քւէարկում է ալ. Խզմալեան և ալդ քւէարկութիւնից լետ են կանգնում այն 25 հոգին, ուրիմն ընտրութեան մասնակցում են ոչ 72 հոգի ներկալ եղող իրաւասուները, ալլ 47 հոգի. Ալդ թւի երկու երրորդից աւելին՝ 40 հոգին սպիտակ են տւել, 7 հոգի՝ սև Արդ պէտքում ալ. Խզմալեանը ընտրւած է թէ ոչ Նովոն Օրողրենին Արդ պէտքում ալ. Խզմալեանը ընտրութիւնը է ոչ թէ ընտրութեան մասնակցել ցանկաց աղներին, ալլ նոցա, որոնք ներկալ են դահլիճում, թէկուղ սոցանակցում:

Ալսպիսով ինչ դուրս կը զար Ալն, որ 25 հոգի փոքրամասնութիւնը իւր վետօն կարող է զնել զումալի ձախնաւորների ահագին մեծամասնութեան վճիռներին, եթէ ալդ 25 հոգին ցանկանան ամին զէպքում լիտ կանգնել քւէարկութիւնից:

Պարզ չէ արդեօք թէ ինչ սատաններ է հիւսել ցանկանում ընդդիմ.

մաղիր կուսակցութիւնը, որպէս զի անկարելի զարձնի քաղաքավին դումակի գործունէութիւնը և հարկադրէ մեծամասնութեան հնագանդւել իրան՝ պոքրամասնութեան?

Անցեալ ամուսակ քրոնիկում եռ պատմեցի ներկալ 189<sup>1/2</sup> թւականի հավական թատրոնի ծագումը, թատրոնական լանձնաժողովի կազմելու պատմութիւնը, մի քանի խօսքով գծաղրեցի ներկալ թատրոնական խմբի բնաւարութիւնը և կազմւած բնակերտուարի ուղղութիւնը. Այդ չողւածից դէս ներկազացրին «Երկրորդ երիտասարդութիւնը», Լուգիս Կամալետիքի «Քայր Թերեղա», «Պարիշի աղքատներ», Շեքսպիրի անկալս հեղինակի «Մի կնոջ սանձահարում»:

Այդ բոլոր պիեսները աննշան պիեսներ են ըստ բովանդակութեան. Դոցա ղնելը մեր բնիմի վերակ ներելի են, բաց միայն մի պայմանով, որ իրար չը լաջորդին, այլ աւելի կարեսը պիեսների միջանցքներաւմ տրւեն. Այդ չորսից, ըստ երեսութիւն, «Երկրորդ երիտասարդութիւնը» չաւակնութիւն կարող է տնենալ լուրջ պիեսների չարքում դասւելու, և թեման էլ իրօք լուրջ է, բաց անպէս, ինչպէս Նեւեժինն է այդ թեման մշակում՝ նորան անաջող պիեսներից պէտք է համարել. Մի հայր, որը չի ատում իւր կնոջ, այլ միմիան նորից երիտասարդական կեանք վարելու համար՝ սկսում է սիրել մի ջայէլ օրիորդի, որի համար թողնում է իրանց բաղզին թէ իւր կնոջ և թէ զաւակներին. մի օրիորդ որը չի սիրում արդէն 45 տարեկանը անցած մարդուն, և լուրջ աղջիկ է զուրս բերւած՝ համաձայնում է ապրել նորա հետ. մի երիտասարդ, ան պարոնին, զայրացած իւր մօրը և ընտանիքին հասցրած անպատութեան վերակ իւր հօր տմարդի վարմունքի պատճառով՝ սպանում է հօր սիրեկանին և հաշտում իւր անպատիւ հօր հետ—ահա ախտիսի տեսարաններ են լրցնում Նեւեժինի պիեսը, որը անհասկանալի է մնում և չի բացատրւում թէ ինչն է իսկապէս պիեսնի միտքը. իսկ եթէ ուզենալու լինենք անպատճառ մի միտք դուրս բերել պիեսից, այդ թերես ան է, որ Նեւեժինը բողոքում է քրէական օրէնսդրութեան դէմ, որը պատճում է երիտասարդին իւր հօր սիրեկանին սպանելու համար. Այդ է զոնէ զարս գալիս լուգիկավից մի պիեսի, որի միակ օգուտը այն էր, որ ցուց տւեց թէ որքան արտխատական նրութեամբ գիտէ կատարել տ. Ալրանոցը տանջւող մօր գիրը և որքան իւր տեղին էր պ. Աթէլեանցը բնպնեօրի զերում. Պէտք է կարծել որ այդ երիտասարդ զերասանի ամպլուան գորանով սկսում է որոշւել՝ նորա ամպլուան—բեղոնեօրի գելն է երևում:

Շեքսպիրի «Մի կնոջ սանձահարում» պիեսը, որքան և մեծ հեղինակի թուղ գրւածքներից լինի, բաց և աղճպէս արժէր որ հասարակութեան աչքի առաջ դնւէր. Այդ տեսակ պիեսներ կարելի է կրկնել միան-

երկար ժամանակամիջնոցներում—միքանի տարում մի անգամ—զլիսաւորապէս այն հասարակութեան համար, որ տևել է Համբէա, Օթելլօ, թագաւոր Լիր և ալին, մեծ հեղինակի հետ աւելի լիակատար ծանօթացնելու համար։ Նեքսպիրից կարելի է գնել առաջմ նաև «Վինձորի ուրախ կանաչք»։ Մի կոչ սանձանարաւումն պիեսի մէջ Նեքսպիրը, բայց ալս անգամ չափազանց մերկ կերպով, հանդիսանաւում է իրա մի հեղինակ, որը հուծկու ուժով պատում է հասարակութիւնից ընդունած ամեն մի պատշաճութիւն (պրիկառի) և խոր հերօսներին խօսեցնում անպիսի բարբարոս խօսքիրով և ձեռիրով, որպէս աշակել է» միայն աղացուցանելու համար թէ «ուժը չարգում է միայն ուժը, ուժը խոնարհում է միայն ուժի առաջը, լինի աղ Փիպիքական աշխարհում թէ բարոյական աշխարհում։ Նեքսպիրի աղը գրածքը մի զաւեշտական կատակերգութիւն է, ամենամեծ ծալրանեղութիւններով ու կոչու ու բիրտ կոնստրասաներով ախողերի մէջ։ Բայց թէ ինչ տրամադրութեան մէջ է զրել Նեքսպիրը իւր աղդ տարօրինակ զրւածքը, աղդ երեսում է պիեսի ներածութիւնից, որը Նեքսպիրի ժամանակ ներկալացնուում էր, իսկ ալժմ չի ներկալացնուում։ Անա աղդ ներածութեան կարճ բավանդակութիւնը, որը թերիս շատերին լալունի չը լինի, Կաթոսաներ կլեկող մի մարդ սպանդոկում հարբում է, կռւում տիրունու հետ, զարս գալիս և ձգում փողոցում ու քնում։ Չալիս է մի անզլիացի լորդ իւր ուխտալով՝ որսից։ Համոզւելով որ պարկածը մեռած չէ ազլ հարբած, լորդի մէջ միտք է զգանուում այսպիսի մի հաճաք խաղալ խեղձի զլիսին, տմբողջ պլանը տառչուց կազմելով, նա հրամակում է որ հարբածին տանեն իւր պալատը, պարկացնեն իշխանական փափուկ անկողնու վնրուէ. երբ ինառ նա արթնանում է, լորդի զգաստացած ծառաները գալիս ու իրանց պատրաստութիւնն են բարենում կատարել «լորդի» կամեցածը։ Խեղճ կլեկչին զարմանում է, չի հասկանում թէ ուր է և թէ ինչու նորան լորդ են անւանուում. ոսով զի հասկանում է համոզցնել ծառաններին թէ ինքը կլեկող մարդ է, իւր անունն է ալս ինչ հասարակ անունը, իւր բարեկամներն են ալս ինչ հասարակ մարդիկ և ալին, Ծառաները պատկառանքով պատասխանուում են թէ «լորդը» 15 տարի քնած է եղել և թէ աղդ իւր ներկար քնելու պատճառով (արիկինը), «մաղամը» շատ ցաւում է եղել։ Նա թէ՝ իմ կինս հասարակ կնիկ է, «մաղամ» չէ և ալին և ալին։ Ծառաները, որոնց մէջ և սարակ կնիկ է, «մաղամ» չէ և ալին և ալին։ Ծառաները, որոնց մէջ և իսկական լորդը, չետ են համոզում նորան, այնպէս որ խեղճ կլեկչին ոկտում է կամաց կամաց հաւատալ թէ ինքը իրօք լորդ է և որ բոլոր իւր զիտեցածը միայն երազ է եղել ու հրամակում է կանչել ամաղամին։ Գալիս է լորդի պածը, մի գեղեցիկ պատասին՝ կնոջ չորեր հազած և ներկայանուում իրը «լորդի» կինը, և վշտահար դէմքով ասում թէ աղդ 15 տարին նրան թւել է 30 տարի. և որ աղմ շատ ուրախ է որ քնից արթնացնել է, ներկալազող լորդը ապա հրամակում է իւր «կնոջը» շոբերը հանել ու զալիրա հետ պարկել, «Աինը» սակալն, զժւար զրութիւնից զուրս զալու հայրա

մար, առարկում է թէ ներողութիւն կ'անէ, բժիշկները պատիրել են զեռչորս գիշեր խը կնոջ հետ չը լինել: Այդ ժամանակ ծառաները, նախագծած պլանի համեմատ, զալիս ու չափնում են «լորդին» թէ գերասանները, նորա առողջանալու առիթով, եկել են ներկալացում տալու և զլորդիու տիրութիւնը փարատելու:

«Դորա համար թւաց մեղ լաւ որ զուք ալս խաղը տեսնէք

«Եւ ձեր ուշքը նոցա ուրախ կատակի վրաք դարձնէիք,

«Պորանով է որ ցաւը կ'անցնի, կեանքը երկար-երկար կը լինի, ասում են ծառաները:

Եւ խեղճ Քրիստոֆը Շլառ, լորդի գիրքի մէջ ընկած խեղճ կլէկչին, «կնոջը» կողքին նստացրած, պատրաստում է ժողովրդական մի խաղ տեսնելու: Բայց «կինը» հաւատացնում է թէ ինչոր կը ներկալացնեն՝ աւելի լաւ լան կը լինի քան նա կարծում է և որ գո՞ւ մի տեսակ պատմութիւն է: Շլառ ասում է՝ «Դէս մինք այդ կը տեսնենք: Արի, «մաղամ տիկին», նստիր կողքիս և թող որ աշխարհքս խը ճանապարհով դնաք. երիտասարդութիւն ավ ևս մինք երկրորդ անգամ տեսնելու չենք»:

Եւ ներկալացնում են՝ «Ըմբռատ կնոջ սանձահարումն», որի բովանդակութեան վերակ աւելորդ եմ համարում կանգ առնել:

Ի վերջու հետեւալ կառավարչական նոր կարդաղրութիւնները: Երդման խնդիրը առ այժմ լճուած է աջապէս, որ հաՅլուսաւորչականներին ալունէնեւ պէտք է երդւեցնեն սասաց լեզուի, բայց ոչ թէ քահանափ մօտ, այլ զառասաւական նախագահի, մօտ, իսկ եթէ զինուորական ծառալութիւն համար է՝ զինուոր. վարչութեան առաջ, ուսերէն չը զիտենալու զէպքում՝ թարգմանի միջացով պէտք է նոնը կատարէի: Այդ կարգադրութիւնը եղած է համաձայնութեամբ ներքին զործերի և զինուորական մինխատրների:

Մի այլ կարգադրութիւն վերաբերում է էջմիածնի և Սինողի անդամների փոփոխութեան: — «Կաեկած» լրագրում № 284, այդ իրովաթիւնը հաղորդւած է ալսպէս. «Բարձրադուն հրամանով, կաւացած 19 սեպտեմբերի, հայ լուսաւորչական սինողի անդամներ՝ Սուքիաս Պարդեսնց և Ներսէս Խուդավերդեանց եպիսկոպոսները, իրանց ապօրինի զործողութիւնների համար, արձակւած են իրանց բոլոր պաշտօններից և հեռացրած են՝ առաջինը Օրլովի, իսկ երկրորդը՝ Պոլտավակի նահանգները: Մինոցն ժամանակ հրամակւած է՝ էջմիածնի սինողի անդամների թափուր միացած տեղերը նոր անդամներով՝ լրացնելուց գետոց, պարտաւորացնել սինողը՝ վերաքննել այն բոլոր գործերը, որոնք և պատճառ եղան սինողի պրոկուրորի արած բաղոքներին»:

Միւս կողմից „Ս.-Պետերբուրգskia Սենատskia Վեճոմութիւն“ լրագրի № 82 (հոկտեմբ. 11) տպւած է հետևեալ բարձրագույն հրամանը: «Թագաւոր կալվարը ներքին գործերի մինիստրի ամենապատակ զեկուցման հիման վերաչ, սեպտեմբ. 19 ին ներկաւ 1891 թ., բարձրագույն հրամանել բարեհաճեց՝ հաստատել հայ-լուսաւորչական եպիսկոպոսներին՝ Արքատակէս Սեղրակեանին, Գրիգորիս Աղւանեանցին և Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեանին, որպէս Եջմիածնի հայ-լուսաւորչական սինոդի անդամներ»:

## ՕՐԵ ՅՈՒ

(ԵՍԵՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

1891 թ. Խելտեմբերի 1.

«Մուրճ» ի խմբադիրը հրաւիրեց ինձ իւր մօա և առաջարկեց գառնալ «Մուրճ»ի մշտական աշխատակից: Ընդ սմին նա ինձ նւիրեց մի ելեքտրական լապտեր՝ հայ կեանքի թէ հրապարակները թէ քունջու պուճաղները լուսաւորելու համար և մի հաստ պողպատեալ մուրճ ինձ վերապահելով սորա գործածութիւնը:

Եւ հա, ահա, «Մուրճ»ի զինւած աշխատակից, մինչդեռ մտադիր էի ինքս սեպհական մի լրագիր՝ «Ֆէլիքտօն» կամ «Դոլմա» անունով հաստատելու: Ազգայիսի մի լրագրի հրատարակութիւնը ինձ դաշտակղեցնում էր զրան խմբագրելու վերին ստոփանի հեշտութիւնը: Խմ հակառակորդների հետ հսչի մտնիլ ոչ տրամաբանական և ոչ առաւածաբանական բանակռիւների մէջ: Խմ ոչ բարեկամներին մասիսաբաէկանեի, խոկ իմ թշնամիներիս ծաղրու հանաքով կը պատասխանէի: Եթէ պատահէր լսել ու կարդալ ինձ համար դժւարահասկանալի մի միտք, ում և է մաքի վիհ թռիչքներ՝ ես կը համեմի աղղպիսիները ծաղրաշարժ խօսքերով ամրուի ծաղրածութիւններ և ծիծաղը լսելու համար, թէկուզ արած խզձի զկմ էլ մինի—խօմ չէ կարելի միշտ ձեռքերը սրտի վրաւ դրած խօսել:

Նիւթի պակասած ժամանակը պատմական երկար քննադասութիւններ կը թարգմանէի, արեմածած Արենելքից ամբողջ սիւներ կարտատպէի և անձազը ու ձիգ պատմակինուագրական նիւթեր կը զետեղէի լրագրիս մէջ հանդերձ պատմական զոկումնատներով:

Սակայն նոր պաշտօնս լանձն առնելով ես խոստանում եմ «Մուրճ»ի խմբագրին և ընթերցողներին լինել անաշառ և անկողմնապահ: Թէկ իսկն առած չեմ հասկանում այդ ինչպէս եմ անելու—միացն լսելը կը լինի անկողմնապահութիւն: Խոկ եթէ ես խօսում եմ՝ մի դատ, մի անձնաւորութիւն, մի կարծիք պաշտպանելով՝ չէ որ ես կողմնապահութիւն եմ անում: Խմ մեղքս չի լինիլ, ուրեմն, եթէ ես անկողմնապահ լինել ցանկանալով հանդերձ՝ դառնամ կողմնապահ:

1891 թ. Սեպտեմբերի 2.

ինձ ծանօթացրին «Վուրճ»-ի ապագայ հրատարակչի հետ. Ես նրան նկատեցի մեր լրագրութեան մի մասի գուշակութիւնները նորա կաշու դործարանի աջողութեան վերաբերմամբ:

Նա ինձ պատասխանեց՝ տեսնենք—եթէ կարողանանք մեր գործարանից գուրս բերել աշնակիսի ուժութաներ, որոնց հաստափնդութիւնը հասար լինի մեր մի քանի գործիչներին երեսի հաստափնդութեան—մեր աջողութիւնը ապահոված կը լինի և ոչ մի արտասահմաննեան Փիրմակից անգամ երկիւզ չը պիտի ունենանք:

1891 թ. Սեպտեմբերի 5.

Ազօր եղաւ առաջին հայ ներկալոցումը: Տիկ, Սիրանոշի դէքիւսի համար խաղում էին Հանրի VІІІ, Բոլոր օթեակները վավլում էին զատարկութեամբ:

Առաջին գործողութիւնից լետով, երբ դեռ առ Սիրանոշը չէր երեացել բեմի վրա, թատրոնի ալգում պատահեցի իմ ծանօթ օրիորդներից մէկին: Առորորական ողջունից լետով՝

—Շատ ժամանակ է որ վերադարձել էք քաղաք, հարցը իս, և ամարանոցից լետով ինչպէս էք դժուռմ քաղաքը,

—Ոչինչ, պատասխանեց օրիորդը:

—Եթէ չեմ սխալում, զուք Բորժում էիք և շատ ուրախ անց կացրած կը լինիք շագերի սէզոնը—եղանակը հիանալի էր այս ամառ և հասարակութիւնը բազմամարդ:

—Ո՞չինչ:

—Անհանգստութիւն չէր պատճառում ձիյլ երկախուզու անձնութիւնը, առասարակ աջողակ ձանակարհորդութիւն ունեցաք:

—Ոչինչ:

—Ինչպէս հաւանեցիք առաջին դործողութիւնը, տեսաք ինչպէս էր, լաւ էր...

—Ոչինչ:

Մի կողմից զրեթէ վստահ, որ միւս հարցերիս էլ այս զոհացուցիչ պատասխանը պիտի ընդունեմ—միւս կողմից վախնալով մի գուցէ ծանօթ օրիորդս պատկանում լինի «ոչինչականներին»—ևս փախաչ թատրոնի դահլիճը:

Երկրորդ գործողութեան մէջ իս տեսակ և լսեցի առաջին անգամ առ Սիրանոչին: Ի՞նչ սիրուն շարժւածքներ, ինչ անուշ լիզու և ինչ զուրկան ձախ:

1891 թ. Սեպտեմբերի 6.

Ուսու թատրոնի տկա տարւակ բէպէրտուարը հրատարակւած է տեղայան ուսու թերթեաւմ։ Անտ աղջ՝ լուգկացմած 13 պիեսներից՝

Елизавета, королева англійская, Маріонъ де Лормъ и Рогнѣда, тъ въ веравной борьбѣ за женскій вопросъ, чрезъ пороги къ счастью въ меблированныхъ комнатахъ. Уголокъ Москвы. нашли первую любовь въ жизни Илимова, Эрнани, Ры и Блаза и др., но собака садовника...

Հանաք չը կարծեր, ընթերցող՝ որւնք մի-մի վերնադրեր են։

1891 թ. Սեպտեմբերի 13.

Վրեկ երեկովեան Թուրեանի տռաջին զերիւտին՝ թատրոնի մի մասը և բոլոր օթեակները զարձեալ զատարի էին։ Դիու ժամանակ շատ ունինք, ասում են անվրդով հայ կանաքը և օրիորդները՝ սպասելով որ աշունքւակ տարագը լաւանւի և լիւանց շորերը պատրաստ լինեն։

Օհ, չանձնամոզով, մասնամոզով և վեհաժող—Ալլ Արարիչ<sup>1)</sup>։

Փորձւած զերասանից պէտք է և աւելի պահանջող լինել, և ես ասում եմ որ Թուրեանի շփոթութիւնը «Գոն-Գրիգորիօն» մէջ պէտք է զարդանալ cres-cendo—մինչդեռ հենց տռաջին գործողութեան մէջ նորա շփոթութիւնը զազամնակէտին էր հասել, խոկ «Գոն-Գրիգորի պանդոկում» տիկին։ Սելիքեանը իրաւունք ուներ մի խոկական չահելի սիրել։

1891 թ. Սեպտեմբերի 15.

Գնա մեռիր - արի սիրիմ՝ առւած է մեր հեղինակների համար էլ։

Յ. Պարոնեանի մեռնելուց լիսով մինք զնահատում ենք նրան և խնդրում նորա զրւածները։ Այս օրերը միան ձեռքս ընկաւ նորա «Մեծապատիւ մարացկանները» Թիֆլ. հակերէն գրքերի Հրատ. Ընկեր. հրատարակութիւնը։

Նթէ ընթերցողը սիրում է սրտանց ծիծագել, թող ձեռք բերի այդ գիրքը մի կուշտ ծիծագելու համար, ինչպէս որ այդ ինձ պատահեց գրքի սկզբից մինչև ծալքը կարդալու ժամանակ։

Գաւառից Պոլիս եկած Արխոզոմ աղալին հերթով ներկացանում են՝ հայ խմբագիրը, հ. քահանան, հ. բանաստեղծը, հ. փաստաբանը, հ. բժիշկը, հ. պատկերահանը, հ. սաբրիչը, հ. մոցիքուլը և ալին և ալին և մաւրացկանութիւն անում։ Հայ խմբագիրը առաջարկում է իւր լրագրից 15 №

<sup>1)</sup> Իմ գովազդութիւնը է հայս Օ, коммисія о создателя! որ և նւիրում է իմ հայ Թարգմանիչներին։

միանւագ և խնդրում պաշտպանութիւն, հ. բանաստեղծը խնդրում է տպել խր ճառերը և ոտանտորները, հ. փաստաբանը աշխատում է մի վեճ սարքել և իրան համար մի զործ ստեղծել, հ. բժիշկը զանդատում է իւրաքինների անտարբերութեամ վերակ և մեղաղբում օտարազգի բժիշկներին զիմելը և աղն և աղն: Խնչքան ծիծաղ, բաց և որքան դառնութիւն ալդ տեսարանների մէջ: Թէ և «Մուրճ»-ի դրախոսը ակնարկում է չափաղանցութիւնների մասին ևս կը լիշեցնեմ որ նոյն խակ Գոգոլի «Ծեռած հոգիները» կամ Սերւանտէսի Գոնկիլիսոտը դուրկ չեն ալդ պակասութիւնից:

1891 թ. Սեպտեմբերի 23.

Ակսօր «Արձագանք» ը տպել է մի աղլ, որով խռոտանում է լրացնել մեզ տարւակ վերջը պարտաւորեալ 52 №№-ը: Խակ ուր մնաց 1890 թ. բաժանորդներին խռոտացւած՝ զուտ բելիսրիստական բովանդակութիւն ունեցող զիրքը: Այդ երկու խռոտամներից<sup>1)</sup> որն էր կամ է լրագրական Փոլտէլ:

1891 թ. Սեպտեմբերի 25.

—Ի՞նչպէս հաւանեցիք Փրանսիական ցուցահանդէսը Մուկւակամ—հարցնում էի ևս անցեալները մի ծանօթ վաճառականի:

—Կար էլի:

—Խակ գոնզգոն շատրւանները:

—Շատ լաւ էին, միայն չ'իմացաւ թէ ինչպէս էին նրանց գոն տալիս: Ենքու հասկացող պէտք է անկեզտ ինչ կարելի է իմանալ:

—Ուրիշ ինչ հաւանեցիք:

—Վաֆլի շինող մաշինան, հասար 20 կոպէկավ օրական 800—1000 ռ. վաֆլի են շինում ձախում. զէ վաֆլի ամենքն էլ են պատրաստում, բայց թէ դրանց շինածը աւելի նուրբ ու բարակ է՝ եղ էր պատճառը, թէ ծախողները գրանցում ենկաներն էին—շիմացաւ:

—Լաւերն էին:

—Տեղավը մին՝ ոսկի են—ոսկի, մարդ էղպէս կնիկ ունենակ՝ էլ տպանքը մաղաղինում կը փաթի, կամ նիսխա կը կորչի՝ մէկին հազար կ'աշխատի: Ոչ թէ մեր կանաչքը՝ էս տուր ու էն տուր, էս առակ ու էն առակ—վաֆլահ, ինչ հաշւիս կը գար, դախլումը նստես ու փողերը մօդ անես:

Այնուհեան ծանօթս պատմեց կապովի օդապարիկի և ոռու աղգերի:

<sup>1)</sup> Խռոտանալ նշանակում է բառ-վրքը համաձայն խօսք տալ: Բայց թէ տւած խօսքը ունակ է կատարել՝ այդ կը լինի ժողովրդական հասկացողութիւն, և կարելի է չը կատարել՝ այդ կը լինի ակադեմիական ըմբանում:

մասին, որոնք նմանապէս խելքից էին հանել հասարակութիւնը. Ես համոզւեցաւ որ հաջ վաճառականը միայն ձեռնտու բաներին է լաւ ասում:

Ես պատահեցի նմանապէս մի հաջ օրիորդի և մի ուսանողի, որոնք նոր էին վերադարձել Մոսկվայից, և երկուսին էլ հարցեր առաջարկեցի ցուցահանդէսի մասին:

Նե պատասխանեց՝ ինչ որ կը պատասխանէր Եւալի թոռներից ամսն մէկը՝ ամենահետաքրքրականները ակնեղէններն էին—ուրիշ աչքի ընկնող բան չը կար բացի 2—3 թանգապին հագուստից:

Իսկ երիտասարդը գովից պատկերների բաժինը և մի քանիսը սքանչելի գոտած լինելով՝ մանրամասնութեան մէջ էր մտնում...

1891 թ. Սեպտեմբերի 26.

Ինչքան բախտաւոր էք դուք, դաւառացի ընթերցող, Թիֆլիսում ակտիմ փալտի սէզոն է. ուղում եմ ասել ձմեռւայ համար վաստի պաշար առնելու ժամանակ է: Առաւոտւակ 6 ժամից սենեակիս մէջ լուսում են վայրենի աղաղակներ, վայրենի թուրքերի և զանազան լեռնցիների. Նրանք գոտում գոչում են իրար վրայ, մուշտարիների վրայ և ամենի վրայ Բախտաւոր է նաև ով դրացի չունի—ալսորւակ տեսարանը զեռ մէկ դրացունս էր: Միթէ ժամանակ չէ մտցնել քարածուլսի գործածութիւնը տնակին տնտեսութեան մէջ:

Գիտք, ընթերցող, ում անունը անբաժան է քարածուլսից: Ո՞ր հրապարակախոսն է նպաստել քարածուլսի շահագործութեանը մեղանում: —Պր. Նիկոլաձէ:

Իւր հիմնած և ձեռք բերած երկու ռուս լրագրերում նա արծարծում էր զլասաւորապէս քարածուլսի հարցը, նա հրատարակում էր իւր ճանապարհորդութիւնները, իւր ալցելութիւնները Քրանսիացի մինիստրներին և դրամատէրներին, ապացուցանում էր քարածուլսի հանքի անհաշւելի հարստութիւնը, օժանդակ երկաթուղիների անհրաժեշտութիւնը, նաւթի պահանելը ներկալում և ապագալում և ազն և ազն. ալնքան աշխատեց որ վերջ ի վերջու զլուս բերեց 1.200,000 ռ. մի ընկերութիւն հաների աջակցութեամբ (և կան միամիտներ՝ որոնք կարծում են թէ հաները ոչինչ բանի պէտք չեն). բայց հէնց որ Նախշիրի քարածուլսի ընկերութիւնը հաստատւեց և ընտրենցան դիրեկտորներ, կառավարիչներ, հաշւաղահներ և ազն, հէնց որ ակցիաները բաժանեցան—պր. Նիկոլաձէն չը սպասելով նոյն իսկ տարւաւ վերջին՝ ծալսեց իւր լրագրիրը:

—Ի՞նչու: Ով զիտէ՝ գուցէ հէնց հիմայ քարածուլս դառած ուսումնականով՝ վրայ հանգուստանալով՝ մտածում է մի նոր ընկերութիւն կազմակերպելու:

1891 թ. Սեպտեմբերի 28.

Չեր ձեռքը ընկել է Վիճնակի Մխիթարեան տպարանից լոյս աեսնող, տարեկան 10 ֆր. կամ 4 ռ. արժեցող բարչական, ուստինական և արեսագիտական «Հանդէս Ամօրեալ»:

Գուցէ պատւելի միարանութիւնը ի հկատի ունէր բարուագիտութիւնը, սրովհետեւ բարուական լինել չեւ որ պարտական է ամեն մի թերթ և ամսագիր: Զը նաև լոլի բարուականի առաջ զնելուն՝ ալդ բաժինը (իմամիպականը) 4—5 երես է բոնում, արեսագիտականը աւելի քիչ՝ 1—2 երես, բայցի զրանից քաղաքական տեսաթիւնը 1—2 երես ու ալլ և ալլ նորալորք՝ 1—3 երես, ուստինական մասին մնում է 20—25 երես, որ ասել է թէ ալս ամսագիրը զլիսաւորապէս ուստինական է և, իմ համեստ կարծիքով, ալդ նեղ շրջանակի մէջ մնալով՝ նա կարող էր լինել լուրջ և զուտգիտական ամսաթերթ հաջկաբանութեան նւիրւած, Սակայն ալժմեան ձեզ և ծրագիրը նկատելի են կացուցանում, որ պատւելի միարանութիւնը միաք ունի եզել չարմարւել ընթերցողների մեծամասնութեան ճաշակին և ալդպիսով իւր ամսագիրը դարձրել է պուղինդի պէս մի բան:

Միթէ ալդ հարուստ միարանութիւնը, որի տպարանում տպագրւում են 19 պարբերական հրատարակութիւններ զանազան աեսակի և որն ունի 37 լեզւավ (նաև ու քառեական բնագրին) տառեր—ալգորիմի մեծահարուստ (և ոչ խեղճ կշջմածնի պէս) միարանութիւնը չի կարող լատկացնել ընդ միշա մի գումար, մեր ասածի պէս, մի զուտ զիտական հրատարակութեան համար:

Ես չը գիտեմ ով ինչի համար, բայց ես ձեռքս ևմ առնում ալդ ամսագիրը և կարդում միմիակն վերջին երեսը ուր զրւած է լինում մի հունգարերէն թերթի բովանդանութիւնը:

Հայ ընթերցողունենելից քանիսը զիտան ալդպիսի մի ամսաթերթի գոլութեան մասին:

Աքո, զարմացած ընթերցողունի, հաների մասին հունդարերէն լեզով մի ամսաթերթ: Ես չեմ կարող երաշխաւորել ալդ ամսագրի լաւ խմբագրութեան մասին, (որովհետեւ երեսի ես էլ ձեղ նման հունդարերէն չը գիտեմ), բայց և ամսագիս ահա թէկուզ մի համարի բովանդակութիւնը: Ահա ալն՝

Գրիգոր Սեմակեան—Սրբոն Գրիգորի Նուսաւորչի վարքէն:

Տէր Անտօն Մոլնարեան—Ազաթանգեղոս հայ պատմագիրը:

Յակոբ Զիլինկարեան—Լիսագրագիտի մը չոբելիանը:

Տէր Անտօն Մոլնարեան—Գլխաւոր Վարժոց ի Երևան-Հայաքաղաք:

Խ. Սոնկողեան—Հովերէն լատիներէն արձանագրութիւնը Քիղիսարէթուպոլիս (մեր Գանձակը չը կարծէք!):

Ու—Կարլոս Վասնուի հայոց վրա և

Ա. Ք. — Մեր պատգամաւորը խորհրդանոցին, մատենագրութեան մէջ  
ու տանը:

Յակոբ Մարկովիչեան — Խոսրով Ա.  
Մանրալուրք՝  
Հայ գաղթականութիւնն ի Հնդկաւ:  
Ագուլիսի հալերը:  
Զւարծալի խորտկացուցակ:  
Մատենագրութիւն, գեղարքուեամ՝  
Նրաժշտական կտոր չորինող:  
Կոստանդինոպոլսոց լրագիրները:  
Տնտեսական կեանք:  
Արևելեան պարտիզանութիւն:  
Փոքրասիական երկաթուղի:  
Ի՞նչ նոր բան կայ հաչոց վրա՞՝  
Գաղթականութիւն վԱմերիկաւ:  
Լուսինեան գերգաստանը:  
Սորանից երեսում է որ ալս ամսագրի նպատակն է ծանօթացնել հուն-  
գարական հալերին՝ իրանց անցեալի և ներկալի հնատ:

1891 թ. Սեպտեմբերի 30.

Ի՞նչով են զբագւած «միր քաղքի» ձախնաւորները: Ձուր մաղելով և  
ծիծելով: Դեռ լսու է եթէ մաքրեր Աւչալակի ջուրը՝ այդ էլ չը կար Շա-  
բաթը մի անգամ հաւաքւելով վիճում են անվիճելի բաների մասին: Ուսդ-  
րավայի ծառաւողներից մինչ մի ապսակ է տալիս հրապարակօրէն մի ու-  
րիշին և անա տեղի են ունենում արձակումն, խղճահարութիւնն, նորից  
ընդունելութիւնն, անվիրջանալի ձօքուն ներ, արձանագրութիւններ և ազլն,  
կարծես թէ ձախնաւորները և Ուսդրաւան իրանք ոյեար է դատաստան կա-  
տարեն դատաստան ունեցած երկրութեամբ:

Ի զեզ՝ ինչ բանի համար են լատկացնուում քաղաքի հրապարակները:  
Օտար երկիրներում չը զիտեմ՝ բայց մեր քաղաքում հրապարակների վրա  
քարեր են կոտրատում և մանրացնում քաղաքակին պիտուքների համար  
վաղ առաւոտակ ժամը հնդից կամ վեցից:

Եւ զեռ ասողներ կան որ մեր քաղաքակին դուման հոգս չէ տանում  
քաղաքի բնակիչների առողջապահութեան մասին: Եթէ իրաւ, այս մտքով  
դրդւած է անուում այդ կարգադրութիւնը, չէ որ աւելի հետեղական  
պէտքէ լինել և քարեր կտրատողներ նստացնել նաև բոլոր փողոցների  
երկարութեամբ և բոլոր տների առաջ, որպէս զի ամենքն էլ օգուտ քաղեն  
այդ լարմարութիւններից և վաղ զարթնելով՝ արշալուսակին պատվներ  
անեն առողջապահական կանոնների համեմատ:

1891 թ. Հոկտեմբերի 1.

**Ալոօր կարդացի որ պ. Մինաս Գերազ իւր չորրորդ դասախոսութիւնը կարդաց Hastings-ում անգլիացի հոծ հասարակութեան առաջ, խօսելով հայերի՝ պատմութեան, կրօնի, լեզուի, գրականութեան և այլ բաների մասին:**

Ես հաւասացած եմ որ եթէ ալ պրօֆէսորը նոյն նիւթի մասին կարդար թէ Պողիսում թէ Թիֆլիզում—ունկնդիրները կը լինէին ինքը և մի քանի հատ իւր բարեկամներից:

1891 թ. Հոկտեմբերի 2.

**Թիֆլիզում մտադրութիւն կաչ հաստատել հասցէների գրասենեակ (աճեսնայ շտու): Շատ ժամանակին է. մանաւանդ որ հաչ դերասանները ալժմ բանի են և կարծիս թէ քիչ քիչ մոռանում են իրանց հին և անվարձ պաշտօնը:**

Ընթերցողը իգուր է զարմանում. դեռ երեկ՝ եթէ մէկին հարկաւոր էր մի հայի (այն էլ հարուսափ) հասցէ իմանալու, զիմում էր դերասանիւ Սոքա պարտաւոր էին իմանալ և իմանում էլ էին բոլոր հայերի հասցէները, իբրև առմսերի ցրւիչներ հաչ ներկալացումների համար:

1891 թ. Հոկտեմբերի 3.

**Ալոօրւակ հայոց ներկալացումը կրկին առիթ և տալիս խօսելու մեր հայերէնագիտութեան մասին: Ռուսաց առածը եակօթ ոոթ, տակօթ և որի պահանջմանը պահանջմանը հայերէնի՝ գերասանին նակիր — ծուխը ճանաչիր:**

**Մեր դերասանները մեր մսից և մեր ոսկորից են:**

Պ. Թուրեանը մտածում է տաճկերէն և դեր կատարելիս՝ ճանկարծ միան է գալիս տաճկերէն ոճը — նա կանգ է առնում որպէսզի սիսամամբ հաչ բեմի վրա տաճկերէն չ'արտասանի և ասկա շարունակում հայերէն թարգմանութիւնը... Իսկ մեր կրիտիկոսները ափառալով հաղորդում են իրանց կառկածը Թուրեանի կակագիւլու մասին:

Օր. Մելիքեանը մտածում է վրացերէն, և դեռ նոր է սկսում ընտելանալ հաչ աշխարհաբառին:

**Նույն խակ պ. Պետրոսեանը մտածում է ոռւսերէն:**

Հաչ լեզուն աղաւազւած, խառնավինթոր մի բան է ներկալանում քեմի վրա: Այս անհոռնի երեսովը միայն այն ժամանակ գուցէ վերանակ, երբ մեր դերասանները մալքենի լեզուն կատարելապէս տիրանալու համար՝ նաև կուանքի մէջ խօսեն այդ լեզուով և լրջօրէն հետեւն ամբողջ հայոց գրականութեանը և ոչ միայն իրանց նւիրւած մի քանի տողերին:

## 1891 թ. Հոկտեմբերի 4.

Զարմանք բան, Ով որ հաշիւ պէտք է ներկասացնի, օրինակ մեր ու-  
սումնարանների հոգաբարձուները, երեցփոխները և համազական գումարներ  
շահեցնողները—սրանք լուռմ են և խուռ ձևանում երբ հաշիւ է պահանջ-  
ւում սրանցից:

Իսկ հաշիւ տալիս են աճնպիտները, ումնից հաշիւ պահանջող չկա;  
և իսկի իրաւունք էլ չկայ պահանջելու:

Պ. Երիցեանին անշուշա լազոնի է թէ առաջինների և թէ երկրորդների  
ցուցակը: Սակայն վերջի տեսակին պատկանողների մի քանիսի անուն-  
ները ես ինքս լիշում եմ:

Պր. Լ. Տիգրաննեանց իւր «Առողջապահական թերթ»-ի վնասի հաշիւը  
ներկալացրեց հասարակութեան, պ. Ա. Յովհաննիսեանը իւր «Փորձ»-ի հա-  
շիւը, պ. Զ. Մանեանց իւր «Փարոս Հակաստանի»-ի հաշիւը և վերջապէս  
ապօք նոյնը անում է պ. Ս. Գուլամիրեանցը, Պետերբուրգի «Արաքս»-ի  
խմբագիր-ծրատարակիչը:

Այս բոլորի մէջ մի զանազանութիւն կաէ միաւն՝ առաջինները հա-  
շիւը տւին և փակեցին, իսկ վերջինս հաշիւ է տալիս չարտեակելու լո-  
սով: Ապրոզը կը տեսնի:

Տեսնենք նաև «Մուրճ»-ի ապագան հրատարակիչը երբ է տալիս  
իւր վնասի հաշիւը: Այդ էլ ի հարկէ միաւն ապրոզը կը տեսնի:

## 1891 թ. Հոկտեմբերի 24.

Գումական օր. «Արձագանք»-ի գոլութեան միակ աղբիւրը՝ «Արևելք»  
լրագիրը դադարեցրին անպազման ժամանակավ. և այդ թօթաբեր լուրը պա-  
րունակող «Արձագանք» ի համարը տեղն ու տեղը կիսւեց (տես նորա № 36):

—Հաէ թատրոնի գործը հիւնալի է գնում: չորս կողմը թարգ-  
մանութիւններ են անում, փոխադրութիւններ են շինուամ և նոյն իսկ  
ինքնուրուն դրամաներ ստեղծւում: Բանը անտեղ է հասել որ նոյն ինքն  
հնախօս, հնագէտ, հնաբան պ. Երիցեանը լուս աշխարհ ընծացեց մի արար-  
ւածով վօդեւիլ-կոմեղիա իւր սիրած հին գրքերի մի վաճառողի կեանքից:

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մեծապատիւ խմբագիր.

Պր. Ա. Լիսիցեանը «Տարագ» շաբաթաթերթի 34—37 համարներում քննկով պ. Ա. Եազուրեանի աշխատասիրած «Հայերէն-ռուսերէն բառարանը» իմ մասին ես, իբրև այդ բառարանի լառաջաբանում լիշտակւած աշխատակցի՝ հետեւեալ նկատողութիւնն է արել.

«Մեզ համար խիստ անախորժ երեսիթ է, որ սորան (բառարանին) աշխատակցել է մի անձ, որ ազայիս թէ անպէս մեր հասարակութեան մէջ հայագէտի անուն է վաչելում և որ ինքն վերին աստիճանի արդարացի կերպով դատապարտել է պ. Ա. Յովհաննիսեանի ռուսերէն-հայերէն բառգիրքը. հասարակութիւնը իրաւոնք ունի չը ներել պ. Մալիսասեանի այս կերպ ընկերասիրութիւնը»: (Տարագ», 1891 թ., № 37, երես 555):

Որովհեան այդ նկատողութիւնը, որչափ կարելի է մակարերել, իմ բարբական կողմն է չօշափում, իբրև թէ ես պարտաճանաչ և բարեխիղճ եղած չը լինիմ պ. Ա. Եազուրեանի բառարարանին աշխատակցելիս, կամ թէ ընկերութեան զաղապարփն զաւաճանած լինիմ՝ ուսող այդ բարովական արատը ինձանից հեռացնելու նպատակով ստիպւած եմ այս երկու տող բացատրութիւնը զրել, որ ինդրում եմ զետեղէք «Մուրճ» ի մէջ: Եախ և առաջ, լոկ արամաբանօրէն զատելով՝ հայ հասարակութիւնը այն ժամանակ միան կարող է ինձ չը ներել՝ եթէ ես ի նքս մի ուսուսերէն: Հայերէն բառարան կազմեմ և նորա մէջ անեմ նոյն սխալները, որոնց ես դատապարտել եմ Ա. Յովհաննիսեանի բառարանում:

Երկրորդ՝ հայ հասարակութիւնն ինձ ներելու կամ չը ներելու իրաւոնք և ընդհանրապէս որ ե է հաշխ չէ կարող ունենալ այս բառարանի վերաբերութեամբ՝ երբ նորա վերաէ դրւած է հեղինակի անունը և երբ հեղինակն լառաջաբանում լաւնում է հրապարակաւ, թէ «իմ աշխատակիցները հեռու են պակասաւոր կողմերի պատասխանատութիւնից»: Նոցաւարածից ես աչն եմ քաղել ինչ որ ինձ հաւանական է թւել: Ուստի վերջնական պատասխանատութիւնը մի մի աչն ինձ վերջնական պատասխան իւանաւութիւնը: (Յառաջ. VI): Կարծեմ շատ պարզ է (և բնական միտնդամաչն), որ հասարակութիւնը հաշիւ կարող

է ունենալ միայն հեղինակի հետ և ոչ այն անձերի, որոնց անուններն փշտած են լառաջարանում և կարող էին փշտած չը լինել, ինձ հետ հաջիւ ունենալ, ներել կամ չը ներել ինձ՝ կարող է մի աչն հեղինակը, իսկ նա ինձ հետ հասարակութեան առաջ հաշիւ է տեսնում՝ շնորհակալութիւն լայտնելով; Եւ հասարակութիւնն ու քննադատը միայն աչսքան գիտեն պաշտօնապէս, որ ես աւդ բառարանին շնորհակալութեան արժանի ծառալութիւն եմ մատուցել:

Բայց հասարակութիւնը և քննադատը կարող են զարմանալ և տարակուոել, թէ ինչպէս է եղել, որ ես, լեզուի ու բառարանագրութեան ծանօթ մէկը՝ (ինչպէս զրում է պ. Ս. Լիսիցեան), խորհուրդներ եմ տալիս կ. Եազուբեանի «բառարանի ծաւալի, զիրքի, ուղղութեան և այլն մասին, կարողում եմ բոլոր նիւթը և տեղ-տեղ անում եմ իմ նկատողութիւններս»<sup>1)</sup>, և այնու ամենաճիւ բառարանում պատահում են թերութիւններ, որոնք չը պէտք է լինէին իմ աշխատակցութիւնից լետու:

Այս զարմանքը, որ շատերն ես ինձ լայտնել են բերանացի՝ կարծեմ կանհետանայ՝ երբ հասարակութիւնն ու քննադատը նկատեն հետեւալ կէտերը.

1) Պր. Ս. Լիսիցեանի ցուց տւած թերութիւններից զլեթէ կէսը ևս չեմ համարում թերութիւն, մինչև իսկ մի քանիսը համարում եմ առաւելութիւն բառարանի համար: Ուրեմն ես չէի կարող ուղղել այն բանը, որ քննադատը թերութիւն է համարում, իսկ ես՝ ոչ:

2) Ես կարդացել եմ բայն բառարանի նիւթը միայն (առանց լառաջաբաններին և համարութ քերականութեան), Ուրեմն լառաջարանների և քերականութեան նկատմամբ ես ոչ մի պատասխանաւութեան չեմ կարող ենթարկել ոչ սքի կողմից:

3) Յանձն առնելով կարդալ բառարանի նիւթը, տպարանին լանձնելուց առաջ ես խոստացել եմ իմ ընկերիս, կ. Եազուբեանին՝ թեթև կերպով նրան աչքէ անցնել և նկատողութիւններս անել, և ոչ թէ մանրամասն կերպով բննել և ուղղել, որ ես չէի կարող լանձն առնել, քանի որ ժամանակս չէր ներում: Ուրեմն, թեթև կերպով նայելով, ես ընդհանրապէս կոկել եմ բնագիրը և հասցընել մի որոշ աստիճանի կատարելութեան: Չեմ ուրանում, որ եթէ սորա համար զործ դրած ժամանակիս կրկնապատիկը կարողանակի գործ դնել և առելի մանրամասն քննել և ուղղել՝ բառարանում աչժմ եղած թերութիւններից շատերը թերեւ չը լինէին, Բայց աչ բանը ես չէի խոստացել հեղինակին, որովհետեւ չէի կարող:

4) Իմ նկատողութիւններս պարտաւորիչ չէին հեղինակի համար<sup>2)</sup>.

1) Յառաջ. Վ.

2) «Հոյօս Օօօզրեալ» լըագրի օդոստուի համարներից մէկում տպւած էր մէ լուը, եւը թէ կ. Եազուբեանի բառարանը լոյս է տեսնում իմ խմբագրութեամբ»

Նա իմ «արածից այն է քաղել, ինչ որ նորան հաւանական է թւելու Ռւրեմն կարող են բառարանում լինել աճապիսի թերութիւններ ես, որոնց ես նկատած լինեմ իբրև թերութիւն՝ բայց հեղինակն հաւանութիւն տւած չը լինի նրանց ուղղելու:

Այս համառօտ բացարութիւնը—որչափ ներում էր խնդրի փակուկ գրութիւնը—լոյս ունիմ կը փարատէ հասարակութիւնն և պ. Լիսիցեանի զարմանքն, բայց ոչ թէ ինձ կարժանացնէ նոցա ներողամտութիւնն, որովհետեւ ես ներւելու պէտք ունեցող ոչինչ չեմ արել և ներելու կամ չը ներւելու իրաւասութիւնը այս խնդրում չէ պատկանում հասարակութիւնն և քննադատին:

## ԱՏ. ՄԱԼԻԱՍԵԱՆՑ:

15 Հոկտեմբերի, 1891 թ.

Թիֆլիս:

---

Կ. Խաղուրեանի այդ լրի գեմ՝ գրաւոր հերքում՝ ներկայացնելով՝ խնդրել է տպել նորանից յետոյ ես ինքու ել յասկագիւ խնդրեցի պ. խմբագրից, որ Կ. Խաղուրեանի հերքումը տպէ. Նա իսոստացաւ տպէլ:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԻՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՈՒՄՆԵՐԻ;

Քաղաքական աշխարհը այս բոպէին, սկսած երկու ամսից ի վեր, այսպէս է բաժանւած՝ մի կողմից Գերմանիայի, Աւստրօ-Ռւնգարիայի դաշնակցութիւնն է, որի մէջ է նաև Խառլիան, երկրորդ կողմից, սկսած Կրոնշտատի նաւային ցոցերից՝ Ֆրանսիան է Ռուսիայի հետ, իբր Հակակշիռ ոյժ եռապետեան դաշնակցութեան. երրորդ կողմից Անգլիան է, որը մի առանձին զիրք է բռնում, մի ձեռքով միացած Խոալիայի հետ, ընդում Ֆրանսիայի, միւս ձեռքով եռապետեան դաշնակցութեան հետ, ընդում Ռուսաստանի, բայց և այնպէս պահպանելով իւր ազատութիւնը, որպէս մի տէրութիւն, որը շահեր ունի երկրագնդիս բոլոր կէտերում թէ ցամաքների և թէ ծովերի վերայ: Ֆրանսիայի և Ռուսաստանի բարեկամութեան պաշտօնական հաստատումը երկու ամսից ի վեր՝ ահա ամենազլիսաւոր իրողութիւնը, որ կատարւել է քաղաքական աշխարհում: Մեր ընթերցողների համար մի նորութիւն չէ որ այդ բարեկամութիւնը արդէն տարիներով նախապատրաստ ում՝ էր վերջին տարիներս ամեն կերպ՝ թէ մամուլի մէջ, թէ ընկերական ցարաբերութիւնների մէջ, թէ քաղաքական ցարաբերութիւնների մէջ: Բայց այդ բոլորը իւր վերջնական սրբազործումը ընդունեց միայն Կրոնշտատում, Փրանսիական նաւային էսկազրի ընդունելութեան ժամանակ Ռուսաստանի կողմից: Եթի Փրանսիական ազգային „Marseillaise“ հիմնը նւազելիս՝ ռասց թագաւոր կայսրը սոի կանգնեց՝ դորանով պաշտօնապէս վերացաւ այն խոշնդուրը, որը ներքին քաղաքական պատճառներով խանգարում էր Ռուսաստանին այս քսանում մէկ տարում՝ մերձենալ Ֆրանսիին: Եւ պէտք է ասած, Գեր-

մանիան միշտ մեծ յոցեր էր դնում; որ Խուսաստանը երբէք հեռու չի տանիլ իւր բարեկամութիւնը հասարակապետական Ֆրանսիայի հետ, որպէս և յոցեր էր դնում թէ հասարակապետական Ֆրանսիան երբէք հեռուն չի տանիլ իւր բարեկամութիւնը միապետական-առուտօկրատական Խուսաստանի հետ։ Այդ յոցերը սխալ գուրս եկան, թէև անհիմն չէին։ Եւ իրօք, Ֆրանսիայի և Խուսաստանի ներքին քաղաքական կազմակերպութեան մէջ եղած մեծ տարբերութիւնն էր պատճառը, որ նոցա մէջ ամբողջ քսան ու մէկ տարի չէր կարողացել կայանալ մի ամուր դաշնակցութիւն, չը նայած որ աւելի քան մի անգամ նոքա իրար լնկեր են ճանաւել լնդհանուր հակառակորդի՝ Գերմանիայի դէմ։ Մենք կը լիշենք մեր ընթերցողներին միայն երկու նշանաւոր դէպքեր անցեալից։ 1875 թւականին Գերմանիայի և Ֆրանսիայի յարաբերութիւնները այնպէս լարւեցին, որ կարծում էին թէ Գերմանիան նորից պատրաստում էր պատերազմ յայտնել Ֆրանսիային։ Բայց ճիշդ է թէ ո՞չ՝ թէ իրը Բիսմարկը սպառնացել էր մի նոր պատերազմով (մենք տրամադիր ենք կարծելու որ այդ սպառնալիքը լուրջ չէր), բայց միանգամայն հաստատ է, որ այդ ժամանակ Խուսաստանը, իշխան Գորչակովի՝ իբր արտաքին գործերի այն ժամանակայ մինհստրի բերանով հարկ համարեց յայտնել Գերմանիային, որ ինքը, Խուսաստանը, մի երկրորդ պատերազմ Ֆրանսիայի դէմ թոյլ չի տալ և որ նա ստիպւած կը լինի միջամտել յօդուա Ֆրանսիայի։

Մի երկրորդ դէպք պատահեց 1879 թւականին, Եերվինի կոնդրէսից-մի տարի յետոց, որից, որպէս ամենքին յայտնի է, Խուսաստանը վերին աստիճանի տժգոհ գուրս եկաւ այն մեծ փոփոխութիւնների համար, որոնց այդ կոնդրէսում ենթարկւեց ուուս-թիւրքական Սան-Ստեփանօի հաշտութեան գաշնը։ Խոկապէս այդ կոնդրէսից յետոյ է սկսւում լարւածութիւնը Խուսաստանի և Գերմանիայի քաղաքական յարաբերութիւնների մէջ, և իշխան Գորչակովը, այժմեայ արտաքին գործերի մինհստր պ. Գիրսի նախորդը, Գերմանիայի Վիսբադէն քաղաքում եղած ժամանակ, ֆրանսիական Soleil լրագրի խմբագիր պ. Հերւեին ասաց այս խորհրդաւոր խօսքերը՝ Soyez fort, այսինքն դուքք ֆրանսիայիներդ՝ եղէք ուժեղ! Իշխան Գորչակովի այդ խօսքերը, որոնք իւր ժամանակին ամբողջ աշխարհի լրագիր-

ներում պտոյս արեցին և որոնց ցիշատակը տարիներով չը ջնջւեց, առաջին մեծ յայտարարութիւնն էր Ռուսաստանի պատրաստականութեան՝ Ֆրանսիայի հետ միաբանութիւն հաստատելու՝ քաղաքական գալիք փոփոխութիւնների համար:

Չը նայելով այդքան բացարձակ յայտարարութիւնների յօդուա Ֆրանսիայի և ընդդէմ Գերմանիայի, Գերմանիան սակացն, կայսր Վիլհելմ I և իշխան Էիսմարկի ժամանակ, հակառակ Պորչակովի տրամադրութիւններին, այնքան զրաւեց հանգուցեալ կացոր Ալեքսանդր II-ին, որ նոյն իսկ կարելի եղաւ Ռուսաստանը մտցնել այսպէս կոչւած երեք-կայսերական միաբանութեան մէջ, բաղկացած Գերմանիայից, Աւստրիայից և Ռուսաստանից: Այդ նշանակում էր փորձ փորձել հաշտացնել Ռուսաստանը Աւստրիա-Ռուսգարիայի հետ, որովհետեւ Ռուսաստանի ձգուումները դարձրած են դէպի Բալկանեան թերակղզին, այսինքն այնտեղ, ուր Աւստրիա-Ռուսգարիան է ձգուում գերակշիռ նշանակութիւն ունենալ: Բայց անհաշտելին հաշտացնել անհնարին եղաւ, այնպէս որ հանգուցեալ Վիլհելմ I-ի և Ալեքսանդր II, որպէս նաև յետոյ ներկայ Ալեքսանդր III կայսրների հետ պայմանաւորած տեսակցութիւնները՝ բարեկամութիւն հաստատելու համար՝ դրական հետեանքներ չունեցան, և Ռուսաստանը դուրս եկաւ երեք-կայսերական միաբանութիւնից, դեռ ևս ուժունական թւականների սկզբներում, երբ արդէն յայտնի եղաւ 1879 թւականին Գերմանիայի և Աւստրիա-Ռուսգարիայի մէջ զրաւորապէս կապած դաշնակցութեան նախ իմաստը, ապա և բնագիրը, որ յետոյ նաև յայտարարւեց ընդհանուր զիտութեան համար: Ռուսաստանի հեռանալը տեղիք տեղեց Գերմանիային և Աւստրիա-Ռուսգարիային իրանց մօտեցնել ետալիային, որը ընդունեց առաջարկւած պայմանները և որի հետ միասին կազմեց այսպէս կոչւած երեքպետեան դաշնակցութիւնը, որը արդէն եօթներորդ տարին է որ գոյութիւն ունի և ներկաց տարւայ սկզբներում նորողւեց կրկին վեց տարով:

Ինչ դրութիւն տաեղծեց Ռուսաստանի համար այդ իրողութիւններով: Այն, որ Ռուսաստանը շառանձնացաւ, որովհետեւ, որքան էլ նա ցանկանում էր մի դաշնակից գտնել, բաւիս բուն նշանակութեամբ՝ նա այդպիսին չէր գտնում մեծ պետութիւնների մէջ: Մի նոյնապիսի առանձնութեան մէջ էր գտնուում նաև Ֆրանսիան

գեռ ևս 1871 թւականից ի վեր, բայց այդ երկու մեծ պետութիւնների իրար ձեռք մեկնելու համար պակաս էին մի քանի կարեւոր պայմաններ։ Նախ որ այդ երկիրներից մեկը հասարակապետական է, իսկ միւսը՝ մարմնացումն է զրու միապետականութեան։ Արդ, միջին Եւրոպացի, զլիաւորապէս Գերմանիայի և Աւասրիա-Անգլիայի քաղաքական մամուլը, որպէս նաև իշխան Բիսմարկը միշտ կարողացել էին օգուաւ քաղել այդ հանգամանկքից և ազդել Ուուսաստանի վերաց, ցոյց տալով այն վտանգը որ կարող է սպառնալ միապետական Ուուսաստանին՝ մի հանրապետութեան բարեկամութիւնը։ Բայց այդ ինտրիգան յաջողութիւն չէր կարող ունենալ, իմայն Ֆրանսիայի ներքին քաղաքական դրութիւնը այնպէս չը լինէր, որ իրօք ամեն մարդու կարող էր մտածել տալ թէ ինչ է լինելու նորա նոյն իսկ ամենաամօտ ապագան։ Այդ զրութիւնը այնպէս էր, որ չը նայած ակնյայտնի յառաջդիմութիւններին գրեթէ բոլոր ասպարէզներում, այնուամենանիւ նա, այդ ներքին քաղաքական դրութիւնը, չէր թոյլ տալիս որ մի որ և իցէ մինիստրութիւն մի քանի տարի դիմանար և չէր թոյլ տալիս որ մի որ և իցէ կուսակցութիւն այնքան ոյժ զգար, որ ապագան իրանը համարէր։ Թէպէտ և ուշի ուշով Փրանսիական վերջին քսանումէկ տարւայ գործերին հետևած մարդիկ չին կարող չը տեսնել, որ այդ մինիստրական շարունակ փոփոխութիւնների արտաքինի տակ մեծամեծ գործեր են կատարուամ, բայց և այնպէս այդ չափազանց յաճախ փոփոխութիւնները վատ տպաւորութիւն էին անում և իմացնել էին տալիս այն ներքին քաղաքական—կուսակցական երկպառակութիւնները, որոնք ջլատում էին Ֆրանսիայի հասարակապետութեան ոյժերը և նումացնում Փրանսիական կառավարութեան պրեստիժը մանաւանդ օտարների և այն էլ՝ միապետական մինիստրութիւնների աւելացականութեանը սովոր ազգերի առաջ։

Ահա այն պատճառները, որոնք խանգարում էին Ուուսաստանին քաղաքական մօա բարեկամութիւն հաստատել Ֆրանսիայի հետ, մասնաւանդ որ ինքը Ֆրանսիան էլ ծանրակշիռ պատճառներ ունէր այդքան մօա բարեկամութիւնը գոնի առաջժմ չուզենալու։ Բայց եռապետութեան ոյժի առաջ միայնակ մնալ անհնարին էր, որէոք էր Ֆրանսիայի և Ուուսաստանի մէջ եղած խորթ յարաբերութիւնները

Հարթել և ապագայ զաշնակցութեան համար հող պատրաստել: Այդ գործին ձեռք զարկեցին ոչ միայն երկու երկրի կառավարութիւնները, այլ և երկու ազգերը: Բարեկամութեան ցանկութիւնը իրան զգացնել տեսց երկու ազգերի քաղաքական մամուլի մէջ. միւս կողմից ուսաց բելլետրիստիկան սկսեց մուտք գործել Ֆրանսիա, ուր մինչև անգամ ուսաց նշանաւոր վիստասանների հետ ծանօթութիւնը ոչ միայն գրական, այլ և քաղաքական մեծ անհրաժեշտութիւն համարեցին: Անցեալ տարիները ինչ ֆուրոր էր անում՝ այդ գրական շարժումը ամբողջ Եւրոպայում՝ այդ յայտնի է ամենքին. և որովհետեւ այդ շարժումը քաղաքական աստան ունէր, զորանով բացարուում է նաև այն չափազանց մեծ ոգեսորութիւնը, որին հասան Փրանսիացիք այդ առիթով: Այդ ոգեսորութիւնը սկսեց տարածւել առհասարակ ամեն բանի վերաց, ինչ սատկան անուն է կրում, և այսպիսով սկսեց Ֆրանսիայում այն ինչ ոսասիրութիւն են անւանում:

Զուգընթացաբար այդ քաղաքականութեան զարգանալու հետ՝ կատարուում էր Ֆրանսիայում մի ներքին քաղաքական շարժում՝ բուլանժական շարժումը, որը իւր հոսանքի մէջ միացրել էր ամեն կարգի էլեմենտներ՝ միավետականներ, հասարակապետական ծայրահեղներ, սոցիալիստական այլ և ալ խմբեր և այլն՝ ընդդէմ Փրանսիական ներկայ կառավարչական սիստեմի: Այդ վոտանգաւոր և ոչինչ բարին չը խոստացող շարժման դէմ հասարակապետութեան մզած կուիւր վերջացաւ վերջինիս յաղթանակով: Բայց ալդ յաղթանակը ունեցաւ մեծ հետևանքներ. այն իրողութիւնը, որ Փրանսիական հասարակապետութիւնը կարողացաւ բուլանժական փոթորիկից ողջ գուրս գալ և այն ոյժը, առանց որի անկարելի կը լինէր մի այդպիսի ահեղ դաւադրութիւն գետին տապալել—այդ բոլորը սկսեց ազդել թէ արտասահմանի վերաց և թէ մանաւանդ Փրանսիական կուսակցութիւնների վերաց: Համոզւելով հասարակապետութեան կայուն բնաւորութեան մէջ՝ բազմաթիւ միավետականներ միացան հասարակապետութեան հետ, հաշուեց կառավարութեան հետ նաև Հռովմի պապը, թելադրելով կարդինալ Լաւիժըրիին այն ճառը, որ մենք իւր ժամանակին լիշտառակել ենք այս էջերում: Այսպիսով այս վերջին տարիներում Փրանսիական հասարակապետութիւնը, բոլո-

րելով իւր, ինչպէս ասում են՝ չափահասութեան տարեշրջանը, 21 տարեկան հասակը և յաղթանակով գուրս գալով անժիւ փոթորիկներից, ձեռք բերեց նաև մի հաստատուն և անվիճելի կառավարութեան բնաւորութիւն թէ իրանց ֆրանսիացիների և թէ արասասահմանի աչքում։ Այժմեայ պարլամենտի լնտրութիւններին բոլոր կասկածաւոր էլեմենտները ջարդ կրեցին, միջոց տալով ներկայ մինիստրութեան, որի դլուխն է Ֆրէսինէ և որի միւս մեծ ոյժն է ներքին գործերի մինիստր Կոնստանը, այնքան ապրել, որքան չի ապրել ոչ մի ֆրանսիական մինիստրութիւն այս վերջին 21 տարում, այն է աւելի քան երկու տարի։

Մինչև որ Ֆրանսիացում կառավարութիւնը ամրանում էր և ոսական դաշնակցութեան պրոպագանդան էր անուում, Ռուսաստանը, այդ միջանցքում արդէն ձեռք էր բերել մի քանի մանր տէրութիւնների բարեկամութիւնը՝ Մօնտէնեգրօի, Սերբիայի և Յունաստանի և երբ, այս տարի, եռապետեան դաշնակցութիւնը նորոգեց, Անդլիան էլ շատ թէ քիչ մօտիկ դիրք բռնեց Խոալիայի մօտ առանձնապէս և եռապետեան դաշնակցութեան մօտ ընդհանրապէս, — արդէն ժամանակը եկած համարեց որ Ֆրանսիան և Ռուսաստանը ամրող աշխարհի համար տեսանելի ձևով իրար բարեկամութիւնը կամ՝ դաշնակցութիւնը յաջտարարեն։ Եւ այդ կատարեց Կրօնշտատի նաւային ցոյցերով, ցոյցերով, որոնց կարապետն էր ներկայ թւականի ֆրանսիական արդիւնահանդէսը Մոսկւայում, որ աւելց մինչեւ ներկայ հոկտեմբերի սկիզբները։ Եւ չը նայած որ ֆրանսիական նաւային ցոյցերից, Անդլիայի Պորտամուտ պատերազմական նաւահանգիստը և չը նայած որ անդլիական կառավարութիւնը չը տեսնւած շքով և պատով ընդունեց և ողջունեց ֆրանսիացիների էսկադրին ու սորա գլուխ վիցէ-ագմիրալ Ֆերւէին, — բայց Կրօնշտատում ու Պետերբուրգում կատարւած ցոյցերից անդլիացիք չը կարողացան խլել նոցա քաղաքական բարձր նշանակութիւնը։ Թէ արդեօք Ֆրանսիայի և Ռուսանականի միջև կայացած է դաշնակցական որ և է դրաւոր պայման, ստորագրւած երկու կողմերի ներկայացուցիչներից, — այդ հարցին մենք մեր ընթերցողներին առ այժմ չենք կարող դրական պատասխան տալ, բայց եթէ մեր զգացմանքին ապաւինենք՝ մենք հաւանական ենք գտնում, որ դաշնակցութիւնը Ֆրան-

սիացի և Առուսիացի միջև գրաւոր գոկումենափ ձև ստացած լինի գեռ ևս փոխ-ծովաղեա Փերւէի այցելութեան ժամանակ Առուսաստանի մայրաքաղաքին:

Այսպէս կամ այնպէս, բայց Ֆրանսիական մինհստրների յաճախակի կրկնաւծ ճառերը մեծ վստահութիւն են ներշնչում և ռասց բարեկամութեան մասին այնպէս են խօսում, որ ենթադրել են տալիս սոորազբւած պայմանաթուղթ:

Ի վերջոյ և մի բնարոշ իրողութիւն: Ամբողջ քսանումէկ տարի Ֆրանսիան, իւր ատելութիւնը դէպի Գերմանիան տարածում էր նաև այս երկրի նոյն իսկ գեղարւեափի և երաժշտութեան վերաբէ Ռիխարդ Վագները, նորագոյն Գերմանիացի այս հսկայ կոմպոզիտորը, ամենից հալածւած անունն էր Ֆրանսիացում Ռիխմարկի անունից յետոյ և գրեթէ սորա համահաւասար: Նորա օպերաները, որոնք նոր գար բացեցին երաժշտութեան համար, այնպէս հալածւած էին Ֆրանսիայում, որ այդ երկրի մայրաքաղաք Պարիզը դեռ նոյսա չէր տեսել. հազիւ հազ Ֆրանսիացի միւս քաղաքներում՝ Լիոն, Բորդո, մի մի անդամ յաջողւել էր Վագների օպերաները բեմի վերայ դնել, իսկ Պարիզում մինչ այս վերջին ժամանակներս այդ չէր յաջողւում՝ շովինիստ ամբոխը անողորմ էր այն աստիճան, որ երբ Պարիզի Էդէն թատրոնում դիւ. նոր ժամանակներս փորձեցին Լոհենդրին օպերան դնել, կատաղած ամբոխը արգելեց իւր աղմուկներով, այնպէս որ ներկայացումը չը կացացաւ և թատրոնական վարչութիւնը մեծ կարողութիւն կորցրեց այդ անաջողութեան պատճառով:

Բայց անկարելի համարւածը կարելի դառաւ, որովհետեւ նոր տոմարով սեպահմբերի 16.ին Վագների Լոհենդրին հռչակաւոր օպերան տրւեց ոչ միանի Պարիզում առհասարակ, այլ և Պարիզի գլխաւոր օպերային թատրոնում:

Այդ քաջագործութիւնը, որ կարողացաւ զլուխ բերել այդ օպերայի եռանդու վագներական կապելմէտէր Լամուրեօն, հնարաւոր եղաւ միայն այն ժամանակ, երբ Ֆրանսիան բարեկամութիւն հաստատեց Առուսաստանի հետ և դուրս եկաւ այն առանձնութիւնից, որի մէջ էր նա մինչ այս վերջին տարին Կարծես Ֆրանսիան դորանով ողեց ասել Գերմանիացին՝ այժմ ես բաւականաչափ հանդիսո եմ քո մուզիկան լսելու համար...

Երևանդական ազդային կուսակցութեան պարագլու խ Պարնէլի մահը, որ հաղորդւեց «Մուրճ»-ի անցեալ համարում, տեղիք է տալիս մեզ ներկայացնել հայ հասարակութեան առջեւ իրլանդական խնդիրը, այնպէս ինչպէս աւանդել են դարերը։ Պարնէլի անունը կը լիշւի պատմութեան մէջ հաւասար Յ'կոննէլի հետ. և Պարնէլի կենսագրութիւնը անելով մենք չենք կարծում կառարած լինել այն, ինչ հարկաւոր է իրլանդական խնդիրը պարզելու համար։ Դորան «Մուրճ»-ը իւր յետագայ համարներում կը նուիրի առանձին յօդւածներ՝ ինչպէս արժանի է որ այդ խնդիրը մեր լնդերցողներին լաւ պարզւած լինի։

Z.

## ԽՄՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«ՄՈՒՐՃ»-ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ, Ներկայ համարը հրատարակելուց վեա՝ սկսում է «Մուրճ» ամսագրին 1892 թւականի համար բաժանորդ գրւելու շրջանը. Այս համարի մէջ դրւած ուղարկում ենք մեր բոլոր հետաւոր բաժանորդներին տպագրւած երկու երկու ծրարներ տպագրւած թերթիկներով հանդիրճ, տուաջւալ տարիների նման, խնդրելով որ երկու ծրարներից մէկը ծանօթ չըլցաններում տարածեն. Բաժանորդ գրւելու համար կարելի է կամ ուղղակի խմբագրութեանը դիմել կամ գրւել «Մուրճ»-ի գործականների մօտ, որոնց անունները տպւած են «Մուրճ»-ի երեսի թղթի վերաբ:

ՄԱՐԿ ՏՈՒՅՆԸ «Մուրճ»-ում: Ներկայ համարում տպւած զրոյցով վերջացնում ենք Մարկ Տուչնի հումարիստական գրւածների շարքը «Մուրճ»-ում: Մինչ ալյմ տպած իննը կտարները, որոնց թարդմանողն է պ. Ա. Քալանթարը, շուտով լուս կը տեսնեն առանձին դրագութեամբ:

«ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԻ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ» վերագրով լոգւածը, որ մենք շտափում ենք տպագրել ներկայ համարում, ուղարկել է մեզ պ. Կարապետ Հայրապետեանց, որ թարգմանել է այդ լոգւածը Պատառական ամսագրից. Այդ լոգւածի վերակ մենք դարձնում ենք մեր ժողովրդական կրթաթևան գործին հետաքրքրւածների առանձին ուշագրութիւնը:

ՎՐԻՊԱԿՆԵՐԻ: Պր. Կրլաքէնկեանի լոգւածում № 9, երես 1065, տող 19—20 տպւած է «...մինչդեռ Բալախանէն մօտաւորապէս 50 մետր լայնութիւն ուն իր: Պէտք է լինէր՝ մինչդեռ Բալախանէն մօտաւորապէս 50 մետր ծովի մակերեսութից բարձր է»:

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ: Կան հրապարակախօսներ, որոնք իրանց քարոզների հետևանքները այժմեանից չեն հառկանում, որովհետև ընդունակութիւնից զուրկ են երեսութների իրար հետ ունեցած կապը հասկանալ. բայց այն չարիքը, որ զուանում է զորանով—տուժում են հասարակաց կարծիքի մա-

սին գաղափար անգամ չունեցող մշակները, հողագործները, որոնք մի աղջի զլխաւոր մարմինն են կազմում։ Արասխանեանցին հակառակներու ցանկութիւնով կոլրացած պ. Գրիգոր Արծրունին արդէն տարիներով, բարեբազզաբար զեռ ևս անպտուղ՝ աշխատում է որ մեր երկրի հողագործների մի ահադին մասի զլխաւոր կամ մինչև անգամ միակ ապրուստի աղբեւրը, հացահատիկների մշակութիւնը՝ սահմանափակւի, և որ հացահատիկների արտահանութիւնը մեր երկրից արգելվի։ Այդ կը լինի հետեանքը, եթէ միայն պ. Արծրունու տարիներով քարոզող մտքերը հացի առուտուրի մատին մտնեն հասարակաց գիտակցութեան մէջ և եթէ երկրիս կառավարութիւնը նուն թէօրիաներին հետեի։ Ալլապէս չի կարելի հասկանալ այն եռանդը, որ նա ցուց է տալիս Արասխանեանցի դէմ, որը ուրախութիւն է չալտնել հացահատիկների արտահանութեան և, իբր զորա հետեանք՝ հացահատիկների դների բարձրանալու համար և որը այդ հիմտն վերաէ վստահացել է գուշակել, որ մեր գիւղացիները այսմ շահ կ'ունենան իրանց հողագործական մշակութիւնը աւելի ընդարձակել։ Խոկ եթէ ճիշտ է որ պ. Արծրունու կատաղութիւնը հացահատիկների գործի աջս նոր ուղղութեան գէմ ուրիշ ոչ մի դրական հետեանք չի կարող ունենալ, քան այն, որ, հասարակաց կարծիքին հետեելով, նաև տէրութիւնը առ միշտ արգելի մեր երկրից հացահատիկներ արտահանել—այն ժամանակ մենք հարցնում ենք՝ ինչ բարողական իրաւունք ունեք բողոքել պանդիստութեան և՝ գուղթականութիւնների դէմ, քանի որ զուք ինքներդ ձեր քարողներով անհնարին դրութիւն էք ուզում ստեղծել գիւղացու համար գիւղում մնալու և ինչ կամ աւելի վաստ դրութիւն հացարեր գիւղերի բնակիչների հտմար, քան երբ սոքա ընկած կը տեսնեն իրանց հողի արդիւնքի գները։ Ապասենք որ մի օր այդ նուն քարողները մարմին առնեն հասարակաց կարծիքի մէջ։ Խակ մինչև որ այդ չի կատարել, մենք մեր բարողական պարաքն ենք համարում բողոքել այն վտանգաւոր հակեացքների դէմ որոնք ժողովրդական շահերի հակառակ ուղղութիւն ունին։

# ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԱՐՏԱՏՊԻԱԾ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՑ

թ. կ.

1. «ՄՈՒՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով . . . . .	12 —
Նոյնը «Մուրճ»-ի այժմեաց բաժանորդների համար . . . . .	7 —
2. «ՄՈՒՐՃ» ամսագիր 1890 թւականի, երկու կազմած հատորներով. . . . .	12 —
Նոյնը «Մուրճ»-ի այժմեաց բաժանորդների համար . . . . .	7 —
3. ՊԽ-ՕՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.—ՑԵՅԵՐ» (վէպ) . . . . .	1 —
4. ՏԵՐ-ԴՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (Ղ.ՂՂԱՐԳՐԻ) «ՄԱՆՈՒԿՆԵՐԻ մարտողութեան գործարանների մի քանի հիւանդու- թիւնները» . . . . .	— 05
5. ԱՏՐՊԵՏԵԱՆ, ՍԱՐԳԻՍ.—ԺԵՒԻ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կա- թոլիկների կեանքից . . . . .	1 —
6. Լ.Յ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ) . . . . .	— 50
7. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, ՍՈՂՈՄՈՆ.—«ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ՍԵՒ ՕԲՀ»: (Կեանքից պատկեր) . . . . .	— 40
8. ՍԱՐԳՍԵԱՆՅ, Լ.ԵՒՈՆ.—«ԱՅՅ ԹԻՒՐԲԱՅ-ՀԱՅԱՏԱՆԻՆ» .	— 60
9. ՊԽ-ՕՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.—«ԲՊ.ԴԵ»; վէպ . . . . .	1 20
10. ՓԱՓԱՋԵԱՆՅ, Վ.—«ԽԱԹ-ՍՍԲԱ» (Հայ բոշան. կեանքից)	— 15
11. ՄԱՐԻՍԵԱՆ, ԹԻԿԻՆ Մ.—«ՀԵՂԻՆԵ» (միջ վէպ), ա. մասը	— 50
12. ԴԱՐԱԳԵՅԶԵԱՆՅ, ՅԱՐՈՒԹԻՒՆ.—«ՍԵՒ-Լ.ԵՌ-ՆՑԻՔ» (տոհ- մագրական պատկեր) . . . . .	— 15
13. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ՀԱՐԵՒԱՆՆԵՐ» . . . . .	— 03
14. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ՄԻՆԱՍԻ ԵԶԸ» . . . . .	— 03
15. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ԵԶԻԴ ԱՊ.ԶԻԿԻ» . . . . .	— 05
16. ՆՈՅՆԸ. . . ԾԱՆՐ ՔԱՐՔ, . . . . .	— 03
17. ՔԻՇՄԻՇԵԱՆՅ, Ա. . . «ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾՄՐԱՆՔ» . . . . .	— 15
18. ԲԱԼԱԴ.ԵԱՆ, ՍԱՄՈՒԿԻ. . . «ՄԻԿՐՈԲՆԵՐԻ» . . . . .	— 10
19. ՄԱՆՈՒԿ.ԵԱՆՅ, Լ.ԵՒՈՆ.—«ՉԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐԵՍԻԱՆՔ» (պատկերներ ուռա-տաճկական պատերազմի ժամանակից). — 10	
Դիմել՝ Վե Ռեդակցիո յարակագործութիւն է նաև պոստի մարկաներով:	

**ՀՈՅՍ ՏԵՍԱԻ**  
**Ա. Արասիան և անցի**  
**ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐԻ**

Հին ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Զարդարւած հին եղիպատական, փիւնիկական և ասորական գրութիւններով և Արևելքի հին պետութիւնների քարտեզով):

281 երես, յառաջարան եւ նիւթերի ցանկ

բարձրած է 800 օրէնտէ, փոյշուն լոյլէ վերա:

Գինն է ճանապարհածախսով միասին 1 րուրլի

Պէտք է զիմել կամ հեղինակին՝ Տիֆլիսъ, въ редакцію журнала „МУРЧЪ“, и կամъ Въ центральныи книжный магазинъ. Ուսումնարաններին անուում է 20% զիջում:

---

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐԺՈՒՄ  
թիւնը յայտնում է իւր խորին շնորհակալութիւնը, նորին գերազանցութեան Առեվիան Պօղոսեան Ղամբարեանցին, այն 200 րուբլու համար, որ բարեհանել է նւիրել ի լիշատակ իւր ամուսին ի Տէր հանգուցեալ, ողորմասէր տիկին Նունէ Ղամբարեանի հոգուն. յօդուամբ որբ և աղքատիք սանիկների ուսման, փոխանակ հոգոյ հաց (քէլէխ) կոչւած ճաշը տալու:

---

«Թիվլիզի Ընկերութեան Հայոց գրքերի հրատարակութեան»  
խմբագրական մասնաժողովը սրանով յայտարարում է, որ տպագրու-  
թեան համար ընդունում են հետևեալ բովանդակութեան ինքնու-  
րոյն և թարգմանական գրւածքներ.

1. Գեղարւեսաւական:

2. Գիտնական, զուտ գիտնական գրւածքներից կը տպագրւեն  
միայն այնպիսիները, որոնք վերաբերում են Հայոց կեանքի հետա-  
զոտութեան, իսկ գիտութեան միւս ճիշգերից միայն ժողովրդակա-  
նացրած գրքեր:

3. Մասագրքեր, նամանաւանդ ընդհանութեան գրականութեան,  
ընդհանուր պատմութեան, Հայոց գրականութեան, բնական պատ-  
մութեան և ֆիզիկայի ձեռնարկներ, կազմած մեր թեմական դրու-  
յոցների համար:

4. Մանկական ընթերցանութեան համար:

5. Նիւթեր մեր ժողովրդի կեանքի ուսումնասիրութեան վե-  
րաբերեալ (աւանդութիւններ, երգեր, սովորութիւններ և այլն):

Ծանօթութիւն, մանրամասն ծրագիր վերոյիշեալ նիւթերի  
ժողովելու համար կը տպագրւի յետոյն Ընկերութեանս խմբ, մասնա-  
ժողովը իրան է վերապահում ներկայացրած նիւթերից ընտրութիւն  
և քաղւածք անել, եթէ ուղարկողը նախօրօք որոշ պայմաններ չէ  
դնում:

Տպագրւած գրքերի համար վարձատրութիւն որւում է մի  
տպագրական թերթին՝ ինքնուրոյն գրւածքների համար՝ 20—25 ռ.,  
իսկ թարգմանական գրւածքի համար՝ 15—20 ռուբլի:

Բացառիկ դէպքերում վարձատրութիւնը կարող է և աւելի  
լինել խմբ, մասնաժողովի հայեցողութեամբ:

Հասցէն՝ Տիֆլիս, Правленію Тифлісскаго Общества издания ар-  
мянскихъ книгъ.

Թիվ Ա Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը յայտնում է  
սրանով, որ ընկերութեանս 1891 թ., անդամները կարող են ստանալ  
Կենտրոնական գրավաճառանոցից Ընկերութեան հետեւալ հրատա-  
րակութիւնները:

1. Տոլսոտյ. — «Ասուած զիտէ արդարն ու մեղաւորը»:
  2. Վալդնէր — «Հաւատարիմ Սաւիտրին»:
  3. Պէտալոցցի. — «Լինհարդ և Գերտրուդ»:
  4. «Նալ և Դամացեանտի»:
  5. Ռօզլնհայն. — «Նաւի փոքրաւորը»:
  6. Սպիրի. — «Ուսենց Յովսէփ» թարգմ. Խ. Զ. զինն է 15 կ.:
  7. Պարոնեան՝ «Մեծապատիս Մուրացկանները». զինն է 40 կ.:
- Ընկերութեանս անդամներն այդ գրքերը կարող են ստանալ  
Կենտրոնական գրավաճառանոցից, ներկայացնելով իրանց անդորրա-  
գրերը:

---

Թիվ Լ Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը ՎԱՐՉՈՒ-  
ԹԻՒՆԸ սորանով յայտարարում է, որ այսուհետեւ ընկերութեանս հետ  
գործ ունեցողները կարող են գիմել ընկերութեանս գրասենեակը  
(Բարոնսկայիա Փողոց տուն Սահակեանի) որ բաց է ամեն օր առ.  
12—2 ժամը:

---

1892 թ. յունւարից լոյս կը աեսնէ Մոսկվայում պ. Մ. Բարխուդա-  
րեանի տպարանից

## „ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ“

Բաժանորդագինն է երկու հատորին միասին 2 րուբլի, իսկ իւրաքան-  
չիւր հատորի զինն է 1 ր. 50 կոպէկ:

Հրատարակիչ՝ ՅՈՎ. ՀԱՆՆԵԼՍ ԲԱՐԻՍՈՒԴԱՐԵԱՆՑ.



# „ՄՈՒՐՉԻ”

ՔԱՂԱՔԱԿԱՆ – ՀԱՍՏԱԿԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ

## Ա. Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1892 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑԻԱԾ է

### Տարեկան գինն է 10 ռ.

Բաժանորդագրութեան համար զիմել՝

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ Тифլուս. Въ редакцію журнала „МУРЧЬ“.  
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամց մեր գործակալութիւններին՝

ԹԻՖԼԻԾ. — Կենտրոնական գրավաճառանոց:

» աղ. Յովչաննես Թումեանց, Սիօնի վաղոց № 27:

ԵԱՅԻՒ. — աղ. Առելիս Դաւթեանց (Մարզա, ընկ. լնթերցարան):

» աղ. Ստեփան Սուլխանեանց („Надежда“ ընկ., Набережная, домъ Шагерданова).

ԲԱՅԹՈՒՄ. — աղ. Սարգիս Մակարեանց (գրասենեակ եղբ. Յովեանների):

ԵՐԵՒԱՆ. — աղ. Սիրական Տէր-Մարտիրոսեանցի գրասենեակ:

ԱՊՈՒԻՒԾ. — աղ. Ստեփան Սրասիսաննեանց:

ՄՈՍԿԻԱ. — աղ. Վարզան Թումանեանց (Чистые Пруды д. Тупицына, գրասենեակ Ա. Թումանեանց):

» աղ. Ստեփան Վարդապետեանց, (Большой Харитоньевский пер., д. № 6):

ՕԳԵՍՍ. — աղ. Միքայէլ Մուրագեանց (գրասեն, եղբ. Յովեանների):

ԹԱՅԻՐԻԶ. — աղ. Ասատրւբէկ Միքայէլեանց:

ԶՄԻՒԻՆԻԱ. — աղ. Յովչ. Տէր-Միրաքեանցին (Մեսրոպեան վարժարան):

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ դատահում է Թիֆլիս, Ակամիննեան վաղոց,  
տուն № 8: